



Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՌ ԲԵՎ

ՆԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ
ԵՎ
ՎՐԱՍՏԱՆԸ

=====

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ԿՈՆԿԼԱՎ





ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

6



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՐ-ԲԵԿ

Հ Ա Յ Գ Ր Ո Ղ Ն Ե Ր Ը ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԿԻՐՔ ԱՌԱՋԻՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

891.99.09

Л. М. МЕЛИКСЕТ-БЕК

АРМЯНСКИЕ ПИСАТЕЛИ И ГРУЗИЯ

(МАТЕРИАЛЫ И ОЧЕРКИ)

КНИГА ПЕРВАЯ

A^{II}
34705



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1964

«ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ»

ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ա. Բաբայան, Շիլլերը և հայ գրականությունը, 1959:
2. Ս. Դանիելյան, Լերմոնտովը և հայ մշակույթը, 1960:
3. Գ. Հովնան, Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում, գիրք առաջին, 1960:
4. Գ. Հովնան, Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում, գիրք երկրորդ, 1961:
5. Հ. Գասպարյան, Վ. Հյուգոն հայ գրականության մեջ, 1962:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սովետական ժողովուրդների գրականությունն ամենա-առաջավոր և ղեմոկրատական գրականությունն է մարդկու-թյան հանճարի գանձարանում: Նրա ամենաակտուալ և ազնիվ նշանաբաններից մեկն է՝ ծառայել ժողովուրդների համերաշ-խության ու եղբայրակցության վսեմ գաղափարին:

Սովետահայ գրականությունը ևս արտացոլում է ժողո-վուրդների բարեկամությունը և բարի դրացիական փոխհարա-բերությունները:

Սակայն այդ գիծը նոր չէ սովետահայ գրականության, ինչպես և սովետական մյուս ժողովուրդների գրականություն-ների համար: Դա գալիս է XIX—XX դարերի հայ ղեմոկրա-տական և ուղղուցիտն-ղեմոկրատական գրականությունից, ինչպես և նախորդ դարերի առանձին գրողների ավանդներից, որանդ որոշ շափով արժարծվել է, ի միջի այլոց, և հայ-վրա-ցական (վրաց-հայկական) փոխհարաբերությունների թեման:

«XIX—XX դդ. հայ գրողները և Վրաստանը» թեման, որին նվիրված է ներկա մեր աշխատությունը, նպատակ ունի ներ-կայացնելու XIX դարի և XX դարի սկզբների հայ գրողների գործունեությունն ու ստեղծագործությունը կապված Վրաս-տանի հետ, սակայն այնքանով, որքանով Վրաստանը և նրա սքանչելի բնությունը, վրաց ժողովուրդը, նրա անցյալն ու ներկան, նրա նիստն ու կացը, վարքն ու բարքը այս կամ այն չափով ստացել են իրենց արտացոլումը հայ (արևելահայ) գրողների գերազանցապես գեղարվեստական (արձակ և չա-փածո) երկերում, մասամբ նաև այլ բնույթի գրվածքներում:

Աշխատությունը ծրագրված է երկու գրքով, որոնցից ներ-կա՝ առաջին գիրքն ընդգրկում է այն գրողներին, որոնց գոր-ծունեությունը գրեթե լիովին XIX դարով է սահմանափակ-վում: Իսկ երկրորդ գրքում տեղ կգտնեն XX դարի նախասո-

վետական սերնդի այն գրողները, որոնք գործել են նաև XIX դարում:

Ելնելով գրողների ստեղծագործության բնույթից, մենք մոտեցել ենք յուրաքանչյուրին՝ հաշվի առնելով նրանց ստեղծագործական, ուստի և մեր տեսության եղանակը տեղ-տեղ զուտ նկարագրական է, տեղ-տեղ համեմատական կամ սլատմահամեմատական, երբեմն էլ սլատմա-ժամանակագրական:

Շարադրության ամբողջ ընթացքում հանդիպող մեջբերումները՝ թե՛ գրաբարային և թե՛ բարբառային՝ մենք նպատակահարմար ենք դրել թողնել նույնությամբ, իր հարազատ վիճակում, չվերածելով այն գրական աշխարհաբարի:

Առանձնապես մեր ուշագրության կենտրոնումն է եղել Թիֆլիսի բարբառով առկա գրականությունը կամ, ավելի ճիշտն ասած, բարբառային գրանցումները, որոնք հասել են մեզ անբավարար վիճակում, մի կողմից, այն սլատմառով, որ նրանց գրի առնողները լիովին չեն տիրապետել այդ բարբառին, ուստի և այդ գրանցումները կատարելությունից զուրկ են, և մյուս կողմից՝ այն սլատմառով, որ ուղղագրության երկիցս (1921 և 1940 թթ.) կատարված ոեֆորմների հետևանքով այդպիսիները հետագա խմբագիրների կողմից աղավաղվել են: Երկու դեպքումն էլ, եթե մենք ամբողջությամբ կամ կրճատումով բերել ենք այս կամ այն բանաստեղծությունը կամ արձակ կտորները Թիֆլիսի բարբառով, միշտ աշխատել ենք այդպիսիները ծայրե ի ծայր ուղղել ըստ այդ բարբառի ուղղագրական և ուղղախոսական նորմաների:

Իբրև առաջին փորձ այսօրինակ գործի, մեր աշխատությունը, իհրակե, զուրկ չի լինի թերություններից, որոնց առթիվ սպասում ենք անաչառ քննադատների դիտողությունների:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԵՆ

Հայ գրողները, այդ թվում պատմագիրները, ժամանակագիրները, աշխարհագիրները, տաղերգուները, ողբասացները և այլն, հնագույն ժամանակներից սկսած իրենց երկերում պատկերել են հայ ժողովրդի կապը և փոխհարաբերությունները եղբայրակից վրաց ժողովրդի հետ՝ ռազմական, քաղաքական-հասարակական և կուլտուրական գործունեության բնագավառներում, հաճախ նույնիսկ հատուկ և ընդարձակ էջեր կամ գլուխներ նվիրել վրաստանի անցյալի այս կամ այն պարագային, երբեմն և իրենց ժամանակակից անցքերին:

Ահա Կորյունի կամ, ավելի ճիշտն ասած, «Վարք Մաշտոց»-ի հետագա վերամշակողի կոնցեպցիան հայոց, վրաց և աղվանից այբբենների հորինման հանգամանքների մասին: Ազաթանգեղոսի կամ «Հայոց դարձի պատմության»/հետագա վերամշակողի (հունական-արաբական վերսիայի) կոնցեպցիան հայոց, վրաց, արխաղաց և ալանաց «դարձի» մասին՝ Գրիգոր Պարթևի ձեռքով: Ղազար Փարպեցու նկարագրությունը հայոց և վրաց համերաշխ համագործակցության մասին Սասանյանների տիրապետության դեմ՝ Վահան Մամիկոնյանի և վրաց թագավոր Վախտանգ Գորգասալի ղեկավարությամբ: Մովսես Խորենացու պատմության Բ գրքի 86-րդ գլուխը «Յաղագս Նունէի երանելոյ, եթէ ո՞րպէս եղև պատճառք փրկութեան Վրաց» թեմայով, որտեղ Նունի «առաքելությունը» վրաց երկրում գիտված է Գրիգոր Պարթևի հետ համագործակցության լույսի տակ, նաև այլ տվյալներ վրաստանի անցյալից (Հերակլի պաշտամունքը, սեփեծույկ և այլն): Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի մեջ տված մանրամասն նկարագրությունները Եգեթաց աշխարհի կամ Կողբիսի (Արևմտյան վրաստանի) և Վիրքի կամ Իվերիայի, այսինքն Քարթլիի (Արևելյան վրաստանի), աշխարհագրական դիրքի, բնական հարստությունների և վարչական կազմի մասին: «Գիրք

թղթոց»-ի մեջ ժողոված վավերագրերը հայոց և վրաց եկեղեցական փոխհարաբերությունների և բաժանման շուրջը: Ուխտանես Ուռհայեցու (Եդեսացու) հատուկ երկասիրությունը, նույն վավերագրերի օգտագործումով. «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» թեմայով: Ահարոն Վանանդացու հատուկ երկասիրությունը, Մովսես Խորենացու շարադրության հետևողությամբ. «Պատմութիւն սրբոյն նշանին Նունէի, վրաց տան առաջնորդի» թեմայով: Կեղծ-Շապուհ Բագրատունու և Մատթեոս Ուռհայեցու (Եդեսացու) պատմություններում տրված տեղեկությունները Քարթլիի կենտրոն ներկայացնող Գորի քաղաքի մասին: Անանիա Սանահնեցու և Հովհաննես Սոփիատոս Հաղբատացու վկայությունները հայ-վրացական փոխհարաբերությունների մասին, այլև տվյալները (Մատթեոս Ուռհայեցու հաղորդածի հետ միասին) Դավիթ Շինող վրաց թագավորի և հայերի, մասնավորապես Հովհաննես Սոփիատոսի, փոխադարձ համակրանքի և սիրո մասին: Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը Օրբելների ապստամբության մասին Գիորգի Գ վրաց թագավորի դեմ 1177 թ.: Մխիթար Գոշի հատուկ գրվածքը «Գծագրութիւն յաղագս վրաց» թեմայով՝ գրված 1197—1204 թվականների անցքերի կապակցությամբ: Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն Տանն Սիսական»-ի 86-րդ գլուխը, որը ներկայացնում է իրենից վրաց իշխան Օրբելների պատմությունը հնագույն ժամանակներից սկսած մինչև նրանց հոսսատառվելը և հայանալը Սյունիքում: Թովմա Մեծոփեցու «Լանդ-Թեմուրի պատմությունը», որտեղ առկա է քրիստոնյա Վրաստանի միջոցով Հայաստանի ազատագրման տենդենցը: Առաքել Դավրիժեցու «Պատմության» հատուկ գլուխները՝ նվիրված Վրաստանի կացության նկարագրությանը՝ կապված Լուարսաբ թագավորի և մոուրավի, այսինքն մեծ մոուրավ Գիորգի Սաակաձեի գործունեության հետ: Զաքարիա Հովհաննավանեցու «Պատմության» մեջ տրված նյութերը իր՝ Զաքարիայի վրացական ծագման և հայ-վրացական փոխհարաբերությունների մի քանի խնդիրների շուրջը: Նաղաշ Հովնաթանի «Տաղ ի վերայ Գուրջստանայ գողալներուն» սքանչելի բանաստեղծությունը՝ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի գեղեցկուհիների ու նրանց վարք ու բարքի նկարագրությամբ:

Սայաթ-Նովան Թբիլիսիի կենցաղն ամփոփող իր անկրկնելի ստեղծագործությունը՝ երեք, նույնիսկ շորս լեզվով, ինչպես նաև Սայաթ-Նովայի հետնորդ Շամշի-Մեղրոյի ստեղծագործությունը նույն նյութի շուրջը՝ երկու լեզվով։ Սիմեոն Նրեանցու հատուկ գրությունը «Յաղագս շար սովորութեան ի մէրել ազգին վրաց» թեմայով, որտեղ շոշափած է գերիների տուր և առի սոսկալի սովորույթի խնդիրը, նկատված արեւմտյան վրաստանում XVIII դարում։ Մի շարք անվանի (որոնց թվում Շամշի-Մեղրոյի, Սերոբ գրչի և այլն) ու անանուն հայ պատմիչների և բանաստեղծների երկերը Թբիլիսիի 1795 թվականի սեպտեմբերի 11-ի ավերման նկարագրությամբ, և այլն և այլն և այլն¹։

XIX—XX դարի հայ գրականությունը, մանավանդ նրա արեւելյան հատվածը, զարգանալով ուս մեծ ժողովրդի գրականության ազատագրական ու առաջադեմ, դեմոկրատական ու ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքներին համընթաց, թեակոխել է զարգացման գրեթե նույն աստիճանները, ինչ որ ուս (նաև վրաց և այլն) գրականությունը, սկսած դասական (կեղծ-դասական) ուղղությունից ու ուսմանտիղմից մինչև դիտողական և ապա քննադատական ռեալիզմը։

Ընդամին, հայ գրականությունը ունեցել է նաև որոշ շփումներ վրաց գրականության հետ, որքանով, իհարկե, երկու եղբայրակից ժողովուրդների ստեղծագործության ուղիներն եղել են իրար նման։

Այսպես, օրինակ, վրաց «Թերգդալեոլնի» (որ նշանակում է Թերեկ գետի ջուր ճաշակածներ կամ խմածներ) կոչված սերնդին հայ իրականության մեջ համապատասխանում են «դորպատյանները», այսինքն «դորպատցիք»։ «խալխոսներ» (սրանք նույն նարոդնիկներն են)՝ հայ նարոդնիկները. «Յիսկարի» հանդեսի խմբակին՝ հայոց «Հյուսիսափայլ»-ի խմբակը,

¹ Այս աղբյուրների մատրաման տեսությունը տե՛ս մեր գրքում «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները. կատալոգ Ա», Թբիլիսի, 1949, էջ 217—310 (վրացերեն) և 329—332 (ռուսերեն)։ Այս նյութը մասամբ դիտված է նաև Վ. Նալբանդյանի գրքում. «Թբիլիսին հայ մատենագրության մեջ», Երևան, 1958, նույնը վրացերեն, Թբիլիսի, 1959։

որոնք ռուսական «Современник»-ի գաղափարների և ուղղութ-
յան արժարժողներն են և այլն:

Հատուկ ուշադրութեան արժանի են այսպես կոչված «երկ-
վորյակները» հայ և վրաց գրականութուններում, որոնք, ըստ
մեր տեսութեան, երեք կարգի են:

Առաջին կարգի «երկվորյակներն» են այն գրողները, որոնք
անձնապես կապված էին իրար հետ սերտ բարեկամութեան թե-
ւեւ և գործով, օրինակ Գ. Սունդուկյանը (1825—1912) և
Ակակի Մերեթելին (1840—1915):

Մյուս կարգը՝ այդ այն գրողներն են, որոնք իրար հետ
անձամբ ծանոթ լինելով՝ իբրև հրապարակախոսներ թունդ վի-
ճաբանում էին իրենց պարբերականների էջերում, օրինակ Գր.
Արծրունին (1845—1892) և Իլիա Ճավճավաձեն (1837—1907):

Վերջապես, երրորդ կարգը՝ այդ համեմատաբար բազմա-
թիվ շարքն է այն գրողների, որոնք ոչ մի կերպ իրար հետ
կապված չէին, նույնիսկ իրար անծանոթ էին, օրինակ Բաֆֆին
(1835—1888) և Ալ. Ղազրեգին (1848—1893), Ղ. Աղայանը
(1840—1911) և Յա. Գոգեբաշվիլին (1840—1912), Գ. Բար-
խուդարյանը (1835—1913) և Իվ. Մաշաբեկին (1854—1898),
Հովհ. Թումանյանը (1869—1923) և Վաթա Փշավեկան (1861—
1915), Հ. Հակոբյանը (1866—1937) և Իրոգիոն էվդոշվիլին
(1873—1915) և այլն, ընդամին, սակայն, մի հանգամանքի
նկատառումով, այն է՝ որ Հովհ. Թումանյանն անձամբ ծանո-
թացավ և առերես գեթ մի անգամ զրուցեց Վաթա Փշավեկայի
հետ միմիայն վերջինիս հոգեվարքից մի քանի օր առաջ, ան-
կողնուն գամված վիճակում:

Մենք այստեղ, իհարկե, չենք հիշատակում հայ այն գրող-
ներին և դերասաններին, որոնք գործում էին վրաց գրականու-
թեան ասպարեզում (Զուրաբ Անտոնով) կամ միաժամանակ
սպասարկում էին երկու գրականութուններին և թատրոններին
(Սկանդարով—Սկանդար—Նովա, Հաղիր, Գ. Բաշինջաղյան,
Գեգեոնով—Միրադյան և այլն):

Սակայն Թիֆլիսը, լինելով արեւելահայութեան մտավոր
կենտրոններից մեկը, զուցե և ամենանշանավորը (էջմիա-
ծին—Բաքու—Նոր Նախիջևան—Մոսկվա—Պետերբուրգի կող-

քին), չէր կարող իր կնիքը չդնել այստեղ ապրող ու գործող հայ գրողների և հասարակական-քաղաքական ու կուլտուրական գործիչների վրա, որը և գտել է իր արտահայտությունն ու արտացոլումը համապատասխան գրական ժառանգության մեջ:

Եվ ահա այդ ժառանգության տեսությունն է, որ քննության է առնված ստորև՝ ըստ առանձին հեղինակների կամ հեղինակների խմբերի:

Կարևոր ենք համարում նշել նաև այն, որ մեր տեսության մեջ մտել են և այնպիսի գրողներ, որոնք իրենց ստեղծագործությունների մեջ, թեև չեն արտացոլել Վրաստանն ու վրացիներին, սակայն թարգմանվելով վրացերենի՝ մտել են վրաց թարգմանական գրականության դանձարանը:

Միաժամանակ, ինքնըստինքյան հասկանալի պիտի լինի, թե ինչու մեր տեսությունը սահմանափակվում է հայ գրողների միմիայն արևելահայ հատվածով, իսկ արևմտահայ գրողների մասին գրեթե ոչինչ չենք խոսում:

ԱՅՈՒՂՆԵՐ

Աշուղների կապը Վրաստանի և վրաց ժողովրդի հետ արտահայտվել է, մի կողմից, նրանով, որ նրանք ստեղծագործելով ու երգելով երկու, երեք, չորս և նույնիսկ հինգ լեզվով, օգտագործել են և վրացերենը: Այդպիսիներն են Սայաթ-Նովայից հետո՝ Շամշի-Մելքոն, Դյուրգյար-օղլանը, Զավլանը, որոնք ստեղծագործել են երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն ու ադրբեջաներեն կամ պարսկերեն, և Միսկին-Բուրջին, որը մի խաղ ունի հորինած 5 լեզվով՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, պարսկերեն և ռուսերեն: Մյուս կողմից, մի շարք աշուղների կապը Վրաստանի հետ արտահայտվել է նրանց կեղծանունի մեջ, որտեղ հանդես է գալիս կամ Վրաստանը, օրինակ՝ Դյուրջի-օղլի, Դյուրջի-Նավե, կամ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը, օրինակ՝ Թիֆլիզ-Նարդիզ, Թիֆլիզ-Յալղուզ:

Աշուղների տեսության մեջ առանձնապես պետք է բնդգծել Շամշի-Մելքոյին (մոտ 1750—մոտ 1830 թթ.), որը հայերենի հետ զուգահեռաբար ստեղծագործել է և վրացերեն. վերջիններից մեկ հասել է 8 խաղ:

Ընդհանրապես բանաստեղծ Շամշի-Մելքոյի ստեղծագործության (թե՛ հայերենի և թե՛ վրացերենի) մեջ հանդես է գալիս հին Թիֆլիսը, նրա 1795 թվականի սեպտեմբերի 11-ի ավերման նկարագրությունը, քաղաքի արհեստավորական և առհասարակ ցածր խավի՝ կոշկակարի, մոմագործի, ալգեպանի և այլն բնութագրերը, Թիֆլիսի նիստն ու կացը, ժողովրդի հավատալիքները, սնտիապաշտությունը և այլն: Խաղերում հանդես են գալիս ոչ միայն Թիֆլիսը, այլև արվարձանները, օրինակ Զիթախենց ու Պենտելենց այգիները և Վերան, նրա շրջակայքը՝ Թելեթը, Մառնեուլը, Տալավերը, Մաշավերը (Շավի), Սղնախը և այլն¹:

¹ Մանրամասնությունները տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Շամշի-Մելքոն և նրա հայերեն խաղերը, Երևան, 1958:

Տվյալ շրջանի աշուղները, որոնք գործում էին Թիֆլիսում
կամ այսպես թե այնպես կապված էին նրա հետ, բազմիցս
հիշատակում են Թիֆլիսը, իսկ ոմանք նույնիսկ նրա արվար-
ձանները:

Այսպես, օրինակ, Մելքումը, նկատի ունենալով տեղական
պերսոնաժներից «Նինո ջան»-ին և «Թեյլա Թամար»-ին, բա-
ցականչում է.

Յարար Նավթուխը ի՞նչպես տեղ է,

Ոնց քաղաք է, ոնց թե գեղ է¹:

Ոմանք էլ տեղ-տեղ օգտագործում են վրացական բառեր,
օրինակ «կոնա-թայգուլ» (Նարինջ-օղլանը) և այլն:

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Լ. Մելիքսեր-Բեկ, Հայ հին գրականության պատմություն, Թբիլիսի,
1941, էջ 208—215:

¹ «Հայ աշուղներ», Թիֆլիս, 1903, էջ 261:

Գ Ե Ո Ր Գ Խ Ո Ւ Բ Ո Վ
(1762—1829)

Գեորգ Մելքիսեղեկյան խուբովը, Սիմեոն կաթողիկոսի եղբորորդին, ծնվել է Երևանում: Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միանալուց հետո նա գաղթում է Թիֆլիս, նախօրոք այնտեղ ուղարկելով իր ընտանիքը և եղբորը: Թիֆլիսում Գեորգը երկար չի մնում, ըստ երևույթին իր գործունեության համար այստեղ հարմար ասպարեզ չգտնելու պատճառով: Սակայն նա հաջողացրել է այստեղ Վրաստանի ազնվականի կոչում ձեռք բերել, որը և օգտագործել է հետագայում՝ Հյուսիսային Կովկաս (Ղզլար), Աստրախան և Պետերբուրգ անցնելու միջոցին:

Նրա գրական գործերից երկուսը պատմագրական են («Արժանահիշատակ անցքերի նկարագրությունը», 1778—1809 թվականներ, և «Գավազանագիրքը» 1814 թվականից հետո) և մեկը բանաստեղծական («Երգարան», 1825): Վերջինում տեղ են գտել մի շարք ներբողներ, կապված XIX դարի առաջին քառյակի Վրաստանի անցքերի հետ, օրինակ. «Վասն հանդիսավեհ հոսթեան քաջահաղթ մեծ զօրապետին Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովին՝ ներբողեալ», որը հորինված պիտի լինի 1816—1825 թվականներին, նույնպես և Երևանից Թիֆլիս գաղթած ու այնտեղ բնակություն հաստատած Մինաս Եղիազարյանին նվիրված ձոնը, գրված մինչ 1825 թվականը²:

¹ Գեն. Ա. Պ. Երմոլովը Վրաստանի կառավարիչ էր 1816—1827 թվականներին:

² Մանրամասնությունները՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, Գեորգ Մելքիսեղեկյան խուբով (Նյութեր և նոթեր): «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, 1951, № 2, էջ 55—84:

ՍԵՐՈՎՐԵ ՊԵՏԿԵՆՅԱՆ (1760—1837)

1794 թվականին Սերովբե Պատկանյանը՝ Կ. Պոլսից փոխադրվելով Թիֆլիս և պաշտոնավարելով մանկավարժական ասպարեզում՝ նախ Թիֆլիսում (1801—1806), ապա Նոր Նախիջևանում (1806—1809, 1827—1836) և Աստրախանում (1809—1827, 1836—1837), վերջինում շփվել է (մինչև 1821 թվականը) տեղի ռուսական թեմի առաջնորդ, ծագումով վրացի՝ Գալիոս արքեպիսկոպոս Բարաթաշվիլու հետ:

Գալիոս Բարաթաշվիլին մինչև եպիսկոպոսանալը XVIII դարի վերջում եղել է Թելավի հոգևոր սեմինարիայի ղեկավար, և այդ պատճառով ստացել է «Գալիոս ղեկավար» հորջորջումը (վախճանվել ու թաղվել է Աստրախանում 1821 թ.):

Ս. Պատկանյանի բանաստեղծություններից երկուսը կապված են վրաց իրականության հետ. ա. «Ողբ ի հնգեկի հարուածսն Տփիսիսոյ»¹ և բ. «Առ հայրապետն Գալիոս»: Վերջինս ներբող է ակրոստիխի ձևով՝ բաղկացած 6 տնից, որոնք սկսվում են Գ-ա-յ-ի-ո-ս (տառերով)²:

Ս. ՊԵՏԿԵՆՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Լ. Մելիսեք-Քեկ, Վրաստանի պատմության զրավոր աղբյուրների հրատարակությունները, Կատալոգ Ա, Թբիլիսի, 1949, էջ 298 (մասն Բ, № 88):

2. Նույնի՝ Անծանոթ էջեր Գալիոս-Ղեկավարի մասին, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», հ. 69, Թբ., 1958, էջ 385—391:

¹ Հրատարակված է «Կովկաս» ամսագրում, 1847, № 26:

² «Ծրգբ Սերովբե վարժապետի Պատկանեան», ի լոյս ընծայեալ աշխատասիրությամբ Անտիֆայ Խաղիգեանց, Մոսկվա, 1857, էջ 32—33, 64—65. Հմմ. Հր. Անաոեան, Պատմութիւն հայ նոր դրականութեան, Վաղարշապատ, 1906, էջ 109—115. Վ. Գրիգորյան, Ռուսական կայսրության պետական կուլիգիանների «գլխավոր ղեկավարներ» հայերեն թարգմանության մասին. «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, 1956, № 4, էջ 111, ծան. 1: Լ. Մելիսեք-Քեկ, Սերովբե Պատկանյանը և հայագետ վրացի Գալիոս Աստրախանում, «Էջմիածին», 1959, № 8—9, էջ 43—45:

ՄԱՆՎԵԼ ԿՅՈՒՄՈՒԹՅԱՆԵՑԻ
(1768—1843)

Մանվել Կյումուշխանեցին նույն Մանվել Ալթունյան Շահինյանն է, որը դառնալով վարդապետ՝ պաշտոնավարել է նախ էջմիածնում իբրև մատենադարանապետ, ապա Սեանում իբրև Սեանա վանքի վանահայր: Մի բանի տարի ապրել է Թիֆլիսում իբրև Ս. Սարգիս ուխտատեղիի վանահայր (1831—1835), վերջապես Ղրիմում՝ իբրև Ս. Խաչ վանքի վանահայր (1835—1843): Թիֆլիսյան տարիներին Մանվելը գրել է իր ստվար հիշատակարանը, որը մեղ հասել է երկու տարբերակով, իսկ Ղրիմում եղած պահին ավարտել է դեռևս Սեանում սկսած Սեանա վանքի պատմությունը:

Հիշատակարանը պարունակում է բազմաթիվ նյութեր Թիֆլիսի, նաև ալեկալ քաղաքական անցքերի մասին, ի միջի այլոց, և Ա. Գրիբոեդովի սպանության շուրջը¹: Թեև, ճիշտն ասած, հեղինակի ուշադրության կենտրոնումն է Ս. Սարգսի ուխտատեղին, որը եղել է և գրության տեղը, ինչպես ինքն է ասում, «յանցս Սէյտապատու ի Սուրբ Սարգիս, որ ի Տփլիս»:

Մասնավորապես, հիշյալ ուխտատեղիի շինության մասին Մանվել Կյումուշխանեցին վկայում է այսպես. «Նուիրօք մեր աղնէի, ի ձեռն կառավարչի, Շահինեան Կիւմիւշխանցի Մանուէլ վարդապետի շինեցաւ Սէյտապատու սուրբ Սարգիս ուխտատեղի, 1832 և ի մայիսի մէկին: Այսունակ և վրացերեն տառիւր գրեալ կայ ի նոյն արձան» (հիւսիսային դռան ճակատին)²:

ՄԱՆՎԵԼ ԿՅՈՒՄՈՒՇԵԱՆԵՑԻՆ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Լ. Մելիսեք-Ռեկ, Հայ հին գրականության պատմություն, Թբիլիսի, 1941, էջ 172:

2. Նույնի՝ Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները, Կառալոդ Ա, Թբիլիսի, 1949, էջ 301 (մասն Բ, № 93):

¹ Բարգեն Վ. Աղավելյան, Մանվել վարդապետը Ա. Ս. Գրիբոեդովի մասին, «Արարատ», 1914, էջ 161—163. Л. Меликсет-Бек. Мануил Кюмюшханец о событиях вокруг убийства А. С. Грибоедова. "Труды Тб. Гос. Унив.", т. X, 1939, стр. 161—166.

² Գյուտ ա. Բ. Աղանյան, Դիւան հայոց պատմության, գիրք ԺԲ, Թիֆլիս, 1917, էջ 175: Մյուս տարբերակը տպված է «Արարատ»-ում 1915—1917 թթ. և առանձին, սակայն երկուսն էլ թերի են:

ՀԱՐԱԻԹՅՈՒՆ ԱԼԵՄԴԱՐՅԱՆ

(1796—1834)

Գեորգ, հետագայում Հարություն քահանա և վարդապետ Ալամդարյանի ստեղծագործությունը ոչնչով չի առնչվում մեր թեմայի հետ:

Սակայն չպետք է մոռանալ, որ Հ. Ալամդարյանի գործունեությունը որոշ տարիները կապված են Թիֆլիսի հետ, նախ, իբրև ներսիսյան նորաբաց դպրոցի տեսչի (1824—1828), ապա Թիֆլիսի վանքի մայր եկեղեցու ավագերեցի և նույնիսկ՝ ներսես Ա. Ե. Աշտարակեցու բացակայության պահին՝ Վրաստանի հայոց թեմի ժամանակավոր կառավարչի: Թիֆլիսում է տպված, ի միջի այլոց, և նրա կրոնի դասագիրքը 1825 թ. (վերահրատարակված Կալկաթայում 1846 թ.):

Հ. Ալամդարյանի բանաստեղծությունների միահատորյակում¹, ինչպես ուղիղ գիտել է Հր. Աճառյանը, տեղ են գտել «տառնավորներ»՝ գրված «Թիֆլիսեցոց լեզվով», օրինակ «Առյուծ և էջ», նաև տաղեր հորինված Թիֆլիսում ապրած տարիներին²:

¹ Հարութի վարդապետի Ալամդարեանց, Չափաբերականը, հրատարակ. Քերոբե Պատկանեանի, Ս. Պ. Բ., 1884:

² Հր. Աճառեան, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, էջ 150:

A^{II}
34705



ՄԵՍՐՈՎ ԹԱՂԻՆԳԵՆ
(1803—1858)

Մեսրոպ Դավթյան Թաղիադյանը իր երկարամյա գեղե-
րումների ընթացքում երկու անգամ այցելել է Թիֆլիս՝ նախ
1822 թվականի փետրվարին և երկրորդ անգամ՝ 1834 թվա-
կանին¹:

Իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» հանրածանոթ գործում
Մ. Թաղիադյանը տալիս է ինչպես Թիֆլիսի մանրամասն նկա-
րագրությունը, նույնպես և հայ-վրացական փոխհարաբերու-
թյունների տեսությունը, տեղական ազգաբնակչության նիս-
տուկացի, վարքուբարքի և այլի բնութագրումով, որոնք արժե-
քավոր փաստեր են թե՛ հայոց և թե՛ վրաց ազգագրության
համար:

Դժբախտաբար, Մ. Թաղիադյանի այս նյութերը չեն օգտա-
գործվել Թիֆլիսի պատմությանը ղեկավարողների՝ Ղուկաս Ին-
ճիճյանի, Հարություն Արարատյանի և Մինաս Բժշկյանի և այլ
հեղինակների կողմից:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ դեռևս 1913
թվականին Լևոն Մանվելյանը գրում էր. «Ով ցանկանում է
իմանալ, թե ինչ էր ներկայացնում Թիֆլիսը 19-րդ դ. առաջին
քառորդում, թող կարդա այս ճանապարհորդությունը, ուր հե-
ղինակը խոսում է ոչ միայն այն ժամանակվա հայերի, այլև
վրացիների մասին»²:

* * *

Ի նկատի ունենալով, որ Մ. Թաղիադյանի «Ճանապարհոր-
դութիւն ի Հայս» երկասիրությունը³ ներկայումս հազվագյուտ

¹ Ռուզան Նանուխյան, Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1947, էջ 146—147:

² Լևոն Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Ա. պրակ,
Բ. տպ., Թիֆլիս, 1913, էջ 55:

³ «Ճանապարհորդութիւն Մեսրոպիայ Դ. Թաղիադեանց», Վ. Ա. Սարկա-
ւազի սրբոյ էջմիածնի ի Հայս, հատոր Առաջին, Կալկաթա, 1847, էջ 310—
318: Նաև Լևոն Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Գրա-
կան նմուշներ, Թիֆլիս, 1912, էջ 22—27:

դիրք է (քանի որ աճն 1847 թվականից հետո չի վերահասարակվել), մենք նպատակահարմար ենք գտնում մանրամասնորեն կանգ առնել նրա տված, նախ Թիֆլիսի նկարագրության, ապա և հայ-վրացական սերտ համակեցության բնութագրման վրա:

Ահա 1834 թվականի Թիֆլիսի վիճակը, ըստ Մ. Թադիադյանի.

«Տփղիս, քաղաք կառուցեալ ի ձորամիջի, ընդ որ Կուր գետ անցանէ ի հիւսիսոյ ընդ հարաւ: Յարեմտից է լեռոն Մմինդայ, իսկ յարեւելից՝ Հալուաբարու լեռինք: Ունի բերթս երկու, մի ի Հալուաբար՝ վիմաշէն և զեղեցիկ, յորում է եկեղեցին Վարդանուշայ գոտեր մեծին Վարդանայ մերոյ, որ վասն դողտութեանն կոչեցաւ Շուշան, և բանտն: Իսկ միւսն է ի Տափիթաղ² մերձ ի ջերմուկս նորա: Եկեղեցիք աղգիս մերոյ՝ 13, յորոց ի մին՝ Վանք անուանեալ ի վերայ գետոյն, նստէր Ներսէս Առաջնորդ: Եկեղեցիք Վրաց և Ռուսաց ութն, և ալապականացն մի: Տափիթաղ յարեմտից կայ Կուր գետոյ, ուր են ապարանք կուսակալին, դատարանք Ռուսաց, վաճառանոցն և բաղմութիւն տանց Հայոց, զի և անունն հայերէն ցուցանէ զբնակչաց զինչութիւն: 1200 տունք Հայոց են աստ, իսկ Վրացն՝ 400: Մերձ առ Վանքն մեր կառաց Ներսէս Արքեպիսկոպոս զՆերսիսեանն անուանեալ Ուսումնարան քառալեզու դպրութեանց, և ծաղկեցոյց ի նմա զուսումնականութիւնն յոյժ-յոյժ: Յառաջ քան Ներսէս Հայք առհասարակ խօսէին վրացերէն, և շէր՝ որ գիտէր զլեզու Աղգին. իսկ յետ դնալոյ նորա անգր և ծաղկեցուցանելոյ զուսումն Աղգին՝ նաև Վիրք ուսան խօսել հայերէն: Հալուաբար յարեւելից կայ Կուր գետոյ, ունի իւր բերթ և վաճառանոց ի բարձրավանդակին, տունք հայոց ևն անդ 175, ըստ մեծի մասին զաղթականք յԱյրարատեան նահանգէ: Արտաքոյ սորոս է գերեզմանատուն Հայոց և ի նմա եկեղեցի քարաշէն»:

¹ Հալուաբար—արարերեն «խափալա-բարի»-ից, որ նշանակում է ապարանքի կամ պալատի շրջակայք:

² Այս թաղամասը վրացերեն կոչվում էր «Կալուրանի», այսինքն Կալիքալ:

³ Վրաց մեծ գրող և հասարակական գործիչ Իլիա Ժալճավաձեն (1837—

«Ի ներքոյ Հալուաբարայ առ եղբր Կուրայ՝ է Կուելիա, որոյ բնակիչը են Վիրք և գերմանացիք, որք և ունին ղեկեղեցի գեղեցիկ:

Պատուականագործք են ջերմուկք քաղաքիս. երկոքին ևս ստացուածք Հայոց, յորոց մին երեւելի և հոյակապ բաղանիք, խմբեալ յամենայն աւուր յամենայն բաղմութենէ, մանաւանդ ի գեղուհեաց քաղաքին, առ ի մեծագոյն օգուտ զիմացն գեղեցկութեան¹ անուանի Մէլիքէնց համամ, զի պատկանի Տան Մինիշկարեանց, որ և զմէլիքութեան քաղաքիս զպատիւ ունին ի հնուստ հետէ» (էջ 310—313):

Մ. Թաղիադեանը հատկապէս կանգ է առնում Թիֆլիսի պարենավորման խնդրի վրա և գրում է.

«Տփղիս քաղաք շունի բերս բաւական բնակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խաղող աղնիւ և միրգս աղգի-աղգիս, այլ ի Կախեթայ օր ըստ օրէ մտանեն այսր մերձ հարիւրաւոր սալք գինւոյ՝ բարձեալք ի տիկս գոմշոց: Ի Սալիանայ՝ նոյնաչափ թուով սալք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ի քաղաքի այսմիկ: Մատակարարէ և Կուր գետ զանազան տեսակս համեղ ձկանց: Առակաւ ասի, թէ Գալիանոս բժիշկի մտեալ երբեմն է Տփլիսիս և տեսեալ զանբաւ առատութիւն ձկանցն՝ ասաց. «Այս տեղի է շայեկան արուեստի իմում»: Բայց իբրև ետես և զմեծ եկամուտ գինւոյ՝ ասաց. «Թէ՛ սոքա ինքնին գտին զդեղ իւ-

1907) իր հոգւածաշարքում՝ տպւած «Իվերիա» թերթի 1887 թվականի համարներում, վկայում էր, որ Հովաբարում հայերը բնակություն են հաստատել զեռես էրեկլե Բ թաղավորի օրոք (1762—1798), փոխադրվելով այդտեղ Շամխորից և 1837 թվականին բաղկացած են եղել 56 ծխից կամ տնից՝ 332 հոգի բնգամներ, որոնց հատկացվել է վարելահող և արոտատեղ Գարիա (Գարեջան) թաղուհուն ենթակա: Այս հայերը իրենց միջոցներով կառուցել են ջրմուղ, բարուկրից շինած ջրի ավազան, զոմեր և արտոններ (Ի. Ճավնավաձե, Երկերի լիակատար ծողովածու, տաս հատորով, հ. 8: 1957, էջ 32, 46, 51—52: Հմմտ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Հին Թբիլիսիի և հայվրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», 1958, № 3, էջ 159): XIX դ. սկզբներին այս հատվածին ավելացավ էջմիածնեցոց և այլ զաղթականությունը, ըստ որում Հովաբարում ապրող հայերը կենտրոնացած էին այսպիսի կոչված Շամխորեցոց և էջմիածնեցոց եկեղեցիների շուրջը, չհաշված Ս. Մինասը, Զորաբաշը, Խոջիվանքը և Լուսավորիչը:

¹ Հմմտ. Նաղաշ Հովնաթանի «Տաղ ի վերայ Գուրջստանայ զողալներուն»:

բեանց», և մեկնեցաւ¹: Չիք ժողովուրդ ի համօրէն Հայաստան
աշխարհն ձկնկեր և գինախում, որքան սորա են: Շիրակուան
մատուցանէ զիւր ցորեան: Երեան՝ դաղ, բրինձ, բամբակ և
չորապտուղս ամենատեսակս. իսկ Ռուսաստան՝ շաքար մաքուր
և զամենայն ձեռակերտ վաճառս իւր: Արուեստն սկսանէր
ծաղկել աստ. այլ դեռ տղայ դռով ի խանձարրի կայր. և ես
հաղիւ թէ կարացի տեսանել դերեսս նորա» (էջ 318):

Մ. Թաղիադյանը՝ լինելով Թիֆլիսում և տեսնելով ալլան-
դակություններ, որոնք հետեանք էին ճորտատիրական կար-
գերի՝ գրել է.

«Այս աղգ (վրացիք) գերեաց գնելոց համարիմ զամենայն
գիւղօրէս Վրաց. և որ առաւել ցաւելին է, նաև ոմանք ի Հա-
յարնակացն, որոց տեսարն՝ Պարնիք անուանին և Տիրուհիք՝
Աղջիկ Պարոնք²: Պարոնք կամ Աղջիկ Պարոնք իրաւունս հա-
մարին ունել զանձինս, զընտանիս, զորդիս և զստացուածս
գիւղականաց իւրեանց՝ իբրև սեպհական ժառանգութիւնքս
անձանց: Հանեն զհարսն ի ծոցոյ փեսային և վաճառեն ում
և կամիցինն: Նոյնպէս զորդիս ի ծնողաց հատանեն: Գերին՝
զոր ինքեանք ճորտ անուանեն, ոչ կարէ քահանայ կամ վանա-
կան լինել, եթէ ոչ նախ ազատեսցի դրամովք: Եթէ Պարոն ոք
սիրիցէ զկոյս ոք կամ Աղջիկ Պարոնն զպատանի ոք ի ճուրախ
անտի, չիք ինչ որ խափան արկանէ սիրոյն: Եթէ ոք զնոյն
ցանկութիւն ցանկացեալ և կամիցի գնել կամ վարձել՝ կարէ,
եթէ չղփացեալ իցեն կողմանքն, զի չիք ամօթ ազնուականաց
աշխարհին՝ կաւատանալ դրամոց...» (էջ 313—314):

Համեմատաբար ավելի մանրամասն կերպով է նկարագրում
Մ. Թաղիադյանի թիֆլիսեցիները նիստուկացն և վարքութեա-
րը, կարճ ասած՝ նրանց ազգագրական ուրույն դեմքը:

«Օդ տեղոյն լեռնային է, ուստի մաքուր և առողջարար:
Բնակիչը նորա Հայք և Վիրք առ այլաղգիս միահաղոյն Գուռչիս
անուանեալ, հռչակաւոր են ի գեղեցկութիւնս մարմնոց իւ-
րեանց. իրանք նոցա նոճօրէն աճեալք, հերքն թուխ, աչկունքն

¹ Հմմ. Խ. Արուխան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երեան, 1956, էջ 440—441:

² Թարգմանութիւն է Վրաց «Բատոնո» և «Քալբատոնո»-ի:

արեգակունք, մորթր սպիտակ ու կարմիր, միջկունքն բարակ և լեզուք անուշախօսք՝ յօրինեն զնոսա ցանկալիս ամենայն աղ-գաց, մանաւանդ Պարսից և Օսմանեան Մեծամեծաց, ուստի և ի վտանգի կան միշտ կեանք նոցա, թէ յառաջ քան և թէ զինի Տէրութեան Ռուսաց։ Վասն զի Լէզկիք, որք առ ոչինչ կրեն զամենայն երկիւլ՝ յափշտակեալ ամի-ամի աղջկունս և պատանիս ի նոցանէ՝ կայտառս, տանին վաճառեն մեծազգի ի Թէհրան, ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայս նոցա։ Գողտրականք են յոյժ և նազաբնոյթ կանայք նոցա, որք թէպէտեւ ճարտարք յուսմունս գրոց և ի սէսպէս արուեստս կանացի ձեռակերտաց, սակայն և այնպէս՝ անձնասէրք են յոյժ, դեղոյ իւրեանց անխնայ խնամատարք։ Գրեալ թէ յամենայն աւուր ի ջերմական լուանին, որ ի սակս խառնուրդս ինչ ունելոյ հանքային բաղադրութեանց՝ մեծապէս օգտէ փափկութեան մարմնոյ և պայծառութեան դիմացս¹։ Վարչամակ ի զլուս դնեն և ճակատանոց ասղարուր, զոր աստ կօտ կամ քամբարա կապեն բասպնդաւ. քօղ ի վերուստ ծաւալ ցծունկ արկանելով՝ երեսանին բաց։ Պատմուճան՝ փոքրանկեալ և դօտի խնձորակապ զմիշտ վրն՝ ծալրակալս» (էջ 315)։

Ապա Մ. Թաղիադյանը շարունակում է.

«Մնապարծք են յոյժ, և զարարս դուզնաբեայս իւրեանց գովութեամբ յօդս ամբառնան, զորօրինակ պատահեցաւ ի 1795 յաւուրս արշաւանաց Քէրիմ խանին (Աղա-Մահմադ-խանին— Լ. Մ.—Բ.)՝ Գօգեոյ ուրումն Շաշեանց ասել ցմի ի զօրաց նորա. «Նա դուր, նա դուր», այսինքն՝ «Ի՞նչ է, ի՞նչ է», զոր ցայսվայր գովութեամբ հրատարակեն ի լուր ամենայն մարդկանց յասելն «Բարաբալլա Շաշունց Գօգի, քրդին ասից՝ «Նա դուր, նա դուր»։

«Բայց առաւել քան զառաւելն զարդասէրք են առհասարակ կանայք և մանկտի նոցա միանգամայն, և տուեալ զանձինս արբեցութեան և խրախճանաց։ Իցէ որ ի նոցանէ ի վերջին կէտ տնանկութեան կամ աղքատութեան, տակաւին ջանայ որով և հնարին ինքեան ունիլ պատրաստի զսաթ մի աղնիւ զգեստոց, որով պճնին յաւուրս Կիւրակէից կամ արքունի

¹ Հմմ. Նազաղ Հովնաթանի «Տաղ ի վերայ Գուրջստանայ գողանիւնուն»։

Պրազնիկաց¹, որ այնինքն է՝ տօնից և տարեգլխոց չաղթութեանց նոցա. յերամակս-յերամակս բաժանին և առեալ իւրեանց գինի, գաւաթ, թմբուկս և զորս միանգամ դտանեն աղգս-աղգս նուագարանաց՝ ելանեն ի զբօսանս դաշտաց, ուտեն և ըմպեն, խաղան և խնդան, անզգայ յամենայն հոգոց: Ոչ տեսի ևս քաղաք ուրախ քան զայս: Այնքան զուարճաբանք են բնակիչք սորա մինչ ի խնծիլ հեղձուցանել զունկնդիրս բանից իւրեանց: Փոխանակ ի կիր առնելոյ զերգս Շարականացն Աստուածայնոց ի մարմնաւոր խրախճանս՝ յօրինեալ են առայն պէսպէս նուագս ծաղրալիս, յորոց մին առ տիկ գինւոյն այսպէս նկատնի.

Ու էիր և Տիկ դարձար,
Տկահան չարչարվիցար,
Հաւլաբրի դարի դուսին.

Տուինք մշակի ուսին.
Ո՛վ, ո՛վ, սուրբ Տկճոր²,
Լուլէդ բա՛ց, մեղ³ ուղուրմիա»:

«Երգմունք նոցա հասարակօրէն անմեղազոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և գաւառացն Հայաստանի, զի են՝ «Քուդէդին ումը», «Ապրի քոյ մայր»⁴, «Եիս ապրիմ» և այլ այսպիսիք» (էջ 315—317):

Ի վերջո Մ. Թադիազյանը մատնանշում է Թիֆլիսում տեղի ունեցող այլեայլ տեսակի ըմբշամարտերը, որոնց մասին զրուս է հետեւյալը.

«Սովորութիւն իմն կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յայժ, զոր վերացոյց Տէր Ներսէս, զի յաւուրս Կիրակէից յինանց⁵ ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին՝ մարտրնչէին ընդ միմեանս փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոցին նման գործեօք, ուստի թող թէ կէս քաղաքին միակնի, պնջատ և զոնջատ լինէր, այլ և մահունք ևս ի տեղւոջն պատահէին: Այժմ փոխանակ այսր՝ արշաւարան

¹ Ռուս. царские праздники:

² Ուղիղ՝ տկճուր:

³ Ուղիղ՝ միգ:

⁴ Ուղիղ՝ Ապրի քու մէրը:

⁵ Այսինքն զատկից մինչև հոգեգալուստ (պինտեկոստե) ընկած օրերին:

հաստատեցաւ, և պատանիք մեր ոչ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ» (էջ 319):

Այս վերջին դիտողութիւնը, իհարկեւ, կարեւոր նյութ է Վրաստանի սպորտի պատմության համար, որը, որքան մեզ հայտնի է, դեռեւս չի օգտագործվել մասնագիտական գրականության մեջ:

Մ. ԹԱՂԻԱԳՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Լ. Մելիքսեբ-Բեկ, Հովնաթանը, ամսագիր «Մժաթորի», 1933, № 5, էջ 181:

2. Նույնի, Հայ հին գրականության պատմութիւնը, Թբիլիսի, 1941, էջ 172:

3. Նույնի, Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակութիւնները, Կատալոգ Ա, Թբիլիսի, 1949, էջ 303—304 (Մասն Բ. № 96):

ԽՆԴԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ

(1805—1848)

Խ. Աբովյանի կապը Վրաստանի հետ ընդգրկում է երկու շրջան. մեկը՝ 1820—1826 և 1830 թվականներին, երբ նա աշակերտել է նախ զարաբաղցի Պողոս վարդապետին (Վանքի մայր եկեղեցու բակում), ապա Ներսես Աշտարակեցու հիմնած նորաբաց Ներսիսյան դպրոցում (և Դորպատ մեկնելու նախօրյակին). երկրորդը՝ 1836—1843 թվականներին, երբ նա աշխատել է Թիֆլիսում մանկավարժական (և, իհարկե, գրական) ասպարեզում՝ թե՛ իբրև տեղիս գավառական դպրոցի «տեսչի պաշտոնակատար» և թե՛ իբրև նույն դպրոցին կից իր իսկ միջոցներով պահվող մասնավոր պանսիոնի ղեկավար: Կարելի է հիշել նաև 1844 թվականը, երբ Խ. Աբովյանը կարճ ժամանակով կանչվել է Թիֆլիս երկրաբան Աբխիսի՝ Մասիսի կատարը կազմակերպելիք վերելքի նախապատրաստական միջոցառումների կապակցությամբ:

* * *

Խ. Աբովյանի բաղմամբիվ երկերը, անկախ նրա բաղմամբանր և բաղմակողմանի լինելուց, ժամանակագրական կարգով կարելի է բաժանել չորս շրջանների. առաջինը՝ Թիֆլիսյան տարիները (1820—1826), ապա Հաղբատում (1826—1828) և, վերջապես, Էջմիածնում (1828—1830) անցկացրած ժամանակամիջոցը. երկրորդը՝ «Դորպատյան» տարիները (1830—1836). երրորդը՝ դարձյալ Թիֆլիսյան տարիները (1836—1843) և, վերջապես, չորրորդը՝ Երևանյան տարիները (1843—1848): Ամենայն կասկածից դուրս է, որ մեծ լուսավորչի ստեղծագործության ամենաբեղմնավոր շրջանը՝ դա Թիֆլիսյան 1836—1843 թվականների միջև ընկած ժամանակամիջոցն է: Եվ հենց 1836 թվականին են պատկանում նրա իմաստալից խոսքերը

Թիֆլիսի տեղագրության և անցյալի ուսումնասիրության անհրաժեշտության մասին, որ՝ «չիրաւի քանի՞ նախատինք են մարդոյ ոչ ճանաչել քաջ գտեղին, ուր ծնան և սնան, ու զառաջինն երաց զաչս ի հայեցողութիւն արարածոց»¹:

Խ. Աբովյանի երբեմնի աշակերտ Գեորգ Աբիմյանն իր հուշերում մեծ լուսավորչի մասին նշել է, որ «վարժապետս 1838 թվից սկսած» իր աշակերտներին մօտ «կարդում էր Աղասու պատմությունը՝ հատված-հատված», որ նրանք «սիրով լսում, սրտանց ոգևորվում» էին, «որովհետեւ շատ լավ էր կարդում», այնքան լավ, որ «վաթսուն վեց տարի անցնելուց հետո, կասես նրա ձայնը ականջումս է»²: Աբիմյանը, ինչպես հայտնի է, Խ. Աբովյանի դասընկերն է եղել Ներսիսյան դպրոցից:

Նույն Գ. Աբիմյանը նշել է նաև. «1841 թիվը զարմանալի բեղմնավոր էր վարժապետիս գրչի համար, գուցե և ամենաբախտավոր տարին նրա կարճատև կյանքում»³:

Մյուս կողմից, չի կարելի ուշադրություն չդարձնել իրեն՝ Խ. Աբովյանի հայտարարությանը, որ «այն գրքերը», որ նա կաղմել է «աղգիս պատանեկության համար, որոնք արժանացել են ուշադրության և խրախուսանքի մինչև իսկ գիտությունների ակադեմիայի կողմից, հաջողություն չեն գտել միայն Թիֆլիսում»⁴:

Մեր ձեռքի տակ ունենալով Խ. Աբովյանի «Երկերի լիակատար ժողովածուն» իննը հատորով, մենք ի վիճակի ենք հաշվառման ենթարկել մեծ լուսավորչի գրչից ելած բոլոր այն գրվածքները, որոնք նրա՝ Թիֆլիսում գործելու և ստեղծագործելու կնիքն են կրում: Խ. Աբովյանից ստորև կատարված բոլոր մեջբերումներն ու վկայությունները մենք տալիս ենք ըստ իննհատորյակի:

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1958, էջ 96:

² «Ժամանակակիցները հաշատուր Աբովյանի մասին», կաղմեց և ներածականները գրեց Հրայր Մուրադյան, Երևան, 1941, էջ 113:

³ Նույն տեղում, էջ 111—112:

⁴ «Դիվան հաշատուր Աբովյանի», կաղմեց և ծանոթագրեց Նավանդ Դաֆալի, Երևան, 1940, էջ 145: Ցարական շինովնիկների կողմից Խ. Աբովյանի կրած հալածանքի մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեկ, Նոր նյութեր Խ. Աբովյանի մասին, «Տեղեկագիր», ՀՍՍՐ ԳԱ, 1948, № 9, էջ 19—33, հատկապես 32—33:

Առաջին հատոր.

— «Առ դալուստ նորին բարձր սրբազնութեան Տեառն Կա-
րապետի արքեպիսկոպոսի Վրաստանի և Տայոց» (էջ 30—31):

— «Սուգ հարազատ և ծնողասէր որդւոյ ի վերայ հան-
դուցեալ մօրն. 1837, փետր. 5. Թիֆլիս» (էջ 142—143):

— «Բաժանումն պատուելի պարոն Թովմայի Ղօրղանեան
լընտանեաց իւրոյ: Այն ինչ յետ ուղևորելոյն վերադառնամ ի
տուն, հանդիսի ինձ դուստր նորա ի սրահ վանքին ի տօնի
սուրբ Յակոբայ¹, յանկարծ և հարցանէ լալագին զհօրէ իւրմէ:
Ի 1837 ամի ի 21 սեպտեմբերի, Թիֆլիզ» (էջ 159—161):

— «Ողբ ի վերայ Միրզաջանի քաջ գնդապետի (ПОЛКОВ-
НИК) հայկազնոյ, որ մեռաւ ի 1837 ամի ի փետրուարի, այր
ի շնորհօք, սիրելի հասարակութեան յառոյզ հասակի զրաւեալ
ի կենաց» (էջ 162—163):

— «Ի 1836 յուլիսի 27 ելանեմ կանուխ ընդ առաւօտն լո-
ղանալ ի գետն, աստ պատահի ինձ օրիորդ: Թիֆլիզ» (էջ 164—
165):

— «Հազար փեշեն (Երգիծաբանություն էն բարի անձանց
վրա, որ մեր խալխին փուզն են դնում. Խաչ. Աբովյան)»
(էջ 166—175):

— «Հախվերմազի գովքը», վերջում՝ «1843 թ. 9-ն օգոս-
տոսի Թիֆլիս», էջ 178:

— * [Ձայն աղաղակի որբոց և այրեաց փակէ դլսելիս]
(էջ 183—184, հմմ. Դ. հատոր, էջ 229—230):

— «Իմ բարեկամ Աղաջան Վարդանյանի պատկերի առաջ:
1841 թվին. Սեպտեմբերի 5-ին» (էջ 199—200):

— «Առ հանդէս ուխտի ի սուրբ լեառն Մթայ-ծմինդայ: Ի
1842» (էջ 217—219):

— «Ի 1842-ին տեսանեմ զՍարգիս վարդապետ վանահայր
Սանահնայ դիմեալ ի Հայաստան առ ի ժողովել զարձանա-
դրութիւնս տաճարաց և դամբարանաց, զորս և ի տիպ արձա-
նացոյց ի Տփլիս, առ որ գրեմ» (էջ 235—236):

¹ Հմմ. Լ. Մելիքսեբ-Ռեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի
մասին, հ. III, Երևան, 1955, էջ 265:

Երկրորդ հատոր.

— «Պարապ վախտի խաղալիք. Պարապ մարդու տանու միտք. Ով շուղենա, իր պարկի բերանը փակի, թող պարկի: Շինեց ու սաղացրեց հաշատուր Աբովյան»: Հառաջարանի վերջում՝ «1841 թվին, Թիֆլիզ» (էջ 189—279):

Երրորդ հատոր.

— «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի. Պատմական վեպ» (էջ 1—374): Տեքստի 16—17 էջերի միջև կցված վեպի ինքնագիր անվանաթերթը կարգացվում է այսպես. «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի. Պատմական վեպ, բաժանեալ չերիս մասունս. ի Խ. Ապովեանէ, վերատեսչէ Արքունական նահանգական ուսումնարանին, որ ի Տփլիս, ի 1840, Թիֆլիզ»:

Չորրորդ հատոր.

— «Թուրքի աղջիկը (Զորություն կրոնի)» (էջ 19—33):

— «Թիֆլիզու հայոց հանգստարանը» (էջ 40—46):

— «Զվարճալի ու կարճ պատմութիւնք» (էջ 67):

— «Հունայնություն աշխարհի. Այգին Դորդանովի» (էջ 218—228), տարբերակով՝ «Յունայնութիւն աշխարհային բախտի» (էջ 312—315. [Առաջինը աշխարհաբար. երկրորդը՝ գրաբար]):

— «Վերջին հրաժարական քաջազօր արքային Հերակլի» (էջ 229—230 [1838], հմմ. Ա. հատոր, էջ 183—184):

— «Ֆեոդորա կամ որդիական սեր» (էջ 241—259 [գրված է 1841 թ.]):

— «Օվսանա. Պատմություն» (էջ 263—285):

Հինգերորդ հատոր.

— «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից, աշխատասիրեալ ի հաշատուր Աբովեանէ. Տփլիս. ի հայ տպարանի հղբարց Արդանեանց» (էջ 9—164 [վերջը թերի], հմմ. հատոր 7, էջ 411—432):

— «Ընդհանուր դիտողություններ Անգրկովկասյան ուսումնարաններում՝ ինչպես դասավանդման կերպի, այնպես էլ դասատուների նշանակման, ուսման առարկաների բաշխման գործում ներկայումս գոյություն ունեցող մի քանի թերությունների վերաբերյալ և հետագայում դրանք վերացնելու և նրանց ուղ-

դելու միջոցների մասին» (ռուսերեն էջ 165—182, հայերեն թարգմանությունը հանդերձ, էջ 183—201):

— Ճառ Թիֆլիսի ուսումնարանի մասին (էջ 459—461):

— Պայմանագիր Արուսյանի և ծնողների միջև (էջ 462—463):

Վեցերորդ հատոր.

Ընդգծվում է Դորպատյան օրագրերը շուրջ 1830—1835 թթ., հետևապես Վրաստանի տեսանկյունից դուրս են մնում:

Յոթերորդ հատորը՝ ուղեգրություններ են թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական դերմաներենից և անգլերենից (վերջինները, ի միջի ալյոց, պարունակում են տվյալներ Թիֆլիսի և Վրաստանի մասին, էջ 232—246, 303—313):

Ութերորդ հատոր.

— Պատառիկ Թիֆլիսի տեղագրության վերաբերող անավարտ հոդվածից (էջ 96):

— «Ակնարկ. Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հասկացես նրանց հարսանեկան սովորությունների մասին» (գերմաներեն, էջ 107—153, հայերեն թարգմանությունը հանդերձ, էջ 154—190):

— «Նահատակությունն սրբոց Վարդանանց» (էջ 321—328 [գրված է 1840 թ.]):

— «Բան ասացեալ ի վերայ դամբարանի սիրելի աշակերտին իմոյ զօրիմազ Արդութեանի ի բերանոյ ընկերաց իւրոյ, որ վախճանեցաւ ի 29 մարտի 1840 ամի ի 15 ամի կենաց իւրոյ» (էջ 329—333):

* * *

Խ. Արուսյանի վրացի ծանոթներից և աշակերտներից հաշտների են՝.

ա. Զաքարիա քահանա Մժեղլով կամ, ավելի ուղիղ, Մճեղլով (Մճեղլիշվիլի թե՛ Մճեղլիձե), որն հղել է կրոնի և վրաց լեզվի դասատու, նրա մասնավոր պանսիոնում²:

¹ Լ. Մելիքսեբ-Քեկ, Խ. Արուսյանը Թբիլիսում և «Թուրքի աղջիկ» պատմվածքի տեղագրությունը, «Գրական հանդես» (Թբիլիսի), 1941, № 1, էջ 31—32:

² Այս Մժեղլով, այսինքն Մճեղլով քահանան, որն ունեցել է մի խուլո-

բ. Իոսեբ Գիորգիի Զուբալովը (Զուբալաշվիլի), որը հայտնի է իբրև քաղաք Վերոնի մասին գրված ծանոթագրության հեղինակ, կցված Շեքսպիրի «Ռոմեո և Զուլիետա»-ի վրացերեն թարգմանությանը (հանդես «Յիսկարի», 1859, № 5, էջ 5—78, № 6, էջ 21—205):

դ. Իվանե Կերեսելիձե, որն ուսանել է 2 տարի Խ. Աբովյանի պանսիոնում, ապա եղել է հանդես «Յիսկարի»-ի («Արշալույս») խմբագիրը:

դ. Ոմն Բաբրաձե-թե՝ Բաղրատ [ա] ձե (անունն անհայտ), որը նույնպես եղել է Խ. Աբովյանի աշակերտը, հետագայում զինվորական աստիճանավոր՝ զնդապետ:

ե. Բարաթով աղզանունով մեկը՝ Գիորգի թե՝ Գրիգոր, մյուսը Իլիա, որոնք աշակերտել են Խ. Աբովյանին դավառական դարոցում 1840—1841 թվականներին, հետագայում աշխատակցել են «Յիսկարի»-ին իբրև արձակագիր-թարգմանիչներ («Յիսկարի», 1860, № 12, 1870, № 4):

զ. Ստեփան Մելիքով (Մելիքիշվիլի)՝ տպարանի տեր Թիֆլիսում:

* *
*

Հատկապես հետաքրքիր է Խ. Աբովյանի և Ն. Բարաթիշվիլու ստեղծագործությունների զուգագրումը՝ նրանց մեջ դոկտոր-թյուն ունեցող մի շարք բնագիտությունները վեր հանելու համար²:

Դժվար է ասել, արդյոք այս երկու պայծառ դեմքերն անձամբ ծանոթ են եղել, թե ոչ, սակայն երկուսի ստեղծագոր-

համար տղա Միխայիլ անունով, հիշատակված է, ի միջի ալլոց, Քրիլիսիի 1865 թ. համբարների ապստամբության արխիվային նյութերում (տես՝ Լ. Մելիքսեթ-Քեյ, նյութեր Քրիլիսիի համբարների 1865 թվականի «Ելույթի» պատմության համար, Քրիլիսի, 1947, էջ 111):

¹ Իվ. Կերեսելիձեի (1829—1892) մասին հատկապես՝ Ա. Կալանդաձե, Իվանե Կերեսելիձե, Քրիլիսի, 1959, էջ 10 (վրացերեն):

² Л. Меликсет-Бек. Х. Абовян и Н. Бараташвили. "Труды Тб. Гос. Пед. Института имени А. С. Пушкина", т. XIII, 1959, стр. 335—345:

ծուծյունն այնքան է առնչվում, որ հարց է ծագում՝ արդյոք այդ ընդհանրությունը չի բխում միեւնույն միջավայրից: Այդ միջավայրը, իհարկե, Թիֆլիսն է իր շրջապատով, ինչպես և ողջ Վրաստանը, որին, ինչպես և Աբովյանը, նույնպես և Ն. Բարաթաշվիլին լավ ծանոթ են եղել:

Բերենք օրինակներ.—

1. Ն. Բարաթաշվիլու իղեֆերան է եղել, ինչպես հայտնի է, «Մտորումները Քռի ափին» («Փիքրնի Մտկվրիս ափրաս»), որն իր արտահայտությունն է գտել համապատասխան բանաստեղծության մեջ (1837), որտեղ հեղինակը ասում է.

Դրնացի գետափ, որ ցրեմ մաշող իմ մըտքերն աննինջ,
Փրնտրեցի իմ հին ծանոթ տեղը, որ հանգչեմ մի քիչ:
Ափին թիկնեցի, փուլ եկավ սիրտըս ու լաց եղա ես,
Իմ շուրջն էլ թախծոտ, իմ շուրջն էլ համակ տըխուր էր ինձ
պես:

Ծանրը հուզվում է ու բըրթմընջում է Քուռ գետը անվերջ,
Դողում է, խաղում է երկընթի լաղուրն ալիքների մեջ:
Ու հեռվում մարող վառ վերջալույսի շողերի տակին,
Գետափին, մենակ, ականջ եմ դընում նըրա աղմուկին:

— Քուռ, մայր, դարերի անբարբառ վրկա, հոսում ես՝
հուզվում,
Ո՛վ գիտի թե ո՞ւմ ինչ ես շրջընջում, ինչե՛ր ես ասում...

(Թարգմ. Հովհ. Թումանյանի)¹:

Ճիշտ այսպես և. Աբովյանը սիրել է շրջել ու թափառել Կուր (Քուռ) գետի շրջակայքում կամ նրա ափին գտնվող մի շարք վայրերում, ինչպիսիք են «Մոռաստիրի եկեղեցին», կամ հինավուրց «Լուրջի Մոռաստերի»-ն, որը գտնվում է նախկին Ղորղանյան, այժմ Վաթա-Փշավելայի անվան փողոցի վերջում, ապա նախկին «Մադաթովի կղզին», որտեղ Կուր գետն երկու ճյուղի էր բաժանվում ու հետո նորից միախառնվում, կաղմեղով հիշյալ կղզին, նմանապես երբեմնի «Նեմեցի Կոլո-

¹ «Գրական թերթ», 1937, № 27, «Սովետական Վրաստան», 1945, № 81 (սխալ վերնագրով՝ «Մտորմունք Քռի մասին», փոխանակ ափին):

նիան», նախկին Միքայելյան, այժմ Պլեխանովի պողոտայի և առաջներում Կիրկայի, այժմ Կ. Մարջանիշվիլու փողոցների խաչավորման տեղում և այլն:

Խ. Աբովյանի երկերում, իբրև մտորումների վայրեր նշված են վերոհիշյալ տեղերը, որոնք գտնվում են Կուր գետի ափերին:

Դեռ ավելին: Մեր մեծ լուսավորիչը գրել է նաև, որ երբեմն «Հոգիս եղ[էի] բերում; թե չէ Քուռը վաղուց կըլեր իմ գերեզմանը»¹: Այնուհետև. «չատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ», իսկ մի դեպքում էլ՝ «հենց իմացել էին, թե Քուռն եմ ընկել, չունքի ամեն առավոտ, րիգուն գնում էի, լողանում»²:

Կուր գետի ափին իր մի այցելության տպավորությունները Խ. Աբովյանը արտահայտել է մի բանաստեղծություն մեջ, որը հետևյալ ընդարձակ վերնագիրն է կրում՝ «Ի 1836 յուլիսի 27 ելանեմ կանուխ ընդ առաօտն լողանալ ի գետն. աստ պատահի ինձ օրիորդ մի. Թիֆլիզ», և ուր, ի միջի այլոց, կարդում ենք.

Նոր էր բացվել առաօտեան արևին աչք ծիծաղագին.
Սարերը և ձորք նոր զարթնէին ի խոր քննոյ գիշերային.
Հովն հանդարտ մեղմիկ թևովք փըշի երեսս լըռիկ դաշտին.

Ժբայտի, խաղայ, ընդ ալեաց գետոյն կենդանագործ շողք
երկնային³:

2. Ն. Բարաթաշվիլին 1836 թվականին գրել է իր սքանչելի «Իրիկնամուտը Մթածմինդայի վրա» («Շեմողամեբա Մթածմինդագեդ») բանաստեղծությունը, որտեղ՝ դիմելով Մթածմինդային՝ ասում է.

¹ Խ. Աբովյան, երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Երևան, 1947, էջ 21:

² Խ. Աբովյան, հ. III, էջ 3: Ի դեպ նշենք, որ Խ. Աբովյանի այս արտահայտությունները բավականին լուրջ մոտիվներ են, որպեսզի նրա եղբրական անհետացումը բացատրենք անձնասպանության փաստով կամ զուցե անակընկալ դժբախտություն մարդկային (Ջանգու) սառցանման ջրում դարնան պահին վաղ առավոտյան լողանալու միջոցին:

³ Խ. Աբովյան, հ. I, էջ 164—165:

«Օ՛, վայրե՛ր, վայրե՛ր, հիշում եմ ինձ՝ մըտորում էի,
նվ ինչ որ այնտեղ՝ ես ձեր միջև մըտմըտում էի,
Դուք ինձ լիցք տրվիք, զգացի ինչ է հոգու հագուրդը»...

«Երբ վիշտն է պատում, դեպ քեզ եմ ձրգտում,
որ դու փարատես ցավ ու տառապանք.
Երեկոն—սըրտիս, Թախիծը—սըրտիս:
մըխթարանքը քեզնից պիտ ստանա»...

(Թարգմ. Ս. Ավլյանի):

1842 թվականին Խ. Աբովյանը նույնպես Մթածմինդային (Սուրբ Դավթի լեռան) նվիրում է 17 տնից բաղկացած «Առ հանդէս ուխտի ի սուրբ լեռն Մթածմինդայ» բանաստեղծությունը, որտեղ, ի միջի այլոց, գրում է.

Արձանացիր ինձ յանդիման՝
Պատկեր լուսոյ ինձ կենսատու,
Թող սա լիցի վերջին վայրկեան,
Միայն մեռաց ի գիրկս Բն՝...

Ինչպես Ն. Բարաթշավիլու, նույնպես և Խ. Աբովյանի ձգտումը դեպի Մթածմինդան պայմանավորված էր, ի միջի այլոց, նաև նրանով, որ այնտեղ հանգչում էին նոր թաղված Ա. Ս. Գրիբոեդովի նշխարները, որի մահը հավասարապես ողբում էին թե՛ ռուս, թե՛ հայ և թե՛ վրաց ժողովուրդները:

Ի դեպ, նշենք, որ Խ. Աբովյանին հավանաբար հայտնի է եղել Վենետիկի Մխիթարյան Մինաս Վ. Բժշկյանի Թիֆլիսի նկարագրությունը, որտեղ Մթածմինդայի մասին գրված է. «Ի վերայ այսր լերին գոյ եկեղեցի վրաց Թածմինդայ կոչեցեալ. այս սուրբ լեռն, ուր բոկոտն յաճախեն ուխտաւորք յիւրաքանչիւր հօթնեկի յաւուրս հինգշաբաթուց»³:

Հիշենք նաև վրաց մեծ բանաստեղծ Ակակի Ծերեթելու (1840—1915) ձոնը Մթածմինդային գրված 1892 թվականին

¹ Նիկոլոզ Բաբաշավիլի, Հատընտիր, Թարգմ. Սուրեն Ավլյանի, պրոֆ. Լ. Մելիսեք-Յեկի խմբագրությամբ, Թբիլիսի, 1946, էջ 19:

² Խ. Աբովյան, հ. I, էջ 217—219 (ընդգծումը մերն է.—Լ. Մ.-Ռ.):

³ Միևս Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և այլն, Վենետիկ, 1830, էջ 414:

«Լուսաբաց» (Գանթիստի) վերնագրով, որը լիովին ձայնակցում է Խ. Աբովյանի ավանդին.

Կենդանի լինեմ, թե մեռած—
Հիշի՛ր ինձ, պահի՛ր փեշիդ տակ.
Ձե՛ որ աչքըս քեզ սեևում
Ես քեզ թողել եմ մի կըտակ.—
Ո՛, մայր իմ, լոկ այս եմ ուխտել՝
Քո գրկում հանգչել առնավետ...
Երկինքըդ փիրուզ, զըմբուխտե,
Հայրենի հո՛ղ իմ սիրավետ՝:

(Թարգմ. Հ. Կարայանի):

3. 1839 թվականին Ն. Բարաթաշվիլին գրել է իր գլուխգործոց «Քարթլիի բախտը» կամ «Քարթլիի ճակատագիրը» («Բեդի Քարթլիսա») պոեմը, որտեղ գեղարվեստական դույներով պատկերել է իր հայրենիքի անելանելի վիճակն՝ արտաքին թշնամիների անընդհատ հարձակումների պատճառով, որից դուրս գալու և ժողովրդին բնաջնջումից փրկելու միակ ելքը եղել է Վրաստանի կողմից Ռուսաստանի հովանավորություն ընդունումը: Իր պոեմում հեղինակը նկատի է ունեցել 1783 թվականին Գիորգիեսկում կնքված պայմանագիրը, որով Ռուսաստանն երաշխավորել է պաշտպանել Վրաստանին «շահական» Պարսկաստանից և «սուլթանական» Թուրքիայից:

«Քարթլիի բախտը» պոեմում հետաքրքիր է էրեկլե (Հեթումկա) Բ վրաց թագավորի և կանցլեր Սոլոմոնի բանավեճ-դիալոգը: Հիշյալ գեմքերը երկու տարբեր կողմնորոշման (օրինատացիայի) հետևողներ էին: Թագավորը արտահայտում էր այն հոսանքի տեսակետը, որը Վրաստանի միացումը Ռուսաստանի հետ համարում էր պրոգրեսիվ երևույթ, մինչդեռ մյուս հոսանքը սրա հակառակն էր պնդում:

Էրեկլե թագավորը կանցլեր Սոլոմոնին դիմում է հետևյալ խոսքերով.

Հապա, ի՞նչ կասես, իմ քաջ նախարար,
Մըտեբրիմ որդիս, մըտածի՛ր անսխալ:

1 «Արշավ», 1940, № 3, էջ 14 (ընդգծումը մերն է.—Լ. Մ.—Բ.):

Ռուսաց անունն է հրռչակված հիմա,
 Ունեն իմաստուն, բարեգործ արքա,
 Վաղուց միություն ունենք ներանց հետ,
 Ունենք կապ հաստատ, դավանանք հավետ,
 Ժառանգությունըս թող նրբան անցնի,
 Որ նա Քարթլիին երջանիկ դարձնի¹:

(Թարգմ. Ս. Ավչյանի):

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին թուրք-մենչայի 1828 թվականի փետրվարի 10-ի պայմանագրի համաձայն, Խ. Աբովյանը նույնպես համարել է առաջադեմ երևույթ և իր «Վերք Հայաստանի» վեպում ընդգծել այդ միացման բարերար հետևանքները հայ ժողովրդի համար:

Վրաստանը Ռուսաստանի հետ միանալու ասպեկտում է Խ. Աբովյանը, մասնավորապես, դիտում վրաց արքայազն Ալեքսանդրեի (Էրեկլեի որդու) գործեկալերպը և կերպարը, որը համախոհ լինելով Քվաթխեվիի վանքի կիսասարկավագ Իոնա Խեկաշվիլու հետ², հակառակ էր ռուսական օրինենտացիային և, իբրև այդպիսին, «Վերք Հայաստանի»-ում հանդես է գալիս նույն դերում, ինչպես Սոլոմոն կանցլերը «Քարթլիի բախտ»-ում:

Խ. Աբովյանը բառեր չի խնայում գովերգելու ռուս ժողովրդին, որը Հայաստանին փչեց «շունչ կենդանի»:

Էն ինչ շունչ կըլի, որ էս նոր հոգին,

Փչի, վերկացնի քնից մեր ազգին,

Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին

Էլ եղ սիրտ տա ու կանգնացնի կրկին:

¹ Ն. Բաբաշվիլի, Հատընտիր, էջ 52—53:

² Տե՛ս Ա. Նրիցեանց, վրաց թագավորական տան վերջին շառավիղը, «Արձագանք», 1882, № 12, էջ 179: Մարիամ Մեկեր-Աղամալյանի տապանադիրը վանքի մայր եկեղեցում, հյուսիսային պատի տակը փորագրված էր 3 լիզվով՝ ռուսերին, հայերին և վրացերին, որոնցից հայերներ կարդացվում է այսպես. «Մարիամ Իսահական Մեկեր-Աղամալյան, ամուսին արքայազն Աղեքսանդրի որդու շերակլ արքայի վրաց, ծնեալ ի 12-ն օգոստոսի 1808 ամի և վախճանեալ 7-ն հոկտեմբերի 1882 ամի» (լուսակարը տե՛ս «Каталог грузинских эпиграфических памятников Гос. Музея Грузии», Тбилиси, 1953, табл. XXIX, №2, հմմ. մեր զրախոսականը՝ «Эпиграфика Востока», XII, М.-Л., 1958, стр. 120):

Ահիս ես էն ձեռքին կյանքս դուրբան կանեմ,
էն կոխած հողին երեսս կքսեմ,
Ապրիմ իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնիմ՝ հողիցն էլ միշտ նրան կօրհնեմ¹:

Ըստ Խ. Աբովյանի, «էջմիածին, Թավրեղ, Աբասաբաթ, Սարգարաբաղ—ռուսաց օրհնյալ ոտի հողին արժանացան»²:

Հետաքրքրական է, որ Ն. Բարաթաշլիլու «Քարթլիի բախտը» պոեմի (1839) արտահայտություններին և Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի (1840) խոսքերին միանգամայն համապատասխանում են նրանց հետ միաժամանակ (1840) գրված Մ. Լեւոնտովի «Մծիբի» պոեմում տեղ գտած հիշատակությունը.

Թե ինչպես ճշնշված իր թագի տակին,
Այս ինչ թագավորն այս ժամանակին
Իր ժողովուրդը հանձնեց ընդունին

(Թարգմ. Հովհ. Թումանյանի):

Եվ այն օրից

Վրաստանը ծաղկեց, ուճացավ
Իր այգիների շուքերում հով-հով,
Բարեկամական զենքով պաշտպանված
Թըշնամիների ահից ապահով:

(Նույնը)

Ն. Բարաթաշլիլու և Խ. Աբովյանի նման, թերևս նրանցից մի փոքր առաջ, վրաց աղանավոր մտավորական Սոլոմոն Դոդաև—Դոդաշվիլին (1805—1836) ևս նշել է, որ «Վրաստանը առանց Ռուսաստանի անկարող է գոյություն ունենալ»:

«Վերք Հայաստանի»-ի, ինչպես նաև «Քարթլիի բախտ»-ի մեջ ընդգծված է ո՛չ միայն Հայաստանի և Վրաստանի Ռուսաստանին միանալու պրոգրեսիվ էությունը, այլև անդրկովկասյան ժողովուրդների կացությունը Ռուսաստանի հովանա-

¹ Խ. Աբովյան, հ. III, էջ 165:

² Նույն տեղում:

վորութեան ներքո սիմվոլացած է երկու քույր գետերի՝ Կուրի և Արազի միախառնումով և հետագայում Կասպից ծովը թափվելով, որն ընդունում է իր ջրերում «մեծ» քրոջ՝ Վոլգայի ալիքները: Վերջինիս (Վոլգայի ալիքների) նպատակն է «Կասպից ծովի սիրտն ածեն, նրա աղի ջրումը կորչին, Պարսից նավերը ջախըփուրթ անեն, Ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանին ու բերեն»¹:

Իսկ Կասպից ծովի օժանդակութեամբ Կուր գետի միութեանը կրտսեր քրոջ՝ Արաքսի և մեծ քույր Վոլգայի հետ ևս. Արովյանը պատկերում է հառեյալ տողերով.

Ռուսիոյ հզօր բազուկ եղիցի ձեզ նիզն,
Նմա զոհ լինիլ լիցի ձեր միշտ հիզն,
Վօլգայ իմ մեծ քեռ, ես, իմ քոյր Նրասիս,
Համբոյր մատուցուք ի Կասպեան կոհակ²:

4. 1842 թվականին Ն. Բարաթաշվիլին գրում է. «Իրակլի թագավորի գերեզմանը» («Սափլավի մեփիս Իրակլիսա») բանաստեղծությունը, որտեղ մեծ ակնածությունը է հիշում Իրակլի կամ, որ նույնն է, Էրեկլե Բ թագավորին (1762—1798):

Ն. Բարաթաշվիլուց մի քանի տարի առաջ, 1838 թվականին, ևս. Արովյանն էրեկլե Բ-ի մասին գրել է իր, կիսով արձակ և կիսով չափածո՝ 4 (վարիանտով 11) տուն պարունակող, սակայն թերի մնացած «Վերջին հրաժարական քաջազօր արքային Հերակլի» գործը, որտեղ Աղա-Մահմադ-խանի կողմից 1795 թվականի սեպտեմբերի 11-ի Թիֆլիսի ավերման ֆոնի վրա պատկերել է հիշյալ թագավորի հերոսական կերպարը քաղաքի պաշտպանության միջոցին, երբ արքան, հաշվի առնելով թշնամու քանակական գերակշռությունը, ստիպված է եղել հե-

¹ Խ. Արովյան, հ. III, էջ 114: Քուր և Նրասի գետերի միախառնման փաստը, իրրե սիմվոլ, գրահանության մեջ առաջին անգամ արձարծել է Սայաթ-Նովան իր վրացերեն խաղերից մեկում՝ «Քուր, զոն կոսիս պիտուրվիլիս Արազով» (տե՛ս Սայաթ-Նովա, Նրեան, 1959, էջ 121): Այս խաղ առումով Արաքսի և Քուր, երկու քույրերի, միախառնվումը Կասպից ծովի մեջ, ուր ձուլվում են «մեծ Վոլգայի հետ», տես Նաիրի Զարյանի «Խոսք եղբայրության» բանաստեղծության ա. տունը:

² Խ. Արովյան, հ. III, էջ 199, 371, 374:

անալ Թիֆլիսից կամ, ինչպես և, Աբովյանն է ասում, «Թողու զիր Աթոն՝ Կախեթեան յանտառս լինի ապաստան»¹:

5. 1842 թվականին Ն. Բարաթաշվիլին նվիրում է Միխայիլ Բարաթակին, որը հետագայում հայտնի դարձավ իբրև դրամագետ և հեղինակ «Нумизматические факты Грузинского царства» սովոր գրքի (СПб., 1844), նվիրում է էպիգրամ ընդամենը 3 տողից բաղկացած «Հաղարփեշի» վրա:

Հենց նույն ժամանակաշրջանում, համեմատյան դեպս, ոչ ուշ, քան 1843 թվականին, այս նույն «Հաղարփեշայի» թեման օգտագործվում է և, Աբովյանի կողմից իր ընդարձակ, կիսով զավեշտական և կիսով երգիծաբանական պոեմի համար, որ կրում է «Հաղարփեշեն» վերնագիրը:

6. Մի անձնական նամակում, ուղղված Միքայել Բիրթվելի Թումանովին, 1838 թվականի օգոստոսի 6-ի թվահամարով, Ն. Բարաթաշվիլին հաղորդակից է դարձնում նրան այն տպավորություններին, որ ինքը ստացել է.

«В нашем скучном от жаров, душном от пыли, городе нет ничего любопытного. Я оживляюсь только по вечерам лунным, так прекрасным в Тифлисе! Вчера, в один из этих вечеров, пошел я бродить к Московской заставе; вдруг я очутился на кладбище. Признаться, немного смутился, когда взглянул на это окаменение. 11-ть часов ночи. Ни души. Кругом пустота вечная; луна тускло освещает могилы, как догорающая лампада

¹ Խաչատուր Աբովյան, Նախաշաղկղ կրթության ելն, Ռուբեն Ջալալյանի խմբ., Նրեան, 1940, էջ 99—101, նույնը՝ և, Աբովյան, հ. I, էջ 183—184, հ. IV, էջ 229—230:

Այսպեղ, օգտվելով առիթից, մենք պարզե կնք համարում նշել, որ ոչ այս և ոչ էլ այլ որևէ երկում և. Աբովյանը բոլորովին չի հիշատակել այսպես կոչված «Կրծանիսի ճակատամարտը», ըստ երևույթին այն պատճառով, որ նրա մասին իր տրամադրության տակ չի ունեցել անհրաժեշտ նյութեր: Հետևապես, վրաց «Գրականություն և արվեստ» («Լիտերատուրա դա խելով-նեբա») թերթի 1948 թ. № 37-ում տպված ոտանավորը «Կրծանիսի ճակատամարտը» («Կրծանիսի բրձու») վերնագրով, իբրև և. Աբովյանի բանաստեղծություն, այն էլ ականավոր բանաստեղծ Կոնստանտին Լորբեիպանիձեի թարգմանությամբ (իբր թե և. Աբովյանից), ինչպես մենք ստուգեցինք, լոկ թյուրիմացության արդյունք է:

успокоения. Тихо и медленно протекает Кура, как будто боясь нарушить покой в этом унылом мире»¹.

Մոտավորապես նույն թվականներին Խ. Աբովյանը գրում է իր էսքիզը՝ «Հունայնություն աշխարհի. Այգին Ղորղանովի» վերնագրով, որտեղ նմանապես հիշատակված է նույն «Մոսկովսկայա դաստավայի» շրջապատը. «Մեկ Մայսի քաղցր րիգուն վերիցը եղ գալիս,— գրում է Խ. Աբովյանը,— մտա Մոնաստիր եկեղեցու մոտի այգին», որը, ինչպես հետո պարզվեց, «կապիտան Ղորղանովին» է եղել²: «Լուսնի դալուկ, լուրջ լիսը խառնվել է գոլորշու ու գետնի մառախուղի հետ, ամեն քար, ամեն ծառ էնպես էր առաջս բերում, որպես թե հոգիք են հետս խոսում...: Քուռը առաջիս էր օձի պես լարվել, ձգվել, ու շփշփալով, խշշալով՝ իր լեռ դրաղների հետ կռիվ տալիս, անց կենում, լուսնի շողքը ծալում, ծամոտ: Քարափը մեկ կողմից էր իր սե, անմաղ գլուխը բարձրացրել..., Չորն իրան աչքերը բաց արել լուսնի հետ զրից տալիս, իր աղբյուր աչքերը, իր խոր բերանը բաց ու խոսի անում»³:

Մեջ բերված տողերից պարզ է դառնում, որ Խ. Աբովյանին վիճակվել էր իր սիրուհու կամ, ինչպես ինքն է ասում, «սիրելիի» հետ միասին Կուրի ժայռոտ ափին գտնվող «Լուրջի Մոնաստերի» («Կապույտ վանք») կոչված հինավուրց (ԺԲ դարի) եկեղեցու բակըն հասնել, որին կից Թիֆլիսի պրավոսլավ հնագույն գերեզմանատունն էր գտնվում:

Վերոհիշյալն այն վայրն է, որտեղ մեր օրոք տնկվեց Ս. Կիրովի անվան կուլտուրայի և հանգստյան պարկը, որին գեղեցիկ բանաստեղծություն է նվիրել Ի. Գրիշաշվիլին: Վերջինս իբրև էպիգրաֆ. քնտրել է թարգմանաբար Ն. Բարաթաշվիլու խոսքերը, հանված 1838 թ. օգոստոսի 6-ի նամակից, «... Երեկ երեկոյան քայլերս ուղղեցի դեպի «Մոսկովի դուռ»-ը և հանկարծ կանգ առա գերեզմանատան մոտ»:

Այդ ոտանավորը հայերեն թարգմանությունը կարդացվում է այսպես.

¹ Ն. Բարաթաշվիլի, *Նրկեր-Թբիլիսի*, 1945, էջ 77 (վրացերեն):

² Խ. Աբովյան, *Հ. IV*, էջ 219, 220:

³ Նույն տեղում, էջ 219—220:

Երեկ Երեկո կանգնեցի մի պահ
 «Մոսկովի դռան» մեծ ճամփի միջին.—
 Այնտեղ էր մի օր անտառն հնամյա
 Ու մեռյալների օրրանը վերջին:
 Այնտեղ էր և՛ այն տափարալն անվերջ,
 Գաշար լռանիստ, ձորը կեղտակուր,
 Այնտեղ ամեն ինչ գորշ լուսնյան մեջ
 Ննջում էր հանգիստ և անհրապույր:
 Եվ աստղերն էին ոսկե մեխերով
 Գամվել երկնքի փիրուղե լանջին.
 Ես նայում էի ազահ հայացքով,
 Ունկնդիր Կուրի խաղաղ մրմունջին:
 Բարաթաշվիլի՛, այն հողը, ուր դու
 Սիրում էիր մերթ մարդով սավառնել,
 Ծաղկունք է ցանկել արեգակն արթուն,
 Ու լուռ քարերն էլ լեզու են առել...¹

(Թարգմ. Աղավնու):

Թվում է, որ Ի. Գրիշաշվիլու այս տողերը կարելի է հասցեագրել և Խ. Աբովյանին:

7. Ի վերջո, մի գիտողություն ևս Խ. Աբովյանի և Ն. Բարաթաշվիլու դրական ժառանգության զուգահեռ ուսումնասիրության ուղղությամբ:

Երկու կարծիք այն մասին, որ Խ. Աբովյանի և Ն. Բարաթաշվիլու ստեղծագործությունը տոգորված է ջերմ հայրենասիրության ոգով, իհարկե, չի կարող լինել: Սակայն հայրենասիրությունը նրանց մոտ արտահայտվել է տարբեր ձևով. նրանց ավրոամենին ու էմոցիաները դրեթե միատեսակ են, թեև արտահայտության եղանակով և ոճով իրարից տարբերվում են:

Այսպես, օրինակ, հայրենասիրական credo-ն Ն. Բարաթաշվիլու մոտ հնչում է «Որբ հոգին» («Սուլի Օբուլի») բանաստեղծության մեջ (1839) այսպես.

¹ Ի. Գրիշաշվիլի, Հատընտիր, Երևան, 1941, էջ 64—65, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 82:

Զրնկճի երբեք որբությունը ոչ ոքի,
եվ շրհուղի պանդխտությունն ոչ մեկին,
Լոկ հոգով որբ մարդն է միայն խղճալի,
Զույգը կորցրած՝ զըժվար ուրիշ թե ճարի¹:

(Թրագմ. Ս. Ավչյանի):

Ըստ Խ. Արուվյանի «Վերքի» (1840).

Վա՛յ էն աղգին, որ աշխարհումս անտեղ աս,
Վա՛յ էն երկրին, որ թշնամու գերի աս,
Վա՛յ էն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարհը,
Զի՛ պահպանիլ ու հարամու ձեռ կրտա²:

* * *

Խ. Արուվյանի ժամանակակիցների և մանավանդ աշակերտների հուշերում կան բաղմամբով վկայություններ այն մասին, թե ի՞նչպես էր մեծ լուսավորիչը անց կացնում ժամանակը Թիֆլիսում, թե ո՞րտեղ էր զբոսնում, ի՞նչն էր նրան հետաքրքրում և այլն: Այսպիսի տվյալներ ցրված են նաև նրա երկերում:

Հետաքրքիր է Խ. Արուվյանի աշակերտ Գեորգ Հաբիմյանի վկայությունը.

«Մեր վարժապետը, — գրում է Գ. Հաբիմյանը, — առանձնապես սիրում էր ներկա լինել ժողովրդական տոներին³, — դիտել, ուսումնասիրել երեւոյթները, բաներ քաղել դրանցից: Թիֆլիսում այն ժամանակ ոչ թատրոն կար, ոչ օպերա և ոչ անգամ կրկես: Դրանց փոխարեն կային ջիրիդ, մուշտակով, կոխ՝ քմբշամարտ⁴:

Ակամա հիշում ենք Ի. Գրիշաշվիլու տված հին Թիֆլիսի բնութագրերը.

¹ Ն. Բաբարաշվիլի, Հատընտիր, էջ 28:

² Խ. Արուվյան, հ. III, էջ 51, 232:

³ Այսինքն այսպես կոչված «օբա»-ներին, որոնց մնացուկները նկատվում են և մեր օրով (հմմ. Ս. Մանվելյան, Վերջին մեղեդին, «Սովետական Վրաստան», 1958, № 193):

⁴ «Ժամանակակիցները Խ. Արուվյանի մասին», էջ 110:

Կըռիւլ ու համբար: Գըլուխկոնձի: Պար:
Ահա աղաթներ հնուց մնացած...¹

(Թարգմ. Ա. Մուրվալյանի):

Նույն Գ. Հաքիմյանի հուշերում նշված են նաև, որ Խ. Աբով-
յանն իր ընտանիքով այցելել է Թիֆլիսից դուրս գտնվող տե-
սարժան վայրերը, օրինակ Բոլնիսի ուխտատեղին, Շուլավեր
ավանը և այլն:

«Երբ Թիֆլիսի հայոց և՛ վրաց եկեղեցիների և մոտակա
ուխտատեղերի բաները տեսել, դիտել էր [վարժապետս],—
գրում է Գ. Հաքիմյանը,—կամեցավ Բոլնիսի ս. Գեորգի հռչա-
կավոր տոնախմբությունն էլ տեսնել: Այդ ժամանակ Հավլա-
բար քաղաքամասի ժողովուրդը ձիով, սայլով, ֆուրգոնով
գնում էր Բոլնիս ուխտ: Աշունքն էր, գինու և մրդեղենի առատ
ժամանակը. վարժապետը ֆուրգոն վարձել տվեց, ուխտատե-
ղին Թիֆլիսից 50—60 վերստ հեռու էր: 1841 թվի աշունքին
պանսիոնի աշակերտներից 10 հոգի ճամփորդի պես հագնված
գնացինք վարժապետի հետ՝ մեծ մասս ոտով, զրույց անելով՝
դեպի Սումխեսթ (ուլիղ՝ Սոմխիթ,—Լ. Մ.—Բ.) նրամի կողմը:
Ֆուրգոնի մեջ նստած էին տիկին էմիլիան՝ Վարդանիկ տղեն
գրկին և մեր ընկեր Յուզբաշյանցի մայրն ու քույրը: Աբովյան-
ցը շարունակ հարցեր էր տալիս այս ու այն պատահող գեղացի
ծերին, թե ի՞նչ անցքեր են պատահել այդ ձորերում, շենքերում
և ծոցատետրի մեջ նշանակում էր նշանավոր տեղերի, անձերի
անունները: Երբ տեղ հասանք, քեֆ անելը թողած՝ խոսեցնում
էր ուխտավորներին, տեղեկություններ ժողովում 15—16 տա-
րի առաջ եղած քրդերի արշավանքի մասին, թե քուրդ Օթյուղ
աղեն ինչպես է թալանել Նեմեցի կոլոնիեն, որի նկա-
րագիրը վարժապետս գեղեցիկ կերպով գրել է «Վերք Հա-
յաստանի»-ի մեջ: Տոնախմբության միջոցին գիշերն էլ բաց
երկնքի տակ անցկացրինք առանց քնելու. ամեն կողմ դուռնա,
դախրա, պար ու քեֆ էր, Թիֆլիսի զվարճասեր լոթիքը դիպի
հավաքված էին այնտեղ՝ զառով ու կլապիտոնով զուգված:
Գիշերը ճրագի կարիք չկար: Բոլոր ուխտավորներն իրենց սայ-
լերի մոտ խարույկներ ունեին վառած. կրակի շուրջը բոլորած

¹ Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 91:

ոմանք աշուղների ածելուն ու խաղին էին ականջ դնում, ոմանք էլ ուտել-խմելուց կշտացած՝ ետ նստել, հնից, նորից ասում, խոսում էին»¹:

Այս տողերը կարգալիս, չի կարելի չհիշել Խ. Աբովյանի ժամանակվա Թիֆլիսի ու նրա շրջապատի երանգը, որի հաջող նկարագիրը տալիս է նույն Ի. Գրիշաշվիլին.

Ահա թամաշան դեռ չըտեսներված,
էլ ո՛ւր է սերը և խինդը անգին.
Չըկան սալերը վերից շարգախված՝
Ուխտավորներով Բոլնիսի ճամփին:²

(Թարգմ. Ա. Մուրվալյանի):

«Հետևյալ առավոտ,— շարունակում է Գ. Հաքիմյանը,— ֆուրգոնով գնացինք Շուլավեր, ուր հրավիրեց մեզ մեր ընկեր Զարաֆյան Սոլոմոնը. նրա հայրն այնտեղ լավ ալգի ուներ, մեջը սարքին մառան՝ դինու կարասներով: Տեղավորվեցինք նրանց տանը և լավ ժամանակ անցկացրինք՝ երգերով, ճառախոսություններով մեծերի համար դինին էր առատ, աշակերտներին համար խաղողի ջագանները, որին տեղացիք բանդաղ էին ասում»³:

Միջանկյալ Գ. Հաքիմյանը նշում է մի «մանրուք» Խ. Աբովյանի վերաբերյալ. «Վարժապետս լսել էր, որ Հասան խանի օրով երկու շուլավերցի մեղիքներ են նահատակվել քրդերի ձեռքով. ուստի դուրս եկավ փողոց, ծերերին խոսեցրեց, ծոցատետրի մեջ նշումներ արեց: Այդ մասին երկար դրած կա «Վերք Հայաստանի» գրքի մեջ»⁴:

Խ. Աբովյանի երբեմնի աշակերտ (սանսիոնի գծով), հետագայում ղինվորական բժիշկ, իսկական պետական խորհրդական (действительный статский советник) Իվան Աֆանասևիչ Կուկուչանովի (1829—1913) վկայությամբ, Խ. Աբովյանը «սովորություն ուներ իրիկնապահին» իր աշակերտներին տանել «ղրոսնելու»: «Մեր գնալու մոտիկ տեղն

¹ «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», էջ 110—111:

² Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, 1951, էջ 90:

³ «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», էջ 111:

⁴ Նույն տեղում:

էր,— գրում է Ի. Կուկուշանովը,— Վանքի դիմացի կղզին, որ կանաչապատ էր ու ծածկված ուռի և այլ ծառերի անտառով: Աշակերտներու զնում էինք կարգով, բայց ոչ կոնաբոնուկ արած: Քոան աջ կողմի բարակ ճյուղի վրա կար փայտե ժամանակավոր կամուրջ¹, դրա վրով անցնում, զնում էինք կղզին, վարժապետը նստում էր առանձին, մենք վազվզում էինք. նա մեր խաղին չէր մասնակցում, իրեն ծանր էր պահում: Հետը միշտ բերում էր տան ծառային: Կղզին քաղբցոց համար ժամանակ անցկացնելու տեղ էր. ունեոր բնտանիքները սամավարով գալիս էին գետի կանաչ ափերին նստոտում, թեյ խմում: Աղքատ մասը կամ դարիւր կնանիք էլ դուրս էին գալիս աչգ կղզու վրա ոչ թեյի կամ քեֆի, այլ լվացք անելու, կարպետ, մթել մաքրելու»²:

«Զբոսնելու համար, ճաշերից հետո աշակերտներս,— վկայում է Գ. Հաբիմյանը,— [վարժապետը] տանում էր Սոլովակի կողմերը, որտեղ այգիներ էին, վերեն էլ անտառով պատած էր: Վարժապետս սիրում էր բնության մեջ բացօթյա դասախոսել, զրուցող բնության երևույթները բացատրել»³:

Այս վկայությանը, սակայն, կարծես թե մի փոքր հակասում է Իվ. Կուկուշանովի պատմածը, որ «Սոլովակի կողմերն աչգի ու անտառ էր, զբոսնելու չէինք զնում շատ անգամ, որովհետեւ երկյուղալի էր»⁴:

Խ. Աբովյանն իր աշակերտներին «երբեմն էլ տանում էր... Միքայելյան (այժմ Պլեխանովի) փողոցի ուղղությամբ, որն այն ժամանակ դուռ գերմանական գաղութ էր՝ այգիներով շրջապատած, փողոցի կողմը փշե ցանկապատով»⁵: Սակայն «Քոան ձախ ափն անցնելու համար,— գրում է Գ. Հաբիմյան—

¹ Այս կամուրջը փուլ եկավ XIX դարի վերջերում հայոց «ջրօրհնայց» հանդեսի օրը, որի հետեանքով եկեղեցական թափօրին՝ «Հորդանան»-ից վերագարձի միջոցին հետևող հանգիսականների մի մասը ջուրն ընկնելով խեղդվել էր: Կամուրջի փուլ գալուց առաջացած ողբերգությունը որոշ արձագանք է գտել, ի միջն այլոց, Զարգանդ Դարչանի «Պայքար» դրամայի առաջին գործողության առաջին պատկերում («Սովետական դրականություն», 1958, № 7):

² «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», էջ 123—124:

³ Նույն տեղում, էջ 110:

⁴ Նույն տեղում, էջ 124:

նր,— գնում էինք Մետեխի մոտի կամրջով», քանի որ «ուրիշ կամրջ չկար, ոչ վերև, ոչ ներքև», իսկ «Գերմանական դադութում ամենքը վարժապետիս հանաչում էին. իր կնոջն էլ աշնտեղից էր ընտրել»¹:

Էմիլիա Լոռզեի հետ Խ. Աբովյանն ամուսնացել է 1839 թվականի սեպտեմբերին. սպակի ծիսակատարությունը Վանքի մայր եկեղեցում կատարել է Թիֆլիսի Զգրաշեն եկեղեցու միաբան Մովսես քահանա Սալաթնյանցը (1804—1883), Սալաթնովայի թոռը²:

* *
*

Խ. Աբովյանի ստեղծագործությունը, որն իր վրա կրում է XIX դարի 20—40-ական թվականների կնիքը,— թող չափազանցություն չհամարի ընթերցողը մեր ասածը,— պատմական աղբյուրի արժեք է ստանում Թիֆլիսի անցյալի վերականգլման համար, եթե չասենք ավելին, որ որոշ դեպքում (օրինակ Թիֆլիսի բուսաբանական այգու վերաբերմամբ) այն նույնիսկ միակ և անփոխարինելի սկզբնաղբյուր է:

Նվ ի՞նչ չի նկատել ու նշմարել մեծ լուսավորչի սրատես հայացքը:

Ահա նարիդալան՝ հնում Կալա կամ Ղալա կոչված³ հինավուրց բերդը (ամրոցը), որի հսկայական «բրջները» իջնում են այսպես կոչված Դաբաղխանի ձորը, հենց այն վայրում, որ Խ. Աբովյանի օրոք գտնվում էր «թաղավորական՝ բաղնիսների

¹ «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», էջ 110:

² Լ. Մելիսեթ-Ռեկ, Սալաթնովա, Թբիլիսի, 1930, էջ 159—160 (վրացերեն), նույնի՝ Խ. Աբովյանը Թբիլիսիում և «Թուրքի աղջիկ» պատմվածքի տեղագրությունը, «Գրական հանգես» (Թբիլիսի), 1941, № 1, էջ 32—33, Տեր-Մովսեսի նկարը նույնպես, էջ 32 (նկար 1):

³ Կոպիտ սխալ է այս բերդը կոչել «Շուրխա-ցիխեն», որը թյուրիմացության արդյունք է. սրա մասին տես մեր հոդվածները՝ «Тифлис, его описание и краткий исторический очерк», «Тифлис и его окрестности», путеводитель, Тиф. 1925, стр. 8—10. Չալխի—Թբիլիսի—Փայտակարան, հորեկյանական ժողովածու, «Թբիլիսի 1500», հրատ. Թբ. պետ. համալսարանի, 1958, էջ 32—33 (վրացերեն), հին Թբիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 152:

եղևի բաղը», խաղողի տնկիներում և ընկուզենիներում, իսկ Աբովյանի Թիֆլիսից հեռանալուց մի երկու տարի հետո, ուղիղ 1845 թվականին, նրա տեղ հիմնվել էր Թիֆլիսի բուսաբանական այգին¹:

Այդ «բրջները», որ և. Աբովյանը դիտել և հիշատակել է «Թուռքի աղջիկ» պատմվածքում (գրված մինչ 1843 թ.), գրեթե նույնությամբ պահպանված է մինչ մեր օրերը²:

Ահա «Գյոռխանա»-ն, «Թնդավորական այգու» դիմացը, Դաբաղխանա կոչված գետակին հայնկույս, որից երկու փոքր դռներով էր բաժանված և ուր «խարաբաներ» էին նկատվում, իսկ Գյոռխանայից հայնկույս, Սեյդաբաղի կամ Խարփուխի տերիտորիայի վրա շունետր ագրքեշանցիների խրճիթները, սրանց թվում և «Թուռքի աղջկա» բնակարանը³: Այստեղ, Գյոռխանայում, տեղի էր ունենում մահամեղականների «շախսեյ-վախսեյ» կոչված կրոնական արարողությունը, որը տեսել է և. Աբովյանը և որի մի վարիանտը նկարագրել է վերոհիշյալ պատմվածքում:

Ահա հին Թիֆլիսի պարծանք Սիրաշխանան, որի հոտն է գալիս և. Աբովյանի «Հաղարփեշեն» պոեմից և որի նկարագրությունն առկա է Ի. Գրիշաշվիլու մոտ.

Անցե՛լ ես արդյոք մեր Սիրաշխանով,
Դիտել ուշադիր փողոցները ծուռ,
Քեղ չե՛ն ապշեցրել ումբերն հաստափոր
Եվ ճիանուրի շարգահը տըխուր⁴:

(Թարգմ. Գ. Ասատուրի):

Ահա վերա կոչված քաղաքամասը՝ Թամար թագուհու ժամանակվա «Մոնաստիրի»-ով կամ, ավելի ճիշտն առած, «Լուրջի-Մոնաստիրի»-ով, այսինքն Կապույտ վանքով:

¹ և. Աբովյան, հ. IV, էջ 21:

² Լ. Մելիսեք-Յեկ, և. Աբովյանը Թբիլիսում և «Թուռքի աղջիկ» պատմվածքի տեղագրությունը, «Գրական հանդես», 1941, № 1, էջ 35 (նկար 2), էջ 38 (նկար 5):

³ Նույն տեղում, էջ 39 (նկար 6):

⁴ Գ. Ասատուր, Մերձարևելքի գրականության պատմություն, վրաց գրականություն, հ. I, նմուշներ պոեզիայից, Երևան, 1931, էջ 112:

Ահա «Մոզնին»-ը, որին Սայաթ-Նովան հատուկ տաղ է նվիրել նրա 1751 թվականի վերանորոգման առթիվ:

Ահա «զաստավա»-ն Սիրաշխանայի վերեից, որով Կախեթից և Ադրբեջանից Թիֆլիս մուտք գործող բնակիչները Հավլաբարով իջնում էին քաղաք:

Ահա և հայոց հանգստարանը, այսինքն նախկին խոջավանքի գերեզմանատունը, որը հիմնվել էր հինավուրց խոջա-Մելիքի վանքի և կից այգու տերիտորիայում, Հավլաբարի վերևում, որի, ինչպես և զաստավայի ու Մոզնինի, հիշատակությունը գտնում ենք Խ. Աբովյանի «Թիֆլիսի հայոց հանգստարանը» էսքիզում:

Ահա Մթածմինդան, իր տոնահանդեսով հանդերձ, որ լինում է գարնանը, համբարձման տոնի հաջորդ հինգշաբթի օրը կամ այսպես կոչված «Յինանց»-ի 47-րդ օրը¹, և որի նկարագրությունն, ինչպես տեսանք, տրված է Մինաս Վ. Բժշկյանի ճանապարհորդական նոթերում և ուսու բանաստեղծ Յակոբ Պոլոնսկու համապատասխան բանաստեղծության մեջ:

* * *

Վրաստանը և նրա անցյալը, վրաց կամ վրացադղի գործիչներն ու նրանց գործելակերպը մասամբ իրենց արտացոլումն են գտել Խ. Աբովյանի երկերում, ինչպիսիք են՝ «Վերք Հայաստանի»-ն, «Թուռքի աղջիկը», «Հաղարփեչեն», «Վերջին հրաժարական քաջազոր արքայի Հերակլի», «Առ հանդես ուխտի ի սուրբ լեռն Մթածմինդայ», «Թիֆլիզու հայոց հանգստա-

¹ Այս օրն էր հենց 1352 թ. 22 մայիսին, երբ ոմն հայ մեծատուն «Սարգիս Ասլանի որդին» և նրա զավակ «Ամիր-Սայիդը» այցելել էին [Դավիթ] Անհաղթ փիլիսոփայի գերեզմանը Գարեջայի բաղձալիքանց անապատում Լ. Մելիսեթ-Բեկ, Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը, Երևան, 1946, էջ 262—263, հատկապես՝ Լ. Меликсет-Бек, Гарседжийская тетралиннова эпохи монголов 1352г. „Эпиграфика Востока“, т. VIII. М.-Л., 1953, стр. 60. Նույնի՝ Հին Թբիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 153, նույնի՝ Դավիթ Անհաղթը և Դավիթ Գարեջեղին, «Ակադ. Կ. Կեղեկիձեի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական ժողովածու», հրատ. Թբիլիսիի պետ. համալսարանի և վրացական ՍՍՌ ԳԱ, Թբիլիսի, 1959, էջ 197—232 (վրացերեն):

րանք», «Հունալնութիւն աշխարհի, Այգին Ղորդանովի» և
այլն, առանձնապէս զերմաներէն լեզվով գրած աղագորական
բնույթի հոդվածը «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի
և հասկապէս նրանց հարսանեկան սովորութիւնների մասին»:

1. «Վերք Հայաստանի» (1840):

Վեպի մեջ ցրված են բազմաթիւ տեղեկութիւններ և ար-
տահայտութիւններ վրացական իրականութիւնից, օրինակ.
Աղասին փախչում է Փամբսի և ապա Թիֆլիս¹:

«Քաջահաղթ Յիցիանովը» պայքարում է Երեւանը գրավելու
նպատակով²:

[Թիֆլիսի բաղաբացիք] «աւրաղ» կոնծելով և «Կախեթու
գինին անոշ անոշ» խմելով՝ «կառեթով, գրոշկով փառավոր,
ուռած ուռած» ման են դալիս, «զառ, ղումաշ» հաքնում և այլն³:

[Խոշիվանքի] «գերեզմանատան [բարեկարգութեան] հա-
մար... ազգի պատվական իշխանքը՝ պարոն Զավրովն, Խերե-
գինովը, Դավիթ Թամամշովը, Մովսէս Տեր-Գրիգորովը հազար
մանեթներով կխարչեն, իրանք իրանց տեղ կբաշխեն, ժամ
կշինեն, խալիսը ինքն իրան կերթա, իրան հացովը մշակութիւն
կանի անփող», և «էսպէս ընտիր իշխանքը, էսպէս բարեսիրտ
ազգը՝ վարժատուն շինելուց, մեկզմեկու օգնելուց կփախչին»⁴:

«... արինակեր Հասան-խանը [Երեւանի] Սարգարի փոքր
ախպերը... ոտը բարձրացրեց, որ զնա՝ Պետերբուրգն էլ առնի,
ավերի, Թիֆլիզու սիրուն օղլուշաղը իրան դազան զորանցը մա-
տաղ անի»⁵, բոլոր Ղազախ, Բոռչալու գոնմիշ էր էլելը⁶:

«... էրալիլ [Թագավորի] ուրդի Ալեքսանդրեն, որ Վրաս-
տան առնելուց եղը փախել, Պարսից գոռն էր ընկել ու հարիր
սար չէր մնացել, որ անց չկենա, որ բալքի թե իր սրտի մուրա-
ղը կատարի: Լազգի, Զաշան, Զերքեզ, Ղազախ, Բոռչալու,
Շամշադին, բոլոր Կասպից գավառները ձեռները հինա էին

¹ Խ. Արովյան, հ. III, էջ 43:

² Նույն տեղում, էջ 57:

³ Նույն տեղում, էջ 60:

⁴ Նույն տեղում, էջ 61—62:

⁵ Նույն տեղում, էջ 89—90:

⁶ Նույն տեղում, էջ 90:

դրել, թե առեւ, որ թռչին ու Ռսի իշխանությունը ստանան»¹:

«... Հալբաթ որ մեկ օր մեկ արդար, անաշար մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակը կերեւի, թե Հայք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ի՞նչ արին են վեր ածել»²:

«... Ղզլբաշը կարող էր սաղ Վրաստան ուրի տակ տալ, եթե Հայք չէին ամեն տեղ նրա ճամփեն կտրել:... [Գրիգոր Կախսկոպոս Մանուշարյանը] Երմոլովի խնդրքովը Կախսկոպոսության շորերը փոխած, չերքեղի շոր հագած, յարաղ, ասպար կապած, որ Թիֆլիզու, Ղազախ-Բորչալվի միջովը չէր անց կենում, հենց իմանում էր խալխը՝ թե իրանց փրկիչն է գալիս: Էն ժամանակը, որ Շամշադինի մովրովը հարիր մարդով հենց հասավ Մատուշիի ասած կարմունջը³ ու սարսափելով էլ եղ-եղ դառավ, չկարաց առաջ գնալ, էս հսկա Կախսկոպոսը երկու մարդով, հազար արինակեր հարածու գլուխ ջարդելով Ղազախ-Բորչալու անց կացավ, հասավ Շամշադին, իր հայրենիքը...

... Մինչև Թիֆլիզուցը օգնություն զար:... էս միջումը Ալեքսանդր վալին ու Զոհրաբ խանը էկան, Շամշադինը կոխեցին ու քիչ էր մնացել, որ բոլորը տակ ու գլուխ անեն:... Անմահ Կախսկոպոսը էն խնդրեց, որ Շամշադինու ու Ղազախ-Բորչալվի հայ ազգը թուրքի ձեռիցն ազատվի»⁴:

¹ Վրաց արքայազն Ալեքսանդրի (1770—1844) մասին տե՛ս. Բաֆֆի, Ալեքսանդր արքայազնը Պարսկաստանում, «Մշակ», 1870, № 25. նույնը վրացերեն՝ «Գրոնրա», 1872, № 28. «Կվալի», 1893, № 41: Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1958, էջ 32—34: Աղ. Երիցյան, Վրաց թաղավորական տան վերջին շառավիղը, «Արձագանք», 1882, № 12, էջ 177—180, նույնը վրացերեն՝ «Գրոնրա», 1882, № 126 և 127: «Акты Кавказской Археографической Комиссии», Т. I, 1866, стр. 199—201: Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. III, Եր., 1955, էջ 192: Հմմ. Նույնի՝ Ս. Հոփստիմևի և Ս. Գալանեի վանքերի երկկողման շափածո տապանադրերը, «էջմիածին», 1959, № 4, էջ 34—38:

² Խ. Արովյան, հ. III, էջ 121:

³ Հավանաբար խոսքը այսպես կոչված «Կոտրած կամուրջի» (վրաց. Գատեխիլի խիդի) կամ «Կարմիր կամուրջի» (ռուս. «Красный мост») մասին է: Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. III, էջ 131, 139. Խ. Н. Квезерли-Конадзе, Гатехили хиди, Тбилиси, 1956.

⁴ Խ. Արովյան, հ. III, էջ 122, 306:

«Մագաթովի անունը հազար բերան կհիշվի, հազար լեզու կգրվի՝ թե նա Վրաստան աղատեց»¹:

«Միթե ներսես եպիսկոպոսը չէր, որ զրաֆ Պասկևիչի հետ մտավ Հայաստան ու Հայոց մեծ մասը՝ քարոզելով, հորդորելով՝ Ռսի ձեռի տակը բերեց: Քանի՞ քանի քաղաքներ, գեղեր դարձակվեցան զվլբաշի ու օսմանցվի երկրումը, ու քանի՞ սն էր Հայաստան, Վրաստան նրանցով լցվել»²:

«Միթե էս բայազդցիք չէին, որ հրե մեր զորքը նրանց քաղաքն առավ, մեկ քանի օրից եղը՝ հանկարծ Վանա փաշեն մեծ զոռունով որ էկավ, Բայազդի չորս կողմը բռնեց, էս քաջ Հայկերը հոգին ատամների տակն առած էն տղամարդությունը ցույց տվին, որ դեռ երեան չեկած, շատը աստիճան, խաչ ստացավ: էս օր էլ որ ողորմելիքը Թիֆլիզումը մշակություն անկիս, կամ բազմաներումը ծառայելիս խոսք ա ընկնում, էն կտրատված շորքներիցը էլի իրանց խաչերը հանում, գոռոզությունով ցույց են տալիս իրանց արնի գինը»³:

«... Ախ՝ ո՞ւմ մբաքից կերթա էն հսկա կերպարանքը, էն գեղեցիկ պատկերը, էն անոշ լեզուն ու անօրինակ ռաշիդությունն ու սիրտը, որ շուլավերցի Սոսի աղեն ու մեկիք Հոհանջանն ունեին: Հրեղեն վիշապի պես ընկել էին Քաշվիթու ու Բոլնիսի սարերը, որ թշնամու առաջը կտրեն, տեղ չտան, ու ինչ ժամանակ խաբարը նրանց է հասնում, թե նեմեցի Կոլոնիեն տվին, քառասուն կտրիչ տղերք քամակին, իրանց մովրովն էլ մեջքներումը՝ է՛ն վախտն են վրա հասնում, որ քուրդ Օբջուղ աղեն վաղուց Կոլոնիեն քանդել ու իրեք հազար մարդով եսրների կեսը կոտորել, կեսը առաջն արել՝ տանում ա»⁴: «Բայց հսկայն Սոսի» ու «էս կտրիչ հսկայքը»... «կատաղած հարամին ընչանք վրա կհասներ, մեկ տասնը հինգ մարդ էլ սպանում են»⁵:

1 Խ. Աբովյան, հ. III, էջ 307:

2 Նույն տեղում, էջ 123, 307:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 124, 308:

5 Նույն տեղում, էջ 124:

«... Ընկերներն... Աղասուն կապեցին ձիու վրա ու ընկան Աբարանու սարը, որ կամ Փամբակ փախչին կամ Ղարս կամ Ախալցխա, որ իրանց զուխը թափեն»¹:

«Ղզլբաշի զորքն Գյանջա, Ղարաբաղ էս կողմիցն էր առել, ոտնատակ տվել, Փամբակ, Շորագյալ էն, էս կողմիցը Աբասմիրդեն, էն կողմիցը Հասան-խանը քանդելով, ավերելով էկել՝ հասել էին Թիֆլիզ, որ գնան Պետրբուրգ... Մատաթովը պետք էր վրաստանու փրկիչը լիներ»², «որ գա Թիֆլիս»³:

«Դեռ վարժատան աշակերտ էի ու ինչպես էսօր կենդանի է մտքումս՝ Աղասին ինչպես մտավ Թիֆլիս»⁴:

«... Պասկևիչ, անօրինակ հսկայն, մեկին հանդիսով Թիֆլիս ուղարկեց, մյուսոցը շնորհք, ողորմություն ցույց տվեց»⁵:

«... Ներսես սրբազանը Սահակ աղի ձեռիցը բռնած՝ ընկել էր բրջերի, բազանների զուխն ու հենց զիտեր, թե երկնքիցն ա նրեանու դաշտին մտիկ տալիս: ... Չէր իմանում՝ թե նրեան ա տեսածը, թե Թիֆլիզ»⁶:

2. «Թուոֆի աղչիկը» (մինչ 1843)

Այս պատմվածքը, որի ենթավերնագիրն է «Զորություն կրոնի», գրված է Ն. Աբովյանի Թիֆլիսում եղած ժամանակ ոչ ուշ քան 1843 թվականը, և ամբողջապես հյուսված է հին Թիֆլիսի Սեղաբաղ կամ Խարիովս կոչված քաղաքամասի ադրբեջանական (թուրք) բնակչության կենցաղային կտավի վրա:

Պատմվածքը միաժամանակ միակ գրավոր աղբյուրն է Թիֆլիսի բուսաբանական այգու այսպես կոչված «նախապատմության» համար, երբ այդ այգու տեղում գտնվում էր «Թափվորական ամառնային այգին» («Казенный летний сад»):

¹ Ն. Աբովյան, հ. III, էջ 126:

² Նույն տեղում, էջ 174:

³ Նույն տեղում, էջ 175:

⁴ Նույն տեղում, էջ 176, 360:

⁵ Նույն տեղում, էջ 180:

⁶ Նույն տեղում, էջ 181:

⁷ А. X. Розлов, Краткие исторические сведения о Тифлисском ботаническом саде. „Труды Тифл. ботанического сада“, т. I, Тифлис, 1895, стр. 1.

«Թուռքի աղչիկը» որոշ գաղափար է տալիս ընթերցողին այդու որպիսության մասին մինչ 1843 թվականը:

Բերում ենք պատմվածքից բոլոր այն կտորները, որոնք այսպես թե այնպես վերաբերում են ինչպես բուսաբանական այգու «նախապատմությանը», նույնպես և առհասարակ հին Թիֆլիսին¹:

«Մեկ օր էլ էս կրակը ջանս էր ընկել, սիրտս էրում, փոթոթում,որ տանից, տեղից դուս ընկա, ու դեպի թաղավորական՝ բաղնիսների ետեի բաղը երըմիշ էլա»...²:

«Իմ բախտիցը թագավորական բաղի դուռը բաց էր: Մտա ներս, բաղմանշուն գլուխ տվի, սուտ, որ ինչ ա, չբարկանա ու ծառին, քոլին մտիկ տալով, ընկա դարըդուս, որ կարծիք չտանի, թե բան կգողանամ... Օգոստոս ամիսը, հավողի ճթերը հազար տեղից կախ ընկած:

Ես էլ մրգի գերի, փորի գերի,
Ո՞վ ըլի, որ սրտի ծերը չէրի:

Քարափի տակի ընկուղի ծառն ու հավողը աչքիս տակն էի առել, ու դեմը գնում, դեմը աչքես եղես, չորս կողմս քցում, որ տեսնեմ, թե բաղմանչին հո չի գալիս, ծառերի տակին հո մարդ չկա, որ ինձ տեսնի:

Հարամ ըլի էսպես ահն էլ,
էսպես իշտահն էլ»³:

«... երեխությունս միտս ընկավ. բաղմանչին տուն մտավ, հավողի շաղ շաղ, սև սև ճլմկոտած ճթերը ցրվեցին սրտիս հոքսն ու ցավերը, ու նստած տեղիցս, ընկուղու տակիցը հարիր անգամ շլինքս երկարացրի, էլ եզ քաշեցի, ծղուրդ էլա, ծլունկ էլա ու, աստուծո փառք, մարդ չտեսավ...»⁴:

¹ Լ. Մելիքսեր-Քեկ, Խ. Արովյանը Թբիլիսում և «Թուռքի աղչիկ» պատմվածքի տեղագրությունը, «Գրական հանդես» (Թբիլիսի), 1941, № 1, էջ 31—40 (6 նկարով):

² Խ. Արովյան, հ. IV, էջ 21:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 22:

«... Դեհ, հա կաց ու շախսե-վախսե կանչիր... էլ ահ ու դող շունեի, ուզածս արել էի, մեղքս գործել, ծառը չէր ասիլ, ես էլ հո՛ էլի ինչպե՜ս մեկ մարդ՝ բանից բխաբար, վազին էլ չէի մտիկ անում, որ իմ արդարութունը կարծիք չտա—ընկա էլ եդ սարնըվեր, սարնըդուս ու էկա մեկ կանաչ տեղ նստեցի, աչքս Թուրքերի գյուղսանին քցեցի...»¹:

«... Քարափի բրջները մեկ կողմիցս էին գլխները բարձրացրել, լուռ, մունջ մտիկ տալիս, գյուղսանի գերեզմանաբերերը առաջիս լուվել, պապանձվել, չոր, էրված, խորովված սարըն ու ձոր՝ մեկին իր մեռած գլուխը ցույց տալիս, մյուսն իր ձոթած սիրտն ու դռը: Լաղզի, Թուրք, Ղզլբաշ, Օսմանցի մեկ կողմիցն էին թվանքի, Թուփի գյուլլին զոռ տալիս, դռում, Հայ, Վրացի, Օս, Փշավ, Իմերել մյուս կողմից՝ իրանց կրակը բաց արել՝ էկողին ջարդում, մոտանողին գյուլլախորով անում, հասնողին՝ յա գլուխը փորը խրում, յա իրան սաղ սաղ բերդը քաշում: Ղշղրուն, հարայ հրոցը, ձենը ձորը ականջ էին խլացնում: Սար ու ձոր զրմբում, դրնդում, մարդի ուշ ու միտքը գլխիցը թոցնում էր:

Որի մաղիցն էին բռնել քաշ տալիս,

Որի թևիցը ձգում կախ տալիս,

Որը որդու եղևիցն էր լալիս,

Որը գլխին վեր հատում, սիրելուն տանելիս...»²:

«... էսպե՜ս մոլորած, շվարած մնացել էի, որ աչքս ընկավ թագավորական բազլի դիմացի խարաբեքանց վրա, որ դյուռխանիցը երկու ոտ հեռու չի ըլիլ: ... Գեջդանգեջ տեսա, որ մեկ ջան քարերի միջին նստած՝ դեմը գլուխն էր ծեծում, դեմը դռը կտրատում: ...Ո՛վ ըլի, թող ըլի, սրա դարդը ընշանք չիմանամ, չեմ դնալ ըստեղանց, ասացի ու թե առա: Բայց ի՞նչպե՜ս ճամփա գտնիլ. բազը մեկ դուռն ուներ, դենը գնայի, պտի կրկին քաղաքը մտնեի ու բաղնիսների գլխովը գայի, էնտեղ հասնեի: ... Երկու պատիկ դուռն էլ կային³, ամա կոխ-

¹ Խ. Արովյան, հ. IV, էջ 23—24 (ընդգծումը մերն է—Լ. Մ.—Բ.):

² Նույն տեղում, էջ 24:

³ Այժմ ոչ այս դռները կան և ոչ էլ որևէ պարխապ, որը բաժանում էր Գյուղխանան բուսաբանական ազդուց, քանի որ Գյուղխանան վերջինիս է հանձնրված և նրա տերիտորիայի մասն է կազմում:

պած, ո՛ւմ ասեմ, ո՛ւմ խնդրեմ: Էլի երեխությունս միտքս բերի, թե գող էլ կանչեն՝ ասեցի մտքումս, գողությունը հո արեւ ես, պատուիլն էլ թոի՛ր, ընչանք եղեիցդ կհասնեն, դու էլ հո ոտն ունիս, ձեռք էլ հետը, յա փախիր, յա կպիր. մեկ ճիթ հավողի խաթեր հո մարդ չեն սպանիլ: Ասիւն, անիլը մեկ էլալ. ձորն առաջիս բաց էլալ. լալ էր, որ ոտս չկոտրվեցալ, շունքի պատը բավական բարձր ա: Ոտս էլ որ կոտրվեր, չէի իմանալ, ջանս էնպես տաք էր: Մեկ քանի լոք էլ որ տվի, խարաբերն առաջիս կանգնեցին. իմ սքալողին աչքս տեսալ. բայց իրեք գոմփոռ շուն էնպես վրա էկան ինձ, որ ուղում էին երեսս վեր բերեն: Շան հետ վաղուց էի բաղումը հետաքս գրստել ու իմ օրումը շանից չեմ վախեցել, չեմ էլ վախենալ, բայց ում ուղում էի, ալբեալ գլում էլալ»¹:

Եվ այլն:

Բոլոր այս մեջբերումները, որ մենք քաղեցինք «Թուրքի աղչիկ» պատմվածքից, վերաբերում են հին Թիֆլիսի այն թաղին, որտեղ կենտրոնացած են Նարիդալայի հինավուրց բերդը իր «բրջներով», բուսաբանական այգին ու նրան կից Գյոռխանան, ուր Խ. Աբովյանի անհետացումից ուղիղ 30 տարի հետո հավիտենականության դիրկն անցավ նրա հրեմնի պաշտոնակից և դադափարակից, ադրբեջանական նոր գրականության հիմնադիր Միրզա-Ֆաթալի-Ախունդովը (1812—1878):

3. «Հազարփեշեն» (մինչ 1843)

Այս պոեմում ավելի, քան որեւէ ուրիշ ստեղծագործության մեջ, Խ. Աբովյանը պատկերել է հին Թիֆլիսի էկզոտիկան, զավեշտական-երգիծաբանական ոճով:

Պոեմի կենտրոնումն է մի «սկանդալ», որը պատում է գլխավոր «հերոսի» — եկվորի շուրջը, անկախ նրանից, թե ո՛վ է այդ եկվորը՝ «իմաստուն մարդ», «եվրոպացի» թե՞ ցարական շինովնիկ²:

«Սկանդալը» առաջանում և ծավալվում է քեֆի ժամանակ, որի ատրիբուտներն են ոտմբ, կռաքիթ, կուլա, գինու պող

¹ Խ. Աբովյան, հ. IV, էջ 26:

² Հմմ. Ա. Ասատրյանի հոդվածները՝ «Սով. Հայաստան», 1948, № 155 և «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, 1948, № 9, էջ 84—91:

(զանծի), սե տկճոր, կարած տիկ, կարի կարաս, սուպի գդալ (հաղարփեշա) և այլն:

Գործող անձինք են, բացի եկվոր-հյուրից, Թիֆլիսի տա-
րացեղ բնակիչները՝ վրացի, հայ, ռուս, ադրբեջանցի: Խմում
են «Հային օրհնելով, վրացուն գովելով»: Տեղ-տեղ հիշատակ-
ված է «Կախեթու բաժակի ղաղրը», «Քոի ջուրը» և այլն:

Պոեմի հերոսը պատահամբ ընկել է Թիֆլիսի տարացեղ
և տարաստիճան (ուզնոշին) հասարակության շրջանը, որտեղ
նա իր տեղը չի գտնում և ծաղրի առարկա է դառնում: Հերոսին
դուր չի գալիս Թիֆլիսի յուրօրինակ էկզոտիկան, ուստի և նա
բարձրից է նայում բոլորի վրա: Եվ հենց այստեղ է բոլոր «Հա-
րիքների» արմատը, սկսած նրա «հյուրասիրության» առաջին
բայլից մինչև հանգույցը, այսինքն՝ ասպիեղը, երբ նա
ստիպված է լինում հաշտվել իրողության հետ և, հակառակ իր
կամքին, նույնիսկ մասնակցում է կերուխումին՝ գովաբանելով
քեֆ սիրողներին, որոնց համար միևնույնն են «հայի մուշտին,
վրացու քացին»¹, ինչպես և «մեկ ա» գինին ու Քոի ջուրն²:

Պոեմի ամենապատկերավոր մասը՝ դա էպիլոգն է, որն և
բերում ենք այստեղ ամբողջությամբ.

Ասացե՛ք տղերք՝ դուք ալլահվերդի,
Յաղշի՛ օլ, ուռա՛, կամ զգրավի.
Բոն ժուրն, գուտն տաղն բանի պետքը չի՛.
Աստված՝ օր, արև ոմբու շինողին,
Աստված մեր հաղարփեշի սարքողին
Մինը հաղար անի, գերեղմանն օրհնի՛:
Նրա մեռած հոգին միշտ լուսավորի.
Ու մեզ էլ պահի, որ մեր Կախեթու
Բաժակի ղաղրը միշտ իմանանք ու
Միշտ հաղար բերնով ու հաղար ձեռով
Հաղարփեշեն բռնած՝ հաղար օր ասենք
Աստված Կախեթը շեն պահի, հաստատ.
Նա է մեզ տալիս ուրախ սիրտ, զվարթ:
Աստված Նրա բունյաթն միշտ հաղար տարի

¹ Խ. Արովյան, հ. I, էջ 173:

² Նույն տեղում, էջ 174:

Ղաչիմ, դադրմի անսպառնա անի:
 Հաղար ձեռով մեզ հաղար փորձանքից,
 Հաղար շառից-շոփից մեզ աղատ պահի:
 Տղերք՝ ձեր մինը միշտ հաղար բլի:
 Ուտե՛նք, բեֆ անենք, հո հաղար տարի
 Մենք շենք ապրելու էս փուշ աշխարհումն:
 Սաղ բլիք, ուրախ՝ հավասարական,
 Մեր մեռած քու սաղ քմբրով կշտանան¹:

4. «Վերջին հրաժարական Բաջագոր Արֆային Հերակլի» (1838)

1795 թվականի սեպտեմբերի 11-ի Թիֆլիսի սարսափելի ավերումը Աղա-Մահմադ-խանի հրոսակախմբերի կողմից նյութ է ծառայել հայ բանաստեղծ-եղերերգուներին ու արձակագիրներին գրեթե կես դար շարունակ, այսինքն նույն 1795 թվականից սկսած և մինչև XIX դարի 40-ական թվականները:

Վերահիշյալի մասին են գրել Սերոբ Պատմիչը, անանուն պատմիչը, Շամշի-Մելքոն, Հարություն Արարատյանը, Սերոբե Պատկանյանը, Օհան Ոսկերչյանը, Մելիքսեթ քահանան, Իսահակ Սահրազյանը, աշուղ Քիչիկ-Օղլանը, Գալուստ Շերմազան-Վարդանյանը և այլն², որոնց այժմ պիտի ավելացնել, մի կողմից, աշուղ Շիրինի «Ողբ Թիֆլիսի ավերման»՝ դրված ազդրեջաներեն³, և մյուս կողմից՝ և. Աբովյանի ստեղծագործությունը վերահիշյալ խորագրով⁴:

և. Աբովյանի այս գրվածքը մեզ հասել է 2 տարբերակով. մեկը՝ կիսով արձակ և կիսով չափածո. չափածոն 15 վանկանի բառատող է 4 տունից⁵, մյուսը՝ միայն չափածո, բաղկացած

¹ և. Աբովյան, հ. I, էջ 175:

² Լ. Մելիքսեթ-Ֆեկ, Անանուն հայ պատմիչի նորագյուտ երկը Թբիլիսիի 1795 թ. ավերման մասին, «Արմֆանի տեղեկագիր», 1941, № 3—6, էջ 45—46:

³ Ա. Ս. Սեիդ-զադեի հղվածը «Դարավոր բարեկամություն», «Սով. վրաստան», 1957, № 188:

⁴ Տե՛ս նաև՝ Վ. Նալբանդյան, Թբիլիսիի հայ մատենագրություն մեջ, Երևան, 1958, էջ 158—170:

⁵ Խաչատուր Աբովյան, Նախաշավիղ, Երևան, 1940, լր. LXXXIX—XCI. և. Աբովյան, հ. IV, էջ 229—230:

2 մասից, որոնցից առաջինը 15 վանկանի քառատող է 5 տունից և երկրորդը 10—12 վանկանի քառատող է 6 տունից¹։

Ստեղծագործության հիմնական մասը, որի երկու տարբերակները համընկնում են և անմիջականորեն վերաբերում 1795 թվականի ողբերգությանը, էրեկլե 2-րդի կերպարի նկարագրությանը հանդերձ, կարդացվում է այսպես.

Ձայն աղաղակի որբոց և այրեաց փակէ զլսելիս.

Դըրդայ Տփղիս. ծփան բնակիչք ի հեղեղ արեան։

Արքայն Հերակլէս քաջ նիւալակցօք յողբածայն լալիս

Թողու զիւր Աթոռ՝ Կախէթեան յանտառս լինի ապաստան։

Ի դառն տազնապի հայր զորդի, զտուն մոռանայ, թագչի.

Եւ սուր սեագունդ դառնաշունչ Պարսկաց կատաղի անհնար։

Զորդի ի ծնողաց, զհարսն յառագաստէ վարէ յիւր գերի

Աղայ Մահմադ-խան անսիրտ բռնաւորն անողորմաբար։

Ի տանէ ի տուն մտանեն դահիճք՝ մերկեալ զսուսեր։

Կոծ հեծեծանաց՝ զքարինս գալարէ՝ մանկանց, տղայոց։

Լերինք Տփլիսայ հեկեկեն ի ցաւ բնակչաց անտէր,

Այլ անօրէնին սիրտ արենարբու ոչ շարժի յողբոց։

Գանձք, հարստութիւնք, կալուածք թանկագինք աւար

հարկանին.

Ապարանք շքեղք, դահոյք փարթամաց թաղին ի մոխիր։

Զոր ձեռք մահաբերք կործանել կամ խլել անդ ոչ կարացին,

Անյազ հրդեհին եղև կերակուր և անդարձ ոճիր։

5. «Առ հանդէս ուխտի ի սուրբ լեառն Մրածմինդայ» (1842).

Մթածմինդայի կամ Մամա-Դավթի, այսինքն ս. Դավիթ Գարեսեղիի, հիշատակը սովորաբար նշվում է «Յինանց»-ի 47-րդ օրը, այսինքն՝ համբարձման հաջորդ հինգշաբթի և ապա ամեն հինգշաբթի՝ գարնան և ամռան ամիսներին։

Խ. Աբովյանի այս տոնի նկարագրությունը կանխում է ողւս բանաստեղծ Յա. Պոլոնսկու հորինվածքին, որտեղ կարդում ենք.

¹ Խ. Աբովյան, հ. I, էջ 183—184։

Куда весной по четвергам
Бредут на ранний звон
Тропинкой каменной в чадрах
Толпы грузинских жен.

Бредут нередко в страшный зной:
Одне— просить детей,
Другие—воротить мольбой
Простывших к ним мужей¹.

Այս նույն Մթաժմինդայի-Մամադավիթի հետ կապված
տոնակատարութիւնն ու տոնախմբութիւնը ևս Աբովյանը տա-
լիս է այսպէս.

Մինչ Մթայ-Ծմինդայ յիւր տխուր ծոց
Հանէր, տանէր զաղօթարարս
Յուկատ, ի մաղթանս՝ կարօտ հողոց՝
Սրբոյն Դաւթի ի հեղ տաճար:

Գռհհր, փողոցք կենդանացեալ՝
Յուխտաւորաց սրտանուէր,
Որք գունդագոնդ զերամ կազմեալ,
Դիմեն ի լեառն անդ զառ ի վեր:

Աստ օրիորդք, նորահարսունք
Պճնեալ ի զարդ հանդիսական.
Անդ պատանիք, ծերք և մանկունք
Թեւ առեալ՝ շուեն խնդաձայն:

Ի ձիւնափայլ հանդերձս՝ կանայք
Մարգարտահիւս, ոսկեճամուկ.
Ի զարդս, ի զգետս անդ երփներանդ՝
Մեղմաշարժ ձգին ի ձորն անձուկ:

Աստ ի նժոյգ օղասլաց՝
Պատանին քաջ զինազարդեալ՝

¹ И. Полонский. Стихотворения, Л., 1954, стр. 361.

Անդ յամեհի խաղս կառաց
Ջոկ ընտանեաց՝ գոռոզ բաղմեալ:

Ամենեցուն աչք հետաքնին
Յայս տեսարան մխեալ անկուշտ,
Ոմն գողանայր զիւր փարեկին,
Ոմն ընծայէր ի տես զիւր շուք:

Ի շող՝ պայծառ միջօրէին,
Ի նսեմ ստուեր երեկոյին.
Բիւրակերպեան այս պատկեր անդ
Փոփոխ առ փոխ շարժի մեղմին:

Աստ ի հովիտս հայր ընտանեաց,
Անդ յարտեանս խումբ խաղարկուաց,
Ոմն բաղմեալ՝ խախճանայ,
Ոմն արշաւէ, երգէ, ցնծայ:

Աստ պատանին սիրաբորբոր,
Յիւրըն յապշի կոյս սրբասուն,
Անդ օրիօրոյն, կամ հարսն ամոր,
Ի փեսայն իւր զմայլի՝ սիրուն:

Ձայն քնարաց, փողոյ, նուագի,
Ի դաշտս, ի ձորս գեղգեղելով,
Ձանցաւորաց սիրտ, լսելի
Պարարէ քաղցր առ անոյշ հով:

Երջանիկ նա, որոյ աղերս
էառ զկատար, լցաւ փափագ.
Բայց բանեա՞ց իղձ մնաց անտես,
Ի լոին սիրտն անքակ և փակ:

Երանեմ զձեր վիճակ անմեղ՝
Արդա՛ր որդիքդ բնութեան.
Պարզ այս ձեր ուխտ լիցի ձեզ դեղ,
Առիթ յուսոյ և փրկութեան: ...¹:

¹ Խ. Արովյան, հ. I, էջ 217—218:

Սանտիմենտալ ոճով շարադրած այս հոդվածը, որի գրության թվականը անհայտ է, նվիրված է մի «ազիզ հանգուցյալի»՝ «պարոն Տատոյենց աղջկա» և հեղինակի «դասընկեր սիրելի ազգակից պարոն Ղազո Տեր-Շմավոնովի նշանած»-ի հուղարկավորությանը ղեկի Մոդեստ Եկեղեցին:

Հոգվածում, ի միջի այլոց, հիշված են Խ. Աբովյանի ժամանակակից Թիֆլիսի հայ գործիչները՝ Էջմիածնի միաբան Մինաս արքեպիսկոպոսը, Դ. Խերողինովը, Ե. Խատիսովը, Միրզոյսովը, Շահբաթովը, Սուրգունովը, Մովսես Տեր-Գրիգորովը, Նունի Տեր-Շմավոնովը, Աբիմյանը և ուրիշները¹:

Հիշված է, ի միջի այլոց, Հավարարի «ղաստավա»-ն, որտեղից հեղինակը անցել է «գրողայով»։ Կողքին գտնվել է «ձիավոր պարոն Մովսես Տեր-Գրիգորովը», որի հետ միասին հասել է գերեզմանատուն:

Ապա Խ. Աբովյանը տալիս է վերջինիս նկարագրությունը.

«... Հանգստարանի գեղեցկության վրա դարմացած, էն սիրուն տնկած ընկուղի ծառերը որ չէի տեսնում ու մտքումս ասում. «Լիս դառնա քո բունյաթ քցողը, կանաչի էն ձեռը, որ ձեզ տնկիլ ա տալիս, այ սուրբ գերեզմանատուն, այ ջիվան ծառեր...»²:

Ամենայն կասկածից դուրս է, որ Խ. Աբովյանի այս հոդվածը վերաբերում է Խոջիվանքին³ ու նրա բարեկարգության խնդրին, որն անցյալ դարում ցավոտ հարցերից մեկն էր:

7. «Հունայնություն աշխարհի. Այգին Ղորղանովի» (մինչ 1843)

Այս երկը, որը նույնպես սանտիմենտալ բնույթ է կրում, մեզ հասել է 2 տարբերակով, մեկը՝ «Հունայնություն աշխարհի. Այգին Ղորղանովի» խորագրով, գրված աշխարհաբար լեզվով, մյուսը՝ «Յունայնություն աշխարհային բախտի» վերնագրով, գրված գրաբար լեզվով: Ինչպես Հր. Մուրադյանը իրավացիորեն նշել է. «Երկուսի մեջ կա նաև այն տարբերությունը,

¹ Խ. Աբովյան, հ. IV, էջ 40:

² Նույն տեղում, էջ 321:

³ Գրականությունը սրա մասին տես Լ. Մելիքսեր-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, III, էջ 273, ծան. 13, 16:

որ առաջինը երկրորդի համեմատ ավելի ընդարձակ է և վերջանում է ոտանավորով»¹:

Երկը սկսվում է Թիֆլիսի և շրջակայքի բնության նկարագրությամբ.

«... Մայիս ամսին, Թիֆլիզու շոքս կողմը, որ հազար ոտք տեսել, հազար օտար ու իրեկան ճամփու քցել, ու էս օր էլ իր ծերացած սարերի միջումն, քանի քանդվում ա, էնքան շինվում, պայծառանում ա, ու իր որդոց զլխի վրա, իր դավալաց ջանը հանելով, իր կուրած թոռների սիրտն ու գերեզմանը քանդելով, իրան գլուխը դարդարում խորթ մոր պես, իր աչքը դեղանում, իր սպիտակ մազերը սանդղում, գլուխը շինում, ու իր մարդարիտ, ջավահիր տները իր զառ ու զումաշ բաղբաղչա, իր արծաթապատ քամար Քուռը՝ ամեն անց կենողի ցույց տալիս, որ իմանան՝ թե իրանց նման շատն ա էկել, գնացել, բայց ինքը էս օր էլ կա ու մինչև կատախած աշխարհի էլ կմնա»²:

Ապա տրված է մի պատկեր Վերա կոչված բաղաճամասի կյանքից, որին, ինչպես հայտնի է, ոտանավոր է նվիրել Շամշի-Մեկրոն՝ «Մե տարի գնացի Պենտելինց բաղը, դու ինձ բեղամաղ արիր, Վերու Գողերձի»³ խորագրով:

Ըստ Խ. Աբովյանի՝

«Նախիր ու ոշխար էն ա՝ տուն էին էկել, դինջացել, հոտաղ ու մշակ, հանդն ու վարը թողել, իրանց քոլզի տակը մտել, հանգստացել: Հեր ու որդի, քիր ու ախպեր, հարսն ու փեսա, մեր ու աղջիկ՝ իրար տեսել, բարովել, իրար ճտով ընկել, իրար կարոտն առել, լիշտացել, որ սիրելու հետ՝ տուն ու տեղ թողած՝ մեկ Մայիսի քաղցր ըրգուն Վերիցը եղ գալիս՝ մտա Մոնաստիր եկեղեցու մոտի աջգին: ... Հնձանի առաջին նստած՝ բերանս սիրելուս հետ էր խոսում...»:

Ծիաթամանակ հեղինակը նշում է, որ «մտածմունքներն էին», որ նրան «ստիպեցին՝ բաղմանշուն մոտ կանչել, հարցնել, թե ո՞ւմն ա էն դրախտանման աջգին»... «Կապիտան Ղորղանովինը», պատասխանեց խեղճ բաղմանչին հոգոց քաշելով,

¹ Խ. Աբովյան, հ. IV, էջ 323:

² Նույն տեղում, էջ 218:

³ Լ. Մելիսեք-Ռեկ, Շամշի-Մեկրոն և նրա հայերեն խաղերը, Երևան, 1958, էջ 52:

եւեւը շուռ տալով. «Այս, վաղուց, վաղուց ա, որ մեր տերը մեզանից ձեռք ա վերցրել, էլ ոչ էս տեղ մտնում ա, ո՛չ մեր հալը հարցնում, մնացել ենք անտեր...»: ... Քոի ձորը դառել էր ինձ համար դժոխք: ... Կապիտան Ղորղանովի՞ն ա էս բաղը... Ղորղանովի՞նը, էն քաջ կապիտանինը, էն պատվական, ազգասեր Հայկազնո՞ւնը, էն առաքինի բարեպաշտ, բայց տարաբախտ հո՞րը...»¹:

Ամենայն կասկածից դուրս է, որ Խ. Արովյանի այս երկում հիշված «Մոնաստիրի եկեղեցին» նույն վրաց «Լուրջի-Մոնաստերի» կոչված հինավուրց տաճարն է, կառուցված XII դարի վերջին, Թամար Թագուհու օրոք², ուր այժմ վերանորոգչական աշխատանքներ են տարվում, իսկ «այգին Ղորղանովի» այժմ գոյություն չունեցող այգին է, ուր հետագայում փողոց չինվեց «Коргановская» անունով, այժմ Վաժա-Փշավելայի անվան, «Զեմմել» կոչված թաղամասի մոտ³:

¹ Այս Ղորղանովի մասին տե՛ս Խ. Արովյան, հ. I, էջ 159—161:

² Խ. Արովյան, հ. IV, էջ 220—221: Այս Ղորղանովի և նրա սերնդի մասին տես Ա. Մ. Եղիազարյան, Հայ լեզու նորոգելի Ստեփան Ղորղանյան, «Տեղեկագիր» ՀԱՍՈ ԳԱ, 1959, № 8, էջ 55—56:

³ Տես հատուկ գրականությունն այս պատմական հուշարձանի մասին. П. Ноеселиани, Описание древностей города Тифлиса. Тифлис, 1866, стр. 34—39. Զ. Մրաժմինդելի (= Ճիճինաձե), Վերայի վանքը, «Իվերիա», 1818, № 86: П. Покровский, Краткая историческая записка о Тифлисской Верийской св. Иоанно-Богословской церкви. «Духовный Вестник Грузинского Экзархата», 1896, №16—17; Е. Такайшвили Археологические экскурсии, разыскания заметки, IV, Тифлис, 1913, стр. 144—145; Л. Меликеев-Бек, Тифлис, его основание и краткий исторический очерк. «Тифлис и его окрестности». Путеводитель. Тифлис, 1925, стр. 10; С. Еремян. Юрий Боголюбский в армянских и грузинских источниках, «Научные труды Ереванского Гос. Университета», т. XXIII, 1946, стр. 404 и сл. ; Վախտանգ Բեղիձե, Թրիլիսիի «Լուրջի Մոնաստերի»-ն, Arsceorgica, II, Թբ., 1948, էջ 91—110, 180—181 (վրացերեն ռուսերեն ամփոփումով): Լ. Մելիքսեր-Բեկ, Հին Թրիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 155, նկարը տես В. Долидзе, Лурджи Монастери, «Вечерний Тбилиси», 1959, 14. II №37.

8. «Ի 1836 յուլիսի 27 ելանեմ կանուխ ընդ առաւօտն լողանալ
ի գետն, աստ պատահի ինձ օրիորդ մի: Թիֆլիզ»

Այսպիսի երկար խորագիր ունեցող այս բանաստեղծութիւնը, որ բաղկացած է 16 վանկանի քառատող 8 տունից, հիմնականում սենսիմենտալ բնույթի հորինվածք է, որն առնչվում է Թիֆլիսի միջավայրի, մասնավորապես Խ. Աբովյանի Իդեֆիքս կադմոդ Քոփ գետափին ծագած նրա էմոցիաների հետ:

Նոսքը չերկարացնելու համար մենք այստեղ բավականա-
նում ենք միմիայն առաջին երկու տունների մեջքերումով:

Նոր էր բացվել առաւօտեան արեւին աչք ծիծաղադին,
Սարերը և ձորք նոր դարթնէին ի խոր քնոյ գիշերային,
Հովն հանդարտ մեղմիկ թեովք փշի երեսս լռիկ դաշտին,
Ժպտի, խաղայ, ընդ ալեաց գետոյն կենդանագործ շողք
երկնային:

Աղջիկն համեստ, դեռահասակ գայ գետի ղրաղն ամօթով,
Առաջ հայի յիւր շոբերփոյս ի տեսողաց կասկածելով,
Ապա ուղղեալ դէպ ի յերկինս, ուր անմեղիցն սրբոցն ժողով,
Պատկառանօք աղօթս առնէ զիւր սիրտ նոցա հաղորդելով¹:

9. Պատառիկ Թիֆլիսի տեղագրութեան վերաբերող
անավարտ հոդվածից (1836)

Այս դրաբար լեզվով գրված հոդվածը, որից միմիայն
սկիզբն է հասել մեզ, հասցեագրված է ոմն «Թանկագին բա-
րեկամ»-ի: Իսկ թե ում պիտի նկատի ունենալ «Թանկագին
բարեկամ» անվան տակ, իրական թե մտացածին անձնավո-
րութեան, — ինչպես գրում է Պ. Հ. Հակոբյանը, — պարզ չէ²:
Այսպես թե այնպես, «Թանկագին բարեկամին» ուղղված այս
նամակած երկը, — ինչպես նույն Հակոբյանն է ասում, —
ծրագրված է եղել գրել մինչև հեղինակի հայրենիք վերադառ-
նալը, թերևս Դորպատում կամ Մոսկվայում», ավելի հավա-
նական է «1836 թվականին (ամենաուշը հունիս ամսին)»³:

Ահա այս պատառիկն ամբողջութեամբ.

¹ Խ. Աբովյան, հ. I, էջ 164:

² Նույն տեղում, էջ 21:

³ Խ. Աբովյան, հ. I, էջ 21:

«1830 թվին, մինչ ևլի ի Տփլիսոյ, ոչ ամաչեմ ասել՝ թէ տակաւին տղայ էի, վասն որոյ և կոյր, վասն զի այնպէս թողի զծննդարան իմ, մինչև շունիլ ինչ սակաւ իմացուած զդրութենէ նորա և զքաղաքական վիճակէ: Քանի՞ցս զամօթի հարայ ի Պետերբուրգ և յայլ քաղաքս ի հարցանելն հետաքնին Եւրոպացւոց բան ինչ զքաղաքէ և զերկրէ մերմէ, և յանգիտանալն իմ: Եւ յիրաւի բանի՝ նախատինք են մարդոյ ոչ ճանաչել քաջ զանդին, ուր ծնաւն և սնաւ, ու զառաջինն երաց զաշս ի հայկեցողութիւն արարածոց:

«Յայս սակս սրբազան պարտաւորութիւն ինձ համարիմ յետ վերադարձի իմոյ ի հայրենիս, առաքել զսակաւ նկարագրութիւն քաղաքիս մերոյ իբրեւ զթանկագին պարգև ինչ աստի:

«Տփլիս մայրաքաղաքն Վրաստանի, ի հնումն փայտակարան կոչեալ, անկանի առ աջակողմեան եզերք Կուր գետոյ համարեա թէ ի խուլ ձորամիջի իմիք և ունի զձև եռանկիւնի: Յերից կողմանց, այն է յարեւելից, ի հարաւոյ և յարեւմտից շրջապատեալ կայ մերկ և անպտուղ լեռամբբ: Ի հիւսիսոյ տարածի ընդարձակ դաշտ մի, որ հուսկ ուրեմն վերջանայ ի փէշս թևոց Կաւկասեան լեռանց: Յարեւմտեան կողմն քաղաքին՝ Սոլլակ ասացեալ՝ գտանին այգիք պատուականք, գոն և յայլ կողմոսնս, բայց հոփ» (Զեռագիրն այստեղ ընդհատվում է)¹:

10. «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարստեան սովորութիւնների մասին»² (1840)

Գերմաներեն լեզվով գրած այս մենագրութիւնը, որն առաջին անգամ միմիայն նորերս (1958) լույս ընծայվեց հայերեն թարգմանութեամբ հանդերձ³, կայծեւ թե բնական շարունակութիւնը լինի նախորդ գլխում գիտված հայերեն գրաբար պատառիկի, որն, անկասկած, պիտի որակավորել իբրեւ անավարտ առաջաբան սույն մենագրութեան կամ ընդարձակ հոգւածի:

¹ Խ. Աբովյան, հ. VIII, էջ 96:

² Գերմաներեն բնագրի վերնագիրն է՝ «Ein Blick über das Leben der in Tiflis wohnenden Armenier und ihrer Nochtzitsgebräuche Insbesondere»:

³ Նույն տեղում, էջ 107—153 (գերմաներեն), 154—190 (հայերեն):

Աշխատութեան մեջ բաժանանաչափ մանրամասնորեն պատկերված է Թիֆլիսի հայերի դրութիւնը և նրանց ազգագրութիւնը, մասնավորապէս հարսանեկան սովորութիւնները, անցյալ դարի 30-ական թվականների վերջը և, իբրև այդպիսին, պիտի համարել առաջինը իր տեսակի մեջ, որը բաժանին տարբերվում է Մ. Թադիսիանի 1834 թվականի նկարագրութիւնից և բացարձակապէս կանխում է Թիֆլիսի հայութեան մասին XIX դարում հրապարակված բոլոր գործերին, ինչպիսիք են, օրինակ, Գեորգ Ախվերդյանի երկհատոր «Հայ աշուղներ» սերիան (ա. Մոսկվա, 1852, բ. Թիֆլիս, 1903), Աղ. Երիցյանի «Թիֆլիզի հայք և նոցա վիճակագրութիւնը»¹ («Փորձ», 1879, № 10, էջ 1—35), Գեորգ Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոյ մտաւոր կեանքը» (Թիֆլիս, 1885) և այլն:

Ահա թե ինչպէս է նկարագրում Թիֆլիսը մեզանից մոտ 120 տարի առաջ Խ. Աբովյանը (Թարգմանաբար գերմաներեն բնագրից) .

«Ով տաս տարի սրանից առաջ Թիֆլիսը տեսել է, հազիվ թե իր աչքերին հավատա, որ մի քաղաք, որը ոչ այլ ինչ էր, քան մի աղբակույտ, կարճ ժամանակի ընթացքում կարողանար այդպիս արագորեն փոխվել...

Թիֆլիսը, որ գրեթե ավազակային որջ է հանդիսացել լեզգիների և այլ հարևան, մինչև այսօր էլ անկուտուրական ժողովուրդների համար, որոնք տնօրինում էին նրա բախտն ըստ իրենց քմահաճույքի, կարող է իր տեսքով շատ եվրոպական քաղաքների շարքը դասվել: Լեռնազագագայիները և բարձունքները հարթվում են, այգիներն ու հովիտները վերացվում և նրանց տեղ հանդես են գալիս կանոնավոր փողոցներ, գեղեցիկ, եվրոպական շինարարական ճաշակով կառուցված փառահեղ շենքեր, որոնք իրենց արտաքին շքեղութեամբ և ներքին հարմարութիւններով գրեթե ետ չեն մնում եվրոպական տներից: ... Խուսափելու համար այն զարհուրելի ցեխից, որը հաճախ ճահճանման դոյանում է անձրևային օրերին կավահողի

¹ Օղովելով առիթից, պետք է նշենք, որ Աղ. Երիցյանի այս աշխատութեան վերնագիրը Հովն. Պետրոսյանի կազմած «Հայ պարբերական մամուլի բերկոգրաֆիա (1794—1900)» գրքում (Երևան, 1956, էջ 372) դարձել է «Թիֆլիզի հայք և նոցա վաճառականութիւնը»:

պատճառով, այս տարի գլխավոր փողոցների երկու կողմը մայթեր են սարքել: Փողոցների մեծ մասը նույնպես բավական լավ սալարկված է: Կրպակները լի են բազմադան ապրանքներով: Այստեղ եղած հինգ քարվանսարանները, — որոնցից մեկը պատկանում է հայ գնդապետ Արծրունուն¹ և որը լավագույնն է, — բոլորն էլ լեփ լեցուն են ապրանքներով և ամեն ազդի վաճառականներով: Մեծ հյուրանոցներ էլ կան, որոնցից ամենից շատ հաճախորդ ունեցողը և ամենամեծը պատկանում է հրեա Սոլոմոնին և որտեղ մտնողի քսակը սկսած է լիքը լինի:

Տեղ-տեղ կարելի է տեսնել բիլիարդի և դարեջրի տներ, որոնց տները բացառապես գերմանացիներ են, ոմանք տեղիս կոլոնիստներից, ոմանք էլ՝ եկվոր գերմանացիներից, որոնք, ըստ երևույթին, լինելով հասարակության անսպառ անդամ իրենց հայրենիքում, այստեղ են եկել բախտ փորձելու, որը, սակայն, հաճախ դավաճանում է նրանց, որովհետև նրանք դժբախտաբար շափաղանց անղզույշ կերպով են նվիրվում Կախեթի դինու վայելքին...

Տների մեջտեղից տարբեր ձևերով դուրս են ցցվում եկեղեցիների բարձր գմբեթներ, եկեղեցիներ, որոնցից 6—7-ը ուս-վրացական են, 8-ը հայկական, մեկը կաթոլիկական, մեկը մահմեդական, և որոնք կարծես մրցության մեջ են մտել առաջնություն ձեռք բերելու համար: Մի ուսական է կղարխ, մի հայ եպիսկոպոս, մի կաթոլիկ առաջնորդ, մի մահմեդական ախունդ կառավարում են իրենց համայնքները ըստ աստուծո պատվիրանի:...

Այստեղ չի նկատվում նաև դպրոցների պակասություն: Հիրավի, դիմնավիայի շենքը... դա Թիֆլիսի ամենափառահեղ շենքն է, գեղեցիկ թե՛ դրսից, թե՛ ներսից², որտեղ 14 ուսուցիչ և գրեթե 300 աշակերտ դբաղված են բոլոր լուրջ գիտություններով, այսինքն՝ ուսաներևով, գերմաներենով, ֆրանսերենով,

1 Խոսքը Գր. Արծրունու հոր՝ հետապալում գեներալ Երեմիա Արծրունու մասին է:

2 Ի նկատի ունի I դիմնավիան («բարեծնունդ դավանների դպրոցը») նախկին Գոլովինի, այժմ Ռուսթավելու պողոտայի վրա, կառավարական պալատի շարքում:

հայերենով, վրացերենով, թուրքերենով, պարսկերենով, կրո-
նով, պատմությամբ, աշխարհագրությամբ, մաթեմատիկա-
յով, վիճակագրությամբ, ռուսական և ընդհանուր օրենքներով:
Գիմնազիային կից կա նաև ազնվականների որդոց համար մի
պանսիոն...: Սրանց հետ միասին կա գավառական դպրոց,
որտեղ 6 ուսուցիչ և 200-ից ավելի աշակերտ զբաղվում են
վերոհիշյալ լեզուներով և այլ տարրական գիտություններով:
Գիմնազիան բաժանված է 7, իսկ գավառական դպրոցը 3 դա-
սարանների: Գոյություն ունի նաև ազնվական աղջիկների մի
պանսիոն, որը այս տարվա սկզբին պիտի մեծանա...: Բացի
սրանցից, այստեղ կան նաև ռուսական և հայկական հոգևոր
սեմինարիաներ: Առաջինում ավանդում են, բացի ռուսերենից
և վրացերենից, նաև թուրքերեն, լատիներեն, օսերեն ու հու-
նարեն լեզուներ:... Երկրորդում, այսինքն՝ հայկականում¹,
դժբախտաբար, ոչինչ չեն սովորում, բացի փոքր ինչ ռուսերե-
նից, հայերենից, և որոշ աղքատիվ գիտելիքներ ստանում՝
պատմությունից, աշխարհագրությունից և թվաբանությունից,
որ սակայն հանձնված են այնպիսի ուսուցիչների, որոնք իրենք
էլ կարիք ունեն սկզբնական կրթության: Ավանդում են նաև
սխոլաստիկ ուսմունքներ՝ տրամաբանություն և ճարտասանու-
թյուն, որով անշափ հպարտ է հայ հոգևորականությունը,
առանց այդ բառերի իմաստը հասկանալու, և ավանդում են
այնպիսի աշակերտների, որոնք հաղիվ են կարողանում կանո-
նավոր կարգով: Հոգևորականները, մանավանդ հայ հոգևորա-
կանները, պահում են նաև որոշ քանակով փոքրիկ ծխական
դպրոցներ...

Թիֆլիսն ունի ընդհանուր առմամբ 3000 տուն և 40,000
բնակիչ, որոնց մեծ մասը հայեր են:...

Մի եվրոպացու, որն առաջին անգամ է տեսնում Թիֆլիսը,
շատ զարմանալի և տարօրինակ պիտի թվա (որովհետև ես
որպես տեղացի այդ չեմ զգում) միանգամից տեսնել այնքան
տարբեր հագուստներ, դիմագծեր, լեզուներ այնպիսի մի փոքր
կետում և այնպիսի հակադրություններով համախմբված: Նա
կպատկերացնի իրեն մի ոտքով Ասիայում, իսկ մյուսով՝ եվ-
րոպայում:

¹ Խոսքը ներսիսյան դպրոցի մասին է:

Ոչ միայն եվրոպացիք, այլև՝ շատ տեղացի պաշտոնյաներ, այս երկրում ծնված մարդիկ, վաճառականներ, փոխարինել են իրենց ազգային հագուստը եվրոպականով: Գեղեցիկ սեռն էլ տաքվում է օրեցօր այդ կրքով և փոխում իր նախկին կերպարանքը: Վնաս չունի՝ որովհետև մարդն իր բնավորության մեջ սիրում է փոփոխություններ: Իսկ ի՞նչ կասեք, եթե տեսնեք մի մարդու, որը կիսով չափ եվրոպացու և կիսով չափ էլ ասիացու պես է զգեստավորված: Հիրավի, ծիծաղելի պիտի թվա մի օտարերկրացու, եթե Ֆրանսիական թասակի տակ տեսնի իսկական վրացական հագուստ, կամ թե մյուսին տեսնի զբոսնելիս վրացական գլխարկով և եվրոպական վերարկուով, կամ թե մի տղամարդու պատահի՝ գլխարկը պարսկական, փողկապը եվրոպական, իսկ մյուս զգեստները՝ տեղական տարազով, և այդ բոլորը իրենից կներկայացնի խաչտարզետ հակադրություն:

Ինչպես հագուստը, այնպես էլ բոլոր հասարակական գլխարկություններն ու անային կահույքը, նույն բնորոշ գծերն ունեն...

Նմանապես կարելի է որևէ պարահանդեսի կամ հասարակական խրախճանքի ժամանակ լսել զինվորական երաժշտություն, կամ երգեհոնիկն՝ իր կանոնավոր հնչյուններով, անհերքաշնակորեն խառնված տեղական երաժշտության աղմկոտ, ականջ ծակող ունոցի հետ, կամ թե լսել մագդուրկայի կամ ֆրանսիական կադրիլի և լեզգինկայի զարհուրելի մոլեգին աղմուկը»¹:

Ապա և. Աբովյանը անցնում է սեղանի, սննդի, կերակուրների առանձնահատկությունների նկարագրության վրա և, ի միջի այլոց, կոնծաբանության մասին նշում է. «Առաջ, ինչպես այսօր, Կախեթում՝ Վրաստանի գլխու շտեմարանում, ընդունված է, որ խմեն 6—7 բաժակ պարունակող մեծ ամաններից, իսկ ով հակառակի՝ ամբողջ ամանը գլխին են լցնում: Ո՞վ է մեղավոր այդ բանում, եթե ոչ երկիրը: Գինին արտահանել չեն կարող, չեն կարող նաև դեն շարտել, ...ի՞նչ պիտի անեն»...²:

¹ Խ. Աբովյան, VIII, էջ 154—157:

² Նույն տեղում, 160:

«Եվրոպացիները թերեւ ծիծաղեն..., բայց ինչպիսի հա-
ճույթով շատ-շատերը հենց նրա համար կցանկանային Վրաս-
տան փախչել, որ կարողանային լիովին հագեցնել իրենց գինու-
ծարավը: Վրացին կամ հայը, եթե ոչինչ չունի, ապա չի խմում,
կամ եթե խմի էլ, նա հարբած է, այլ զվարթ ու կայտառ:
Երբեք չեք տեսնի այստեղ, նույնիսկ հասարակ մարդկանց մեջ,
որ փողոցում պառկած լինեն, բայց, ընդհակառակը, որքան
հաճախակի կպատահեք քաղաքակիրթ երկրներում այնպիսի
մարդկանց, որոնք չգիտեն նույնիսկ, թե որտեղ է իրենց գլուխը
և որտեղ՝ իրենց կոշիկները: Ես այս ասում եմ ի զգուշություն
այն հիրավի անփորձ եվրոպացիներին¹, որոնք անխղճորեն
հարձակվում են իմ հայրենակիցների վրա, առանց նախապես
մտածելու այն մասին, թե ինչ է կատարվում իրենց հայրենի-
քում...»²:

Ոչ պակաս հետաքրքիր է Խ. Աբովյանի նկարագրությունը
Թիֆլիսի զվարճավայրերի, որպիսիք էին հանքային բաղանիք-
ները, ուխտագնացությունները և ձիարշավը.

«Ամենից ավելի այցելվող զվարճավայրերն են տաք հան-
քային բաղանիքները, որտեղ երկու սեռերն առանձին բաժան-
մունքներում մի քանի ժամ շարունակ լավ քրտնոտ ու զվար-
ճանում են, իսկ հաճախ, հատկապես գեղեցիկ սեռը վայելում
է իր ճաշը: Կան նաև մի քանի տոներ՝ նվիրված որոշ սրբերի,
որոնք Թիֆլիսի շրջակայքում ունեն իրենց եկեղեցիները. այդ
դեպքում գեղեցիկ սեռը զբաղվում է բարեպաշտ ապաշխա-
րանքով, իսկ երիտասարդները ուրախանում են ձիարշավով:
Դրանցից են սուրբ Դավթի և սուրբ Գեորգի տոները»³:

Իր մենագրության առաջին մասը, որը պարունակում է
ընդհանուր տեղեկություններ հին Թիֆլիսի վարք ու բարքի,
նիստ ու կացի և այլ խնդիրների մասին, Խ. Աբովյանը վեր-
ջացնում է այսպիսի նշանակալից դիտողությամբ.

«Թիֆլիսի բնակչության աճը անհավատալի մեծ է: Կով-
կասի համարյա բոլոր վայրերից ամեն օր մարդիկ են հոսում

¹ Այստեղ ակնարկ է «Հազարիչեն» պոեմում հանդես բերած «իմաս-
տուն» մարդու մասին:

² Խ. Աբովյան, VIII, էջ 160—161:

³ Նույն տեղում, էջ 161:

այստեղ, իրենց բախտը փորձելու համար: Բայց որոշ միջոցներ հայթայթելուց հետո այլևս չեն թողնում Թիֆլիսը, բնակություն են հաստատում այստեղ, տներ են կառուցում, և այսպիսով՝ պարսիկներն այստեղ խառնվում են հայերի, թուրքերի, հույների, հրեաների, թաթարների, լեզգիների ու եվրոպացիների հետ, որոնք նման թելերով կապվում են տեղացիներին և կազմում մի հոյակապ ամբողջություն, որը ժամանակի ընթացքում Թիֆլիսը կդարձնի լայնածավալ Ռուսաստանի ամենամեծ և կարևորագույն քաղաքներից մեկը, որտեղից գիտությունն ու լուսավորությունը կսփռվեն ամբողջ Արևելքում»¹:

11. Այլ գրվածքներ

Բացի վերոհիշյալ 10 երկերից, Վրաստանի և վրաց հիշատակությունն առկա է ևս. Աբովյանի, եթե կարելի է այսպես ասել, երկրորդական գործերում, ինչպիսիք են. ա. «Առ զալուստ նորին բարձր սրբազնութեան տեառն Կարապետի՝ արքեպիսկոպոսի Վրաստանի և Տայոց» (I, 30—31), բ. մի հատված «Զվարճալի ու կարճ պատմությունք շարքից» (IV, էջ 67) և գ. «Օվսանա. Պատմություն» (IV, էջ 263—285):

— «Առ Գալուստ նորին բարձր սրբազնության տեառն Կարապետի արքեպիսկոպոսի Վրաստանի և Տայոց» ընդարձակ վերնագիրը կրող բանաստեղծություն-ուղերձը (ձոնը), որը պարունակելով 10 վանկից բաղկացած քառատող 12 տուն և նվիրված լինելով «Վրաստանի և Իմերեթի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրևանդցուն», հորինված պիտի լինի ոչ թե «1828—1829 թթ. Կարինից կազմակերպված հայերի ներգաղթի առիթով», ինչպես Ռուզան Նանումյանն է կարծում², այլ նույն Կարապետ արքեպիսկոպոսի (Բագրատունու) Վրաստանի և Իմերեթի թեմական առաջնորդ նշանակվելու (1836) և այս կապակցությամբ նրա Թիֆլիս մուտք գործելու առթիվ, որը տեղի է ունեցել ևս. Աբովյանի Դորպատից վերադառնալուց

¹ Խ. Աբովյան, VIII, էջ 160—161:

² Խ. Աբովյան, I, էջ 380:

անմիջապես հետո, 1837 թվականին¹: Իսկ Կարապետ ա. Ե.-ի Թիֆլիսի առաջնորդության ժամանակամիջոցն էր 1836—1842 թթ.:

— «Զվարճալի ու կարճ պատմությունը» շարքից մի հատվածը վերաբերում է բուն Վրաստանցի Դավիթ Ղորղանյան էնագեթցուն²:

— «Օվսանա» երկը «Լինդա»-ի փոխադրումն ու վերամշակումն է: Համապատասխանեցված է Անդրկովկասյան և, մասնավորապես, Թիֆլիսի իրականությանը գլխավորապես գործող անձանց անունների փոփոխումով³, օրինակ, Ֆեդերիկո—Վանո, պարոն Դիեգո Գենտելլաս—պարոն Վնյազ Գյորգի, գրաֆ (կոմս) Պեդրո—մելիք Պետրոս և այլն: Բացի դրանից, երկում ավելացրած է Թիֆլիսի հիշատակությունը և գործածված է վրացերեն «ցիցնաթեկա». ուղիղ «ցիցինաթեկա» բառը, լուսանկնուի իմաստով:

12. Վրացերեն և վրացերենի միջոցով հայերենում մտած բառերը և Արովյանի երկերում

բղա—բղա (ուռի, ուռենի)

բիճ—բիճի (նոքար, ծառա, փոքրավոր, սպասավոր, մանչ, մոնթ)

գոգրա—գոգրա (գգում, փոխ. դատարկագլուխ)

գոջի—գոճի (խողի ճուտ, խոճկոր)

լաչակ—լեչաքի (գլխի ծածկոց)

¹ Հատուկ զրականություն Կարապետ ա. Ե.-ի մասին տե՛ս. Հովակիմ Գեղամյանց, Կարապետ արքեպիսկոպոս, Կենսագրություն. «Փորձ», 1876, № 1, էջ 163—206, 1877, № 1, էջ 81—112, Լ. Մելիքսեթ-Քեկ, Կարոն Հայ գաղթականների 1829 թ. գններալ Պասկևիչին ուղղած գրության բնագիրը, «Տեղեկագիր Արմֆանի», 1940, № 3, էջ 37—40, Վահան Վ. Գալամդարյան, Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, «Էջմիածին», 1956, № 11—12, էջ 92—96:

² Այս Դավիթի մասին տե՛ս, ի միջի այլոց, Գ. Աղանեան, Դիան Հայոց պատմության, III, Թիֆլիս, 1894, էջ 266, 469, IV, 1889, էջ 581—583, 588—591, V, 1902, էջ 149, 308, VI, 1904, էջ 387, 389, Լ. Մելիքսեթ-Քեկ, Սայաթ-Նովա, Թբ., 1930, էջ 74 (վրացերեն):

³ Լ. Արովյան, IV, էջ 263—285 (Օվսանա, Պատմություն), հմմ. նույն տեղ, 295—311 (Լինդա, Պատմություն):

լէճի (°)

լոթի—լոթի (քեֆ անող)

լուլա—լուլա (խողովակ)

խոխոբ—խոխոբի (կաքավ)

կլլալի—կլլալի (հետք)

ղիժինա—ղիժինա ((ժխոր, աղմուկ)

ղոբի—ղոբի (ցանկապատ)

ղվաթ—ղվաթի (ուժ)

ճաթ—մճաղի (եզիպտացորենից պատրաստած հաց, թխվածք)

ճարխալ—ճարխալի (ճակնդեղ)

ճլեբբ—ճլեբի (թոքախտավոր)

մեխրէ—մեխրէ (եղապան)

մովրով—մոռրովի (գյուղապետ)

մուշա—մուշա (մշակ, աշխատավոր, համամալ)

չիբիլա—չիբիլա (գլխի ծածկոց)

ջեր—ջեր (դեռ)

ջոխի—ջոխի (փայտ)

ռումբ—րումբի (տակառ)

ցիցնաթեւա—ցիցինաթեւա (լուսատիտիկ)

ցոցխալ—ցոցխալի (ձկան տեսակը)

փշավ—փշավի (փշավ, փշավեցի)

քաթիրա—քաթիրա (քաթիպա)

քյուլդա—քյուլդա (հովանոց):

Խ. ԱՐՈՎՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ա. Թարգմանություններ Խ. Աբովյանից

1. Խաչատուր Աբովյան. «Վերք Հայաստանի», Թարգմանություն Արտ. Դավթյանի՝ ըստ Ստ. Զորյանի և Հր. Քոչարի կատարած համառոտության. Թբիլիսի, 1960, 116 էջ (Արշիլ Դավթյանի ներածականով, էջ 5—11):

2. «Վերք Հայաստանի»-ից մի հատված (ղրվագ Ա, գլ. 5—6. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, III, 36—43). Թարգմ. Արտ. Դավթյան. «Լիտերատուրա դա խելովներա» [= Դրականություն և արվեստ], 1948, 19 սկսած., № 37:

3. «Վերք Հայաստանի»-ից 2 հատված. Աղասի. Աղասին և Սարգսի ֆառաշները (Դրվագ ա, գլ. 1—2, 5—6, III, էջ 15—17, 36—43), Թարգմ. Արտ. Դավթյան, «Մնաթորի», 1948, № 10, էջ 100—106:

4. Աղասի (III, էջ 157—158), Թարգմ. Իլիա Խոշտարիա, «Մնաթորի», 1955, № 10, էջ 151:

Բ. Գրականություն և Արվեստի մասին

1. Լ. Մելիքսեթ-Քեկ, *Խաչատուր Աբովյան*. «Լիտերատուրույի Սաքարթ-վելո» [= Գրական վրաստան], 1941, № 18:

2. Նույնը. Ն. Բարաթաշվիլին և Հայ գրականությունը, «Լիտերատուրույի ձիերանի» [= Գրական պրպտումներ], III, Թբ. 1947, էջ 106—108:

3. Ռուբեն Զառյան, *Խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը*, «Լիտերատուրա դա խելովներա» [= Գրականություն և արվեստ], 1948, 12. IX № 36:

4. *Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակը*. «Լիտերատուրա դա խելովներա» [= Գրականություն և արվեստ] թերթի հատուկ համար, 1948, 19. IX № 37, նվիրված ևս Աբովյանի հիշատակին, հետևյալ բովանդակությամբ. —

— «Հայաստանի ականաւոր զավակը» (խմբագրական).

— «Եւ. Աբովյանի նկարը, որի տակ՝ «Խաչատուր Աբովյան, Կրծանիսի պայքարը», թարգմ. Կոնստանտինե Լորթքիփանիձե (այսինքն՝ մեծ լուսավորչի Անդո Բանաստեղծության թարգմանությունը, իրականում՝ անթույլատրելի և անամոթ կեղծիք):

— Սուրեն Ավչյան, *Կենսագրական տեղեկություններ*:

— Շալվա Դադիանի, *Մեծ գրող-հայրենասերը*:

Մյուս էջում՝

— Վերջ Հայաստանի (հատված), թարգմ. Արտ. Դավթյանի:

5. Լ. Մելիքսեթ-Քեկ, *Վրաստանի պատմության զրավոր աղբյուրների հրատարակությունները*, Կատալոգ I, Թբիլիսի, 1949, էջ 304—305 (մասն Բ, զլ. 98, *Խաչատուր Աբովյան*):

6. Բ. Սեյրանյան, *Հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչը (Խաչատուր Աբովյանի ծննդյան 150-ամյակի առթիվ)*, «Մնաթորի», 1955, № 10, էջ 152—156:

7. Ի. Գրիշաշվիլի, *Սովետական Հայաստանում, ևս. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ (1948)*, տես վրաց բանաստեղծի «Բանաստեղծությունների» միհատորյակում, 1949, 1955 և այլն¹:

¹ Այս բանաստեղծությունը առկա է հայերեն թարգմանությամբ Ա. Մուրվալյանի (1948), Ա. Լուսինցի (1952) և Վ. Ալազանի (1956) տես Լ. Մելիքսեթ-Քեկ, Ի. Գրիշաշվիլին և Հայ գրականությունը, «Труды тбилисского Гос. Пед. института имени Пушкина», т. IX, 1957, էջ 252, 275 (վրացերեն, ռուսերեն ամփոփումով): Նույնը նախնական խմբագրությամբ հայերեն՝ «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1956, № 2, էջ 30, 48:

ԳԵԼՈՒՄՑ ՁԵՐԳԸ ԶԵՅՑԸ
(Մոտ 1810—1891)

Գալուստ Շերմաղանյանը նորարաց ներսիսյան դպրոցի (1824 թվականից) և Արովյանի այն դասընկերներից է, որոնք հետագայում ի թիվս Ստ. Նազարյանի, Առաքել Արարատյանի, Պետրոս Մաղաթյանի (Սեյհագի) և ուրիշների հայտնի դարձան հայ կուլտուրայի և մասնավորապես, գրականության ասպարեզում:

Գ. Շերմաղանյանը մեկական հոգվածներով հանդես է եկել հայ մամուլի էջերում («Արարատ», 1872, 1873, 1874, «Փորձ», 1879, «Արևելյան մամուլ», 1883, «Մասիս», 1885, «Արձագանք», 1891): Ապրել է Բաթումում, Ռոստովում և այլուր:

Թիֆլիսում, մինչ 1865 թվականի միջադեպը, ունեցել է «Դարբադի», աչսինքն՝ գրական սալոն, միաժամանակ աշխատակցել է «Կոռնկ հայոց աշխարհի»-ին (1861, 1863):

Գ. Շերմաղանյանի երկերից մեզ հասել է 2 գործ. ա. «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակավոր առաջնորդի Հայոց՝ դաղթելոց ի Տայս, շարագրեալ լԱղգասիրէ յումեմնէ ի Տփլիս 1841» (Աս. Մնացականյան, «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց...» պիեսի մասին, «Բանբեր մատենադարանի», № 2, 1949, էջ 99—182, հատկապես երկը՝ 105—177), և բ. «Նիւթեր աղգային պատմութեան համար, Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան» (Ռոստով-Դոնի վրա, 1890):

* * *

Առաջին երկը ներկայացնում է իրենից պիես-պամֆլետ, 5 գործողություն, որոնցից առաջին երկուսը կատարվում են Ախալցիխեյում, իսկ մնացածը «Ի Թիֆլիզ»: Ինչպես պիեսի հրատարակիչը՝ Աս. Մնացականյանը նշում է, այն «ամփոփում

է Կարապետ եպիսկոպոսի Թիֆլիսյան առաջնորդութեան պատմութիւնը (1836—1842)» և «հորինված է հենց 1841—1842 թվերի ընթացքում»¹:

Հետեւապես, այս պիեսը գրված է Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի»-ից մի-երկու տարով ուշ:

Պիեսում ծաղրված են Կարապետ արքեպիսկոպոսը, Հովհաննէս Կարբեցի կաթողիկոսը ու նրանց շրջապատը, իրենց բարբերով, մասնավորապես կաշառակերութեամբ, երկերեսանիւթեամբ և այլն: Դրանում համոզվելու համար բավական է աչքի անցկացնել Կարապետ արքեպիսկոպոսի արտահայտութիւնները. նա Թիֆլիսը համարում է փող դատելու մի վայր: Նախ՝ մինչև Թիֆլիս հասնելը, ճանապարհին, Կարապետ ա. ե.-ը կաշառք ստանալու համար խարդախել է տեր-Ավետիքին. նա ասում է. «Գորիից անցկենալիս քանի մը տիրացու ձեռնադրեցի. հիսնական ոսկի գինը վերջացրի. աս պատիվն միայն Թիֆլիզու հոգեւորականաց կընեմ, որ անոնց գծովն օրհնեմ և ավելի բան մը ալ չպահանջեմ» (նկարագրութիւն 3)²:

Գեորգ վարդապետի հարցին, թե «Սրբազան, շնորհակա՞ն էր Թիֆլիզու վիճակեն», Կարապետը պատասխանում է. «Օղոյ, սա վրաստանու վիճակն մեծ բան մը է եղեր, դանձաբան մը, աղբյուր մը է հարստութեան: Ասքան արդո՞ւնք կըլլա: Նայե՛, ան սանդուղն լիքն մանեթ է. սա ալ ոսկի է, որ բովս եմ դրած: Բոլորն ասքան ամսվան միջին եմ վաստակած: Շատ անգամ ալ փող մը բերեն կոր, որ Աղինացի, Ասիղանացի կսեն. թղթի կտոր մը է, իմ խելքս անորից ոչինչ չի կտրեր, անոր համար հետ դարձնեմ կոր, վախճամ կրակիցն կամ թե թեթեւ բան մը է, տղաքն հեշտութեամբ կարող են գողնալ» (նկարագրութիւն 3)³:

Մինչև Թիֆլիս գալը Կարապետ ա. ե.-ը լավ կարծիք չի ունեցել թիֆլիսեցիների (իմա՝ Թիֆլիսի հայերի—Վ. Մ. Բ.) մասին: Ախալցիխեցում Հակոբ Կարենյանցի հետ զրուցելիս նա

¹ «Գիւտական նյութերի ժողովածու» [= Բանբեր Մատենադարանի], № 2, էջ 101:

² Նույն տեղում, էջ 145:

³ Նույն տեղում, էջ 136:

ասում է. «Համբերե, լսե, տես՝ ի՞նչ կըսեմ թիֆլիզեցւոց (իմա՝ Թիֆլիսի հայերի—Լ. Մ.—Բ.) վրա. աղեկ հասկըցար անբան ժամանակի մեջն, թե որքան թշնամություն ունեն նորա (Թիֆլիսի հայերը—Լ. Մ.—Բ.) օտար երկրի յուրյանց համազգի հայոց հետ, որ ամենեւին չեն ուզեր օտար մարդ մը յուրյանց բաղաբուն աշքումն լույս ունենա: Եվ որքան օտար մարդ մը նոցա ալ երկրումն պատված ըլլա, Թիֆլիզումն տեսնալիս՝ երեսներին շուռ կը տան և բարե և չենի տար՝ ինչպես անծանոթի: Բաց ի սմանե, միմյանց չեն հավատար, միմյանց վրա հավատարմություն չունեն, միմյանց միշտ կբամբասեն: ... Նայե, ես ինքս, որ արքեպիսկոպոս և վիճակավոր առաջնորդ եմ նոցա և այժմ կերթամ հոն, գիտեմ աղեկ՝ եթե նոցա պատվեմ, սիրեմ և կամբերնին ալ կատարեմ, դարձյալ անմեղ բանի մը վրա բամբասելու են ինձ...» (նկարագրություն 1)¹:

Ինչպես հայտնի է, կաշառքի շնորհիվ է Կարապետ ա. ե. դարձել Թիֆլիսի առաջնորդ: «Զիմացա՞ր, Թիֆլիզ որքան ստակ մսխեցի ես սա վիճակի համար. կարո՞ղ եմ մյուս անգամ ան փողերն վաստակել, եթե անփորձ փոքրավորներ հետս տանեմ...» (նույնը)²:

Նշենք նաև, որ Կարապետ ա. ե. թեմական առաջնորդի պաշտոնին նայում է ոչ միայն փող վաստակելու և դիզելու միջոց, այլև ունի կարիերիստական նպատակներ: Գեորգ վարդապետին դիմելով, նա ասում է. «...այժմ, որ Թիֆլիզ կերթանք և եթե ան դեղ ալ իշխանների սիրտն շահենք, միամիտ կացիր, որ պետք է կաթողիկոս ըլլամ. ես առավել, գիտե՞ս. այսօր կաթողիկոսությունն Թիֆլիզու իշխանաց ձեռքին է» (նկարագրություն 1)³:

Պիեսում տեղ-տեղ հիշվում են Թիֆլիսի «Մեծ բերդի» և «Փոքր բերդի» եկեղեցիները⁴, որը, իհարկե, պետք է հասկանալ ոչ թե երկու՝ մեծ և փոքր բերդերի եկեղեցիների իմաստով, այլ իբրև միևնույն բերդի մեծ և փոքր եկեղեցիներ. մեծը՝ այսպես կոչված «պարոն Ոսմեկի» (1251), հետագայում Կաթողիկե

¹ «Գիտական նյութերի ժողովածու» [= Բանբեր Մատենադարանի], № 2, էջ 117:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 110:

⁴ Նույն տեղում, էջ 140, 143 և այլն:

ս. Աստվածածնի, նաև Մեյդանի ս. Գեորգը, որը XIII—XIX դդ. ընթացքում Հաղբատի վանատունն (առաջնորդարանն) էր վրաստանի մայրաքաղաքում. փոքրը՝ այսպես կոչված «բառասնիցը» (որը հիշված է գեոևս VIII դարում իբրև վրացական, իսկ XII դարում իբրև հունական), հետագայում Հրեշտակապետացը, որը նույն XIII—XIX դդ. ընթացքում Սանահնի վանատունն էր Թիֆլիսում:

Պիեաի գործող անձերից մի քանիսը, սկսած 3 գործողությունից՝ օրինակ տեր-Ավետիքը, Մելքոնը և դերձիկը, խոսում են Թիֆլիսի բարբառով, որը բավականին հաջող է ներկայացված: Աս. Մնացականյանը միանգամայն իրավացի է, երբ այս առթիվ նկատում է. «Թիֆլիսահայոց բարբառը եթե չափածոյով մտել էր գրականության մեջ Սայաթ-Նովայի, Շամչի-Մելքոյի և այլոց կողմից, ապա արձակով դեռ չէր մտել: Այս կոմեդիայով էր, որ այն մուտք գործեց արձակի և գրամատուրգիայի բնագավառը»¹: Եվ այս այն ժամանակ, երբ Գեորգ Ախվերդյանի «Սայաթ-Նովան» դեռ հրատարակված չէր:

Թիֆլիսի բարբառի գործածության հետևանքով բնական է վրացերեն բառերի առկայությունը պիեսում, օրինակ՝

գանա—գանա (միթե)

դյախ—դիախ (այո, հրամանքդ)

էգեբայ—էգեբա (իբր թե, գուցե, թերևս)

ուփրո—ուփրո (ավելի, առավել)

ջեր—ջեր (դեռ, նախ)²:

* *
*

Գ. Շերմաղանյանի «Նյութեր աղգային պատմության համար» աշխատությունը, բաղկացած 38 գլխից, «Հուշիկների» կամ մեմուարների բնույթ է կրում և, իբրև այդպիսին, ժամանակին դրեթե միակն է եղել իր տեսակի մեջ (չհաջված, իհարկե, Մանվել վ. Կյումուշխանեցու գործերը):

Աշխատության հիմնական նյութն է «Երեկույի հայկազունքի Պարսկաստան», թեև այնտեղ խոսվում է, ի միջի այլոց, և

¹ «Գիտական նյութերի ժողովածու» [= Բաների Մատենադարանի], № 2, էջ 102:

² Հմմ. նույն տեղում, էջ 181—182:

Վրաստանի մի քանի գործիչների, հայազգի ներկայացուցիչների և Թիֆլիսի հայ համայնքի մասին, միջանկյալ նաև Ա. Ա. Գրիբոեդովի սպանության հանգամանքների մասին:

Նրկի գրության ժամանակի մասին որոշ գաղափար է տալիս գրքի առաջաբանը (էջ 7—12) «Գալուստ Շերմազանեան» ստորագրությամբ և կից նշումով՝ «Դեկտեմբեր, 1882 ամին, ի Բաթում», ուր հեղինակն ասում է, որ «1863 թվին» Պարսկաստանից Թիֆլիս վերադառնալով՝ «ձեռնամուխ եղայ կարգի բերել ժողոված նիւթերն...»¹:

Գարեգին եպիսկոպոս Սրվանձոյանը նշել է, որ «Խա այս գործոյն հիմն դրած է 1832 ամին, և ի գլուխ հանած 1863-րդ ամին, իսկ 1865 յունիսի 28 և 29-ին, երբ Թիֆլիսի մէջ տեղական-քաղաքական փոթորիկ մը ծագեցաւ, այդ արկածին զոհնաց Գ. Շերմազանեանի ամբողջ գրատունն:— Աւաղ այնքան անգին կորստեան»²:

Գ. Շերմազանյանի գրքի մեջ Վրաստանին վերաբերող նյութերը ցրված են ալլեայլ գլուխներում: Տեղ-տեղ օգտագործվում է Թիֆլիսի հայ բարբառը:

Այսպես, օրինակ, Զ գլխի մեջ, որ «Մելիք-Մաջնուն (Մեջլում), Մելիք-Կուլի և Մելիք-Խամայիլ» վերնագիրն է կրում, խոսվում է XVIII դարի վերջերի իրագարծությունների մասին, որոնց կենտրոնումն է 200 տուն Բորչալուցիների Վրաստանից Ղարաբաղ գաղթելու և նրանց վերադարձնելու միջոցառումները, ուսաց դորքի Թիֆլիս գալը Հերակլ Բ թագավորի օրոք և այլն: Վրացիներից այստեղ, բացի Հերակլ Բ-ից, հիշված են Յուլոն արքայազնը, Սարգար Օրբելյանը, «Վրացի ազնուական Գօրջասպէն» և այլն: Միջանկյալ խոսվում է 1795 թվականի սեպտեմբերի 11-ի Թիֆլիսի ավերման մասին, օգտագործելով Շամշի-Մելքոյի հանրածանոթ «Ողբ»-ից 10 տող: սկսած «Մելիք-Մեջլումն շուն դառնայ» և մինչև «Քրօնիկում նստած էր և այլն» բառերը ներառյալ³:

¹ «Նիւթեր ազգային սրտմութեան համար», էջ 9:

² Նույն տեղում, էջ 3:

³ Տե՛ս Լ. Մելիքսեր-Բեկ, Շամշի-Մելքո և նրա հայերեն խաղերը, Երևան, 1958, էջ 17, 21, 64:

Հաջորդ՝ է գլխում «Աղա Եաղուր ներքինապետ՝ մականուանեալ Քութուլի» խորագրի տակ դարձյալ խոսվում է 1795 թվականի ավերածության մասին: Թե ո՞ր աղբյուրից էր հեղինակը նյութեր քաղել իր պատումի համար, այս առթիվ ունկնդիր լինենք իր ասածին. «Թիֆլիսի Մօղնի եկեղեցւոյ միաբան և յետոյ աւագ քահանայ Տէր-Աւետիք Պոպովն և Բեթղեհէմ եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր-Յովհաննէս Դաւթեանը, որ լսած էր իւր հայր Մէլիքսէթից, պատմեցին ինձ այսպէս...»¹:

Հիշելով «Սօղանլուղի քարկապները», ուր հասել էր Ախտախանը (Աղա-Մահմադ-խանը), տեր-Ավետիքը պատմում է, թե ինչպէս Թիֆլիսին սպասվող վտանգի ժամին «միաբաններս բոլորուեցանք եկեղեցիի դաւթում, ասեցինք, խօսեցինք, լսեցինք, խորհուրդ տեսանք, ի վերջոյ ընդունեցինք ծերունի և փորձուած աւագ քահանայ Տէր-Գէորգի կարծիքը. այսինքն՝ գնանք, ժողովներ մեր ընտանիքը, բերենք, ածենք նույն եկեղեցիի հրապարակի հիւսիսային արեւմտեան կողմը՝ այժմ Կորիզենց տան մէջ, որ ամրագոյն էր և պատսպարուելու համար աւելի յարմար, քանզի համոզուած էինք, որ թուրքերը (պարսիկները. — Լ. Մ.-Բ.) անպատճառ կը մտնեն քաղաք, որովհետեւ Հերակլ Պարոնը ինքն իւր ընտանիքը փախցրել էր, և տնային երկպառակության համար մէկ երեւելի զօրք չէր պատրաստել, ինչպէս ծերերը պատմում էին: Զիարդ և իցէ բոլոր միաբանները գնացին, իւրաքանչիւրն իւր ընտանիքը բերեց, ածեց այն տան մէջ և մենք երիտասարդներս էլ կուռ զինաւորուած՝ բարձրացանք շարուեցանք կուռրի վերայ կամ դրան գլխին, որն որ բաւական լայն էր»²:

«Տիրացու Մելիքիսէն, ասում էր Տէր-Ավետիքը, վաղեւադ գնաց, ու շուտ (շուտ) լեղապատառ յետ եկաւ, խաբար էրի, թէ Սուրբ Սարգսի տակի բաղերօքը անց կացայ, դուս եկայ Կրծանիսի տակը, ի՞նչ, ի՞նչ տեսնիմ լաւ դուխը հաւնած տղերանց լէշիւր՝ կարմիր, կանանչ, դեղին շապկով, լէզզու շալէմէն շուխով, բութարու մորթեմէն գդակով, եարաղով էստի էնտի սպանուած, եարալու ածածին: Շահնաբաթ ու Թէլէթի բարափեմէն թուրքերը (պարսիկները — Լ. Մ.-Բ.) ի՞նչպէս

¹ «Նիւթեր աղգային պատմութեան համար», էջ 67:

² Նույն տեղում, էջ 67—68:

ջիանջվիլա (մրջին) դեմեր փին գալիս. զարբազնի ու թօփի ձէնէմէն մարդ է խլանում. Յիս էլ մէ էսթէնը-էնթէնը մտիկ տուի, չկանացի Աւետիբին տէհիլ էի, յիդ դառայ փախայ էկայ ձիդ իմաց անիմ»: Տէր-Գէորգը զայրացած՝ հայհոյանքներ է ասում իւր որդույ քամակից, և ասլա ստիպում է զՄեղքիսէթը, որ կրկին գնայ ու գտնէ թերևս և բերէ, աւելացնելով, թէ՝ «տիրացու Մեղքիսէթ, եթէ Աւետիբը չգայ, գլխէմէն զգալը խլէ՛, բի՛»: Տէր-Աւետիբն աւելացնում էր թէ՝ «երբ Մեղքիսէթը գնաց, էս անգամ երկար միջոց տեւեց, չվերագարծաւ, մէկ էլ տեսանք որ թուրքերի զորքի ծէրը մեզ հասաւ, գնալով գնալով շատանում էին նոքա, իսկ մենք դռները կողպեցինք, որ պատերի գլխից և կտուրից մեզ պաշտպանենք: Պաշտպանեցինք մերձ մէկ ժամ, մինչև որ մեր վառօտը վերջացաւ, էն ժամանակը պարտաւորեցանք անձնատուր լինիլ, հաւատալով նոցա խոստումին և երդումին, որ մեզ չեն վնասիլ»¹:

1795 թ. սեպտեմբերի 11-ի Թիֆլիսի վարհուրելի ողբերգությունը Տէր-Ավետիբը այսպես է նկարագրում.

«... Պարսիկները սկսան նախ հրացանի կոթով, մտրակով և աքացիով ծեծել զծերերն ու շափահասները, որպէս զի նոքա դարանի տեղեր ցոյց տան, բայց երբ տեսնում են, որ էս միջոցով չեն կարողանում ասել տալ, այնուհետև սկսում են դաշոյնով և թրով ծակծկել, ուստի և շատերն արիւնքաւ են լինում ու գետնի վերայ թաւալելով՝ անշնչանում: Երբ էս հնարքով ևս չեն արգիւնաւորվում, կրակ են վառում հրապարակի մէջտեղը, ոտիկ տակ տալով տանում են կրակի մօտ զՏէր-Գէորգը ու ծերունի Տէր-Ստեփանը², կէծ կէծ կաթսաներ են

¹ Նույն տեղում, էջ 68:

² Այս Տէր-Ստեփանին, Մոզնու եկեղեցու միաբան-քահանային, իհարկեւ, չպէտք է շփոթել ո՛չ Բեթղէհեմի քահանա Տէր-Ստեփանի հետ, որը կենդանի է դեռևս XIX դարի սկիզբներին, ոչ էլ Տէր-Ստեփանոս Հաղբատի վանքի լուսարար-վարդապետ Սայաթ-Նովայի հետ, որը 1795 թվականի սեպտեմբերին բացակա էր թե՛ Թիֆլիսից և թե՛ Հաղբատից և իր զավակների հետ միասին գտնվում էր Հյուսիսային Կովկասում: Բացի հիշյալ քահանաներից նահատակված հոգևորականներից հայտնի են Տէր-Գրիգոր Տէր-Շմալոնյանը, Մոզնու եկեղեցու ավագերեցը և Հաղբատի գործակալ ու Բեթղէհեմի միաբան Մխիթար քահանան, որոնցից առաջինին հիշատակում է Թիֆլիսի ավերման պատմիչ Սերոբ գրիչը, իսկ երկրորդի հիշատակին

գնում նրանց գլխին, որից նոքա շուտով մեռնում են: Էս խոշտագանքը նրա համար էր, որ միւսները տեսնելով՝ երկիւղից դարաններ ցույց տարին...»¹:

Թ զուխը, «Միրզա Եաղար Մարգարեան ներքինի» խորագրով, գրեթե ամբողջապես նվիրված է 1829 թվականի հունվարի 30-ին Թեհրանում տեղի ունեցած սոսկալի ողբերգությանը, որին զոհ է գնացել ո՛չ միայն ռուս դեսպան Ա. Ս. Գրիբոեդովը, այլև մի շարք այլ անձինք, սրանց թվում Սոլոմոն Մեկիբյանը, որը «1828 թուին... գնում է դեսպան Գրիբոեդովի հետ», և «որովհետև դեսպանը ուշանում է Թավրիզ, վասնորոյ Սօլոմոնը առաջ է գնում Թէհրան և իջեանում իւր քեռի Մանուշար-խանի պալատում, որ է միջնաբերդում, արքունիքի քամակում»²: Իսկ «Մանուշար-խանի մայր Ոսկում-խանումը Թիֆլիսից Թէհրան գնալիս, նրա հետ գնում է և իշխանազն (կենազ) Դաւիթ Մեկիբեանցը, որ նրա աղջկայ որդին, այսինքն թոռն էր»³:

Այս գլխում հեղինակն արձանագրում է նաև այն փաստը, թե ինչպես «1804 թուականին... Երևանի բերդը պաշարելոյ ժամանակ վրաստանցի կամաւոր ձիաւորների խումբը, խռովելով կնիազ Յիցիլանովից, վերադառնում է... իւրեանց հայրենիքը, ուր շատ հայ վաճառականներ և տեղացի բնակիչներ ևս իւրեանց ընտանիքով միաւորվում են էն խմբի հետ»⁴: Սրանց միանում է նաև Յաղուբ Մարգարյանը, «որպէսզի զնայ Թիֆլիս, նոր եկած Կ. Պօլսից երեւելի ոմն վարժապետի մօտ (կարծես Սերովբէ Պատկանեանը լինէր սա)»⁵ և առաւել ևս կատարելագործէ իւր ուսումը»⁶:

Նվիրում է Սերոբի պատմութիւնն պարունակող ձեռագիրը վերջինից «ստացողը» կամ սեփականատէրը: Իսկ քանի որ Սալաթ-Նովալի հետ հանդիպում է ունեցել Հաղբատի վանքում 1798—1800 թթ. միջոցին վրացի Իոնա կիսասարկավազ խելաշվիլին, պարզ է, որ 1795 թվականին Սալաթ-Նովան չէր սպանւիլ (տես մեր «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», III, Եր. 1955, էջ 245—249, 260, ծան. 12, էջ 182—186):

¹ «Նիկթեր ազգային պատմութիւն համար», էջ 68—69: Մեր կուսմանը համամիտ է Մուռու Հասրաթյանը՝ «Սալաթ-Նովա», Եր., 1958, էջ 307:

² «Նյուլիւր ազգային պատմութիւն համար», էջ 83:

³ Նույն տեղում, էջ 82—83:

⁴ Նույն տեղում, էջ 77:

⁵ Ծանոթագրութիւն Գ. Շերմազանյանի:

⁶ Նույն տեղում:

Ժ. Գլուխը, «Աղա Իբրահիմ Սանի, աշխինքն երկրորդ կամ կրտսեր» վերնագրով՝ պարունակում է, ի միջի այլոց, Ղուկաս կաթողիկոսի կոնդակը Հերակլ Բ վրաց թագավորի անունով, գրված «յամի 1791 և ի դեկտեմբերի ԱԱ ի յԱնապատն մեր յԵրևան»¹, իբրև պատասխան թագավորի թղթի, լի բարեմաղթություններով:

ԺԱ. Գլուխը, «Խուդադատ-խան Սալմաստեցի» խորագրով, պարունակում է, ի միջի այլոց, տեղեկություններ Աղեքսանդր վրաց արքայազնի մասին, որը դեմ էր Վրաստանի Ռուսաստանին միանալուն և որի մասին Գ. Շերմաղանյանից առաջ գրել էին Խ. Աբովյանը, Իսկ հետագայում Բաֆֆին և Աղ. Երիցյանը:

Ահա Գ. Շերմաղանյանի վկայությունն Աղեքսանդրի մասին.

«... Վրաց արքայորդի Աղեքսանդրն այս դարի սկզբներում Վրաստանից փախչում դնում է Պարսկաստան, Աբբաս-Միրզան տալիս է նրան մեկ քանի հարիւր ձիաւոր, որ միասին գնան յարձակուին Ռուսների տիրապետած կողմերի և կամ նրանց զորքերի վերայ, և կամ ապստամբեցնեն նրանց նոր հպատակները: Խուդադատ-Բէգն էլ լինում է էս հեծելազորքի գլխաւորը: Այդ ապաբախտ Աղեքսանդրը տարագրւած իր հայրենիքից, որպէսզի կարողանայ հալածել ռուսները Վրաստանից, ոչ միայն երբեմն-երբեմն արշաւեց իւր հայրենիքին կից՝ զանազան գիւղերի վերայ և ոչինչ շահեցաւ, այլև շատ հնարքներ գործ ածեց, որ գոնէ ապստամբեցնէ կովկասեան ցեղերն ընդդէմ Ռուսաց: Այս գործին մեջ նրա գլխաւոր գործակատարն էր Խուդադատ-Բեգը, որ մինչև ռուսաց և պարսից վերջին պատերազմի աւարտվիլը, աշխինքն 1827—1828 թիւը, երբեմն Աղեքսանդրի հետ և երբեմն առանձին՝ տեսնում ենք նրան Ղարաբաղի, Գանձակի, Շամախիի, Բաքուի, Սալիանի, Գերբենտի և Կովկասի սարերի մեջ զանազան ցեղերի հետ յարձակուլն ու յարակցութիւն ունենալը, և կամ նրանց յուզելն ու ոտքի վերայ կանգնեցնելը...»²:

¹ «Նյութեր ազգային պատմության համար», էջ 104—105:

² Նույն տեղում, էջ 112:

Համեմատաբար ավելի հետաքրքիր են Աղեքսանդր արքայազնի՝ Վրաստանի սահմանները, նույնիսկ մինչև Թիֆլիս գոլունի կերպով մուտք գործելու մասին հայտնած տեղեկությունները:

«Խուզադատն ասում էր,— գրում է Գ. Շերմազանյանը,— թէ շատ անգամ ես միայնակ, և երկու անգամ էլ Աղեքսանդրի հետ գնացել ենք Քիսէղ (Քիզիդ—Ա. Մ.—Բ.) և անտի Սղնախ, և այստեղից էլ գիշերը դուրս գալով՝ մօտեցած ենք Թիֆլիսին, կէս գիշերին հետևակ քայլերով հասել ենք Մախաթի սարի վերայ կանգնել, կամ Հալաբարի այն ժայռերի վերայ, որ նայում է Թիֆլիս քաղաքին, երկար միջոց կանգնած նայել ենք—նայել ու վերադարձել... հեծել մեր երիվարները, առատեան լուսածագին Սողանլու գիւղի մօտից անց կացել Կուր գետը. Բորչալուի, Կազախի մօտերքով զարտուղի ճանապարհներով քերել ենք դուրս եկել Սևանայ ծովակի մօտ»¹:

ԺԳ զլուխը, «Դաւիթ-խան Մկրտչեան, բժիշկ շահի պալատին» խորագրով, գաղափար է տալիս ընթերցողին ծանոթանալու հայազն բժշկի գործունեության հետ, որը մի ժամանակ կապված է եղել Թիֆլիսի հետ, մինչ նրան կհրավիրեին Թեհրան՝ շահի արքունիքը²:

ԺԵ զլուխը, «Իւսուֆ-խան Ամիր-Թօփխանէ, բաղկալ Գէլօյենց» նյութի շուրջը, գաղափար է տալիս հիշյալ Յուսուֆ-խանի և նրա զավակների մասին, որոնք բուն Թիֆլիսեցիներ էին և գերի էին ընկել պարսից ձեռք:

XIX դարի առաջին կիսում «Իրանի մէջ գտնուած եզական տղամարդներից մէկն էր այս Իւսուֆ-խանը»,— գրում է Գ. Շերմազանյանը, և ապա շարունակում. «Նա այն ընկերացի, որ գերի էր ընկած, մինչև իւր վերջին շունչը փչելը—քաջութեամբ ապրեց ու քաջութեամբ մեռաւ»³:

«Նա Թիֆլիսցի էր, և նրա առաջանի անունը—Յովսէփ, զոր փառաբշարար, Թիֆլիսու սովորութեամբ՝ Սօսի կանուանէին: Նրա հայրն էր բաղկալ (նպարավաճառ) Գէլոյենց Թօմա կամ Թովմա, նրա մօր անունը Քալի և քրոջը Նինօ: Թովմասի պա-

¹ «Նյութեր ազգային-պատմության համար», էջ 113:

² Նույն տեղում, էջ 130—132:

³ Նույն տեղում, էջ 136:

պահան տունը Շիա-պարսիկներին մէսջիթի մօտ էր, որին կից էր և նրա խանութը, ուր նրա նախնիքը նպարավաճառութեամբ կը պարապէին, ուստի և Թիֆլիս յայտնի էին բաղկալ Գէլօ-յենք անունով»¹:

Այս Թոման կամ Թովմասը «իւր բարձր ու պարթև հասակովը, լաւ հրացան ձգելովը, փայտեայ թրով կռուելովը, մանաւանդ մուշտեկովու ասած բռնցի մարտնչելովը՝ յայտնի քաջ տղամարդ էր համարվում Թիֆլիսի մեջ»²: Միաժամանակ «նա իւր համոզմամբ գոլով Շիա-մահմէդականների մէսջիթին դրացի, գոլով թուրքերին մօտիկ ծանօթ, ոչ միայն ինքը, այլև նորա գերդաստանի բոլոր անդամները ևս տեղեակ լինելով թուրքերէն լեզուին, անշարժ մնացել էին Թիֆլիս»³, Աղա-Մահ-մադ-խանի արշավանքի օրերին և, հակառակ սպասածին, գերի ընկել պարսիկների ձեռքը, որոնք տարել էին նրանց Պարսկաստան:

Եվ ահա հեղինակը պատկերացնում է թիֆլիսեցի Նինոյի ողբերգական վիճակն ու մահը օտարութեան մեջ:

«... Գերեզմար Մահմմէդ-Բէգը տարաւ Նինօն, զոր վերակոչեց Նենէ, ամուսնացրեց իր որդու հետ: Նենէն՝ ինչպէս մինչև ամուսնանալը յամառուած՝ չէր կամենում կատարել մուսուլմանների կրօնական ծէսերը, նույնպէս ամուսնանալէն մէկ տարի անցած՝ չէր մտնում նորափեսի առաջաստը, ուստի նրա պատանի ամուսինը մէկ գիշեր զայրանալով Նենէի յամառութեան վերայ, դաշնակով սաստիկ վիրավորում է Նենէին կուրծքի մօտից և Նենէն էլ ձեռք հասցնում է պատուհանում դրած գէնքերին, մէկ բէհրտօք ասած դաշոյն է վեր առնում կոխում ամուսնի փորը, որ իսկոյն փչում է հոգին, թէև ինքը՝ Նինէն էլ երեք օրից յետոյ աւանդում է հոգին»⁴:

ԺԸ գլուխը, «Բէժան-խան կամ Հաջի-Բէժան-խան և նրա որդին» վերնագրով, պարունակում է այստեղ հիշված անձնավորութեան կենսագրութիւնը, որը սկսվում է այսպես.

1 «Նյութեր ազգային պատմութեան համար», էջ 136:

2 Նույն տեղում, էջ 136—137:

3 Նույն տեղում, էջ 136:

4 Նույն տեղում, էջ 158:

«Բէժմանը ծնած էր Դրմանիս, որ Վրաստանի Սօմխէթ (ուշիդ՝ Սոմխիթ—Լ. Մ.—Բ.) ասացեալ գաւառի, երբեմն երևելի քաղաք և այժմ աւերակ գիւղ է»:

ԻԱ. գլուխը, «Նոր-Ջուղայեցի պարոն Ոսկան Սամուրի և համագանցի վերաբնակեալ Թավրիդ՝ մահտեսի Յովհաննէս Ղաւարեան, որ էր Քիւրքշի-բաշի թագաժառանգի պարսից Ատրպատականի մէջ» վերնագրի տակ խոսւում է այլևայլ անցքերի մասին և, ի միջի այլոց, «Հերակլ արքայորդի Աղեքսանդրի» 1804 թվականի գործելակերպի շուրջը, երբ նա, ինչպես Դանիէլ կաթողիկոսը 1804 թվականի սեպտեմբերի 27-ին գրած իր նամակում նշում է, պայքարում էր ռուսաց դեմ «ի վերայ Բամբակաձորու Ղարաքիլիսայի»՝ Փիղուլիխանի 8000 զորքի հետ միացած, որին միացել էին «այլ պատերազմող եկելոցն 3000 զօրք և Ալեքսանդրի ի Ղազախաց և ի կողմանց Թիֆլիզու և կամ լեզգեաց»¹: Նույն նամակում ասված է նաև այն, որ «Ալեքսանդրն և Ջավատ-խանի որդին... զնացեալ էին ի խառնակել զկողմանս»²:

1804 թվականի հոկտեմբերի 1-ի նամակում, հասցեագրված Դավիթ Ղորղանյան հակաթոռ կաթողիկոսին, Մահտեսի Հովհաննէսը զեկուցում է, որ «[Թիֆլիս] քաղաքի թավաղներն զէնջիրլիմն է, ծանդր զէնջիրլի է, մի զէնջիրլն վիզերնումն»³:

ԻԲ. գլուխը, «Միրզայ Ռոստոմ էնիկօլօփեանց» խորագրով, ծանոթացնում է ընթերցողին էնիկօլօփյան ազգատոհմի պատմության հետ:

«Միւնեաց տէր էլիկումն ամուսնացած է եղած Մամիկոնէից նախարարութենէ սերուած մէկ օրիորդի հետ», որոնց «սերունդէն ծագած մէկը 1600 կամ 1650 թուերին Միրզայ-Ջօհրաբ կամ Ջուրաբ Մամիկոնեան անուն երիտասարդ՝ քաջ տեղեակ ինեղով պարսիկ, արար-ջղաթայի և իւր մայրական հայ լեզուներին, զնում է Վրաստան, ուր և իրթվում է և վրացերեն լեզուով, մտնում է վրաց իշխանապետի մօտ թարգմանի պաշտօնով: Միրզայ-Ջուրաբը ճարտար և ճոռոմ լեզու ունենալու համար՝ այն ժամանակուայ վրաց իշխանապետն, այսինքն

¹ «Նյութեր ազգային պատմության համար», էջ 197:

² Նույն տեղում, էջ 198: —

³ Նույն տեղում, էջ 199—200:

Նէփէն, շնորհում է նրան վերակոչումս էնիկօլօփի, այսինքն տուփ լեզուի: Այնուհետև Զուրարն իւր սերունդի շքեղ մականունն Մամիկոնեան թողնելով, սեփականացնում է ինքեան էնիկօլօփի վերակոչում, ուստի և նրանից շառաւիղեալնհրո նոյն մականունամբ են յայտնի Վրաստանի մէջ»¹:

Ըստ Գ. Շերմազանյանի, «էնիկօլօփեանց գերդաստանի արու անհատները բոլորեքեան էլ հայերէն, վրացերէն, պարսկերէն, ջղաթայի, այսինքն թուրքերեն և արաբերեն լեզուները երեսայութեան ժամանակից կսկսեին սովորել, որպէսզի ոչ միայն Վրաց իշխանապետների և իշխանազուներնրի դրան թարգմանության պաշտօնը կատարէին, այլև այդ գերդաստանների անդամներից ոմանք երբեմն Պօլիս՝ սուլթանների մօտ, և Ասպահան՝ շահերի մօտ վրաց իշխանապետների կողմից՝ գնացել են դեսպանության պաշտօնով, նոյնպէս չորս կողմի սահմանակից փաշաների և խաների մօտ ևս, ինչպես և 1833—1834 թուերին, որպէս յիշում եմ, Միրզայ-Աբրահամը Վրաստանի կուսակալի կողմից գնաց Թէհրան շահի մօտ և ստացաւ խանութեան տիտղոս»²:

Գ. Շերմազանյանին հայտնի է եղել նաև այն, թե ինչպես XVIII դարի վերջերում «Վրաց իշխանապետ Հերակլ խանը անբաւական լինելով էնիկօլօփեանց գերդաստանից, խլում է նոցանից իւր պապերից պարզեաժ գիւղը: Միրզայ-Ռոստոմը սրա համար խռովելով՝ թողում է իւր երկու անշափահաս զաւակները և տարաշխարհիկ լինելով՝ գնում է, ինչպես պատմում էին, Աւստրիոյ երկիրը, ուր սկսում է եւրոպացիների, նորահնար զինուորական կրթութեամբ մարզուիլ: Յետոյ երբ լսում է թէ պարսիկները աւերել են Թիֆլիսը, Հերակլ մեռել է, ուսները տիրապետել են Վրաստանին, 1805—1806 թ. վերադառնում է, հասնում Թիֆլիս, ուր իմանում է, որ... իւր եղբայր Միրզայ-Աբրահամը՝ Հերակլի մահուան օրերումն վերաստանում է իւր հայրական խլած գիւղը...»³:

ԻԳ գլուխը, «Մօլլայ-Քաշի հաջի Մօլլայ Քեարիմ Տէր-Գրիգորեանց»-ի մասին խօսելիս՝ ընդգծվում է, թե ինչպես հիշյալ

¹ «Նյութեր ազգային պատմության համար», էջ 201—202:

² Նույն տեղում, էջ 202:

³ Նույն տեղում, էջ 202—203:

անձնավորությունը հայտնեց իր «Թիֆլիսեցի լինելը, և թե շատ էր սիրում իւր այնտեղի ազգականների մասին մէկ համբաւ կամ որևիցէ տեղեկութիւն ստանալու թէ՛ արդեօք նրանք Թիֆլիս ի՞նչ կանեն, ո՞վ է նոցանից այժմ կենդանի և ի՞նչ վիճակի մէջ են»¹:

Ի՞նչ գլուխը, «խոսքով-խան վալի Ղայթմաղեանց, մականունեալն Շիր, այսինքն՝ Առիւծ», խոսելով այլեալ փաստերի մասին, ի միջի այլոց, տեղեկություններ է հայտնում նաև Ղայթմաղանց ազգատոհմի (գերգաստանի) այն ներկայացուցիչների մասին, որոնք հայտնի էին եկեղեցական-դպրոցական ասպարեզում²:

Ըստ Գ. Շերմաղանյանի տեսության, «Թիֆլիսի սուրբ Գէորգ (բերդի) եկեղեցւոյ աւագ քահանայ Տէր-Ֆիլիպէ Ղայթմաղեանցն ունեցել է երկու որդի՝ Տէր-Սամուէլ և Տէր-Դաւիթ անուններով: Տէր-Սամուէլն եղել է սուրբ Բեթղէհէմ եկեղեցւոյ աւագերէց: Իսկ Տէր-Դաւիթը Քարափի եկեղեցւում քահանայ»³:

Գ. Շերմաղանյանը հաղորդում է նաև այն, որ «այս գերգաստանի ծագումը՝ լինելով Վրաստանի հին ազնուական հայ սերնդից՝ Դաւիթն էլ իւր երիտասարդութեան ժամանակէն միշտ յարակցություններ» է ունեցել հայ և վրաց իշխանների և ազնւականների հետ⁴: Իսկ «տէր-Սամուէլը... գնում է էջմիածին, ուր քիչ մի կենալէն յետոյ, անցնում է Պարսկաստան և այնտեղէն Հնդկաստան»⁵: Այս Տեր-Սամուէլը 1794 թվականին ևս Հնդկաստանումն է, քանի որ նրա, իբրև Տեր-Սամուէլ Տեր-Փիլիպոսյան Ղայթմաղանց քահանա-ուսուցչի մասին, խոս-

¹ «Նյութեր ազգային պատմության համար», էջ 210—211:

² Սրանց մասին և հատկապես տեր-Ֆիլիպի մասին տե՛ս Լ. Մելիքսեր-Քել, Հայերը վրաց հին գրականության մեջ, «Գեղարուեստ», № 7, Թիֆլիս, 1921, էջ 46—47, նույնի՝ հատված 18-րդ դարի վրաց գրականության պատմությունից. Ֆիլիպի Ղայթմաղաշվիլի, «Լուսիսի», 1922, № 16 (վրացերեն). նույնի՝ К биографии священника Филиппа Кайтмазова. „Христ. Восток“, т. VI. 281—284. նույնի՝ Հայ հին գրականության պատմությունը, Թիֆլիսի, 1941, էջ 230 (վրացերեն), նույնի՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, III, Երևան, 1955, էջ 99—101, 257, 261:

³ «Նյութեր ազգային պատմութեան համար», էջ 213:

⁴ Նույն տեղում, էջ 215:

⁵ Նույն տեղում, էջ 214:

վում է «Ազգարար»-ի 1794 թվականի № 4-ում տպված մի անստորագիր հոդվածում (էջ 164—172)¹:

Ին գլուխը, «Եաղուր-խան Սուլթան (կապիտան)» վերնագրով, գրեթե ամբողջովին նվիրված է վրաց արքայազն Աղեքսանդրի ու նրա մտերիմի՝ Յաղուրի կենաց հանգույցին:

«Երևանի Կոնդ թաղի բնակիչ Ստեփան անունով մեկը» XIX դ. սկզբներում «վերագաղթում է Թիֆլիս և բնակվում Հալարար ասուած թնդում, ուր էր և իւր երկրացիների գաղթականութիւնը տեղաւորված: Մէկ քանի ժամանակից յետոյ իւր որդւոյ հետ վերագաղթում է Երևան՝ իբրև ուստի հպատակ, որպէսզի իւր հայրական տունը վաճառէ ու նրա դրամով բամբակ գնէ տանէ Թիֆլիս, և այն փոքրիկ գումարով առուտուր սկսէ: Երևան չհասած՝ ճանապարհին աւազակները սողանում են Ստեփանը, իսկ զՅակոբը գերի վարելով՝ տանում են Երևան վաճառելու: Երևանի հայերը՝ լսելով այս իրողութիւնը, աշխատում են ազատել Յակոբը, բայց չեն կարողանում, ուստի դիմում են վրաց իշխանազն Ալեքսանդրին, որ ազատում է նրան ու պահում իր դրանը, ինչպէս վրաստանցի իւր հպատակ»², նույնիսկ «մնում է նրա (Ալեքսանդրի) դրանը առանց ոռճիկի և առանց որևիցէ դրաղմանց»³:

Հետագայում Հակոբը, վերակոչվելով Յաղուրի, առաջ է քաշվում Երևանի սարդարի միջոցով, և փոխադրվելով Թեհրան՝ հասնում է բեգության, սուլթանության և խանության:

«Երբ Եաղուր-խանն ամուսնանում է և իւր համար տուն ու տեղ է սարքում, այնուհետև նրա տունը լինում է վրաց իշխան Ալեքսանդրի կողմից զրկուած ատրհանդակների համար հիւրանոց: Վասն ղի երբ վերջիններս իրանց մեծաւորից շահի անուամբ խնդրագիրներ և կամ նախարարի ու երեւի պաշտոնատարների վերայ նամակներ բերէին Թեհրան, այնքան ժամանակ կը բնակէին Եաղուրի տանը, մինչև որ խնդրագրի կամ նամակների պատասխանները ստանային ու վերագաղթային: Երբ ինքը՝ Ալեքսանդրը գար Թեհրան, մինչև նրա համար յար-

¹ Հովհ. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիրտոգրաֆիա (1794—1900), Երևան, 1956, էջ 6:

² «Նիւթեր ազգային պատմության համար», էջ 221:

³ Նույն տեղում, էջ 221—222:

մար բնակարան դռներն ու վարձելը, նա կը բնակէր Եաղուբի տանը: Խօսք չկայ որ այս ամենը լինում էր առանց որեւիցէ նիւթական վարձատրութեան: Եաղուբ-խանը երգվում էր թէ «որքան ես իմ կեանքումը դրամ եմ վաստակած, թէ չասեմ երեք մասը, անշուշտ կէսն իմ բարերար Ալէքսանդրի ճանապարհին եմ մսխած, և թէ՛ չկարծէք որ ես փողման եմ, այլ ընդհակառակն ուրախ եմ, որ իմ պարտաւորութիւնս կատարած եմ»¹:

«Այսպէս ահա, ասում էր Եաղուբ-խանը, պարոնի որդի Ալեքսանդրը, չկարողանալով կրել այն անտանելի վշտերը, բանի որ «հիւանդութիւնը հետզհետեւ սաստկացաւ, կանչեց ինձ ու ասաց թէ՛... ինձ թաղել տուր Հայոց եկեղեցւոյ գաւթումը» (այս արտասանելիս Եաղուբն սկսեց արտասուել)... Երկրորդ օրը պարնի որդին (արքայազնը—Լ. Մ.-Բ.) աւանդեց հոգին»²:

Ալեքսանդր արքայազնի թաղման պարագաների մասին Յաղուբը հասցրել է Գ. Շերմազանյանին հետեւյալ տեղեկությունները.

«Պարտատերերն, իմանալով նրա մահը, ժողովեցան, եկին և չէին թողնում, որ նրան թաղենք: Աշխատեցի, բանը հասցրի շահին, որ հազիւ հինգերորդ օրը հրաման դուրս եկաւ թէ շահ 40 թուման դրամ է պարգեւել նրա չուղարկաւորութեան ծախսի համար, և թէ՛ պարտատէրները պիտի բաւականան հանգուցելոյ մնացած կայքովը: Բայց ի՞նչ էր մնացել, հազիւ թէ 50—60 թումանի հին ու անպէտք բաներ: Այն 40 թումանով, աւելացրեց Եաղուբը, հազիւ կարողացայ կատարել նորա թաղումը, որ եղաւ Շահ-Աբդուլ-Ազիմ ասած բերդի դռանը եղած Հայոց եկեղեցիի գաւթում, արեւմտյան եկեղեցւոյ դռան առաջ-էր, և երբ քառասունքի օրը պատարագ էին մատուցանում, մէկ փոքրիկ քար էլ ձգել տուի վրէն, որովհետեւ հայերէն կամ վրացերէն քանդակող չկար, չուղեցի էլ պարսկերէն գրել տամ, և մինչև ցայսօր էլ ամեն մեռելոցի օր օրհնել կտամ նրա գերեզմանը»³:

¹ «Նյութեր ազգային պատմության համար», էջ 223—224:

² Նույն տեղում, էջ 224—225:

³ Նույն տեղում, էջ 225:

Ալեքսանդր արքայազնի կյանքի վերջին օրերի ու թաղման մասին խոսելուց հետո Գ. Շերմազանյանն ավելացնում է.

«Իմ խնդրանքը՝ Նաղուր-խանը մէկ օր առաջնորդեց ինձ վերոյիշեալ եկեղեցիի գաւիթը և ցոյց տուեց այդ անշուք գերեզմանը, որ արդարեւ արեւմտեան դռնից 17 բայլ ուղիղ գծով հեռի է: Ես մտքովս դրի այն գերեզմանի քարի վերայ գոնէ պարսկերէն հանգուցելոյ լանունն ու վախճանելը քանդակել տամ, բայց դեսպանատան պաշտօնատարներից մէկն ասաց ինձ թէ՝ ի՞նչ գործ ունիս, թերեւ մէկ քաղաքական հարց ծագի, և դու պատասխանատու լինիս, ուստի և ես թէև կասեցայ նպատակիցս, բայց Զատկի և Զրօրհնեաց մեռելոցի օրերը օրհնել տուի հանգուցելոյ գերեզմանը, վասն զի ես նրա հետ խոյ և Թավրիզ ծանօթացած էի, և շատ անգամ էլ յաճախած էի նրա մօտ:

Ասում են, Նաղուր-խանը վախճանուեցաւ Թէհրան 1859 թուին»¹:

ԻԶ գլուխը, «Խաչատուր Բէրուռեան զառնշանչի» խորագրով, կարևոր տեղեկություններ է հաղորդում Նովհաննես և նրա որդի Խաչատուր Բերուռյանների² մասին, որոնք զինագործներ են եղել վրաց արքունիքում Թեյմուրազ թագավորի օրոք (1733—1744, 1744—1762):

«Իւր արհեստի մէջ քան վարպետ Զառնշանչի Յովհաննէս Բէրուռեանը Թէմուրազի խոստումներից խախտուելով՝ սկսում է ծանօթանալ և հաղորդակցութիւն անել լէզգիների հետ և ընծաներ է տալիս նրանց, հիւրընկալում է և պատվում, որպէսզի սովորցնեն նրան թէ ի՞նչպես են ջուր տալիս երկաթին, որ ամուր լինի և շուտով շխորտակուի. բայց նոքա զանում էին սովորցնել, վասն զի նոցա բոլոր վարպետութիւնը կայանում էր ջուր տալումն, զոր կարի խստութեամբ գաղտնի էին պահում: Յովհաննէսն էլ շնայելով ցուրտին, անձրեւին, ձիւնին, գիշերները գնում է նստում նրանց արհեստանոցի կտրում և երթիկից նայում՝ տեսնում թե նոքա ի՞նչպես են կատարում ջուր տալու գաղտնիքը: Այնուհետև սկսում է իւր գոր-

¹ Նույն տեղում, էջ 225:

² Բերուռյան-Բերուտովների սերնդից էր, ի միջի այլոց, Իւ. Ճավճաւաձեի մայրը:

ծարանում փորձել շատ անգամ, մինչև հասնում է իւր նպատակին, և մէկ հատ գեօրդայ է շինում, տանում ներկայացնում Թէմուրազին ու յայտնում իւր գտանելն այն գաղտնիքը: Թէմուրազը երբ հաւաստի է լինում, այնուհետև ի հարկէ չէ բերել տալիս լէզգիներ, այլ աշակերտներ է յանձնում Յովհաննէսին, որ սովորցնէ նրանց այդ արհեստը, և որպէսզի խրախուսէ նորա ձեռնարկութիւնը՝ Թէմուրազն անմիջապէս խիւլացում է և աղետականութեան արտօնութիւն է շնորհում նրան»¹:

Անցնելով ապա Հովհաննէսի որդի Խաչատուրի բնութագրմանը, Գ. Շերմազանյանը հայտնում է, որ նա «իւր զառնը-շանչութեան արհեստի մէջ գերազանցում է իւր հօրը, մանաւանդ որ աշխատում է, գտնում թե ի՞նչպէս պետք է թուրերի վերայ ջովհար խփել, որ մինչև այն ժամանակը միայն Խորասանի ձեռագործները կունենային...»², այնպէս որ «Խաչատուրի համբաւը տարածվում է շատ տեղ, մինչև որ... շատերը իրանց զրահները ուղարկում են... Թիֆլիս Խաչատուրի մօտ, որ ոսկի ջրով կամ ոսկի գրերով դրուագէ, քանդակէ, նոր կամ թէ իրանց ճաշակովը վերանորոգէ և կամ ջովհար տայ (ջուր տայ)»³:

ԼԱ. զուլար, «Միրզայ-Գուրգեն-խան էնիկօլօփեանց, Կուլափիշ-Իւզմէթ խասէ» խորագրով, վերաբերում է Պարսից արքունիքում XIX դարի առաջին կիսին գործող էնիկօլօփչան (էնա-կոլօփաշվիլի) ազգատոհմի ներկայացուցիչներից մեկին, որն, ինչպէս և նրա պապը (Հերակլ Բ. Թագավորի օրոք)⁴, կրում էին Միրզա-Գուրգինա անունը⁵:

ԼԳ. զուլար, «Աղալօ-աղայ, որ և Աղալար-խան էնիկօլօփեանց» վերնագրով, նվիրված է Միրզա-Գուրգինա էնիկօլօփչանից և Ոսկի-խանումից ծնված Աղալո-բեկ կամ Աղալար-խանի կենսագրությանը:

Ըստ Գ. Շերմազանյանի տեսության, Աղալոն մանկություն-

¹ «Նիւթեր ազգային պատմութեան համար», էջ 226—227:

² Նույն տեղում, էջ 227:

³ Նույն տեղում:

⁴ Լ. Մելիսեք-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ե. III, էջ 177, 189, 200:

⁵ «Նիւթեր ազգային պատմութեան համար», էջ 284—294:

նից սովորել և տիրապետել է հայերենին, վրացերենին, արաբերենին, պարսկերենին, թաթարերենին և «չափահաս լինելուց յետոյ նշանակվում է Գէօրգի վրաց թագաժառանգի դռան թարգման»¹, մի ժամանակ նա լինում է Ախալցիխեի «փաշայի մոտ թարգման Հայոց, վրաց և Պարսից լեզուներ»², ապա նաև ուսեերենի: Գեներալ Նեսվետաևի «հանձնարարություն»-ով 1806 թվականին նա բանակցում է Ախալցիխեի Սելիմ-փաշայի հետ: 1808 թվականին նա փախչում է էջմիածին և ալանտեղից Թալ-րիզ, որտեղ ծառայում է Պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի մոտ, և այդպես էլ վերակոչվում է Աղալար-խան³:

Օգտվելով առիթից, ավելորդ շնորհամարում նկատել, որ Գ. Շերմազանյանի «Նիսթեր հայոց պատմութեան համար» գրքի սույն՝ ԼԳ գլխում ներկայացված դեմքերի հիշատակությունն առկա է նաև Գայանեի վանքի հյուսիս-արևելյան անկյունում պահպանված 1822 թ. 6 օգոստոսի երկլեզվյան՝ հայ-վրացական, չափածո տապանադրության մեջ, որի ընդօրինակումը (հայերենի) տալիս ենք ստորև.

«Ի սմին տապանի հանդուցեալ զԼը յնի
Մարմին մահտեսի այն Թինաթինի,
Որ էր կողակից պարոն Գրիգորի,
Ի Յալթիբէշեան ազգէ անուանի.

Նա և էր զոքանչ Աղալօ-բէկի
Եւ մայր ալը յրբասէր Գեօղալ խանումի:
Ընթերցող, յիշման արա արժանի,
Զի լիցի բնակող յերկնից կայանի,
Ի 1822 օգոստոսի 6»:

ԼԵ գլուխը. «Մանուշար-խան էնիկօլօփեանց Իչ-Աղասի-բաշի և Մօժթէմիդ-ուդ-ղօվլէ» վերնագրով, որով մենք ավարտում ենք Գ. Շերմազանյանի գրքի տեսությունը, մեր նպա-

¹ «Նիսթեր ազգային պատմութեան համար», էջ 311:

² Նույն տեղում, էջ 312:

³ Նույն տեղում, էջ 313: Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայ-վրացական ֆոլկլորային նյութերից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 7, էջ 59—67. Նույնի՝ Սուրբ Հովսեփիմի և սուրբ Գայանեի վանքերի երկլեզվյան չափածո տապանադրերը, «էջմիածին», 1959, № 4, էջ 34—38:

տակի համար հետաքրքիր է միմիայն նրանով, որ այստեղ, ի միջի այլոց, խոսվում է նաև 1804 թվականի Երևանի ազատագրման գործում գեներալ Յիգիանովի և վրաց ազնվականության կատարած գերի մասին:

Մի ամբողջ ծանոթագրություն հեղինակը նվիրել է գեներալ Յիգիանովի ծագման խնդրին. «Յիգիանովը վրացի էր, բայց նա ծնած էր Ռուսաստան. Կաջարների պատմությունն ասում է թե՛ Ռուսաց կայսրն Թիֆլիս առաքեց Սիսիանյու (Սիսիանցի, Սիսականցի) ումն, պաշտօնիւ Շրփեխտուր (ինսպեկտոր): Պարսիկները Սիսական գաւառը անուանում են Սիսիան. ուստի և համարում են զՅիգիանովն Սիսիանցի և Սիւնեաց նախարարութեան ցեղից շառաւիղուած: Վրաստանումն էլ մինչև ցայսօր աւանդութեամբ մնացած է, որ Յիգիանով իշխանազունների նախահայրը գաղթուած է Սիւնիքից, Սիսական սերընդից»¹:

Գեն. Յիգիանովի և վրաց ազնվականության փոխհարաբերությունների մասին, որոնք պառակտումով են վերջացել, Գ. Շերմազանյանը գրում է.

«Կենսագ Յիգիանով զօրավարը Ռուսաց զօրքով չուում գնում է Երևանի բերդը պաշարելու: Վրաստանի ազնուականությունը իւրեանց անձնընծայութիւնը դէպի Ռուսաց դահլը ցուցանելու համար ուղարկում է բանակի հետ մօտ 300 հոգի քաջ զինաւորւած հեծելախումբ առանց ռոճկի. բայց երիվարների կերն ու զինաւոր մարդկանց ուտելիքը պետք էր լինէր տէրութեան ամբարից: Երևանի բերդը պաշարած ժամանակ Ռուսաց զօրքը հացի մեծ պակասութիւն է կրում. ուստի և Յիգիանովը մտադիր է լինում մէկ քանի օրից յետոյ բառնալով բերդի պաշարումը՝ վերադառնալ Թիֆլիս: Միևնույն ժամանակ Վրաստանի հեծելախումբն անտեղեակ լինելով Յիգիանովի դիտաւորութեանը, պատգամաւոր է ուղարկում նրան ասել թէ՛ «մենք մեր հացը որպէս և իցէ ձարում ենք, բայց չենք կարողանում մեր

¹ «Նյութեր ազգային պատմության համար», էջ 324, ծան. 1: Յիգիանով (վրաց. Յիցիշվիլի) ազգանունը Սիսիան-Սիսական երկրի հետ մի փոքր հիշեցնում է Ղափլանյան-Ղափլանիշվիլի առաջացնելը Ղափան-Կապանից: Մինչդեռ Վրաստանում կար «Սացիքիանո» անունով տեղավայր՝ Յիցիշվիլի-Յիգիանովների կալվածքներով:

Երիվարների համար դարի ձեռք բերել. ուստի և խնդրում ենք, որ հրամայէք թագաւորական ամբարից դոնէ դարի մատակարարեն մեզ, որ մեր ձիերը չսատկեն»: Յիցիանովը վայրացած պատասխանում է պատգամավորին թէ «եթէ ամբարում դարի լինէր, ես զօրքին կտայի և ոչ թէ նոցա ձիերին, որոնք եթէ սատկին էլ, ինձ փոյթ չէ, և եթէ չեն կարողանում այդ վիճակով համբերել՝ մնալ այստեղ, կարող են գնալ ուր որ կամենան, նրանց արգելող չկայ» և այլն:

«Վրաստանի հեծելախումբը Յիցիանովի այդ անակնանելի և խիստ պատասխանից շատ յուզուելով՝ պատրաստվում է վերադառնալ իրանց հայրենիքը: Այդ լուրը տարածվում է բանակի մէջ. ուստի և միաւորվում են նրանց հետ որպէս շատ թիֆլիսեցի հայեր, որոնք եկած էին բանակի հետ՝ առուտուրի համար, նոյնպէս մօտ հարիւր հրկրացի հայ զերդաստաններ, որոնք նեղացած լինելով պարսիկների ծանր լուծից, ուզում էին գաղթել Ռուսաց կողմը»¹:

«Կնեազ Յիցիանովն իւր պաշտօնական թղթակցութեանց մէջ այս անցքն այլ իմն դիմակով է ներկայացնում կայսեր, այսինքն՝ թէ և յանցաւոր է ցոյց տալիս Վրաստանի հեծելախումբը, բայց որպէս գերիները, նոյնպէս և թղթակիցների մասնաւոր նամակները վկայում են այնպէս, ինչպէս որ ես գրեցի»², — ասում է Գ. Շերմազանյանը և ապա շարունակում. «Յիցիանովի պաշտօնական թղթերի մէջ չէ յիշուած քանի՞ մարդիկ էին Վրաստանի հեծելախմբից, քանի՞ հոգի էին Թիֆլիսի հայ վաճառականներից, և ո՞րքան զերդաստան կամ հոգի էին երեւանցի գաղթողներից, և կամ նոցանից ո՞րքանը կոտորուեցան և ո՞րքանը դերի վարուեցան, այլ միայն վերիվայր և համառօտաբար յիշելով ներկայացնում է գերի ընկածների մէկ ցուցակը, որի մէջ յիշուած են այս երեւելիները: Լշխաւազուններ. — գեներալ-մայեօր և սարդար Իվանէ Օրբէլեանի. Ասլան, Զուրաբ և Սօլօմօն Օրբէլեանք. Լուարսաբ Սմբատայ-շվիլի (որդի), Եօտէփ Շալիկայշվիլի, Ռէվազ Բարաթաշվիլի, Երեմիա Մուխրան բատօնի շվիլի, Բէժան Բէհբուլթեանց, Դաւիթ Բարաթաշվիլի, Ռէվազ Թարխանաշվիլի, միւս Դաւիթ Բարա-

¹ Նույն տեղում, էջ 324—325:

² Նույն տեղում, էջ 326:

թաշվիլի: Ազնուականներ—Չօնգուր, էնիկոլօփեանց, Ռօստօմ Մեկիբեանց, Անդրէ Ղայթմաղեանց, Գիօրգի Ղօրղանեանց, Ռէ-վազ Թաղի որդի (Երկայնաբազուկ-Արղութեանց), Դաւիթ Թա-ղայշվիլի, Զառնշանշի խաչատուր (Բէբուռեանց)»¹:

Այս ցանկը լրիվ չհամարելով, Գ. Շերմաղանյանը կարեւոր է գտնում ավելացնել հետեւյալը. «Մասնավոր թղթակցություն-ներից երևում է, որ բացի վերոգրեալ մարդկանցից, այլ ևս շատ իշխանագոյններ և ազնուականներ են գերի վարուած, զորօրինակ Թամազ Օրբելեանի, Թաղայ Երկայնաբազուկ-Արղութեանց, Սօլօմօն Թարխանայշվիլի, Թէյմուրազ Բագրա-տիօն, Իվան Մեկիբեանց և ազնուականներ Նիսիայ (որ յետոյ Նունի-խան) Բագրատայշվիլի, Սօլօմօն Ղօրղանեանց և այլք»²:

Վրացերեն և վրացերենի միջոցով հայերենում մտած բա-ռերը Գ. Շերմաղան-Վարդանյանի «Նիսիք ազգային պատմու-թեան» մեջ.

էգեբա—էգեբա (գուցե, թերևս)

էնիկոլուփ—էնակոլուփի (լեզվի տուփ)

նեփե—մեփե (աբբա, թաղավոր, նոր փեսա)

ջիանջվիլա—ճիանճվիլա (մրջյուն):

Գ. ՇԵՐՄԱՂԱՆ-ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրականություն նրա մասին

1. Լ. Մելիքսեթ-Քեկ, Նյութեր Թրիլիսիի համբարների 1865 թ. «Եւոյթի» պատմության համար, «Սախտորիո մոմբե» [= Պատմական Տեղեկագիր], հ. III, Թրիլիսի, 1947, էջ 1—144, և առանձին:

2 Նույնի՝ Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարա-կությունները. Կատալոգ, I, Թր. 1949, էջ 307—308 (մասն Բ, № 102):

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

ՍՏԵՓԱՆՍ ԵԱԶԱՐԵԱՆ
(1814—1879)

Ստեփանոս Եսայիի Նաղարչանը ծնվել է Թիֆլիսում 1814 թվականին քահանայի ընտանիքում, որի բնակատեղն էր Հավլաբար քաղաքամասը։ Սկզբնական կրթությունը ստանում է Թիֆլիսում նախ իր հոր՝ Եսայի քահանայի մոտ, ապա Պողոս վարդապետի մոտ (Վանքի մայր եկեղեցուն կից), իսկ միջնակարգը՝ նորաբաց Ներսիսյան դպրոցում, դասընկեր լինելով և՛ Աբովյանին, Գ. Շերմադան-Վարդանյանին, Առաքել Արարատյանին, Պետրոս Մաղաթյանին և ուրիշներին։

1835 թվականին Ստ. Նաղարչանը ընդունվում է Դորպատի համալսարանը, որն ավարտելուց հետո նա, ինչպես հայտնի է, աշխատել է արևելագիտության դոկտ. Կադանի համալսարանում, ապա Մոսկվայի կադարչան ճեմարանում և այլն, այսինքն Թիֆլիսից և առհասարակ Վրաստանից դուրս։

Ինչպես հայտնի է, Ստ. Նաղարչանը 1869 թվականի սեպտեմբերից ստանձնել է Ներսիսյան դպրոցի վերատեսչի պաշտոնը, որի մեջ հաստատվել է նույն տարվա նոյեմբերի 11-ին № 367 [կաթողիկոսական] կոնդակով¹ և մնացել է այդ պաշտոնում լրիվ երկու ուսումնական տարի (1869—1870 և 1870—1871), բայց «համերաշխություն չգտնելով» դպրոցի հոգաբարձության հետ, 1871 թվականի հուլիսի 1-ից հրաժարվել է հիշյալ պաշտոնից² և ընդմիշտ հեռացել Թիֆլիսից և առհասարակ Վրաստանից։

Զնայած Ստ. Նաղարչանը այսքան կարճ ժամանակով է եղել Թիֆլիսում, այնուհանդերձ նա «ցարական կառավարության աչքում» ճանաչվել է իբրև «անբարեհույս» տարր, որի շուրջը գաղտնի հետախուզում-հսկողություն է նշանակվել ու

¹ Ստ. Մալխասյանց, Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթնասունհինգամյա գոյության (1824—1899), Թիֆլիս, 1900, էջ 129։

² Նույն տեղում, էջ 138—139։

կատարվել, որ և դառն է իր արտահայտությունը Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետի դիվանատան գործերում, որոնք իբրև հատուկ արխիվային ֆոնդ № 5/12-ի ներքո պահվում են Վրացական ՍՍՌ ՆԳՄ-ի կենտրոնական պատմական արխիվում:

* * *

Այս գործերից մեկը՝ № 787—«О духовных армянских семинариях» վերնագրով, որ սկսված է 1869 և ավարտված 1871 թ., վերաբերում է Ստ. Նազարյանի գործունեության այն շրջանին, երբ նա Ներսիսյան դպրոցի վերատեսուչ էր կարգվել:

Այն պարունակում է 3 գրություն «հույժ գաղտնի» (весьма секретно) մակագրությամբ.

1. Թբիլիսիի նահանգապետ Կոնստանտին Իվանովիչ Օրլովսկու ղեկուցագիրը Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետ՝ բարոն Ալեքսանդր Պավլովիչ Նիկոլայիի (Николай) անունով 1869 թ. 27 հոկտեմբերի—№ 200:

2. Հիշյալ վարչության պետ բարոն Նիկոլայիի գրությունը նահանգապետ Օրլովսկուն 1871 թ. հունվարի 7—№ 2:

3. Հիշյալ նահանգապետ Օրլովսկու ղեկուցագիրը բարոն Նիկոլայիին 1871 թ. փետրվարի 3—№ 17:

Ահա այդ գրությունները.—

Ա.

«Милостивый Государь Барон Александр Павлович!

Получив негласным путем сведения, что из Москвы прибыл недавно в Тифлис профессор Лазаревского лицея Степан Назарьянц, приезд которого состоялся будто бы вследствие патриотического общества армян для руководства в национальных их стремлениях, враждебных нашему Правительству, я распорядился о собрании более подробных по этому предмету данных. Из доставленного мне ныне донесения обнаруживается, что означенный Назарьянц по окончании курса наук в дерпт-

ском университете был преподавателем восточных языков в университете казанском, откуда его перевели в Лазаревский институт, в настоящее же время он действительно назначен инспектором Тифлисской армянской семинарии с подчинением ему всех остальных армянских школ. Выбор этот, основанный на репутации, коею Назарьянц пользуется в среде армян в качестве патриота, сделан попечительным комитетом армянских учебных заведений и утвержден патриархом Кеворком.

Насколько вредно может отразиться влияние названного Назарьянца на здешнее армянское юношество—определить теперь трудно и заключение сие можно вывести лишь из ряда наблюдений по истечении некоторого времени, но я счел не излишним ныне же довести о вышеизложенном до сведения Вашего Превосходительства в тех собственно соображениях, что в связи с настоящим случаем находится общий вопрос о Тифлисских армянских учебных заведениях, как в самом г. Тифлисе, так и в уездах Горийском, Телавском и Сигнахском, содержащих сколько на суммы частных благотворителей, столько же на уделаемые по распоряжению патриарха деньги из свечного сбора, каковые заведения, сколько мне известно, находятся вне всякого контроля. Не подчинясь инспекции учебного ведомства и в то же время не давая никакого отчета в действиях своих губернскому начальству, училища эти составляют нечто отдельное, управляемое особым комитетом из лиц выборных и действующее по указаниям, исходящим только от патриарха. Мне казалось бы, для устранения всяких недоразумений на будущее время, изъять все армянские училища из той, ничем не оправдываемой исключительности, в коей они находятся, распространив как на личный состав преподавателей в оных, так равно и на программу преподаваемых в них наук, если не надзор, то, по крайней мере, некоторое участие Кавказского Учебного Округа.

Представляя таковое мое мнение на благоусмотрение Вашего Превосходительства, имею честь покорнейше просить о последующем почтить меня уведомлением».

[Ստորագրություն] Орловский

Р

«Милостивый государь Константин Иванович!

В докладе 27 октября 1869 г. за № 200 Ваше Превосходительство, сообщая об опасениях того влияния, какое может выразиться от подчинения всех армянских училищ бывшему профессору Лазаревского института Назарьянцу, присовокупили, что положительное по сему предмету заключение можно вывести из ряда наблюдений по истечении некоторого времени.

Предполагая, что с того времени могли быть собраны достаточные данные для составления безошибочного по означенному предмету мнению—я покорнейше Вас прошу о сообщении мне таковых в дополнение вышеозначенного Вашего доклада».

[Ստորագրություն] Барон Николай

Ф

«Милостивый Государь Барон Александр Павлович!

На предположение Вашего Превосходительства от 7-го января за № 2 имею честь донести, что проживающий в Тифлисе бывший профессор Лазаревского института Назарьянц, как оказалось по собранным справкам, не успев приобрести желаемого влияния в среде здешнего армянского населения, намерен в скором времени оставить Тифлис и отправиться, как нужно полагать, в Москву».

[Ստորագրություն] Орловский

Ստ. նախարարին շնորհը ստեղծված «անբարեհուսություն» համարվր, անկասկած, պիտի անաշանար այն տպավորու-

թյունից, որ ցարական կառավարութիւնը Կովկասում ստացել էր 1865 թ. Թբիլիսիի համբարների ապստամբութեան կապակցութեամբ¹, երբ Ստ. Նազարյանցին «հավատափոխութեան» ջատագով լինելու և Բաղելի հայ բողոքականների հետ կապ ունենալու մեջ էին մեղադրում²:

Համենայն դեպս, Կովկասի փոխարքայի օգնական գեներալ իշխան Գր. Օրբելիանու (վրաց հայտնի բանաստեղծի) թղթերում, որ Վրացական ՍՍՌ գիտ. ակադեմիային ենթակա Վրաստանի պետական թանգարանի գրական բաժնի արխիվային ֆոնդումն է գտնվում, մի կտոր թղթի վրա, որի մի երեսին իշխանուհի Դադիանու արտասահմանյան հասցեն է նշած (France—Paris. A son Altesse sérénissime Madame la Princesse Catherine Dadian de Mingrelie. L'Hôtel du Louvre), մյուսի վրա մատիտով նշված է հետևյալը (վրացերեն)։

«Մոսկվայում գտնվում է Ստեփան Նազարյանցը, պրոֆեսոր Մոսկվայի համալսարանում (sic)։ Սա նախանախագահն (բնագրում՝ «պրեդպրեդսեդատելի») է «Սիրո եղբայրներ» (բնագրում՝ ուսերեն՝ «Братья любви») ընկերութեան։ Սա դաստիարակեց (սնեց) Գոգոբերիձեին (ուղիղ՝ Ղոգոբերիձեին—Լ. Մ.—Բ.), Շանշիևի որդոց և ուրիշներին քարոզում է աղատութիւն, հայերի ազգայնականութիւնը (բնագրում՝ «նացիոնալութ»), հավատափոխութիւն, սրա հետ են միասին Պետրոս (բնագրում՝ «Պետրե») Շանշիևը, Խատիսովը, Սիմոն-

¹ Հմմտ. Լ. Մելիքսեր-Բեկ, Համբարների ելույթը Թբիլիսիում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, — «Խորհրդային Վրաստան», 1938, № 20:

² Հմմտ. րժ. Լ. Տիգրաւեյան, Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները 1830—1892. — «Լուսն», 1903, № 5, էջ 21—22, № 6, էջ 82—83: Հայերի մեջ բողոքականութեան (լութերականութեան) տարածման բաղաձայն աստուծոյ մասին, ի միջի այլոց, մանրամասն խոսվում է Վրաստանի պատմական արխիվի № 5/12 ֆոնդի № 6934 դործում (1871 թ.) — О желании Вагаршапатских жителей принять лютеранское исповедание, առանձնապես արտաքին դործերի մինիստրութեան Ասիական դեպարտամենտի գիրեկտոր Պյոտր Ստրեմոուսովի՝ ներքին դործերի մինիստրութեան օտար զավանութիւնների դեպարտամենտի գիրեկտոր Կոմս Էմմանուել Կորլովիչ Սիվերսի նույն 1871 թ. 24 մայիսի № 38 գրութեան մեջ:

յանցը և ուրիշներ, իբրև օժանդակողներ և տարածողներ այս ուսմունքի: Սրանք քարոզում են մատերիալիզմ (բնագրում ուսուերեն՝ материализм)»¹

ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրականություն նրա մասին

1. Լ. Մելիքսեբ-Ֆեկ, Նյութեր Թրիլիսիի համբարների 1865 թ. «Ելույթի» պատմության համար, «Սախտորիս մոամբե» [= Պատմության Տեղեկագիր], հ. III, Թրիլիսի, 1947, և առանձին, էջ 143—144:

2. Գրիգոր Օրբելիանի, Երկերի լրիվ ժողովածու, Թրիլիսի, 1959, էջ 311:

¹ Այստեղ գուցե ակնարկ է Մ. Նալբանդյանի մասին:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԻՆԴԻՅԱՆ
(1829—1866)

Միքայել Նալբանդյանն անմիջապես կապված չի եղել վրաստանի, վրաց իրականության ու կուլտուրայի հետ: Այնուամենայնիվ, կան մի շարք մոմենտներ, որոնք Մ. Նալբանդյանին կապում են վրաստանի հետ:

Այսպես, օրինակ, Մ. Նալբանդյանը իբրև էքստերն 1859 թվականի գարնանը Պետերբուրգի համալսարանում քննություններ է հանձնում հայ-վրաց-թուրքական բանասիրությունից և, ի միջի այլոց, մայիսի 3-ին վրաց լեզվից¹, որի դասախոսն էր նույն համալսարանում հայտնի գրականագետ և բառարանագետ Դավիթ Չուբինովը (Չուբինաշվիլին), և որի դործերին նա, անտարակույս, ծանոթ պիտի լիներ: Ի նկատի ունենք վերջինիս «Վրացերեն-ռուսերեն-ֆրանսերեն բառարանը» (Ս.-Պետերբուրգ, 1840), «Ռուսերեն-վրացերեն բառարանը» (նույն տեղում, 1846), «Վրացերեն ծաղկաբաղը», մասն Ա և Բ (նույն տեղում, 1846), «Վրաց տարեգրություն» Բ մասը (նույն տեղում, 1854) և այլն:

Իսկ ուղիղ մի տարի հետո, այն է 1860 թվականի գարնանը, Մ. Նալբանդյանը նույն համալսարանին ներկայացնում է ռուսերեն լեզվով իր դիպլոմային շարադրությունը՝ «Об изучении армянского языка в Европе и научном значении армянской литературы» թեմայով, որը գնահատվում է «բավականին բավարար» (довольно удовлетворительно), համաձայն ադյունկտ-պրոֆեսոր Ն. Լ. Բերոնի գրախոսականի և արևելյան լեզուների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար էքստրաօրդինար պրոֆեսոր Դ. Չուբինովի բանավճիռի, նույն 1860 թվականի հուլիսի 7-ի թվահամարով:

¹ Ա. Խնձիկյան, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, IV, Երևան, 1949, էջ 276:

Վրաստանում և, մասնավորապես, Թիֆլիսում Մ. Նալբանդյանին վիճակվել է լինել միմիայն մեկ անգամ, այն էլ շատ կարճ ժամանակով, 1860 թվականի աշնանը, նախ՝ օգոստոսի 26-ից մինչև սեպտեմբերի 3-ը (հին տոմարով), Մոսկվայից էջմիածին ուղևորվելիս, և ապա՝ հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 1-ը, էջմիածնից վերադառնալիս:

Թիֆլիսում եղած պահին Մ. Նալբանդյանը ծանոթացել և հանդիպումներ է ունեցել Ղազարոս Աղայանի, Միքայել Միանասարյանի և Պետրոս Սիմոնյանի հետ, որոնց հասցեները գրել է գրպանի գրքուլի մեջ, այլև տեղական օբսերվատորիայի վարիչ Գաբրիել Խատիսովի հետ, որին առաջներում ճանաչելիս է եղել և Խ. Աբովյանը:

Հենց այս միջոցին Մ. Նալբանդյանը զբաղվել է մի խնդրով (ոմն Արամի հանձնարարությամբ), թե «Տփիսիսի բնակիչք որչափ են և մասնատրապէս հայք, եկեղեցյաց թիվը, Ռուսաստանի բոլոր հայոց թիվը»¹: Այստեղ ևս նա ստացել է մի ինչ որ բանաստեղծության պատճենը:

Նույն 1860 թ. սեպտեմբերին Մ. Նալբանդյանը ստանում է արտասահմանյան անցագիր Կովկասի փոխարքայի դիվանատնից և, հավանական է, անձմար ներկայացած լինելու փոխարքայի պաշտոնակատար գեներալ-ադյուտանտ իշխան Գրիգոր Օրբելիանուն, որն սովորաբար մեծ հարգանքով էր վերաբերում գրական գործիչներին և այդ ծանոթության միջոցին կարող էր տալ հայազգի երիտասարդ գործչին որևէ հանձնարարություն կատարելու արտասահմանում:

Թիֆլիսից նոյեմբերի 1-ին Մ. Նալբանդյանը մեկնում է Փոթի, հետևապես կտրում է ամբողջ Արևելյան և Արևմտյան Վրաստանը, անցնելով Մցխեթա—Գորի—Սուրամի, ապա Լիխիի (Սուրամի) լեռնանցքով՝ Վերին և Ներքին Իմերեթ՝ Զիրուլա—Ղվիրիլա—Ռիոն գետերի ձորերով ու հովիտներով, վերջապես Կոդքիս (Կոխիդա)—Նգերք (էգրիս)—Սամեգրելոյով մինչև Փոթի, իսկ Փոթիից ծովով գեպի Բաթում, մնալով Վրաստանի ծովեզրյա քաղաքներում նոյեմբերի 7—14-ը, որից հետո մեկնում է Տրապիզոն և այնտեղից Կ. Պոլիս:

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, IV, 1949, էջ 276:

Հնդկաստանից վերադարձին, Կ. Պոլսում եղած պահին, Մ. Նալբանդյանը գրում է հանրածանոթ ղեկուցագիրը ուսերեն լեզվով՝ «Армяно-григорианская община в Константинополе» թեմայով, 1861 թ. դեկտեմբերի 22-ի (1862 թ. հունվարի 3-ի) թվահամարով, որը ուսաց դեսպանի միջոցով ուղարկվում է Թիֆլիս՝ Կովկասյան փոխարքայի պաշտոնակատար գեներալ իշխան Գր. Օրբելիանուն ներկայացնելու:

Մ. Նալբանդյանի մահվան և թաղման կապակցությամբ տեղի է ունենում մի շարք հայ գործիչների հալածանք Թիֆլիսում:

Այսպես, օրինակ, 1866 թ. ապրիլի 14-ին Թիֆլիսում տեղի ունեցած ցույցին մասնակցել էր Նալբանդյանի լուսանկարները տարածող հայ երիտասարդ, հետագայում անվանի ազգագրագետ-բանահավաք Տիգրան Նավասարդյանը, իսկ նույն թվականի սեպտեմբերին Թիֆլիսից անհետանում է ներսիսյան դպրոցի հայոց պատմության դասատու Գեորգ Աբովյանը:

* * *

Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի № 5/12 ֆոնդի № 7094 գործը, 1874 թ., վերնագրված «О карточках армянского писателя Налбандяна»¹, պարունակում է մի շարք գրություններ՝ «գաղտնի» (секретно) մակագրությամբ, որոնք բնութագրում են Մ. Նալբանդյանի հալածանքի արձագանքները նրա մահվանից 8 տարի անց, 1874 թվականին Թիֆլիսում:

Այս գրությունները (վավերագրերն) են.

1. Երևանի նահանգական ժանդարմերիայի վարչության պետի ղեկուցագիրը (պատճենը) Ն. Կ. Մ. սեփական դիվանատան 3-րդ բաժանմունքի անունով, 1847 թ. 9 ապրիլի, № 35:

2. Նույն վարչության պետի ղեկուցագիրը Կովկասի փոխարքա մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովի անու-

¹ Հմմ. նույնպիսի գործը Խ. Աբովյանի պատկերի մասին Կովկասյան ցենզուրական կոմիտեի № 114 ֆոնդի մի գործից՝ Խվ. Բեգլարովի հոդվածում, «Արշավ», 1940, № 3, էջ 68:

նով՝ 1874 թ., 9 ապրիլի, № 9, որին կցված է վերոհիշյալ № 35-ի գրության պատճենը:

3. Կովկասյան փոխարքայի գլխավոր վարչության պետ՝ բարոն Ալեքսանդր Պավլովիչ Նիկոլայի (Николай) շրջաբերական գրությունները Անդրկովկասի նահանգապետների անունով 1874 թ., 1 մայիսի, № № 125—127:

4. Թիֆլիսի նահանգապետ Կոնստանտին Իվանովիչ Օրլովսկու ղեկուցագիրը բարոն Նիկոլայի անունով 1874 թ., 7 սեպտեմբերի, № 75:

II.

(Копия с донесения начальника эриванского губернского жандармского управления в 3-е отделение собственной Е. И. В. Канцелярии от 9-го апреля за № 35).

«В последнее время здесь, как мне передали, стали получаться из Тифлиса молодыми армянами карточки армянского писателя Налбандьяна, который как говорят, в пятидесятых годах, за свободные свои антиправительственные сочинения, был сослан в г. Камышин Саратовской губернии, где недавно умер. Карточка кругом исписана похвальными словами Налбандьяну, вроде следующих: «Спаситель отечества» или «Один Бог не ответен». Карточка эта появилась в кельях монашеских в Эчмиадзинском монастыре. Карточки эти раздаются в Тифлисе молодым людям бесплатно, раздаются они в учебных заведениях армянам, оканчивающим курс, но кем раздаются, того мне не сообщили.

Одновременно с появлением упомянутых карточек, появились у молодых армян здесь платки с изображением благодетелей Армении: Зайрмайра, Тиграна, Ерванта, Ваче (*բնիպրում* «Vahe»), Ваакана, Гайка II и Ардашеса. Один платок при сем честь имею представить в 3-е отделение собственной Е. И. В. канцелярии, карточка же с изображением Налбандьяна по приобретении мною будет представлена.

Верно: майор Золотовский

«Его Императорскому Высочеству Великому Князю Наместнику Кавказскому.

Имею честь при сем представить В. И. Высочеству копии с донесений моих в 3-е отделение собственной Е. И. В. канцелярии от 9-го апреля за № 35» и Управляющему оным отделением, того же числа за № 37».

[Ստորագրութիւն] Майор Золотовский

Կրկնելով ա. գրության ամբողջ բովանդակութիւնը՝ Կով-
կասի փոխարքայի գլխավոր վարչության պետ բարոն Նի-
կոլային դիմում է անդրկովկասյան նահանգապետներին շրջա-
բերականով, որ վերջանում է հետևյալ պարբերութիւնով.

Имею честь покорнейше просить Ваше превосходительство, в случае действительности появления в Тифлисе вышеозначенных, имеющих тенденциозную цель, предметов, поступить с ними на основании законов и о последующем меня уведомить.

Ваше Высокопревосходительство барон Александр Павлович!

Вследствие секретного сообщения Вашего Высокопревосходительства от 1 мая сего года № 124, о распространении между молодыми армянами фотографических карточек ссыльного политического преступника Налбандьян и платков с изображением разного рода благодетелей Армении, по моему распоряжению было произведено негласное дознание, коим обнаружено, что означенных платков в продаже по г. Тифлису не имеется, а оттиском карточек занимаются фотографии Мамиконянца и Аргюра Шахбазова.

Руководясь этими сведениями, я, на основании Высочайшего повеления 12-го декабря 1866 года и циркуляра министра внутренних дел 12 июля 1867 года, поручил одному из состоящих в моем распоряжении чиновников произвести обзор означенных двух фотографий, результатом которого было открытие и задержание в фотографическом заведении Артюра Шахбазова негатива с двумя изображениями Налбандьяна.

Возбудив установленным порядком противу Шахбазова законное преследование и предписав старшему полицеймейстеру о производстве дознания относительно приобретения Шахбазовым указанного негатива, переданного ему, по его заявлению, будто бы посторонним лицом, я в видах преграждения дальнейших способов к распространению фотографических снимков Налбандьянца и отображения, в случае обнаружения, законным путем тех, которые доселе были розданы в разные руки, распорядился отпечатанием 12 экземпляров означенных карточек, которые, по изготовлении, будут препровождены эриванскому губернатору и тифлисскому старшему полицеймейстеру».

[Ստորագրություն] Орловский

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1. Ի. Էնիկոլոպով, Միքայիլ Նալբանդյան (1829—1929). «Դրոշա», 1929, № 9, էջ 13:

2. Արտ. Գավրյան, Միքայիլ Նալբանդյան (ծննդյան 120-ամյակի առթիվ). «Լիտերատուրա դա խելովներա» [= Գրականություն և արվեստ], 1949, № 46:

3. Նույնը, Անվանի մտածող և ռուսացիոններ-ղեմոնրատ Միքայիլ Նալբանդյան, ծննդյան 125-ամյակի առթիվ, «Կոմունիստի», 1954, № 279:

4. Հ. Մկրտչյան, Հայ գրականության պարծանքը, Միքայիլ Նալբանդյանի ծննդյան 125-ամյակի առթիվ, «Լիտերատուրա դա խելովներա», 1954, № 48:

5. Ի. Գրիշաշվիլի, Միքայիլ Նալբանդյանին (1954), տես բանաստեղծի «Բանաստեղծությունների» միհատորյակը, Թբիլիսի, 1949, 1955 և այլն¹:

¹ Այս բանաստեղծությունը առկա է հայերեն 2. Կարայանի (1954) և Վ. Ալազանի (1954) թարգմանությամբ, տես՝ Լ. Մելիքսեյ-Քեյլ, Ի. Գրիշաշվիլին և հայ գրականությունը, 1957 (վրացերեն), էջ 252, 276, նույնը հայերեն «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, 1956, № 2, էջ 30, 49:

Գ Ե Ո Ր Գ Ա Ր Ո Վ Յ Ե Ն
(1837—1866)

Ազգային-ազատագրական շարժման հետ են կապված, անկասկած, այն բոլոր դեպքերը, որ ծավալվեցին ռուսահայերի մեջ Մ. Նալբանդյանի կալանավորման, արսորի, մահվան ու թաղման կապակցությամբ:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Մ. Նալբանդյանը հալածվել է ո՛չ միայն կենդանության վերջին տարիներին՝ 1862—1866 թվականներին, այլև մահից հետո, մինչև 1888 թվականը¹:

Օրինակ, հայտնի է Ներսիսյան դպրոցի նախկին սան Տիգրան Ավետիսի Նավասարդյանի գործունեությունը, այն Նավասարդյանի, որը 1879 թվականի նոյեմբերին Թբիլիսիի լիթոգրաֆիաներից (վիմագրատներից) մեկում պատվիրել էր պատրաստել 500 օրինակ Նալբանդյանի լուսանկարից, որը նա կեղծել էր ուսուցիչ Մարկոզովի անվան տակ՝ աշակերտների շրջանում Նալբանդյանի պատկերը գաղտնաբար տարածելու նպատակով:

Արգարադատության միևնույնության դեպարտամենտի 3-րդ քրեական բաժնի համապատասխան գրության մեջ՝ № 416—1880 թ. 15/II թվահամարով, ի միջի այլոց, նշված է նաև, որ «Նավասարդյանցը, տարածելով հանցագործ Նալբանդյանցի պատկերը, նպատակ է ունեցել հայ բնակչության մեջ դեպի սահմանված կառավարական կարգը վարկաբեկող մտքեր ու հիշողություններ բորբոքել»:

Ընդամին, նշված է նաև, որ «մեղադրյալը (Նավասարդյանը), 18 տարեկան, արձակված է Թբիլիսիի հայոց հոգևոր դպրոցի աշակերտների շարքերից իր ընկերոջ գերեզմանի վրա

¹ Հմմ. «Գրական ժառանգություն», Եր., 1940, էջ 20—87, Լ. Մելիքսերբեկ, «Հյուսիսսփայլի» գաղափարախոսները և ցարական վարչապետները Կովկասում, «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ, 1946, № 5, էջ 65—70:

գամբանական ճառ ասելու համար, որի մեջ պարսավել է
դպրոցի վարդությունը»:

Ինչպես նույն վավերագրից երևում է, «Կովկասի փոխար-
քան (մեծ իշխան Միքայիլ Նիկողայեիչ Ռոմանովը), նկատի
առնելով Նավասարդյանցի անշահահասությունը, այլև այն, որ
նրա վերոհիշյալ արարքից վնասակար հետևանքներ չեն առա-
ջացել, հաճում է որոշել՝ այդ գործին դատական կարգով ըն-
թացք չտալով, բանտարկել Նավասարդյանցին բանտում վեց
ամսով, որից հետո տալ ոստիկանության հսկողության տակ
երեք տարի ժամանակով»:

Տիգրան Նավասարդյանը 1882 թվականից սկսած հայտնի
է դառնում իբրև բանահավաք և բարբառագետ, նաև թարգ-
մանիչ գրող, որի գրչին են պատկանում 1882—1903 թվա-
կանների ընթացքում Շուշիում, Երևանում և Թբիլիսիում հրա-
տարակված հետևյալ գործերը. «Հայ ժողովրդական ավան-
դությունները», «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 1—10
գրքերը, «Բառգիրք արարատյան բարբառի» (մոտ 5000 բառ
ու ոճ), թարգմանություններից՝ «Աշխատություն և հանդիստ»,
«Ֆրիդոլին» և այլն:

Հայ ազգային-ազատագրական շարժման պատմության
զաղափարախոսության տեսակետից առանձնապես նշանա-
կալից են 1865—1866 թվականները, երբ, մի կողմից, պրո-
գրեսիվ տարրերը, օրինակ Գ. Սունդուկյանը, մասնակցում էին
Թբիլիսիի համաքարության «եկույթներում» (1865 թ. հունիսի
27 և 28-ին)¹, իսկ մյուս կողմից՝ Նոր Նախիջևանի հասարա-
կությունը ցույց էր կազմակերպում Մ. Նալբանդյանի թաղման
(1866 թ. ապրիլի 13-ին) կապակցությամբ:

Սակայն ցարդ մնում է անլուծելի մի զաղտնիք: Դա Թբի-
լիսիի ներսիսյան դպրոցի ուսուցիչ Գեորգ Աբովյանի «անհայ-
տացումն» է, նման հաշատուր Աբովյանի (հետագայում և
վրացի Իվանե Մաչաբեկիի) անհայտացման, որը տեղի ունե-

¹ Լ. Մելիքսեթ-Քեկ, Համբարների եկույթը Թբիլիսիում 1865 թվականին,
Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, «Խ. Վրաստան», 1938, № 19
և 20, նույնի՝ Նյութեր Թբիլիսիի համբարների 1865 թ. «եկույթի» պատմու-
թյան համար: «Սախատորիո մոմբե», հ. III, Թբիլիսի, 1947, էջ 1—144
(վավերագրերը ռուսերեն, վրացերեն, հայերեն և գերմաներեն):

ցավ 1866 թվականի սեպտեմբերին և որը գուցե հնարավոր լինի որևէ կերպ կապել Մ. Նալբանդյանի մահվան և թաղման շուրջը տեղի ունեցած իրադարձությունների հետ:

* *
*

Գեորգ Աբովյանը բնիկ Օձնեցի—Ուղունլարցի էր, որդի Կարապետ Աբովյանի և նրա ամուսին Նզիսարեթի (Օհանջանյանի դստեր)՝: Մնվել է 1837 թվականի ապրիլի 7-ին (հին տոմարով): Սկզբնական կրթությունը ստացել է 1845—1848 թվականներին Սանահնի վանական դպրոցում, որի ղեկավարը 1845—1855 թվականների ընթացքում հայտնի Սարգիս Վարդապետ (հետագայում եպիսկոպոս և արքեպիսկոպոս) Զալալյանն էր², ապա 1848 թվականից սովորել է Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում, որտեղից 1851 թվականին տեղափոխվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի գիմնազիական դասարանները, որն և ավարտել է 1857 թվականին:

1858 թվականից սկսած Գ. Աբովյանը հանձն է առել ընդհանուր և հայոց պատմության ու աշխարհագրության, նաև՝ ֆակուլտատիվ կերպով՝ երգեցողության դասավանդումը Ներսիսյան դպրոցի 3-րդ և 4-րդ դասարաններում:

Մանկավարժական աշխատանքը Թբիլիսիի Ներսիսյան դպրոցում հնարավորություն է տվել Գ. Աբովյանին մշակելու հայոց պատմության մի դասընթաց, որը, դժբախտաբար, կիսատ է մնացել և որը ընդգրկում է միմիայն հնագույն, հին և մասամբ միջին շրջանները՝ մինչև Կիլիկիայի թագավորության անկումը 1375 թվականին:

Թեև հեղինակը իր աշխատության լույս տեսնելուն չարժանացավ, սակայն վերջինս «Համառոտություն հայոց ազգի պատմության» վերնագրով ունեցավ «հետմահու» առնվազն

¹ «Կենսագրություն Գեորգայ Աբովյանի», Զմյուռնիա, 1882, (հավելված «Արևելյան Մամուլ»-ի): Լ. Մելիքսեր-Քեկ, Աբստրվածը Աբովյանի հաշատուրն էր, թե՛ Գեորգը, «Խ. Վրաստան», 1938, № 7: Գ. Աբովյանի լուսանկարը տե՛ս Գր. Ա. Ք. Մանգակունի, Ոսկե բարեկամ հայ ընտանյաց, Թբիլիս, 1913, էջ 725, նաև վերոհիշյալ մեր հոդվածում:

² «Կենսագրություն, կտակ Սարգիս արքեպիսկոպոսի Հասան Զալալյանի», Թբիլիս, 1884, էջ 9, 14:

շորս հրատարակութիւնն Թիֆլիսում, այն է 1869, 1877, 1884 և 1894 թվականներին (վերջին հրատարակութիւնը պարունակում է 270 էջ):

Գիրքը, որ նվիրւած է «յուր գորովագութ և սիրելի մոր Եղիսաբեթ Արքայանցին» և հրատարակւած է հեղինակի եղբոր՝ Բ. Արքայանի ծախքով, սկսւում է ն. Արքայանի «Վերք Հայաստանի»-ից վերցրած էպիգրամով, որը զարդարում է գրքի տիտղոսաթերթը.

«Աչքից հեռացած, մտքից մոռացած,
իրանք անլեզու, աշխարհս անիրավ,
Որ հայոց ազգիցն անթիվ ու անբավ
էսպիս քաջ որդիք խլեց՝ շղատացավ»:

Համարձակ կարելի է ասել, որ վերոհիշյալ գիրքը իր ժամանակի, այն է՝ XIX դարի 60—70-ական թվականների համար մեծ նախաձեռնութիւնն էր և իր ծառայութիւնը մատուցեց հայ աշակերտութեանը իբրև առաջին փորձ հայոց պատմութեան դասագրքի, նախքան հանդես կգար Ստ. Պալասանյանի հանրածանոթ «Պատմութիւն հայոց»-ը:

Գ. Արքայանին վիճակվել է ներսիսյան դպրոցում ուսուցչութիւն անել 1858—1866 թվականներին ծանր մթնոլորտում: Ժողովրդական դպրոցների տեսչութիւնը և առհասարակ պետական օրգանները, պատճառաբանելով, որ Գ. Արքայանը ուսուցչի համապատասխան ցենզ չունի, խոչընդոտներ են ստեղծել նրա առաջ: Մինչդեռ կազարյան ճեմարանի գիմնազիական մասը, որը Գ. Արքայանը ավարտել էր, կլասիկական գիմնազիայից պակաս չէր:

Այնուհետև Գ. Արքայանի դեմ ինտրիգներ են լարել ներսիսյան դպրոցի պահպանողական տեսուչ Փոնդոյովը և հոգաբարձու Ռոմանոս Նադիրովը: Սրանցից առաջինը «արգելում էր դպրոցում ազգային երգ երգելու, իբրև վտանգավոր», և, միաժամանակ, մեղադրել է Գ. Արքայանին, որ նա «աղատ մտքեր է տարածում աշակերտաց մեջ հայոց պատմութեան դասախոսութեան ժամանակ»:

Գ. Արքայանի կենսագրութեան միակ փորձից («Կենսագրութիւն Գեորգայ Արքայանց») մենք, ի միջի այլոց, տեղեկանում

ենք և այն մասին, թե ինչպես Գ. Աբովյանը Լազարյան ճեմարանում աշակերտ եղած պահին՝ 1851—1857 թվականներին, հատկապես ուսումնասիրում է եվրոպական լեզուները (գերմաներեն և ֆրանսերեն), շփվում է Մոսկվայի ու Նոր-Նախիջևանի մտավորականների, մասնավորապես հայագետ պրոֆ. Մկրտիչ էմինի հետ: Հայտնի է նաև, որ Գ. Աբովյանը «առաջնորդ էր բռնում իրան այն բարեմիտ և դիտնական անձանց, որոնք թեև գործ չեն ունենում ըստ ուսումնական մասի, ճեմարանում, այնուամենայնիվ բացում են իրենց դռները և օգնում հայ պատանիներին առանձնապես առաջանալու»:

Հավանական է, որ հենց հիշյալ ժամանակամիջոցին Գ. Աբովյանը կապ լինի հաստատած Մ. Նալբանդյանի հետ և հաղորդակից լինի վերջինիս կողմից քարոզած գաղափարներին:

Թբիլիսիում, ուսուցչական ասպարեզում աշխատելու պահին, Գ. Աբովյանն, ըստ նույն հեղինակի, «օտարազգի բարեմիտ դիտնական հայրենասիրաց հետ սերտ կապակցություն է շարունակում, որոնցից շատերն այդտեղ խուժաստան՝ են արտաբերված»:

«Արտաքին» և «ներքին» թշնամիների կողմից Գ. Աբովյանի դեմ սկսած ինտրիգների ապաթեզը (հանգուցը) լինում է այն, որ «շնորհիվ հոգաբարձու Նադիրով Ռոմանսի», Գ. Աբովյանը «արձակվում է դպրոցից 1866 թվականին և նոյեմբեր ամսու մեկին՝ չորեքշաբթի երեկոյան ժամը ութին (ըստ եվրոպականի) անհայտանում է...»:

Մեզ թվում է, որ Գ. Աբովյանին 1866 թվականի աշնանից պաշտոնից արձակելը չի կարող որոշ կապ չունենալ այն արձագանքների հետ, որոնք հետևեցին Մ. Նալբանդյանի թաղման շուրջը տեղի ունեցած ցույցերին՝ նույն 1866 թվականի ապրիլի 13-ից հետո²:

¹ «Խուժաստան»-ը թեև Պարսկաստանի հարավ-արևելյան մասի (հետագա Լուրիստանի) անունն է, որը հայտնի է իրեն արտաբերված, սակայն այստեղ գործածված է փոխարեքական իմաստով, իբրև հասարակ բառ՝ արտաբերվածի նշանակությամբ:

² Տե՛ս Լ. Մելիքեյ-Բեկ, Արտաբերված Աբովյան հաշտություն էր թե՛ Գեորգը. «Խ. Վրաստան», 1938, № 7:

Սակայն, մինչև այդ հարցի քննությունը, կանգ առնենք մի վկայության վրա Գեորգ Աբովյանի մասին, որ մեզ թողել է Պ. Պռոշյանը իր «Հուշերի» Բ. մասում¹:

Պ. Պռոշյանը Գեորգ Աբովյանին հիշատակում է Փրիգոնյանցի հետ միասին՝ իբրև «երաժշտապետների», որոնք «փոքր ուժ չեն» եղել: Հատկապես առաջինի մասին գրում է. «... Ափսոս Աբովյանց, կարճ ժամանակում նա կարողանում է մեր նոր երգերին ձայներ դնել»:

«Աբովյանցի հորինած եղանակները ունկնդիրների հոգուն հերան են թափանցում. նրա եղանակների մեջ եվրոպական միանում է բուն ազգայինի հետ. զանազան եվրոպական նշանավոր երաժիշտներից նա խաղեր է առնում և մեր շարականների, մեղեդիների, տաղերի, մուխամբազների և տեղական շքյաստանների, բայաթիների նման խաղերի հետ հարմարեցնում, ի մի է ձուլում, որոնցով ստեղծում է եվրոպա-ասիական մի երաժշտական ներդաշնակ դաշնակցություն»:

Այս համերաշխությունը, այս միաբանությունը ընդհանուր ընդունելության է արժանանում մուղիկայի սիրահար եվրոպացոց և թառ ու քյամանչայով սքանչացող տեղացոց: Սկսում են աչնուհետև խտալական խումբը թատրոնում, քնքուշ սեռը սալոններում և սազանդարները հարսանիքներում ու խնջույքներում Աբովյանցի և Փրիգոնյանցի հայ թատրոնի համար հորինած երգերը նվագել. արդեն դաշնամուրների վերա եվրոպական նոտաների խմբում տեղ են գտնում և հայկական նոտաների տետրակները, որոնք տպված լավ դնով տարածվում են»²:

Շարադրելով այս տողերը, Պ. Պռոշյանը շեշտում է նաև, որ «այսքան առավելություններից բնական էր, որ հակառակ կուսակցությունը պիտի տուժեր»³:

Անցնելով Գ. Աբովյանի դեմ կիրառած հալածանքների խնդրին, պետք է ասել, որ այս մասին, բարեբախտաբար,

¹ Պեքե Պռոշյան, Նրկերի ժողովածու, Երեք հատորով, հ. Բ, Երևան, 1954, էջ 546:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

կա մի փաստաթուղթ, այն է՝ իր սեփական ձեռքով գրած «բողոքը» Ներսիսյան դպրոցի տեսչի անունով, որը թեև կիսատ է մնացել, սակայն որոշ չափով լույս է սփռում այն մթնոլորտի վրա, որը տիրել է դպրոցում նրա՝ Գ. Աբովյանի շուրջը:

Ահա այդ բողոքը, որ գրված պիտի լինի մոտավորապես 1859 թվականին:

«Ընդունվում եմ ես հայոց ազգային հոգևոր դպրոցումն անցյալ տարվա սեպտեմբեր ամսվա վերջին, հայոց պատմության և ընդհանուր աշխարհագրության ուսուցիչ 3-րդ և 4-րդ դասարաններում, յուրաքանչյուր առարկաներից յուրաքանչյուր դասարանի մեջ շաբաթը երկու դաս, այն էլ շաբաթ և երկուշաբթի օրերում, որոնց մեջ գրեթե հայոց եկեղեցական տոներ են պատահում: Այս ոչինչ: Տեսուչը տալիս է ինձ և հրամայում, որ ես հայոց պատմությունն ավարտեմ Շահնազարյան վարդապետի «ծրագրի» վրա...¹ Ես արդեն սկիզբը նկատելով աշակերտաց դիտության չափը՝ ասացի պարոն Ֆոնդոյեին, «թե այս ձևով անկարելի է աշակերտաց բան սովորեցնել, և որովհետև հիմք չկա, վասնզի ինչպես կարող եմ աշակերտաց պատմել և հասկացնել Անգղիո ծովային դորությունը, վաճառականությունը, արհեստագիտության չափն ու մեծություն և նոքա չեն իմանում, թե ինչ է Անգղիան, որտեղ է, ծովի մեջ է նա, թե ցամաքի, ծոցերով և ծովային խորշերով կտրված է թե ոչ, մեկ խոսքով նախագիտելիքը առանց հիմքի, կարծեմ, հաստատուն չի կարող լինել: Այսպես էին ապա պ. Ֆոնդոյեի բոլոր մտքերը, որ շատ և շատ խախուտ են և ցնորական: Ես ասել եմ, տեր տեսուչ, պատմությունը առանց աշխարհագրական տեղեկությանց հիմնավոր չի կարող լինել, այլ պիտու են աշխարհացույցներ Հայաստանի մասին, գոնե նորա գլխավոր լեռների, գետերի, նահանգների, նախարարությանց, գավառների, գլխավոր քաղաքների և կամ մեհյանների

¹ Խոսքը էջմիածնի միաբան Կարապետ վ. Շահնազարյանի կազմած ծրագրի մասին է՝ «Երագրի պատմության Հայաստան աշխարհին և տեսություն հին Հայաստանու և նրա այժմյան վիճակին վրա» («Կոռնկ հայոց աշխարհի», 1863, № 1, էջ 33—65, № 2, էջ 138—153, № 7, էջ 520—559, № 8, էջ 600—624, և առանձին—Տիգլիս 1863):

տեղերը պետք է ցույց տալ: Այն ինչ պ. տեսուչը բարկացել է և միայն ասել, այն ևս ոչ թե հայերեն, այլ ռուսերեն, «ի՞նչ Հայաստան, ի՞նչ նախարարություն և այլն...»:

Այս «բողոքի» կապակցությամբ ավելորդ չէր լինի նշել, որ Գ. Աբովյանի կազմած և քանիցս հրապարակված «Համառոտություն հայոց ազգի պատմության» խորագրով աշխատությունը իր նոր կոնցեպցիայով հիմնովին տարբերվում է Մ. Չամչյանի և նրա հետևորդների գործերից:

Բավական է ընդգծել, որ գիրքը սկսվում է «Աշխարհագրական տեղեկություններ» վերնագիրը կրող բաժնով, որը երկու հիմնական մասից է բաղկացած: Առաջինում խոսվում է հին Հայաստանի սահմանների, ինչպես և Հայաստանի լեռների, գետերի ու լճերի մասին, իսկ երկրորդում տրվում է գաղափար «մեծ Հայաստանի նահանգների» (ըստ VII դարի Աշխարհացույցի) մասին: Ապա շարադրված է բուն պատմությունն ըստ շրջանների, դրանք են՝ «Հայկազանց հարստություն», «Արշակունյաց հարստություն», «Մարզպանության ժամանակները», «Կյուրապաղատության և աթաբաղվոց արշավանաց ժամանակները», «Ոստիկանաց ժամանակները», «Բագրատունյաց հարստություն», «Ռուբինյանց հարստություն»:

Թեև «պատմությունը» ընդգրկում է մինչև Կիլիկիայի հայոց թագավորության անկումը, սակայն դրքի վերջում, 4 էջի սահմաններում (267—270), կցված է մի տեսակ հավելված հետևյալ վերնագրով՝ «Հայոց ազգի քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո, ունեցած վիճակների համառոտ նկարագրությունը (հազար չորս հարյուր թվից մինչև ներկա ժամանակ)»:

Ներսիսյան դպրոցում 1858—1866 թվականների ընթացքում Գ. Աբովյանի կարդացած դասընթացը, որի գրավոր արտահայտությունն է ներկայացնում նույնի «Հայոց ազգի պատմության համառոտությունը», հավանական է, չէր համապատասխանում ցարական կառավարության անցյալ դարի 50—60-ական թվականների «նկատառումներին», որին ձայնակցում էին նույն դպրոցի պահպանողական ղեկավարները՝ հանձինս տեսչի և հոգաբարձուի: Եվ հենց այս հանգամանքի մեջ, թվում է, պիտի որոնեի Գ. Աբովյանի հալածանքի պարա-

դաները, որոնք զուգադիպում են Մ. Նալբանդյանի հալածանքի պարագաներին:

Համեմատելով Գեորգ Աբովյանի հալածանքի և անհայտացման շուրջը հրապարակ հանած նյութերը¹ այն տվյալների հետ, որ արդեն հայտնի են հաշատուր Աբովյանի մասին, մենք գտնում ենք, որ «սև կարեթ» նստեցնելու և քսոորի վերսխան, որ հրապարակ հանեց Ռուբեն վ. (հետագայում արքեպիսկոպոս) Մանասյանը², իսկապես համապատասխանում է Գեորգ Աբովյանի կենաց 1866 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած ողբերգությանը:

Եվ ահա թե ինչու:

Նախ, ինչպես Գ. Աբովյանի կենսագրությունից երևում է, նա դեռևս Մոսկվա եղած ժամանակից (1851—1857) որոշ կապ է ունեցել այնպիսի անձանց հետ, որոնք հետագայում «խուժաստան», այսինքն Սիրբի, են քսոորվել, և Երկրորդ³ հենց այս Գ. Աբովյանը պիտի հանգիպում ունենար Ն. Չերնիշևսկու հետ, նախքան վերջինս կհաստատվեր Աստրախանում (1883—1889): Համաձայն Ստեփան Կանաչյանի հիշողության, Գերմանիայում, ուսանողության տարիներին, Աստրախանից, իր ընկերոջից 1883 թվականին ստանում է մի նամակ, որտեղ գրված է լինում, որ ուռա նշանավոր գրող և հրապարակախոս Նիկոլայ Չերնիշևսկին Աստրախանում պատմել է հայերին, թե ինքը Սիրբիում քսոորված ժամանակ (ասել է՝ մինչ 1883 թ.—լ. Մ.—Բ.) տեսել է հայ հաշատուր (կարդա՝ Գեորգ—լ. Մ.—Բ.) Աբովյանին, որը նույնպես քսոորված է եղել «Սիրբի»³:

Ըստ իս, Սախալին կղզուց դեպի հյուսիս Օխոտի ծովի ափին գտնվող Օխոտսկ քաղաքի գերեզմանատանը Ռ. Մանաս-

¹ Բացի վերոհիշյալ գրքույկից՝ տես նաև հոդվածներ արևմտահայ (Կ. Պոլսի) մամուլում, «Մասիս» (թերթ), 1867, № 110, «Ժամանակ» (հանդես), 1867, № 18, «Մանգուլների էփրյար» (հայատառ թուրքերեն թերթ), 1867, № 230, 290 և 310, հմմ. նաև մեր հոդվածը «Ե. Վրաստան», 1938, № 7:

² Ռուբեն վ. Մանասյան, հաշատուր Աբովյանի գերեզմանը Օխոտսկում: «Հանդես ամսօրյա», 1927, № 5, էջ 268—273, հմմ. մեր հոդվածը «Ե. Վրաստան», 1938, № 7:

³ Նույն տեղում:

յանին 1925 թվականին ցույց տված «Արուվյանի գերեզման»
կոչվածը, անտարակույս, Գեորգ Արուվյանի դամբանը պիտի
լինի, որի անունը հետզհետե շփոթել են խաչատուր Արուվյանի
հետ և, վերջապես, գերեզմանն էլ սխալմամբ խաչատուրին
վերագրել:

ՄԻՔԱՅԵԼ, ԳԱՐՐԻԵԼ ԵՎ ՔԵՐՈՎԵՆ ՊԱՏԿԱՆՅԱՆՆԵՐ

Խոսել Ռափայել Գարրիելի Պատկանյանի մասին և միաժամանակ անտեսել նրա ժամանակակից՝ Պատկանյան ազգատոհմի մյուս ներկայացուցիչներին, որոնք որոշ չափով առընչվում են մեր թեմային, իհարկե, նպատակահարմար չէր լինի: Ուստի մենք պարտք համարեցինք գոնե համառոտ կերպով բնութագրել Գարրիել, Միքայել և Քերովեն Պատկանյաններին՝ Վրաստանի անցյալի կամ վրաց իրականության հետ նրանց ունեցած կապի տեսանկյունով:

Գարրիել Սերովբի Պատկանյան, Թիֆլիսում լույս տեսնող «Արարատ» շաբաթաթերթի (1850—1851) խմբագիր-հրատարակիչն էր, որի հովանու տակ թերթին աշխատակցում էր Ռափայելը:

Միքայել Սերովբեի Պատկանյան նույնպես Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» շաբաթաթերթի (1846—1847) խմբագիրներինց մեկն էր, հայտնի Հակոբ Կարենյանցի հետ միասին: Նա Թիֆլիսում, ինչպես Պ. Պոռշյանն է վկայում, «ծառայում էր ինտենդանստիվում և կազմում էր պալատում»¹ և ապրելիս է եղել «Թիֆլիսի քաղաքագրից դուրս, Օրթաճալի մոտերքը»²: Եղել է տեսուչ Ներսիսյան դպրոցում, պաշտոնավարել է այնտեղ Հ. Կարինյանցի հետ միասին: Առանձնապես պիտի շեշտել նրա դերը հայ թատրոնի պատմության բնագավառում, քանի որ նա առաջինն է պայմաններ ստեղծել Ներսիսյան դպրոցի սաների թատրոնական բեմի և Շերմազանյանի «գարպասի» համար ներկայացումներ տալու ուղղությամբ, մասնավորապես հորինելով մի պիես Թիֆլիսի կյանքից՝ «Մոցիբով» [= Միջնորդ] վերնագրով, որը, Պ. Պոռշյանի ասելով, երկար ժամանակ խաղացվել է նաև վրաց բեմի վրա²: Սրա օժանդա-

¹ Պեռն Պոռշյան, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1954, էջ 508, 598, 600:

² Նույն տեղում:

կույթյամբ «Կովկաս»-ում տպվում է Սերովբե Պատկանյանի «Ողբ ի հնդկի հարուածսն Տփլիսոյ» (1847 թ. № 26):

Քերովբե Պետրոսի Պատկանյանը.— ականավոր արևելագետ-հայագետ, Պետերբուրգի համալսարանի հայագիտության պրոֆեսոր, Ն. Մառի հայոց լեզվի ուսուցիչը: Վրացագիտությանը առնչվում է իր հանրածանոթ հոդվածով՝ «Ванские надписи и значение их для истории Передней Азии. О древней грузинской хронике» («Журнал Министерства Народного Просвещения», 1883, декабрь):

ՊԱՏԿԱՆՅԱՆՆԵՐԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրականություն Քերովբե Պատկանյանի մասին

1. Դ. Բախաձե. Պրոֆեսոր Պատկանյանը և վրացական պատմական աղբյուրները, «Իվերիա», 1884, № 7 և 8:

2. Նույնը. «Դրոսերա», 1884, 1, V, 94, էջ 1—3, 1884, 2, V, 95, էջ 1—3, 1884, 3, V, 96, էջ 1—3, 1884, 4, V, 97, էջ 1—3, 1884, 5, V, 98, էջ 1—3:

3. Ալլևալլ հոդվածներ. «Իվերիա», 1884, № 3, «Դրոսերա», 1884, № 68, «Մծղեմսի», 1886, № 8, «Թևատրի», 1888, № 46:

4. Իլիա ճավնավաձե. Քարերի աղաղակը, «Իվերիա», 1899, № № 64, 65, 67—76, նույնը առանձին, 1899, 264 էջ: Նույնի՝ Երկերի լիակատար ժողովածու, հինգ հատորով, հ. II, Թբ. 1941, էջ 417—479, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. VIII, Թբ. 1957, էջ 93—194:

ՌԵՓԸՅԵԼ ՊԵՏԿԵՆՅԱՆ
(1830—1892)

Ռափայել Գաբրիելի Պատկանյանը (Գամառ-Քափիպա), ինչպես նաև Ստ. Նազարյանը և Մ. Նալբանդյանը, թեև իր գործունեությամբ անմիջապես Վրաստանի և, մասնավորապես, Թիֆլիսի հետ կապված չի եղել, սակայն իր կարճատև գործունեությամբ Թիֆլիսում՝ իբրև աշխատակից (1850—1851) «Արարատ» շաբաթաթերթի, որի խմբագիրը նրա հայր Գաբրիել քահ. Պատկանյանն էր, և հոսամսյա ուսուցչությամբ Ներսիսյան դպրոցում, Թիֆլիսի և Վրաստանի հետ ունեցած կապի որոշ, շոշափելի հետք է թողել իր ստեղծագործության մեջ¹:

Անտարակույս, Թիֆլիսում ապրած օրերի թարմ տպավորության տակ է գրված (1852) Ռ. Պատկանյանի «Թիֆլիսի քեֆ» բանաստեղծությունը, բաղկացած 10 տունից՝ յուրաքանչյուրը 7 վանկանի 4 տողից², որն արտացոլում է հին Թիֆլիսի կինոտ-դարաշոխներին վարքուբարքը և անակրեոնյան տրամադրությունները, այն էլ բավականին հաջող գրված Թիֆլիսի բարբառով:

Թիֆլիսյան տրամադրություններից զուրկ չէ նաև «Արաքսի արտասուքը» հանրածանոթ բանաստեղծությունը, հորինված 1856 թվականին³, որը սկզբնական խմբագրությամբ պարունակում էր 25 տուն՝ յուրաքանչյուրը 7 վանկանի 4 տողից: Այս բանաստեղծությունը գրեթե առաջին գործն է, որտեղ արծարծվել է «հրկու ափերի» պրոբլեմը հայ (և ոչ միայն հայ) գրականության մեջ:

¹ Հայտնի պատճառով մի կողմն ենթ թողնում «Փառասեր» վեպը (1880) իր «իշխան Վաչինաձե» (ուղիղ՝ Վաչնաձե) պերսոնաժով:

² Ռափայել Պատկանյան, Երկեր, Երևան, 1955, էջ 45—46:

³ Նույն տեղում, էջ 68—71:

Կուր (Քուռ) և Նրասիս (Արաքս) գետերը վաղուց հետև քանաստեղծության մեջ դիտվում են իբրև սիմվոլներ երկու հարե-վան ու եղբայրակից ժողովուրդների, իսկ նրանց միախառնու-մը՝ իբրև նշան նրանց ողջագուրման:

Դեռևս Սայաթ-Նովան իր վրացերեն երգերից մեկում բա-ցականչում էր.

Մտկվարո ամղվբէուլո, արադիանո,

Մէ շէն վէր գագիցլէր, միղէլիանո¹,

այսինքն (Մորուս Հասարթյանի թարգմանությունը, Թիֆլիսի բարձրագույն)։

Քուռ, դուն կոսիս պիտուրվիլիս Արադով,

Յիս բու սիրտը չիմ իմանա իմ սաղով²։

Նույնը մեր օրոք կրկնում էր Ի. Գրիշաշվիլին իր «Կուր և Արաք» (Մտկվարի դա Արեդի) ոտանավորի մեջ (1939)։

Մասնավորապես, Ն. Բարաթաշվիլու խոհերը Վրաստանի մասին արտահայտված են նրա «Մտորումներ Քոի ասին»³ (Փիբրնի Մտկվրիս պիրաս) սքանչելի բանաստեղծության մեջ (1837), որին ձայնակցում է բաթումեցի հայ բանաստեղծ Գր. Դրիգորյանի «Մտորումներ ծովափին» ոտանավորը, որի վրացերեն թարգմանությունը տվել է հիշյալ Ի. Գրիշաշվիլին⁴։

Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» երկում (1856) արծարծված է հիմնականում երկու գաղափար. մեկը՝ որ Արաքսը Հայաստանի սիմվոլն է, ինչպես և Քուռը Վրաստանի, իսկ երկրորդը՝ այսպես կոչված «երկու ասիների» պրոբլեմի լուծման անհուսալիությունը։

Այս առթիվ, ի միջի այլոց, Ն. Մառը գրել էր. «Армянский поэт Патканян говорит об Араксе, о сле-зах Аракса, но река Аракс лишь символ: это плач са-

¹ Ի. Գրիշաշվիլի, Սայաթ-Նովա, Թիֆլիս, 1918, էջ 99 (վրացերեն)։

² Մ. Հասարթյանի խմբագրությամբ, Սայաթ-Նովա, Եր., 1959, էջ 121։

³ Եվ ոչ թե «Մտորումներ Քոի մասին», ինչպես Հովհ. Թումանյանն է թարգմանել (եթե, իհարկե, այստեղ սրբագրական սխալի հետ դործ չունենք)։

⁴ «Դրոշա», 1932, № 5։

мого поэта, плач Армении отвлеченной, воображаемой, но не материально-реальной»¹:

«Երկու ասիերի» պրոբրելմը, սկսած Ռ. Պատկանյանից, ակադեմիկոս զարձակ հետազոտում ոչ միայն հայ, այլև վրաց գրականության, նաև հարավարևելաստեղծության մեջ:

Ահա Հովհ. Հովհաննիսյանի «Արաղն եկավ լափին տալով» (1887), աշուղ Բորանյանի «Առ Արաքս գետին» (մինչ 1900), Վահագն Կարենցի «Արաքսի ասիին» (1954) բանաստեղծությունները, է. Հովհաննիսյանի «Երկու ասի» (1953) և Հովհ. Ղուկասյանի «Արաքսի այն ասիին» (1951) մեծ կտավները, որոնց ծայնակցում է Արևո Բաշկոյի «Արաքսի ասիին» բանաստեղծությունը (1956)²:

Վրաստանում «Երկու ասիերի» գաղափարը մշակվեց Աճարայի (Աճարական ՍՍԱՌ) Սարգիս գյուղի օրինակով, որով անցնում է Սովետական Միության (Վրաստանի ու Աճարայի) ու Թուրքիայի միջասահմանը, և որին նվիրեց իր «Երկու ասի» (Օրի նապիրի) բանաստեղծությունը Ռեվազ Ասաևը³, այլև հարավարևելեցին հոգվածներ նվիրված այս պրոբլեմներին⁴:

*
*
*

«Թիֆլիսի բեֆ» բանաստեղծությունը հետաքրքիր է ոչ միայն մեր թեմայի առումով, այլև իրրև աղբյուր Թիֆլիսի հայ բարբառի ուսումնասիրության համար:

Այս բանաստեղծությունը մենք այստեղ բերում ենք ամբողջությամբ:

¹ Н. Я. Марр. Кавказская поэзия и её технические основы. „Литературные разыскания“, т. III, Тбилиси, 1947, стр. 316.

² Հմմ. Գ. Айрян. На берегу Аракса. „Празда“, 1950, № 152: Сильва Капутикян. Надежда народов. „Коммунист“, 1952, №264: На двух берегах. „Правда“, 1952, №341 (то же „Коммунист“, 1952, № 7) երկու ասիերին, «Սովետական Հայաստան», 1952, էջ 288 և այլն:

³ Թեյմուրազ Զանգուլաշվիլու վրացերեն թարգմանությամբ, «Լիտերատուրուի գաղեթի» [= Գրական թերթ], 1953, № 20:

⁴ «Սարգիսի երկու ասիերը». «Կոմունիստի», 1952, № 303:

С. Гвелесани. В селе Сарпи сегодня. „Заря Востока“, 1955, №40

Թե սիրում իս թամաշա,
Պըտիս տեհնի քաղքումը
Ինչ ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը:

Ծալապատիկ ծառի տակ
Միր լոթիքն ին նըստոտել,
Տկճուրնիլն ու խելադեք
Իրանց բոլոր մոտ արել:

Մին մինի կենաց ին խմում—
Մեռելոց ու կենդանյաց,
Մին մինի բողազն ին խրում
Շամփուրներով խորոված:

Հաղարփեշեն լի գինով
Կըլկըլացնում, խըմում ին,
Տիկը բռնած պինդ ձեռնով
Իսկի, ասիս թողնո՞ւմ ին:

Քաշալ գըլուխ զուռնաշին
Հարալո է որ փըշում,
Տիպլիպիտոն լըսողին
Ղուղն ու ախանջ է տանում:

— Միր պատվելի քաղքըցուն
Աչքը ճակատին է թըռել,
Դամազին կըսել լիզուն—
Էլ չի ուզում նա լըռել:

Քաղքըցու գողալ քալին
Մարդիցը հիտ չի մընում,
Ձեռին առած մինձ կովղին
Զոռ է տալի Կախեթուն:

Դըմփացնում է դահիրա
Իրա փափուկ մատնիրով,

Պար է գալի լեզզինկան
Աղունակի վռտնիրով:

էստի՝ Կիկոն «Ջուլոյին»
Քընաթաթախ զըռում է,
էնտի՝ Վանոն Չալոյին
«էրթի քալին» մըռում է:

էս ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը,
Թե սիրում իս թամաշա,
Պըտիս իլի քաղքումը:

* *
*

Վրացերեն և վրացերենի միջոցով հայերենում մտած բառեր
Ռ. Պատկանյանի ստեղծագործության մեջ

էրթի—էրթի (մեկ)

կովզի—կովզի (գդալ)

հարալո—հարալո (կրկնեղբի մի տեսակը)

ծալո—ծալո (քեռակին)

տիպլիպիտո—տիպլիպիտո (գործիք նվագարան)

բալի—բալի (աղջիկ):

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թարգմանություններ Ռ. Պատկանյանի երկերից

1. «Մշակներ և շուն (Ռափիել Պատկանյանից)», թարգմ. Բ. Նվանգու-
լովի, «Յնորիս փուրցելի» [= Տեղեկանքի թերթ], 1903, № 2044, պատ-
կերագարդ հավելված, № 85:

2. «Արաբսի արտասուրը» [Ռափիել Պատկանյանից], թարգմ. Բ. Նվան-
գուլով, նույն տեղում, 1903, № 2138, պատկերագարդ հավելված, № 114:

3. «Աղբյուր», թարգմ. Բ. Նվանգուլովի, «Ջեջիլի» [= Հասկ], 1898,
№ 12, էջ 27—30:

ՍՄՐԵՏ ԾԷՀԱԶԻՉ
(1841—1907)

«Մենդավայրից հեռանալուց հետո Շահադիդը,— ինչպես հիշտ գրել է Լ. Մանվելյանը,— ապրել է շարունակ Մոսկվայում և այդքան ժամանակամիջոցում՝ կես դարից ավելի՝ միայն մեկ նեղամ է այցելել հայրենիքը, 1873 թ., և այն էլ մի ամսով»¹:

1851 թվականին Աշտարակից Մոսկվա գնալիս և 1873 թվականին Մոսկվայից դեպի Աշտարակ ու ետ գալիս Ս. Շահադիդը երեք անգամ առիթ սխալ ունենալով անցնելու Թիֆլիսով և ճանապարհորդել ռազմավիրական ճանապարհով:

Հիշյալ առաջին ճանապարհորդությունը տպավորություններն է գրի առել Ս. Շահադիդի ուղեկից Գեորգ Բարխուդարյանը: Նա վկայում է, որ անցնելով Թիֆլիսի վրայով, ուղևորվել են մինչև Վլադիկավկազ (այժմ Օրջոնիկիձե) ռազմավիրական ճանապարհով և այդ ճանապարհորդությունը տևել է 4 օր²:

Ռազմավիրական ճանապարհով ուղևորությունը հակառակ ուղղությամբ, այսինքն՝ Վլադիկավկազից Թիֆլիս, Ս. Շահադիդին վիճակվել է լուր մեկ անգամ՝ 1873 թվականին: Մինչդեռ «Լեոնի վիշտը» պոեմում, 1864 թ. Լեոնի ճանապարհորդությունը հյուսիսից դեպի Անդրկովկաս տրված է մտացածին: Ս. Շահադիդը տալիս է Կովկասյան լեռնաշղթայի սքանչելի տեսարանների նկարագրությունը 1851 թվականի տպավորության տակ և ձայնակցում է Ա. Պուշկինին և Մ. Լերմոնտովին:

¹ Լևոն Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Ա. (բ. տպ.), Թիֆլիս, 1913, էջ 82:

² Գեորգ Բարխուդարյան, Իմ հիշողություններից. «Արձագանք», 1896, № 3, էջ 1—3, № 4, էջ 1—3, № 7, էջ 1—3:

Մասնավորապես, պատկերավոր են բնության նկարագիրները, ինչպես, օրինակ, Ղազբեգիի (վրացերեն՝ Մղինվարծվերիի) նկարագրությունը՝ տրված պոեմի երկրորդ դրվագում.

Եվ հառաջ կեն: Սարեր, հովիտներ
Անհետանում են նորա աչքերից.
Մի շնաշխարհիկ բացվում է պատկեր
Սպիտակափառ Կազբեկի գլխից:

Սպիտակ կատարն բարձր լեռների,
Կարծես, երկնքի դիպչում են ամպին,
Եվ ձյունից հյուսած թագ աղամանդի
Պճնում են նոցա հսարտ գագաթին:...

Ի՞նչ գեղեցկությամբ փուլում են դաշտեր
Հայացքի առջև նորապես մարտի.
Ոսկի հոսանքով զույնգույն ծաղիկներ
Ճոճվում են, որպես խաղացքն առվակի:...

Զմրիստյա դաշտեր, այստեղ համասփյուռ,
Մանուշակ, հասմիկ—գարուն սիրելի —
Դալար հովիտից փչում է զեփյուռ,
Քաղցր, որպես շունչ դեռաբույս կուսի¹:...

¹ Ս. Շախգիզ, Բանաստեղծություններ, Երևան, 1947, էջ 169—170:

Գ Ե Ո Ր Գ Դ Ո Դ Ո Մ Յ Ա Ն
(1837—1907)

Եթե հայ գրականության անդաստանում կա մեկը, որը «նահապետ» Ղևոնդ Ալիշանի նման երբեք չի տեսել Հայաստանը և երբեք ոտք չի դրել «Ավետյաց երկիրը», դա Գեորգ Դոդոխյանն է: Վերջինս չի տեսել նաև Վրաստանը, նույնիսկ ամենակարճ ժամանակով, անցողակի, ինչպես այդ վիճակվել է Ս. Շահադիզին: Եվ այս հանգամանքը գուցե արգելադրի համարվի, որպեսզի Գ. Դոդոխյանի անունը ամենևին չմտցրեն երևի մեր տեսության մեջ:

Սակայն կա մի հանգամանք, որը թելադրում է մեզ հակառակն անել և խոսել Գ. Դոդոխյանի մասին:

Զէ՛ որ Գ. Դոդոխյանի, իբրև «գորպատցու», ստեղծագործությունը լիովին ձայնակցում է «Թերգդալեուլի» (Թերերի ջուր ճաշակած) Իլիա Ճավճավաձեի (1837—1907) գործունեությանը:

Միաժամանակ փաստ է, որ Գ. Դոդոխյանի «Ծիծեռնակը» Վրաստանում վայելել է մեծ ժողովրդականություն¹, քանի որ այն երգվում էր թե՛ հայերեն և թե՛ վրացերեն ու ուսներեն թարգմանությամբ ամենուրեք, և հաճախակի, վրացական ժողովրդական «Քափրինդի շավո մերցխալո» (Սլացի՛ր սև ծիծեռնակ) երգին զուգընթաց:

Կա մի տարիշ հանգամանք ևս, որով Գ. Դոդոխյանը սիրելի դարձավ վրաց ընթերցողին: Դա Գ. Դոդոխյանի հարադատությունն է վրաց ընթերցողի սրտին այն բանից հետո, երբ նրա երկերը՝ թարգմանվելով վրացերենի՝ վրաց գրականության սեփականությունը դարձան:

Առաջին իսկ ծանոթությունից Գ. Դոդոխյանի ստեղծագործության հետ, վրաց ընթերցողին ապշեցնում է նրա հարա-

¹ Գեորգ Դոդոխյան, երկեր, հ. I, Թբիլիսի, 1939, էջ VII. Լ. Մելիխեր-Բեկ, Գեորգ Դոդոխյան, «Սովետական Վրաստան», 1958, № 146:

գատութիւնը իւ. Ճալճալաձեին, երբ գովերգվում է աշխատանքը, հալալ բրտինքով դիպած գեղջուկի վաստակը:

Սակայն ամենակարեւորն այն է, որ Գ. Դոգոխյանի «Մի-ծեռնակ»-ին, ինչպես և «Կոռնիկի պատասխան»-ին ձայնակ-ցում է վրաց ժողովրդական «Թւի'ր, սե ծիծեռնակ» (Գափրին-դի, շալո մերցխալո) երգը:

Զի կարելի նաև շնչել այն գերը, որ վրաց համալսարանը և վրաց պոռնները խաղացին Գ. Դոգոխյանի երկերի հայտնա-գործման, հրապարակման և վրացերեն թարգմանելու գործում, որի արդյունքն է Գ. Դոգոխյանի ստվար միհատորյակի լույս ընծայումը Թբիլիսիում 1939 թվականին, որտեղ ամփոփված են հայ բանաստեղծի գրեթե բոլոր գեղարվեստական (և ո՛չ միայն գեղարվեստական) երկերը հայերեն, նաև վրացերեն և մասամբ ռուսերեն թարգմանութեամբ:

Արդ, Գ. Դոգոխյանի շափածոյից թարգմանված են վրա-ցերեն հետևյալ ոտանավորները.

— «Միծեռնակ», մի բանի վարիանտով, թարգմանիչներն են՝ Դ. Գալեշիլաձե, Վ. Գափրինդաշվիլի, Իոս. Բաբրաձե և Ի. Ճղոնիս:

— «Ուրախ երգեր, սեր և դինի», թարգմ. Դ. Գալեշիլաձե.

— «Կոռնիկի պատասխանը» » »

— «Օրոր» » »

— «Այդ է դարգանալ» » »

— «Զարթի'ր, հայ ժողովուրդ» » »

— «Հալածված պոետ» » »

— «Առաքել Բահատրյանի հիշատակին» » »

— «Մատանի» » »

— «Երանի նրան» » »

— «Երանի քեզ» » »

— «Ճանապարհորդներ» » »

— «Փրկե՛ մեզ, տեր» » »

— «Մեկ նոր երգ հացոց աղջիկներուն» » »

— «Հայրական խրատ» » »

— «Մանուշակ», երկու վարիանտով, թարգմանիչներն են Ի. Գրիշաշվիլին և Դ. Գալեշիլաձեն:

— «Արև», երկու վարիանտով, թարգմանիչներ՝ Ի. Գրիշա-
շվիլի և Դ. Գաշեչիլաձե:

— «Առավոտ», թարգմ. Դ. Գաշեչիլաձե:

— «Գարուն», երկու վարիանտով, թարգմանիչներ՝ Դ. Գա-
շեչիլաձե և Վ. Գափրինդաշվիլի:

— «Ա. Տ.», երկու վարիանտով, թարգմանիչներ՝ Դ. Գա-
շեչիլաձե և Վ. Գափրինդաշվիլի:

— «Օրիորդ սիրուն», թարգմ. Դ. Գաշեչիլաձե:

— «Մայրիկ», » »

— «Նուշիկ», » »

— «Ճանճիկ» » »

— «Կնոջ լացը», » »

— «Զի պահվիլ պարկի մեջ խթանը», » »

— «Սև տխրություն», » »

— «Հողագործի աղոթքը», » »

— «Մեղու», երկու վարիանտով, թարգմանիչներ՝ Վ. Գափ-
րինդաշվիլի և Ռ. Մարգիանի:

Պոեմներից թարգմանված է՝

— «Վճիռ» (Հովհան Հուսի շուրջը), թարգմ. Դ. Գաշեչի-
լաձե:

Արձակից՝

— «Աբդուլա», թարգմ. Իվ. Բեգլարով:

Գ. ԳՈՂՈՆՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ա. Թարգմանություններ Գ. Դոդոխյանի երկերի

1. Գեորգ Դոդոխյան, *Երկեր, Առաջարան, ծանոթություններ, բառարան*
և *խմբագրություն* Իվ. Բեգլարովի, հ. I, Թբիլիսի, 1939, էջ 225 [227]—289
(Թարգմանություններ), 330—333, 341 (ծանոթագրություններ):

Բ. Հատուկ գրականություն նրա մասին.

1. Վերոհիշյալ հրատարակության առաջարանն ու «Գեորգ Դոդոխյան»
էությունը, գրված Իվ. Բեգլարովի կողմից, էջ XXI—XXXII, էջ 337—340:

2. Գրախոսական հիշյալ գրքի մասին Ա. Ս. ստորագրությամբ, «Մնա-
թորի», 1939, № 1, էջ 189—190:

3. «Բուլեդիկուրի կադրերիստավի» [Բուլեդիկյան կադրերի համար]
Թերթի հատուկ համար, նվիրված Գ. Դոդոխյանին, 1938, № 12,
հետևյալ բովանդակությամբ. Լ. Մելիսեք-Բեկ, Գ. Դոդոխյանի հարցը.
Գ. Դոդոխյան, Ճանճիկ, թարգմ. Դավիթ Գաշեչիլաձե. Իվանն Բեգլարով՝
«Միծեռնակի» հեղինակը:

129

4. Ինֆորմացիոն բնույթի հոդվածներ (անստորագիր) վրացական թերթերում՝ «Լիտերատուրուլի Սաքարթվելո» [Գրական Վրաստան], 1938, № 8: «Մուշա», 1938, № 78. «Ախալզաղրդա կոմունիստի» [Երիտասարդ կոմունիստ], 1938, № 78, «Լիտերատուրուլի Սաքարթվելո» [= Գրական Վրաստան], 1939, № 6:

Գ Ե Ռ Ր Գ Ը Խ Վ Ե Ր Գ Ե Ը Ն
(1818—1861)

Գեղարվեստական գրականության շափանիշով չէ, որ որակավորվում է Գեորգ Ախվերդյանի (Յուրի Ախվերդովի) երախտիքը հայ կուլտուրայի պատմության մեջ, այլ այն մեծ ներդրումով Թիֆլիսի անցյալի և աշուղական պոեզիայի ուսումնասիրության բնագավառներում, որով նա իսկապես անմահ է:

Անմիջապես Թիֆլիսի անցյալին է վերաբերում Գ. Ախվերդյանի ուսանելի լեզվով գրած ուսումնասիրությունը Թիֆլիսի համբարների մասին, որը լույս է տեսել նրա վաղաժամ մահից 22 տարի անց «Тифлисские амкары» վերնագրով (Тифлис, 1883), ինչպես նաև Սայաթ-Նովայի հայերեն խաղերի անգրանիկ հրատարակությունը, լույս ընծայված Մոսկվայում 1852 թվականին, հանդերձ անգրանիկ ուսումնասիրությամբ մեծանուն Սայաթ-Նովայի մասին և «Թիֆլիզու բարբառի մէ քանի յատկութիւններու վրայ» էությունով: Աշուղական պոեզիային է վերաբերում ինչպես 1852 թվականին լույս ընծայված «Սայաթ-Նովա»-ն, նույնպես և 1903 թվականին հետմահու, նրա դուստր՝ օրիորդ Մանէ Ախվերդյանի հոգատարությամբ հրապարակ հանված «Հայ աշուղներ» ստվար հատորը, որը «Սայաթ-Նովա»-ի հետ միասին կազմում է մի ամբողջություն «Գուսանք» սերիայի Ա և Բ հատորների՝ «Լուս գցած աշխատասիրութենով Գէորգեայ Ախվերդեան»: Բ. հատորում, ի միջի այլոց, տեղ են գտել Թիֆլիսի բարբառով ստեղծագործող մի քանի տասնյակ հայ աշուղներ:

Այս աշխատությունները, անտարակույս, ուղեցույց ծառայեցին բանահավաքների համար Թիֆլիսի հայության ընդերքում պահպանված ժողովրդական բանահյուսության և աշուղական ստեղծագործության մարգարիտները վեր հանելու և ուսումնասիրելու համար:

«ԺԹ դարի Ա քառորդի պտուղ էր Գ. Ախվերդյանը. նա Թիֆլիս քաղաքի պատվավոր հայ ընտանիքի զավակ էր. նրա ծնունդն էր 1818 թվականին», — այսպես է սկսում Գ. Ախվերդյանի կենսագրությունը նրա դուստր օրիորդ Մանն Ախվերդյանը¹:

Ապա նշված է, որ 1830 թվականին փոքրիկ Գևորգին տանում են Մոսկվա՝ Լազարյան ճեմարան, որն ավարտելուց հետո նա մտնում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, ավարտելով այն 1839 թվականին՝ վերադառնում է Թիֆլիս և դառնում զինվորական բժիշկ:

«Երկար չի մնում, սակայն, Թիֆլիսցիների սիրելի Ախվերդյանն յուր ծննդավայրում: Զինվորական նախարար Զերնիշվին Անդրևիչի կանոնադրերով համար գալով Թիֆլիս, երիտասարդ բժշկի մեջ դտնում է բազմակողմանի զարգացումն և մեծ հմտություն, վերցնում է հետը և նրա գործակցությունը կատարում յուր ուսումնասիրությունը ու վերջն իբրև անձնական բժիշկ՝ տանում է յուր հետ Պետերբուրգ»²:

Զնայած, որ Պետերբուրգում Գ. Ախվերդյանին սպասում էր փայլուն ապագա, «հայրենիքի սերը նրան հանգիստ չի տալիս, նրան քաշում է դեպի յուր ծննդավայրը»³, և վերջապես «հայրենյաց թախիծը» պատճառաբանելով, նրան հաջողվում է 1846 թվականին ազատվել Պետերբուրգի պաշտոնից և վերադառնալ իր սիրելի Թիֆլիսը, ուր լծվում է աշխատանքի Կովկասի փոխարքայի դիվանատանը կից «առանձին հանձնարարությունների ավագ աստիճանավոր»-ի պաշտոնում: Այս պաշտոնում նա մնաց մինչև վաղահաս մահը, որ տեղի ունեցավ թոքախտից 1861 թվականին:

Գ. Ախվերդյանը թաղված է Թիֆլիսում, «Խոջիվանքի» պանթեոնում:

Թիֆլիսում Գ. Ախվերդյանը զբաղվում է բանասիրական հետազոտություններով և այդ նպատակով արխիվային ու ֆուլկլորային նյութերի կուտակմամբ: Այդ ժամանակաշրջանում

¹ «Հայ աշուղներ», Թիֆլիս, 1903, էջ Ա:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ Գ:

«Սայաթնյան Տեր-Մովսես ավագ քահանայից պարգև է ստանում Թիֆլիսի բարբառով խղմզված մի հաստ տետրակ՝ լիքը «մուխամբադներով», ուր «երգերից» մի քանիսը գրված են լինում հայերեն բոլորագրով. մնացածն անվարժ նոտր գրով, իսկ շատ բաժինը՝ վրացերեն տառերով¹։

Հիշյալ «հաստ տետրակը», հետագայում «դավթար» հորջորջվալը, հանդիսացավ սայաթնովագիտության հաստատուն հիմնաքարը²։

Գ. Ախվերդյանի գործի հաջող շարունակողը Թիֆլիսի ֆուկլորի արժեքավորման ուղղությամբ հետագայում հանդիսացավ Գեորգ Տեր-Աղեքսանդրյանն իր մնայուն աշխատությամբ՝ «Թիֆլիսեցոյ մտավոր կյանքը», մասն Ա. (Թիֆլիս, 1885)։

Գ. ԱԽՎԵՐԴՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գրականություն նրա մասին

1. Լ. Մելիսեք-Յեկ, Սայաթ-Նովայի ո՞վ լինելը. քննական-կենսագրական էություն. Թբիլիսի, 1930, էջ 7—8։

2. Նույնի՝ Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները. Կառավուգ I, Թբիլիսի, 1949, էջ 306 (մասն Բ, № 100)։

¹ «Հայ աշուղներ», էջ 2։

² Այս դավթարը այժմ պահվում է Հայաստանի Մատենադարանում։

**ԹԻՖԼԻՍԻ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՏՐԱԼ ԹԵՄԱՏԻԿԱՆ ՎԼԹՍՈՒՆԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱՂՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ**

(ՍՏ. ԲԱՍԱՄՅԱՆ, Գ. ՏԵՐ-ԱՂԵՔՍԱՆԴՐՅԱՆ, Գ. ԽԱՏԻՍՅԱՆ,
Ն. ՓՈՒՂԻՆՅԱՆ, ԲԺԻՇԿ Մ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՎ ԱՅԼՆ)

XIX դարի 40—50-ական թվականներին մի տեսակ դար-
թոնք է նկատվում Թիֆլիսում, հատկապես թատրոնական
կյանքի բնագավառում:

1845 թվականին Թիֆլիսում հիմք է դրվում ուսւ դրամա-
տիկ թատրոնին, ապա 1850 թվականին այստեղ վերակենդա-
նանում է վրաց դրամատիկ թատրոնը, իսկ 1851 թվականին
բացվում է օպերային թատրոնը, որի համար հատուկ շենք է
կառուցվում քաղաքի կենտրոնում, նախկին Երևանյան (այժմ
Լենինի անվան) հրապարակի վրա, որը հետագայում Թամամ-
շյանների քարավանսարայի հիմքը հանդիսացավ:

Այդ ժամանակ Թիֆլիսի հայերը՝ չունենալով սեփական
պրոֆեսիոնալ թատրոն, սիրողների ուժերով թատերական ներ-
կայացումներ էին կազմակերպում կամ ներսիսյան դպրոցի
հին շենքի դահլիճում, կամ Գ. Շերմազան-Վարդանյանի
հռչակված «գարսպսում»՝ նախկին Վելյամինովսկայա (այժմ
Շալվա Դադիանու) փողոցի վրա, որն այն պահին մի տեսակ
գրական սալոնի դեր է կատարել Թիֆլիսում, մինչև որ 1858
թվականին այստեղ հիմք է դրվել պրոֆեսիոնալ հայ թատ-
րոնին¹:

Թատրոնը իր ներգործոն ուժի շնորհիվ այն ժամանակ ավե-
լի, քան գրական ոլեէ խմբակ, մատչելի էր լայն հասարակու-
թյանը, և թատերական բեմը ինչպես արեւելահայերի, նույն-
պես և արեւմտահայերի մեջ հիմնականում սնվում էր այն գոր-
ծերով, որ տալիս էին Թիֆլիսն ու Պոլիսը:

¹ Մանրամասն տե՛ս՝ Անո, Ռուսահայոց գրականութունը, Վենետիկ,
1904, էջ 28—119: Հմմ. մեր հոգվածը՝ «Սովետական Վրաստան», 1958,
№ 133:

Թիֆլիսի և Կ. Պոլսի «Հայ տարաշերտ ազգաբնակչության կյանքը իր բացասական և ծիծաղելի կողմերով անսպառ նյութեր էր մատակարարում թատերագիրներին»¹։ Թիֆլիսի և Կ. Պոլսի «գրեթե բոլոր դասակարգերի կենցաղը, բարք ու վարքը դուրս է բերված կենցաղագրական կոմեդիայում. այստեղ ներկա են և՛ վաճառական և՛ արհեստավոր և՛ աստիճանավոր և՛ ժողովրդի ստորին խավերից դուրս եկած անձինք, և՛ հին և՛ նոր սերունդ։ Փողի պաշտամունք, բռնակալություն ընտանիքում, խարդախություն վաճառականության մեջ, հաշվով ամուսնություն, նորասիրություն, գծություն ծնողների և զավակների միջև և այսպիսի բազմաթիվ արատներ կատակերգուների ձեռքին ծառայում էին իբրև ծաղրելու առարկաներ»²։

Գալով, մասնավորապես, Թիֆլիսի միջնորդարտին, պետք է խոստովանվել, որ այս պորբլեմով նախ և առաջ հետաքրքրվել ու զբաղվել են վրաց կոմեդիոգրաֆները անցյալ դարի 50—60-ական թվականներին, առաջին հերթին Գիորգի էրիսթավին (1811—1864), որի կատակերգությունները առաջին անգամ առանձին գրքերով լույս ընծայվեցին Թիֆլիսում 1850—1853 թվականներին³։

Գ. էրիսթավի կատակերգությունների յոգով են գրված Զուրաբ Անտոնովի (1820—1854)՝ գորեցի վրացախոս հայի կոմեդիաները, որոնք առանձին գրքերով լույս են տեսել Թիֆլիսում 1851—1854 թվականներին և որոնցից «Արևի խավարումը» (Մզիս գաբնեկերա) լավ ծանոթ է հայ հասարակությանը⁴։

* * *

Թիֆլիսի հայոց բարբառի օգտագործումը հայ գրականության մեջ սկսվել է միջին, իսկ առանձնապես XVI—XVII դարերից, գլխավորապես աշուղ-բանաստեղծների խաղերում

¹ Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Բ, Թիֆլիս, 1913, էջ 114։

² Նույն տեղում։

³ Գիորգի էրիսթավի, Պիեսներ, Թիֆլիս, 1950, էջ 133։

⁴ Հմմ. Գ. Բուխնիկաշվիլի, Զուրաբ Անտոնով, «Սովետական Վրաստան», 1954, № 225։ Այս հեղինակի մասին շահեկան ուսումնասիրությունը տե՛ս՝ Էլիստ Աբրամշվիլի, Զուրաբ Անտոնովի, Բաթում, 1958 (վրացերեն)։

(Ստեփանոս, Սալյաթ-Նովա, Շամշի-Մելքոն և շատ ուրիշներ), իսկ զբաղանդության մեջ սկսել են օգտագործել Գ. Շերմազան-Վարդանյանը, Մեսրոպ Թաղիադյանը, ինչպես նաև Հ. Ալամ-դարյանը՝ «Առիւծ և էջ» առակում¹:

1860—1862 թվականներին «Կոռնիկ հայոց աշխարհի» ամսագրում Սարգիս ստորագրությամբ (Ստեփան Բաստամյան) լույս է տեսնում Շոթա Ռուսթավելու «Բնծու մորթի հաղած մարդը» Թիֆլիսի բարբառով չափածո թարգմանությունը²:

Նույն հանդեսում 1860 թվականին տպագրվում է Գեորգ Տեր-Աղեքսանդրյանի «Ուխտագնացութիւն ի Թելեթ» պիեսը (№ 11, էջ 898—922), որտեղ գործողության թատերաբեմը Թելեթի ուխտատեղին է: Ծիշտ այնպես, ինչպես նույն Թելեթը ուշադրության կենտրոնումն է Շամշի-Մելքոյի «Ավալի բաշտան քիզ գովիմ, իժում բաղ ու բաղչադ, Թէլէթ» խաղում³, նաև Իլիա Ճավճավաձեի «Մարդ է աղմորդին» (կացիա-աղամիանի) վեպում⁴ և այլուր:

* *
*

1861 թվականին առանձին գրքուկով Թիֆլիսում լույս է տեսնում Գաբրիել խաթիսյանցի երկերի ժողովածուն՝ «Սէր հայ

¹ Հմմ. Հր. Անադյան, Պատմություն հայոց նոր գրականության, Վաղարշապատ, 1906, էջ 150:

² 1860, № 6, էջ 494—495, № 8, էջ 666—667, № 9, էջ 755—757, 1861, № 10, էջ 781—783, 1862, № 2, էջ 159—162, № 7, էջ 557—566, № 11, էջ 830—840: Արտատպւած է «Պրուկտար» թերթում, 1937, № 285 և № 292: Հմմ. Լ. Մելիքսեր-Քեկ, Շոթա Ռուսթավելին և նրա «Վաղրենավորը» հայ գրականության մեջ, «Վրացական ՍՍՌ Կ. Մարքսի անվան պետական հանրային գրադարանի աշխատություններ», հ. IV, 1937, էջ 153 (վրացերեն): Այս թարգմանության մասին է, որ կոն (Ռուսահայ գրականությունը, Վենետիկ, 1904, էջ 55—58) գրում է, «Գեո այն ժամանակ, երբ կար «Հյուսիսափայլը», Թիֆլիսի «Կոռնիկ» ամսագիրը հաճախ տալիս էր ոտանավորներ: Բոլորը թույլ, աննշան բաներ, թե չհաշվենք վրաց նշանավոր «Բնծանավորը» պոեմայի կոկիկ քաղցմանությունը (ընդգծումը մերն է.—Լ. Մ.—Ք.) Թիֆլիսի տեղական բարբառով»:

³ Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, հ. II, 1903, էջ 490, Լ. Մելիքսեր-Քեկ, Շամշի-Մելքոն և նրա հայերեն խաղերը, 1958, էջ 67—68:

⁴ Լ. Մելիքսեր-Քեկ, Հայկական հնություններ Թիֆլիսի մոտիկ շրջակայքում, Շալխարադ—Թելեթ—Մավկիսի. «Վրաստանի պետ. թանգարանի Տեղեկագիր», I, Թբ. 1922, էջ 92—100, հատկապես 94:

երևանցը ընծայ» վերնագրով, որտեղ, ի միջի այլոց, տեղ է գտել «Զատիկի շաբթի իրիկունը Թիֆլիսում» պատմվածքը (էջ 3—33) Թիֆլիսի բարբառախառն լեզվով, որին, սակայն, ինչպես առաջին իսկ ծանոթությունից ընթերցողը կհամոզվի, հեղինակը լավ չի տիրապետել: Տեղ-տեղ գործածված են Թիֆլիսի բարբառի մեջ մտած վրացերեն բառեր: «Գանա»-արդյոք (մի՞թե), «կալաթ» (զամբյուղ, կոշով), վրացական անձնանուններ՝ Նատո, Նինո և այլն:

* *
*

Թիֆլիսի դրական կյանքում համեմատաբար աշխուժություն է մտցնում «Կոունկ հայոց աշխարհի»-ի 1862 թվականի № 6-ում ղեկավարված «Քաղկեդցի դարադ Ղաղօի մասլահաթը» (էջ 454—498), որը շուտով թարգմանվում է վրացերենի և տպվում Խ. Արովյանի աշակերտ Իվանե Կերեսելիձեի «Ցիսկարի» ամսագրի 1864 թվականի հոկտեմբերի համարում հետևյալ վերնագրով: «Քաղաքացի՝ դարադ Ղաղօյի ղրույցը տերտերների (քահանաների) մասին. հայերեն ժողովուրդից թարգմանեց Գր. Մինամծղվարովը» (№ 10, էջ 74—121): Ինչպես հայերեն բնագրում, նույնպես և նրա վրացերեն թարգմանության մեջ Ղաղոն հանդես է գալիս իրրև Թիֆլիսեցի դարադ, այսինքն կաշեգործ:

* *
*

Մի ուրիշ Ղաղո, նույնպես Թիֆլիսեցի, սակայն դալալ, այսինքն միջնորդ, հանդես է գալիս Նիկ. Փուղինյանի «Դալալ-Ղաղո» երկու գործողությունից բաղկացած կատակերգության մեջ, որը առանձին գրքով տպագրվել է Թիֆլիսում 1868 թվականին:

«Այս կոմեդիայում,— ինչպես ճիշտ դիտել է Լ. Մանվելյանը,— լեզունների կատարյալ խառնակություն է տիրում», քանի որ Ղաղոն խոսում է Թիֆլիսի բարբառով, Կյուկյուն (մշեցի

¹ Թիֆլիսեցի իմաստով, բառացի թարգմանություն է հայերեն «քաղկեցի»-ի:

սղանդուխտը) Մշո բարբառով, ժան-Պուլը՝ զրական հայերենով, երբեմն կոտրատելով ֆրանսերեն, վրացի Յրվիտաձեն՝ վրացերեն¹:

Կարճ ասած, Ն. Փուլինյանի «Դալալ-Ղադո» կատակերգութունն «լեզունների խառնակութիւն» տեսակետից հիշեցնում է Խ. Աբովյանի «Հաղարպիէն», որը նույնպես Թիֆլիսի միջավայրի ծնունդ է:

Պիեսում գործածված Թիֆլիսի բարբառին հատուկ բառապաշարը, ինչպես նաև վրացերեն բառերը արժանի են հատուկ ուշադրության և ուսումնասիրության:

Օրինակ.

արաթու—արա թու (չէ՞ որ, թէ որ)

ասրուլէբա—ասրուլերա (կատարում, կատարել)

ամիսրուլօ—ամիսրուլո (սլիտի կատարես, որ կատարես)

ար վիցնօփ—ար վիցնոր (չեմ ճանաչում)

աղա բաղշի միրձանդէբա—աղա բախշի միրբձանդէբա
(աղան ուղեորվում է դեպի այդին)

բատոնիխար—բատոնի խար (դուն իս իմ պարուն)

բէդասլի—բեդասլի (բեդասլ)

բիճո—բիճո (բիճ, կոչական հոլով)

դարդա մադիսա—դարդա մադիսա (բացի դրանից)

դամտկիցէբուլ—դամտկիցէբուլի (հաստատված)

էձէբա—էձէբա (փնտրեց)

վիս էկագրէբա—վիս էկագրէբա (ո՞ւմն է սաղում, ո՞ւմն է լայնդ)

թորէմ—թորէմ (թե չէ)

թուդինդ—թուդինդ (թեկուղ)

թրվի—թրվի (ասա')

իջարիթ մօբսցէս—իջարիթ մոգցէս (կապալով տա քեզ)

կարի դաաղէ—կարի դաաղէ (դուրբ բա'ց)

կաճկաճ—կաճկաճի (կաշաղակ)

մէձէբրի—մէձէբարի (խուղարկու շուն)

¹ Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, էջ 117: Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 437—438:

միբձանէ—միբրձանէ (հրամայի՛ր ինձ, հրամանքս)
 միվցէմ—միվցէմ (կտամ նրան)
 միմինո—միմինո (բու)
 միխէդ մօխէդիս ճիրիմէ—միխէդ մոխէդիս ճիրիմէ (նրա
 ցաւը տանեմ, ով ասաւ՝ դէս ու դեն նայիր)
 մօգարթմէվ—մոգարթմէվ (քեզ կմատուցեմ)
 պատրօնս—սրատրոնս (տիրոջ)
 րամծաւս—րա՛մ յձ՛վ յաւս (? ի՞նչն է ինձ այրում)
 սանամդիս—սանամդիս (մինչև ե՛րբ)
 սանթօ—սանդո (վստահելի)
 սարգէբլօփ—սարգէբլոբ (դու օգտւում ես)
 սաճիրօ—սաճիրո (կարեոր, անհրաժեշտ)
 ուար—ուարի (մերժում)
 ունդա—ունդա (պետք է)
 զաղօաս գառմաբջօս—Ղաղոս գամուարջոս (Ղաղոյի կե-
 նացը)
 ձըլիվ—ձլիվ (հաղիվ-հաղ, դժվարութեամբ)
 հօպօպ—հոպոպ (թուփակ)

* *
 *

Այստեղ մենք կանգ չենք առնում բժ. Միքայել Տեր-Գրի-
 գորջանի պիեսներին՝ «Ժլատ», «Նինոյի նշնուիլը», «Խոտորնա-
 կին խոտորնակ», «Էս էլ քի մոցիբլութին», «Վայ քի իմ վէչեր»,
 «Ո՛վ է մեղավոր», «Պառաւմենրուն խրատ»¹, ինչպես նաև Ալա-
 դաթյանի «Վայ իմ կորած հիսուն ոսկին» վոդեվիլի վրա, որոնք
 արտացոլել են «Թիֆլիսի ժամանակակից կյանքը»²:

Լեոյի ասելով, «տարաբախտաբար, ժամանակին չեն մտա-
 ծել այդ դործերը տպագրելու մասին և նրանցից մի փոքրիկ
 մասն է հրատարակված»: «Բայց վաթսունական և յոթանաս-
 նական թվականներին բժ. Տեր-Գրիգորյանցի պիեսները պատ-
 վալոր տեղ էին զբաղում մեր թատերագրութեան մեջ և հաճախ
 էին ներկայացվում»³:

¹ Լեո, Ռուսահայ գրականությունը, Վենետիկ, 1904, էջ 117:

² Նույն տեղում, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 117—118:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, ըստ Հեոյի, «նրանք համարյա բոլորովին մոռացված են» եղել: «Եվ այդ մոռացության պատճառը դժվար չէ հասկանալ, կարգալով գոնե տպագրված գործերը», որոնք, ըստ նույն Հեոյի, թեև «խրականի», այսինքն՝ ռեալիստական ոգով են համակված, սակայն գեղարվեստական արժեքից զուրկ են եղել, թեև նրանց մեջ ցուցաբերած միջավայրը դարձյալ Թիֆլիսն է, լեզուն՝ դարձյալ Թիֆլիսի բարբառն է¹:

* *
*

«Վաճառական» հանդեսի աշխատակից Հակոբյանի գրչին է պատկանում «Ստորագրություն Թիֆլիզո» շահեկան հոդվածաշարքը «Վաճառական» հանդեսում (Թիֆլիս, 1866, № 1, էջ 58—64, № 2, էջ 94—103, № 3, էջ 154—160, № 4, էջ 249—255), որտեղ տրված է XIX դարի 60-ական թվականների Թիֆլիսի մանրամասն տնտեսա-աշխարհագրական տեսութայունը²:

60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թարգմանություններ

1. «Քաղաքացի դարադ Ղազուի գրույցը տերտերների (քահանաների) մասին», հայերեն հանդեսից Թարգմանեց Գր. Մինամձղվարովը, «Յիսկարի» [= Այգերաց], 1864, № 10, էջ 74—121:

¹ Լեո, Ռուսահայ գրականությունը, Վենետիկ, 1904, էջ 118, հմմ. 107:

² Այս տեսության բնագատությունը տե՛ս III. Чхетия. Тбилиси в XIX столетии (1865—1869), Тбилиси, 1942, стр. 26, 116, 120—121 124—126, 174, 209, 287:

Հ Ե Վ Ե Լ Վ Ե Թ

(Սարգիս Զալալյան)

Մեր տեսությունը XIX դարի 60-ական թվականների այն հայ գրական դեմքերի մասին, որոնք իրենց երկերում այսպես թե այնպես արտացոլել են Վրաստանի և առանձնապես Թիֆլիսի կենցաղը, իհարկե, լրիվ չէր լինի, եթե մենք աչքաթող անեինք Սարգիս Զալալյանին¹:

Սարգիս վարդապետ (հետագայում եպիսկոպոս և արքեպիսկոպոս) Զալալյանը, որը ծագումով Սանահնեցի էր, ծնվել է 1810 թվականին, ավարտել Ներսիսյան դպրոցը, ապա նշանակվել է Սանահնի վանքի վանահայր, այնուհետև 50—60-ական թվականներին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Դեռևս Սանահնի վանքի վանահայր եղած ժամանակ Ս. Զալալյանը սկսել է շրջել Հայաստանի և Վրաստանի հայաբնակ վայրերը և տվել նրանց մանրամասն տեսությունը, վանքերի ու եկեղեցիների նկարագրությունը և, որ գլխավորն է, վիմագրությունների ընթերցումները:

Ս. Զալալյանի երկհատոր գործը՝ «Ճանապարհորդությունի մեծն Հայաստան» վերնագրով, տպված Թիֆլիսում 1842 և 1858 թվականներին, որը որոշ չափով զուգադիպում է ակադ. Մ. Բրոսսեի ճանապարհորդական նոթերին Ֆրանսերեն լեզվով՝ (*Voyage archéologique dans la Géorgie et dans L'Arménie*), այնպես որ, երկուսից և ոչ մեկը մյուսի կրկնությունը չէ, այլ երկուսն էլ զրեթե լրացնում են իրար:

Ս. Զալալյանի աշխատության Բ հատորի որոշ մասը (էջ 53—98) ընդգրկում է Վրաստանի հայոց եկեղեցիների, վանքերի ու ուխտատեղիների նկարագրությունը՝ վիմական

¹ Սրա մասին տե՛ս՝ «Կենսագրություն, Կտակ Սարգիս արքեպիսկոպոսի Հասան Զալալյանց», Թիֆլիս, 1884:

արձանագրությունների ընթերցումներով հանդերձ, որոնցից շատերը այժմ կամ անհետացել են կամ վնասված են¹:

Այս տեսակետից Ս. Զալալյանի «Ճանապարհորդությունը», ակադ. Մ. Բրոսսեի ճամփորդական նոթերի հետ միասին, անգնահատելի նյութ է ներկայացնում Վրաստանի հայերի պատմության շարադրման համար²: Եվ որպեսզի ընթերցողի համար պարզ լինի այդ նյութի շրջանակները, ստորև տալիս ենք հիշյալ ճանապարհորդության համապատասխան գլուխների ցանկը:

Տփլիս (էջ 53—74), Թեթև (74—76), Վաշլիվան (76), Խրամ (76—78), Օրբեթ կամ Շամշուտե (78—79), Շուլավէթ (79—81), Բոլնիս գաւառ (81—82), Մեծ Բոլնիս (82), փոքր Բոլնիս (83—84), Ելլու բարայ (84), Վանք անուանեալ ծովափը (85—87), Կարմրաոտ եկեղեցի (87), Դամբու (88), Սուրբ մարգարէից եկեղեցի (88), Դումանիս (89), Գորնջուկ (89—90), Սուրբ Սարգիս Ներքին Դումանիսու (90—91), Քվէշ (91), Կիանէթ (91—92), Ծաղկէվանք (92), Նախեղուն (92), Աղդալայ (93), Պապնովայ (93), Կոչր աղբիւր (94), Սոփիան (94), Ճանտառ (94), Սուրբ անապատ (94—95), Սամղէթ (95), Կրծանիս (95—96), Աղբուլաղ (96), Դէգօփալ գօլ (96), Ծխուտ կամ Ծուխ կոչեցեալ եկեղեցի (97), Բօգ գիւղ (97), Ծաւկիս (97), Ծուփ (98):

¹ Հետաքրքիր է նշել, որ Ս. Զալալյանի «Ճանապարհորդությունը» տպւած է Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցի տպարանում, արդյաւր Դահրաման Դավթյան Երկայնագրակ-Արդությանի (ա. հատորը 1842 թ.) և Աղերսանդր Դադարեան Թայրյանցի (բ. հատորը 1858 թ.) աշխատասիրութեամբ «Սարգիս վարդապետի Զալալեանց, միարանի վանաց Սանահնի ի 1841 ամի», «յառաջնորդութեան Վրաստանի և իմէրէթի տեառն Կարապետ արժանընտիր սրբազան Արքեպիսկոպոսի և Ասպետի» (ա. հատորը) և «տեառն Սարգսի Սանահնեցոյ Զալալեանց թեմակալ Արքեպիսկոպոսի հայրց Վրաստանի իմէրէթի և այլոց» (բ. հատորը):

² Վերահայրց վիմագրութիւնը հատկապես ժողոված և քննվում է մեր համապատասխան աշխատութեան մեջ, որի Ա պրակը հանձնված է տպագրութեան ՀՍՍՌ գիտութիւնների ակադեմիային:

Գ Ր Ի Ք Ո Ր Ա Ր Ժ Ր Ո Ւ Ն Ի

(1845—1892)

Գրիգոր Արծրունին XIX դարի սկզբներին Վանից Թիֆլիս գաղթած հայտանի Գեորգ-աղա Արծրունու թոռն էր, զենեռալ Երեմիա Արծրունու որդին:

Մեծ կարողության տեր լինելով, Գեորգ-աղան կառուցեց Թիֆլիսում երկու քարվանսարա՝ մեկը Սիոնի մայր տաճարին կից հարավից (հետագայում օգեսայարնակ Ֆոն-Բրյուգենի, ապա կապիտալիստ Աֆրիկյանի սեփականութունը) և մյուսը՝ նախկին Պալատական փողոցի վրա (հետագայում վրաց ազնվականութանն անցած, վրաց թատրոնին կից, վրացական աղումբով, այժմ Ա. Գրիբոեդովի անվան թատրոնին առընթեր): Բացի դրանից, Գեորգ-աղան Ամասեղքամ քաղաքում գնում է հայոց տառերի մայրերը, բերել տալիս այն Թիֆլիս և հիմնում հայկական տպարան, որը հետագայում ներսիսյան դպրոցին է անցնում և մեծ դործ կատարում հայ կուլտուրայի պատմության մեջ Վրաստանում:

Գրիգորը ծնվել է 1845 թվականին Մոսկվայում, միջնակարգ կրթութունը ստացել է Թիֆլիսի գիմնազիայում, որտեղ նրանից առաջ սովորել էին Ն. Բարաթաշվիլին, Գ. Սունդուկյանը, Իլիա Ճավճավաձեն և այլն. ավարտել է այն 1863 թվականին: Ապա բարձրագույն կրթութունը ստանում է նախ Պետերբուրգում, հետո Գերմանիայում: Հայդելբերգ քաղաքի համալսարանում, որն ավարտում է 1869 թվականին՝ փիլիսոփայության դոկտորի աստիճանով:

Համալսարանավարտ Գր. Արծրունին 1871 թվականին վերադառնում է Թիֆլիս, ուր և գործում է, երկու տարվա ընդմիջումով (1884—1886), ցմահ՝ 1892 ղեկտեմբերի 19-ը:

Գ. Արծրունին թաղված է Թբիլիսիում, «հոջիվանքի» պանթեոնում:

Գր. Արծրունու գործունեության կենտրոնումն էր նրա հիմնած «Մշակ» լրագիրը, որը հրատարակվել է Թիֆլիսում 1872 թվականից սկսած մինչև 1920 թվականը¹:

ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻՆ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Գրականություն նրա մասին

1. Հոգվածներ, թղթակցություններ և ինֆորմացիա «Գրուերա» թերթում
Կ. Լորթքիպանիձեի (1874), Ս. Մեսխիի (1874—1880) և Իվ. Մաշաբեիի (1883—1885) խմբագիր հղած պահին՝ 1874, № 425, 1875, №№ 112, 131, 132, 1876, № 24, 1877, № 44, 1878, № 264, 1882, № 162, 1884, № 166 (ի միջի այլոց, 1876 № 24-ում տպված էր Գր. Արծրունու ճառը, արտասանված «Գրուերա» թերթի 10-ամյակին նվիրված խնջույրին): «Իվերիա», 1877, №№ 30, 31:

2. Իլիա Ճավնալաձե, Քարերի աղաղակը, «Իվերիա», 1899, №№ 64, 65, 67—76, և առանձին՝ Թբիլիսի 1899, 264 էջ, նույնի՝ Երկերի լիակատար ժողովածու հինգ հատորով, հ. II, Թբ. 1941, էջ 417—479, Երկերի լիակատար ժողովածու տասն հատորով, հ. VIII, Թբ., 1957, էջ 93—194:

¹ «Մշակ»-ի ղեկավարներն էին Գր. Արծրունու մահից հետո Ալ. Քալանթարը (1892—1913), Հ. Առաքելյանը (1913—1918) և Լ. Քալանթարը (1918—1920), վերջինս Լեոյի-Առաքել Բաբախանյանի օժանդակությամբ:

Բ Լ Ֆ Ֆ Ի
(1835—1888)

Բաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյանի) ծանոթությունը Վրաստանի և, մասնավորապես, Թիֆլիսի հետ սկսվում է 1847 թվականից, երբ նրա հայրը՝ Մելիք-Միրզաբեկը Պարսկաստանի հայաշատ Սալմաստ գավառի Փայանջուկ գյուղից պատանի Հակոբին բերում է Թիֆլիս և տեղավորում Բելախյանի պանսիոնում: Պանսիոնից Հակոբը 1852 թ. անցնում է գիմնազիա, ուր հասնում է մինչև 6-րդ դասարանը և ապա անավարտ թողնում միջնակարգ դպրոցը:

1857—1870 թվականներին Հակոբը բացակայում է Թիֆլիսից: 1870 թվականին նա նորից Թիֆլիսումն է:

Թիֆլիսում Հակոբը ամբողջապես նվիրվում է գրական աշխատանքի, մասնակցելով Գր. Արծրունու «Մշակ»-ին 1872 թվականից, սկզբներում «Մելիքազե» ստորագրությամբ:

Բացակայելով Թիֆլիսից նորից մի քանի տարով, Հակոբը 1878 թվականին վերջնականապես վերահաստատվում է Թիֆլիսում, ուր և գործում է, աշխատակցելով «Մշակ»-ին և միաժամանակ առանձին գրքերով հրատարակում է իր երկերը Բաֆֆի ստորագրությամբ:

Բաֆֆու Թիֆլիսում ապրած տարիները նրա տաղանդի բացահայտման և հետագա զարգացման ժամանակաշրջանն է, երբ նա նյութական մեծ կարիքի մեջ լինելով՝ ստիպված էր հաղթահարել կենցաղային ծանր պայմանները:

Այս առթիվ հետաքրքիր են, ի միջի այլոց, վրաց պարբերական մամուլի, մասնավորապես իլիա Ճավճավաձեի «Իվերիա» թերթի հաղորդած տեղեկությունները նրա մահվան կապակցությամբ:

«1860 թվականին վախճանվեց Բաֆֆու հայրը: (Բաֆֆին— Լ. Մ.—Բ.) մեծ հաճույքով էր հիշում հենց այն օրերը, երբ քաղցած լուսացնում էր Հավլարարում իր ցուրտ և շտաքացած

սենյակում, երբ նա մի ձեռքով եռոտանի սեղանն էր ամրացնում, իսկ մյուսով հորինում էր նյութեր այն մեծ գրքերի համար, որոնցից շատերը դեռևս ձեռագիր վիճակումն են մնացել: ... Այդ պահին հանգուցյալը ծայր աստիճանի չքավորության մեջ էր. ինքը հանգուցյալը սովորաբար պարծանքով էր պատմում, որ՝ «վախենում էի ոչ ոք ինձ շտեմներ, ուստի և ամբողջ օրը նստած էի քաղցած, սպասում էի մթնելուն, որպեսզի դուրս գայի տնից և հացթուխից հինգ գրոշի հաց կարողանայի գնել»: Մի անգամ [Րաֆֆին] հրավիրված էր Արծրունու մոտ ժողովի (խոսքը վերաբերում է 1871 թ. հրավիրված ժողովին), որտեղ նյութեր էին քննում և ծրագիր կազմում Գր. Արծրունու խմբագրությանը հրատարակվելիք «Մշակ»-ի համար: Ահա այդ ժողովին ներկա լինելու համար գնում էր Րաֆֆին և Հավլաբարի վայրէջքում դուրս է ընկնում նրա կոշիկի ներքանը: Հանգուցյալը կոշկատակը կանհիտով կապեց և այս ձևով ամբողջ երեկո պարոն Արծրունու մոտ անց կացրեց, այնպես, որ ոչ ոք չնկատեց: 4—5 ժամ աթոռի վրա նստած էր, ինչպես վրան կպած, որովհետև վախենում էր, որ՝ «կոշիկս չնկատեն և իմ չքավոր կյանքը չբացահայտվի»¹:

Րաֆֆին վախճանվեց Թիֆլիսում 1888 թ. 24. IV-ին և մի արտակարգ հանդիսավորությամբ թաղվեց «Խոջիվանքի» պանթեոնում:

Նրա մահը անկեղծորեն ողբացել է և վրաց հասարակությունը: Իլիա Ճավճավաձեի «Իվերիա» թերթը մանրամասն տեղեկություններ էր հաղորդել Րաֆֆու հուղարկավորության մասին: Այստեղ, ի միջի այլոց, նշվել է նաև այն, որ բաղմաթիվ (մի քանի հարյուր) պապիկների թվում եղել է և «Իվերիա» թերթի խմբագրության կողմից ուղարկված պսակը և որ բաղմաթիվ վրացիների հետ միասին վրաց ինտելիգենցիայի կողմից ներկա է եղել մոտ քառասուն ներկայացուցիչ²:

¹ «Իվերիա», 1888, № 89: Նույնը Իվ. Բեգլարովի հոդվածներում՝ վրացերեն «Սարճոթա խելովներա» [= Սովետական արվեստ], 1939, № 10, էջ 70, հայերեն՝ «Խորհրդային վրաստան», 1939, № 250: Նույնը համառոտ՝ Տ. Կարապետյան, Րաֆֆին վրաց գրական մտքի գնահատմամբ, «Գրական թերթ», 1958, № 22, էջ 4:

² «Իվերիա», 1888, № 90: Հմմ. Իվ. Բեգլարով, «Սարճոթա խելովներա», 1939, № 10, էջ 71—72, «Խորհրդային վրաստան», 1939, № 250:

Հուղարկավորության և թաղման հաշվետվութիւնը տպելով հանդերձ՝ նույն «Իվերիա» թերթը վերջին հրաժեշտի խոսք է նվիրում Բաֆֆու հիշատակին այսպիսի բովանդակութեամբ.

«Անցյալ օրը մեզ ապացուցեց, որ քեզ նման մարդը մահով էլ չի մեռնում. ընդհակառակը, դու հաղթեցիր անհաղթ մահին, դու ինքդ մեռցրիր մահը, որովհետեւ քո գործունեութիւնն անձեռագործ հիշատակ թողեց ամեն մի աղնիվ հայի սրտում և այդ սրտում քո անունը երկար կապրի, ինչպես մարգարիտը ծովում»¹:

* *
*

Բաֆֆու ստեղծագործութիւնից վրացերեն փոխադրված և հրատարակված են «Խենթը», թարգմանութեամբ Բ. Եվանգուլովի («Մոսմբե», 1902 և 1903, առանձին գրքով), «Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքը Պարսկաստանում» թարգմ. Գ. («Դրոէբա», 1872) և Դավիթ Տեր-Դավթյանի («Կվալի», 1893, № 41), պատմվածքներից՝ «Տնային փեսա», թարգմ. Իոսեք Ստեփանովի («Դրոէբա», 1881), «Ֆիրդուսի», թարգմ. Զ. Մամուլյանցի («Նորաթի», 1884), «Սով», «Անբախտ Հոփսիմե» և «Սպանդանոցը», թարգմ. Դավիթ Տեր-Դավթյանի («Մի քանի պատմվածք», Թբ. 1891), «Դերվիշ», թարգմ. նույնի («Կվալի», 1893 թ.) և այլն:

* *
*

Իր կյանքի 53 տարուց մոտավորապես 20 տարին ընդմիջումներով Բաֆֆին անց է կացրել Թիֆլիսում և անտարբեր չի մնացել վրաստանի անցյալին, Թիֆլիսի կենցաղին, Թիֆլիսի հայերի վարք ու բարքին ու բարթառին և այլն, որն և պատկերել է իր երկերում այս կամ այն առումով, մեծ թե փոքր չափով:

Այս երկերի քննութիւնը, հենց այս տեսակետից, մենք կաշխատենք ներկայացնել ստորև, ըստ 1955—1959 թվականների ընթացքում լույս ընծայած նրա տասնհատորյակի:

¹ «Իվերիա», 1888, № 90:

Առաջին հաստոցում ուշադրություն է գրավում «Հարեմ» անավարտ վեպը (էջ 397—489), որն առաջին անգամ լույս է տեսել «Փունջ»-ի Բ գրքում (Թիֆլիս, 1874) և որն առկա է և վրացերեն թարգմանությամբ (1891):

Այս վեպում թեև գործողությունը ծավալվում է Պարսկաստանում, սակայն պերսոնաժները հիշում են Վրաստանն ու Թիֆլիսը, որտեղից գերի են ընկել պարսից ձեռքը XVIII դ. վերջերին՝ Թիֆլիսի ավերման ժամանակ: Հիշված է «Գուրջիստանի թագավորը», այսինքն «Էրեկլե պարոնը», Թիֆլիսից Պարսից «ղոշունի» դուրս գալը և այլն: Վեպի պերսոնաժներից Թիֆլիսացիք են Մեխակը, Սալոմեն, Սոփիոն, Կեկելը, Ալմաստը, Նինոն, Սոսիկոն և այլն: Զեյնաբ-խանումի պատմած «հեքիաթ»-ում տրված է Թիֆլիսի նկարագրությունը. «Կար չկար, կար մի քաղաք: Այն քաղաքում նստում էր Գուրջիստանի թագավորն: Այն քաղաքը շինված էր այն սարերի մեջ, ուր Ղափ-Դաղի գլխին շղթայած է ջինների գլխավորը: Դրախտը շատ մոտ է այն երկրին և հրեշտակների նվազածությունները դեռ լսելի են լինում այնտեղ: Դրախտից բխած գետերից մինն անցնում է այն քաղաքի միջից և ջրում է ծաղիկներով դարդարված դաշտերը: Այնտեղ կանայք ջուր չեն տաքացնում լողանալու համար, տարտարոսի բոցերն, անդունդից դուրս գալով, տաքացնում են աղբյուրները և նրանց ջրով լողանում են մարդիկ»:

Պերսոնաժներից մի ուրիշն էլ՝ Քերիմ-բեկը, հիշեցնում է Ալմաստին, որ վերջինիս «հայրենիքում պատահել են մեծամեծ փոփոխություններ»: Նույն Քերիմ-բեկի ասելով՝ «Վրաստանը վաղուց միացել է Ռուսաստանի հետ: Այժմ վրացիք թագավորություն չունեն» և «Թիֆլիսը ռուսաց քաղաք է», և այլն:

Հիշված է նաև Թիֆլիսի Տափի-թաղ և Սոլոլակ թաղամասերը, «Քոփ ափը» և շրջակա սարերը, «Խեղում», այսինքն ձորում, «բուրթի» (գնդակ) խաղալը, հիշված է նաև «Կախեթի գինին»:

Առաջին հաստոցում ուշադրություն է գրավում նաև «Տնային փեսա» սրտամվածքը (էջ 534—578), որն առաջին անգամ

լույս է տեսել «Փունջ»-ի Բ հատորում և որն առկա է և վրացերեն թարգմանությունը:

Այս պատմվածքը, ինչպես ճիշտ նկատել է Սուրեն Հարությունյանը, «նախորդում է Նար-Դոսի «Մեր թաղին» ո՛չ միայն թեմատիկայով, այլև տիպերի ու կյանքից վերցրած իրական պատկերների նկարագրության ոճով»: Այս պատմվածքով «Թիֆլիսի Հավլարարի արհեստավորների կենցաղն ու սոցիալական կյանքը մտնում է Բաֆֆու ստեղծագործությունը»¹:

Պատմվածքը սկսվում է բնության նկարագրությամբ:

«Գարնան թարմ և փափուկ երեկոներից մինն էր: Արևի վերջին ճառագայթները դեռ ոսկեղօծում էին Կազբեկի ձյունապատ գագաթը: Ժամատներից լսելի էին լինում մեղմ-բարեպաշտական հնչումները զանգահարության: Հավլարարի պառավ կնանիքը, ծածկված իրանց սպիտակ շարսավիներով, շտապում էին աղոթելու», և այլն:

Պերսոնաժներից ոմանք խոսում են Թիֆլիսի բարբառով, թեև Բաֆֆին հաճախ լրիվ հարադատությամբ չի կարողանում կիրառել այդ բարբառի հնչյունական և բառարանային առանձնահատկությունները, որը կարոտ է հատուկ քննության:

Պատմվածքում առկա է Թիֆլիսի տոպոնիմիկան՝ Սաղը (վրացերեն բիդէ, ռուսերեն Пески), Փեթխային, Ս. Մինասը և այլն:

Տեղ-տեղ գործածված են նաև վրացերեն բառեր՝ բոբոլա (=հողիմ գլուխը), կի (այո), գանա (մի՞թե) և այլն:

* *
*

Երկրորդ հատորում ամփոփված երկերից մեր նպատակի համար օգտագործելի են երկուսը, մեկը՝ «Զահրումար. վիպասանություն Թիֆլիսի հայերի կյանքից» (էջ 5—220) և մյուսը՝ «Մինը այսպես, մյուսը այնպես. Թիֆլիսի վաճառականների կյանքից» (էջ 221—302, անավարտ):

Վեսլի առաջաբանում «Զահրումար»-ի գրության ժամանակի և բովանդակության մասին հետաքրքիր բնորոշում է տալիս ինքը հեղինակը.

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու տասն հատորով, հ. I, Երևան, 1955, էջ 22:

«Ջահրումարը» ես գրել եմ 1871 թվականին Թիֆլիսում, ուր ես իմ գործերի պատճառով ստիպված էի մի տարի և կես մնալ: Վիսպասանության նյութն առնված է Թիֆլիսի հայերի կյանքից. գրված է աշխարհաբար լեզվով և միայն տեղ-տեղ թիֆլիսեցոց բարբառով: «Ջահրումարի» մեջ ընթերցողը կտեսնե սպառկերներ բարի և շար անձերի. նա կտեսնե տարապայման կրթության (մանավանդ օտարազգյա ուսումնարաններում) վնասակար հետեանքները, բարքերի ասպականություն, բարոյական փտություն ժամանակիս շռայլությունից և զեխությունից և հայության գաղափարի օրըստօրե ջնջվելն ժողովրդի մեջ, և ձգտություն՝ ժողովրդի դեպի օտարամոլ նորաձևությունները. Բաֆֆի» (էջ 6):

Ահա Թիֆլիսի սպեցիֆիկ պերսոնաժները՝ «Հացի Գելենց Օհանեսի որդի Ղաղո»-ն, հետագայում «կատարյալ կինտո», նույնը և «Ճանճուր»-ը, կամ «Ճանճուր Իվանիչ»-ը և նրա կին «տիկին Բարբարեն», որը «բոսիկ ոտքով մինչև Թելեթ համբուրելու էր գնում», Ղաղոյի և Բարբարեի դուստրները՝ Սոֆին, Լիզան և Նինան, Գրիգորը, որոնց «ընտանեկան խոսակցությունը վրացերեն էր», Կունձու տղեն ու Ճուղուր Թաթուխը, Միրզոն, «մամա Օհանեսը», «պապ Մղալոբը», «դեղի Փեփեղ»-ն, «Քիտես իմերել ծառան», Թինա «օս աղախինը», ոմն Մերեթելին, Սամվել Պետրովիչ Թաթուխովը, խաշուտողի տղան, խոխրոյի տղան, էջ քերթողի տղան, Լարլարու տղան, Օլինկան, Անիչկան, Մական, Կատոն, Էփոն, Նինոն, Նատոն, Աննա Եգորովնան, Նիկոլ Մաչիլովը, 1795 թ., 11. IX-ին գերի ընկած Մարիամը, Վարլամպի Կալոշնիկովը, Կուզմինը, Զանջուղաղովը, Յուրինովը, Մախոխենց խեչոն, Մատուրը, Արամյանը, Սմբատ Քաջբերունին, Թութունջյանը, Դիաչկովը, Թաթոսը, Աննա Սեպուհյանցը և այլն:

Վեպում հանդես են գալիս նաև անցյալի պատմական դեմքեր, որոնց թվում նաև Հերակլ (էրեկլե) Բ վրաց թագավորը:

Հետաքրքրությունից զուրկ չէ, ի միջի այլոց, և Թիֆլիսի ու նրա շրջակայքի տոպոնիմիկան և տեսարժան վայրերի հիշատակությունը՝ Շեյթան բաղար, Ալյուրի մեյդան, Շիրաչխանա,

Քաղաքխանա, Միջի փողոց, Սոլուակ, Վերա, Կուկիա, Գոլո-
վինսկի պրոսպեկտ, բուլվար, Ալեքսանդրյան ալդի, ինժեներ-
նոյն ուսլրավլենի, Մուշտալիդ, Թամամշովի քարվանսարան,
Յուրինովի քարվանսարան, Կոջոր և այլն:

Վկայի պերսոնաժները, Թիֆլիսի բարբառին կից, օգտագոր-
ծում են ինչպես ռուսերեն և եվրոպական, նույնպես և վրացե-
րեն բառեր:

Վրացերեն բառապաշարից նշենք.

դանա—մի՞թե

գեթադվանե—ի սեր աստծո

գենացվալե—քո չարը տանեմ, քեզ ղուրբան

դիախ—այո, իսկապես

դէդի—մայրիկ

դէդոփալ—թագուհի (Թամար դէդոփալ—Թամար թագուհի)

թասակրավի—շալ, լաշակ

թքվենմա սիցոցիսլեմ—ձեր արևը վկա

իխրոսլէ—խորովիր

կաբա—դեյրա (աղջկա), կաբա (տղա մարդու), ալստեղից՝
կաբավորներ

կի—այո

մագրամ—բայց, սակայն

մամի—հայրիկ

միէցի փուլի—տուր փողը

մոգոնող—հնարող (հայերեն ող վերջածանցով կազմված)

մոդի—արի՛

մոցիքուլոթյուն—միջի մարդի դերը կատարել (հայերեն
ուրջուն վերջածանցով կազմված)

մուդայիթ—զգուշ

ռուսորա—ռուսթյուն, ռուսականություն

փիքր—մտածմունք

քաաիսկա (ալստեղից՝ քաթիպավորներ)—զգեստի մի տե-
սակը

շենի ձիրիմե—քո ցավը տանեմ

ցոցիսալի—ձկան տեսակ

խրամուլի—նույնը

ջոնջոլ (ուղիղ՝ ջոնջոլի)—կոոնի

Վեպի կենտրոնական պերսոնաժներէց մեկն է Ճանճուր Իվանիչն, որի ընտանիքի բնութագիրը Րաֆֆին տալիս է այսպես.

«Ճանճուր Իվանիչի զավակներէց ոչ մինը չգիտեր յուր ազգային լեզուն: Նրանց ընտանեկան խոսակցությունը վրացերենն էր: Թեև Ճանճուր Իվանիչը և յուր կինը գիտեին փոքր ի շատե կազ ու կոտոր հայերեն, բայց այն ևս խմբոված վրացի և թուրքի, ռուսի և այլազգի բառերով» (էջ 18):

Առանձնապես պատկերավոր են Րաֆֆու նկարագրած բարբերը Թիֆլիսի կյանքից (էջ 86):

Դրանցից մեկը վերաբերում է քաղքենիական խավի կանանց մտավոր զարգացման մակարդակի, ճաշակի և վարքի բնութագրմանը:

«Մի կողմում հավաքված էին աղջիկները իրանց թասակրավիներով, դրանց շատ անգամ երկշոտությամբ մերձենում էին կարավորներ, և նրանց մեջ լսելի էր լինում վրացերեն քաղաքավարական բառերը—գենացվալե, գեթաղվանե, շենի ճիրիմե, թրվենմա սիցոցխլեմ, դիախ, և այլն, մի կողմում էլ մոզնի աղջիկները, ըստ մեծի մասին ռուսերեն լեզվով, և երբեմն վրացերեն խառնելով խոսում էին, թե ի՞նչ նոր կտորներ են եկած, կամ այս ի՞նչ ու այն ի՞նչ խանութում ինչ նոր բաներ են վաճառում:

Իսկ տիկին Բարբարեի շուրջը բոլորել էին քաթիպավորները և մի քանի կաբավորներ, դարձյալ վրացերեն, երբեմն հատուկորո հայերեն խառնելով, դուրս էին տալիս քաղաքի նորությունների կամ հացի և այլ ուտելիքների էժանության կամ թանկության մասին»:

Հին Թիֆլիսի տուր և առի երբեմնի կենտրոն Մեյդանի, այսինքն՝ Ալլուրի մեյդանի, և կից Շեյթան-բազարի ու Բազադխանայի կոտորիտը դիպուկ կերպով է տրված Րաֆֆու հետևյալ տողերում (էջ 108).

«... Ով որ եղել է Թիֆլիսում, նա գիտե, թե Թիֆլիզեցին ոչ միայն յուր լավ ապրանքը, այլ յուր ամենավատ ապրանքը ևս փա՛հ-փա՛հով է ծախում: Եթե մեր ընթերցողը երբեմն անցել է բազադխանի, մրդավաճառների առջևից, նա տեսած կլինի, թե ինչպես մրդավաճառները հոտած խնձորը կամ տհաս տանձը,

ածած թաքախններում, ձայն են տալիս և դռուում՝ «աբա լավ խնձորը, լավ տանձը, լավ բողկը... պա'... պա'... պա'», կամ թե Ալյուրի մեկդանով բաղնիք գնալու միջոցներում, ի հարկե, նա տեսած կլինի, թե ինչպիսի գովասանքներով են ծախում ծլած բակլան, բորբոսնած ջոնջուր և հոտած խրամուկին»:

Սրանչելի է Րաֆֆու տված Թիֆլիսի մերձակա ամառանոց Կոջորի դիրքի և բնության նկարագրությունը, որը համարժեք է տաղանդավոր նկարչի վրձինից ելած կտավին:

«Հացի-Գեկենց կացարանը Կոջորում մի բլրակի գագաթի վրա էր: Նա յուր բարձր դրությամբ կարծես թե իշխում էր յուր գեղեցիկ շրջակայքին: Նրա շորեքկողմում, ուր և նայում էիր, պատկերանում էին հիանալի տեսարաններ—մի կողմում կանաչազարդ հովիտներ, խոտավետ արոտամարգեր, որոնց մեջ տարածող շորբոտանի հրաշալի երևույթներ էին ձևակերպում, մի այլ կողմում՝ թփապատ բլրակներ, անտառախիտ լեռներ, իրանց գագաթների բարձրությամբ նկատվելով երկնքի կապուտակուծյան մեջ, հանդիսացնում էին սրանչելի պատկերները: Մի այլ տեղ մշակված դաշտերում երկրագործը յուր սովորական երգը երգելով, հերկում էր գետինը» (էջ 125):

Եվ «այդ բոլոր հիանալի տեսարանները, այդպես շքեղաբար միախառնվելով միմյանց հետ, հանդիսանում էին կովկասյան հրաշալի բնության գեղապատկերը» (նույն տեղում):

* * *

Րաֆֆու երկերի երկրորդ հատորում զետեղված նյութերից Վրաստանի և մասնավորապես, Թիֆլիսի իրականության հետ առնչվում է, ինչպես ասվեց, նաև «Մինը ալսպես, մյուսն ալնպես» վեպը, որի ենթավերնագիրն է «Թիֆլիսի վաճառականների կյանքից» (էջ 221—302): Վեպը գրված է 1876 թվականին:

Վեպի գործող զեմբերն են, մի կողմից, Քեթեվան, Սաքուլ, Նիկոլ, Անիշկա, վրաց իշխանուհի, Նատոյենը, մյուս կողմից՝ Արտեմ Պետրովիչ, Ադա Պարոնով, Սերգեյ Եգորովիչ Դաբալյան, Աննա Սերգեևնա, Յակուլ Յակուլիչ, Արուսյան, Մակար

Մակարիչ, Փրիդոնյան և այլն: Հիշվում են նաև թուրուղչիները (չրկիրները):

Պերսոնաժների բերանից չի պակասում հիշատակութունը «Վարանցուլի ժամանակների», «Կախեթու կարմիր գինու», բաղանիքի «բողջա»-ի և այլի մասին:

Գործածված են վրացական բառեր՝ «թավսակրավի»—շալ, լաշակ, «խելադա»—կուժ և այլն:

Աչքի է ընկնում հին Թիֆլիսի տոպոնիմիկան՝ Երեանյան հրապարակ, Գալավինսկի պողոտան, Միխայլովսկի փողոցը, Բուլվարը, Ալեքսանդրյան այգին, Մուշտալիզը, «Ըշտաբի ժամացույցը», Համոյենց եկեղեցին, Մոզնու ս. Գեորգը, Թամամ-շովի քարվանսարան, Շադինենց քարվանսարան և այլն:

* *
*

Չորսուդ հատորում գետեղված երկերից մեր ուշագրու-թյունն են գրավում «Անմեղ վաճառք» (էջ 7—42), գրված 1872—1873 թվականներին, և «Ո՞վ է մեղավորը» (էջ 43—78), գրված 1870-ականների սկզբին, գործերը:

«Անմեղ վաճառք»-ի պերսոնաժներն են՝ լվացարար Կեկելը, Քեթեվանը, Նիկոլը, Սանդրոն, Մաշոն, Կարոն, Յուցան և այլն:

Վեպում օգտագործված վրացական բառապաշարը սահմանափակվում է միմիայն մի քանի օրինակով, օրինակ՝ «խուճուճիան մամալն» (էջ 17), այսինքն՝ «Գանգրագեղ աքաղաղ»: «էյ, շենի ճիրիմե» (էջ 28), այսինքն՝ «էյ, բո ցավը տանեմ», կամ «էյ, ես քեզ դուբան», «Նիմուտի» (ռուսերեն минута-ի աղավաղումն է)—բոպե:

Րաֆֆին, ի միջի այլոց, բերում է և մի վրացական երգ (էջ 38 և ծանոթ.).

Ախ թրվալբո, թրվալբո,
Շավ թրվալբո, թրվալբո,

(ուր «Թրվալբո»-ն պիտի ուղղել «թվալբո»-ի—Լ. Մ.-Բ.),
այսինքն՝ հեղինակի թարգմանությամբ՝

Ախ աչեր, աչեր,
Սևորակ աչեր:

«Ո՞վ է մեղավորը» վեպիկի պերսոնաժներն են՝ Միշան, Անիշկան և մի կինտո:

Սպեցիֆիկ բառապաշարից նշելի են՝ դոկտուր (ДОКТОР-ի աղավաղումն է), դաբլու-փլավ, վեշեր (вечер), մոթրեվու (թրե եկած), դավի-դարաբա և այլն:

Կինտոյի կերպարը տպավորիչ դարձնելու նպատակով Րաֆֆին տալիս է նրա հետևյալ համառոտ բնութագիրը (էջ 43).

«Անվաստակելի կինտոն՝ միայն մրգեղենի թաբախը գլխին՝ ընդհատում էր փողոցների խուլ-մեղմադձական լուսթյունը, կոշեղով «չերեշնի՝—վիշնի՝ի—հա՛յ»:

* *
* *

«Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում» վերնագիրը կրող փոքրիկ երկը Րաֆֆին «գրի է առել... հավանաբար այն ժամանակ, երբ նա գտնվում էր Խոսրովա գյուղում»: Երկը առաջին անգամ լույս է տեսել «Մշակ»-ում 1872 թվականի № 25-ում, ապա արտատպվել է «Երկերի ժողովածու»-ի իններորդ հատորում (էջ 32—34): Իսկույն ևեթ թարգմանվել է վրացերեն և տպվել «Դրոսեա» (1872, № 28) և «Կվալի» (1893, № 41) թերթերում:

Երկը, ինչպես վերնագրիցն էլ երևում է, նվիրված է վրաց շերակ II թագավորի որդի Ալեքսանդրին, որը հակառակ լինելով Վրաստանի Ռուսաստանին միանալուն, յուր համախոհներով հռացել է Վրաստանից և ապավինել Պարսկաստանի սահմաններում—նախ Երևանում, ապա Թավրիզում, Թեհրանում և այլուր, երկար ժամանակ նույնիսկ դեգերել է այս ու այն կողմերում: Երևանում եղած պահին նա մոտեցել էր տեղական ֆեոդալ Մելիք-Աղամալյանների ընտանիքին և ամուսնացել Սահակ Մելիք-Աղամալյանի դստեր Մարիամի հետ պսակադրությամբ (իբրև եղակի երևույթ էջմիածնի կյանքից) էջմիածնի մայր տաճարում 1822 թվականին. վախճանվել

¹ «Կինտո» բառը, հավանական է, առաջացած լինի այն գաղափարից, որ նա հազած ուներ լայն շալվար, որը նման էր կնոջ դեյրային. ուստի և ծաղրողները բացականչել են՝ «Կին, տո՛ւ»:

է Թեհրանում 1854 թվականին, և թաղված է Թեհրանի հայոց
կեկեղեցու գավթում:

Երկար ժամանակամիջոցով չի բաժանվում այս երկի դրու-
թյան տարեթիվն Ալեքսանդր արքայազնի մահվան տարուց,
ուստի և հասկանալի է, թե ինչու ինքը Բաֆֆին իր երկի
սկզբում նշում է, որ «Իշխան Ալեքսանդրի ժամանակը դեռ
չառ չէ հնացել», քանի որ Պարսկաստանում «Ծերունի ավտո-
ներ հիշում են նորա պատմությունը»: «Եվ մենք,— շարունա-
կում է Բաֆֆին,— քաղելով կենդանի ավանդություններից,
կաշխատենք տալ ապագային մի քանի տեղեկությունք նորա
կյանքից» (էջ 32):

«Իշխան Ալեքսանդրի Պարսկաստան գնալու պատճառները
այնքան հայտնի են ժամանակակից պատմագրությանը,—
գրում է Բաֆֆին,— որ մենք ավելորդ ենք համարում այդ մա-
սին մի բան խոսել, միայն նա գնաց այնտեղ, երբ Ղևնարյան
դահին տիրում էր Փեթհ-Ալի-Շահը», որից «նա գտավ արժա-
նավոր ընդունելություն»:

«Փեթհ-Ալի-Շահի հրամանով Ապսլաա Միրզան... այսինքն՝
Շահի ժառանգը և միևնույն ժամանակ Ատրպատականի կու-
տակալը, շնորհեց իշխան Ալեքսանդրին Սալմաստու գեղեց-
կադիր գավառում մի քանի գյուղորայք նորա կացարանի և
ապրուստի համար»: Եվ «այս գյուղորայքից իշխ. Ալեքսանդրը
ընտրեց չորս բնակության համար խոսրովիա անունով հայա-
բնակ և ասորոց գյուղը, որ յուր այգեկես և ծառազարդ դիրքով,
մաքուր ջրով և հստակ «օդով առժամանակ կարող էր մխիթա-
րել նորանում Կախեթիայի (ուղիղ՝ Կախեթի—Լ. Մ.-Բ.) բաղ-
ձանքները»:

«Խոսրովիայում իշխան Ալեքսանդրը շրջապատված էր այն
վրացի տղամարդերով, որք ավելի քան հիսուն հոգի գաղթել
էին նորա հետ», և որոնց «թվում կային և մի քանի անձինք
ազնվական տոհմից»:

«Փեթհ-Ալի-Շահը սիրում էր իշխան Ալեքսանդրին, նա
շնորհեց նորան Վալիի Գուրջիստան տիտղոսը: Եվ Վալին տա-
րենը մի անգամ Թեհրան էր գնում Շահի հետ տեսություն անե-
լու, ուսկից դառնում էր նա թանկագին ընծաներով»:

Բաֆֆին պատմում է նաև, թե ինչպես Նիգարիստանի այդու ապարանքում մեծահասակները ընդունելության (պարսկերեն՝ սալամ) ժամանակ, որտեղ ներկա է եղել, ի միջի այլոց, և Ալեքսանդրը, շահը հրամայել է նույն հանգեսի պատկերը նկարել ապարանքի դահլիճի պատի վրա, որի մեջ առաջին տեղը բռնել է իշխան Ալեքսանդրի պատկերը և «այդ պատկերը մնում է մինչև այսօր»:

1826—1827 թվականների ոռոս-պարսկական պատերազմի ընթացքում Ալեքսանդրը մասնակցել է պատերազմին՝ ոռոսացիներին պարսից զորքերի շարքերում և անցել է Վան քաղաքը: Եվ միմիայն «Թուրքմենշայի հաշտությանից հետո, երբ Ռուսաց զորքերը թողնեցին Ատրպատականը, մի քանի ամիս անց՝ նկարվել իշխան Ալեքսանդրը դարձավ Խոսրովի», ուր, սակայն, «չգտավ... յուր վրացիքը», որոնք «Ռուսաց զորքերի հետ գաղթել էին դեպի Կովկաս»:

Այնուհետև Ալեքսանդրը կապվում է ասորոց պատրիարք Մար-Շիմոնի հետ, որը «նույնն էր Զոլամերիկում, ինչ որ Շամիլն էր Դաղիստանում», և «այդ նպատակով... պատկերացավ Մար-Շիմոնի եղբոր, երեսայությունից Կուսակրոնության ուխտված դստեր հետ»:

Եվ այս քայլը գուցե և բնական էր, քանի որ նրա օրինական կինը՝ Մարիամ Իսահակի Մելիք-Աղամալյանի դուստրը, 1826—1827 թվականների անցքերից հետո փաստորեն բաժանված էր Ալեքսանդրից, ուստի և Երևանից անցել էր Թիֆլիս և Թիֆլիսից Պետերբուրգ, իր կյանքի վերջին տարիները մնալով Թիֆլիսում¹:

Բաֆֆին նշում է, որ Ալեքսանդրը մահացել էր իր վերջին այցելության ժամանակ Թեհրանում, այն էլ «հետին աղբատության մեջ»:

Ըստ Բաֆֆու, «ներա վերջին կտակը եղավ այն, որ յուր մարմինը տարվի Վրաստան, և այդ պատճառով նորա դագաղը երկար անթաղ զրված էր Թեհրանի Շահ-Աբդուլ-Դերվազայի

¹ Հմմ. Աղ. Երիցյան, Վրաց թագավորական տան վերջին շառավիղը «Արձագանք», 1882, № 12, էջ 147—180: Նույնը վրացերեն՝ «Դրոսերա», 1882, № 126 և 127:

հայոց եկեղեցումը: Բայց կտակը չկատարվեցավ: Եվ Յաղուբ խանը նույն եկեղեցու գավիթում, դռան հանդեպ թաղեց իշխանի մարմինը»:

Իր այս փոքրիկ երկը Րաֆֆին ավարտում է այսպիսի նկատողությամբ. «Թեհրանում շատ քիչ մարդիկ գիտեն, թե հայոց եկեղեցվո դռանը դրած այն փառադուրի և աննշան գերեզմանը ամփոփում է յուր մեջ վրաց սպառված իշխանությունն և նշույլները»:

*
*
*

Րաֆֆու զույգ գործերը, «Դավիթ-Բեկ, պատմական վեպ 1722—1728» և «Խամսայի մեխիբուժյունները (1600—1827), նյութեր հայոց նոր պատմության համար», թեև ժանրային տեսակետից տարբեր որակի երկեր են, մեկը գեղարվեստական՝ վեպ, իսկ մյուսը պատմագրական՝ մեմուարային, սակայն իրականում դրանք մեկը մյուսի լրացումն են կամ շարունակությունը: Երկուսն էլ գրված են 1880—1882 թվականներին և առաջին անգամ տպագրվել են «Մշակ»-ի էջերում՝ մեկը 1880—1881 թվականներին և մյուսը 1882, որտեղից և արտատպվել են Րաֆֆու երկերի ժողովածուի մեջ՝ «Դավիթ-Բեկ»-ը վեցերորդ հատորում (ամբողջը) և «Խամսայի մեխիբուժյունները» տասերորդ հատորում (էջ 163—394):

Երեք գրքից բաղկացած «Դավիթ-Բեկ»-ի երկրորդ գիրքը գրեթե ամբողջապես նվիրված է «Հայ ժողովրդին բախտակից և հարևան վրաց ժողովրդին ու վրաստանին»¹:

Սույն վեպի երկրորդ գլուխը սկսվում է Մցխեթայի², երբեմնի վրաց մայրաքաղաքի, նկարագրությամբ, իբրև «աղքատ աւանի», որը «նշանավոր էր նրանով միայն, որ այնտեղ էր

¹ Բաֆֆի, երկեր, հ. VI, էջ 574 (Ս. Հաուրթյունյանի ծանոթագրությունը):

² Բաֆֆին, հետևելով հայոց մեջ ուսերենի ազդեցությամբ արմատացած սխալ հորջորջման, կոչում է «Մցխեթ», մինչդեռ ուղիղ ձևն է «Մցխեթա» (Տե՛ս Լ. Մելիքսեբ-Քեկ, Մցխեթայի մայր տաճարը [պատմական ակնարկ]՝ «էջմիածին», 1957, № 7—8, էջ 47—51): Հմմ. նաև Իլիա Ճավնալաճեի «Ուրվականը Ս. Ավչյանի հայերեն թարգմանությամբ (Իլիա Ճավնալաճե, Ընտիր երկեր, Լ. Մելիքսեբ-Քեկի խմբագրությամբ, գիրք առաջին, Թբ. 1937, էջ 64):

գտնվում Կենդանաբար անունով հոյակապ վանքը¹ և այնտեղ էր բնակվում (sic—լ. Մ.—Բ.) երկրի իշխանը (sic—լ. Մ.—Բ.), որ վրացիներից ընդունվում էր որպես թագավոր (sic—լ. Մ.—Բ.), իսկ սրարսիկներից որպես վալի» (էջ 129):

Ճորտատիրական ժամանակվա Մցխեթայի նկարագրությունը Բաֆֆին առաջին է հետևյալ տողերով. «Ողորմելի, գետնափոր խրճիթները ցրված էին ավանի զանազան կողմերում և գետնի մակերևութից որոշվում էին իրանց փոքրիկ, բլրածև բարձրությունով միայն, որ նմանում էին խլուրդների կազմած հողաբլուրներին, երբ գետինը փորելով դիվում էին իրանց որջերի մուտքի առջև» (նույնատեղ):

Ոչ պակաս տարվորիչ է իրիկնամուտի նկարագիրը Բաֆֆու ժամանակակից Մցխեթայի մի անցքի կապակցությամբ (էջ 129—130):

«Վանքի զանգակատան² բարձրությունից լսելի եղան վերջին հնչյունները, հրավիրում էին միաբանությունը ընթրիքի...

Այդ միջոցին ավանի մեռելային լուսթյունը աղմկվեցավ, շները բարձրացրին մի խառնաձայն աղաղակ, երբ հեռվից հայտնվեցան մի խումբ ձիավորներ, որոնք ամենայն թափով բշտում էին իրանց երիվարները դեպի ավանը...:

Խումբը դիմեց դեպի քայքայված բերդը, որը վաղեմի ժամանակներից շինված էր մի բարձրավանդակի վրա: Այնտեղ էր «սպարոնի» տունը: Բերդի ահագին դռները բացվեցան, ձիավորները ներս մտան, և հասցնելով իրանց տիրոջ մինչև նրա բնակարանը, հետո գլուխ տալով ցրվեցան:

Մի երիտասարդ ձիավոր, այդ խմբից բաժանվելով, դիմեց ձորը, դեպի մի առանձնացած տնակ, ուր էր նրա բնակարանը...» և այլն:

Ապա պատմվում է այն մասին, թե ինչպես ձիավորները հասցրին Մցխեթայում վրաց «սպարոնին» կից գտնվող հայազգի սյունեցի Դավիթ-Բեկին հասցեագրված նամակներ Սյունիքից:

¹ Տես նախորդ ծանոթագրության մեջ հիշված մեր հոգվածը և «Ուրվականը»:

² Կառուցված XVII—XVIII դարերում, որը կանգուն է ցայսօր:

վեպի երկրորդ գլուխը ամբողջապես նվիրված է Մցխեթայի շուրջը կատարվող անցուղարձին՝ Վրաստանի ճորտատիրական հարաբերությունների պայմաններում, ուր, ի միջի այլոց, գտնվում էր Դավիթ-Քեկի սիրուհին՝ վրացուհի օրիորդ Թամարը։ Այստեղ էր հռչակվել և Դավիթ-Քեկը, և այդ հռչակը հրապուրել էր «ղեպի Վրաստան հայոց երիտասարդներից շատերին»։

Պերսոնաժներից աչքի են ընկնում Թինան, Դարոն, պառավ Քեթեանն իր երեք դուստրերով՝ Սոփիո, Փեփել և Նինո, և երկու տղաներով՝ Փրիգոն և Նիկո, «Բայինդուր իշխանը՝ պարսից թագավորից «Բաթման-ղլիճ» տիտղոսը կրող հսկան», «մեծ Գիորգին և փոքր Գիորգին, որոնք, որպես երկու երկվորյակներ, շատ նման էին միմյանց թե զեմքով, թե բնավորությամբ, միայն փոքր Գիորգին իր աչքերից մեկը Թիֆլիսում կորցրել էր մուշտեկովի մեջ և միշտ մի առանձին փափագով ցանկանում էր զիտենալ, թե ո՞վ էր այդ արատը հասցնողը, որ ինքն էլ առիթ ունենար փոխարենը նրա երկու աչքերը հանելու»։ «Երկու վրացի ազնվականներ, որոնց մեկին կոչում էին Սոսիկո, իսկ մյուսին՝ Դաթիկո», Ջաբարիա և Ալեքսի իշխանները, «ազգով հայ» և «բնիկ թիֆլիսեցի» Սաքուլը, Միկոն, Դարչոն, Գեվոն, Գիգոն, Սալոմեն, Արշիլ իշխանը և Մելանիա իշխանուհին, Լենտոն, Լեանը և այլն։

Մեծ վարպետություններ է Բաֆֆին նկարագրում Մցխեթայի և նրա շրջակայքի բնությունը, այնտեղ տեղի ունեցած խնջույքները, հավաքույթներն ու ուխտագնացությունները, վրաց ժողովրդի սովորությունները և այլն։

Որպեսզի ընթերցողը գաղափար կազմի վրաց կերակուրների մասին Բաֆֆին մեջ է բերում Սյունիքից Մցխեթա եկած նամակաբեր Աղասիի կարծիքը, որը՝ թեև «չէր հասկանում, թե ինչ էր խոսվում իր շուրջը, որովհետև վրացերեն չգիտեր» (էջ 141), սակայն համոզված էր, որ «կերակուրները կարելի է ընդունել որպես մի ժողովրդի ճաշակի ներություն արդյունք և որպես նրա բարեկեցության արտահայտություն» (էջ 156), ուստի և իր վերաբերմունքը արտահայտեց այս խնդրի նկատմամբ այսպես.

«Գինու լիտրան, որ դրած էր տոլուբաշիի (մատովակի)

մոտ, ներկայացնում էր ֆերուղայի գույնով ջնարակած մի ահագին աման, որ նախշած էր սև անկանոն գծերով: Նրանից ածում էին արծաթով զարդարած մեծ եղջյուրների մեջ և այնպես խմում էին: Թիֆլիսի հայ ոսկերիչները թափել էին իրանց արհեստի բոլոր ճարտարությունը այդ գեղեցիկ գավաթների վրա, որոնցից երկուսը բավական էին մի մարդու հարեցնելու համար: Բայց նրանք երկար պտտվում էին մի ձեռքից մյուս ձեռք, թեև հյուրերը դեռ սեղան նստելուց առաջ մի փառավոր նախատոնանք կատարած էին Կախեթի ազնիվ ըմպելիի վերաբերությամբ» (էջ 156—157):

Անցողակի կերպով Րաֆֆին ընդգծում է նաև այն, որ «Աղասուն վիճակվեցավ մի քանի անգամ մկրտվել Կախեթի կարմիր գինով» (էջ 157): «Կախեթու գինու բարեբար ազդեցություն» մասին Րաֆֆին խոսում է և այլուր (էջ 191): Նմանապես և «գինու եղջյուրների» դատարկելու մասին (էջ 199):

Ամենից շատ վառ գույներով է նկարագրում Րաֆֆին Ժողովրդական մի սովորույթ, կապված անասունների մրցություն հետ, որ կատարվում էր սովորաբար «ամեն տարի, կանաչ կյուրակների օրը», այսինքն Զատկին հաջորդող առաջին կիրակի օրը:

Նկարագրությունը սկսվում է զուռնաչիների և նաղարաչիների գործողությամբ, որի մասին Րաֆֆին այնքան էլ բարձր կարծիքի չէ (էջ 184—185)։

«... Թե Մցխեթի, թե շրջակա գյուղերի բոլոր զուռնաչիները, բոլոր նաղարաչիները, միասին հավաքված, կազմել էին մի ահագին նվագախումբ: Զուռնայի զիլ, ճիլլուն, ալանջ ծակող ձայնը, նաղարայի... դրմբըմբոցը, միախառնվելով, դղրդեցնում էին լեռները...»

Նվագախումբը բոլորից առաջ էր ընկած և ածում էր: Նրանց ետևից հանդիսավոր կերպով բերում էին այն անասունները, որ այսօր պիտի մրցություն անեին միմյանց հետ: Նախ բերում էին մեծ պարոնի երեւելի խոյը, կապված մի երկայն շղթայով, որի մեջտեղը անց էր կացրած խոյի պարանոցով, իսկ շղթայի երկու ծայրերը բռնել էին երկու ուժեղ մարդիկ: Նրա ահագին, ոլորապտույտ եղջյուրները ներկել էին վարդի գույնով և զարդարել էին փոքրիկ դանգակներով: Նույն գույ-

նով, խայտաճամուկ կերպով, ներկել էին նրա մարմնի սպիտակ բուրդը: Մեծ պարոնի խոյի հատից բերում էին Արշիլ Քավադի որդու խոյը, նույնպես շղթայով կապված, նույնպես զարգարած փոքրիկ զանգակներով, այն զանազանություններ միայն, որ դրա թե բուրդը և թե եղջուրները ներկված էին կապույտ գույնով և ոչ վարդագույն, որ միայն մեծ պարոնը իրավունք ուներ գործ անել իր անասունների վրա¹: Դրանցից հետո, նույնպես հանդիսավոր կերպով բերում էին մեծ պարոնի մեծ շունը, դարձյալ շղթայով կապած և շղթայի երկու ծայրերը երկու մարդիկ բռնած: Շան հակառակ, պոչը, թաթիկները և մարմնի վրա տեղ-տեղ ներկված էին նույնպես վարդի գույնով: Նրանից հետո նույն փառքով բերում էին կան թավադի որդու շունը: Հետո երկու ծառաներ գրկած բերում էին Զաքարա և Ալեքսի թավադի որդիների աքաղաղները, որոնց խայտաբղետ փետուրները, բացի իրանց բնական գույներից, ներկված էին և արհեստական գույներով: Աքաղաղների պարանոցից մի-մի փոքրիկ բոժոժներ էին կախված: Հետո երկու ուրիշ սպասավորներ, ձեռքերից քարշ տված, տանում էին երկու վանդակներ, որոնց մեջ մի-մի կաքավներ էին դրած: Վանդակները ամեն կողմից ծածկված էին անթափանցիկ կտավով: Դրանցից հետո երկու ուրիշ սպասավորներ տանում էին երկու ուրիշ փոքրիկ վանդակներ, որոնց մեջ մի-մի լոր էր դրած: Այդ վանդակները նույնպես ծածկված էին անթափանցիկ կտավով: Պետք է նկատել, թե խոյերի, թե շների և թե աքաղաղների աչքերը, բոլորինն էլ կապած էին կտավով: Այդ նրա համար էր, որ միմյանց չտեսնեն, որ միմյանց հետ չընտելանան, որ նրանց աչքերը հանկարծ բաց անեն այն ժամանակ, երբ պիտի բաց թողնեին միմյանց հետ վռվելու:

Խոյերից, շներից, աքաղաղներից, կաքավներից ու լորերից հետո գալիս էր մեծ պարոնը իր տե նժուլգի վրա նստած: Նրան հետևում էին թիկնապահները և ազնվականությունը: Բոլորն էլ ձիավորված էին»:

Այսպիսի բազմերանգ թափուրի նկարագրությունից հետո

¹ Այստեղ Բաֆֆին կցում է այսպիսի ծանոթագրություն, «նույն սովորությունը կա և պարսից մեջ. միայն թաղավորը և թագավորազները իրավունք ունեն իրանց ձիաների պոչը և բաշը ներկել վարդի գույնով»:

Րաֆֆին ընթերցողին դիտել է տալիս փառավոր ուխտագնացության վայրը (էջ 186—187):

«Զիալորների խումբը, նվագածոնները և մրցող անասունները արդեն հասել էին գետի ափի մոտ: Գիծ Կուրը այս տարի գարնան հորդ անձրևներից, սովորականից ավելի վարարվելով, բարձրանալով, իր սղտոր ալիքները տարածել էր ափերից շատ հեռու: Իսկ այնտեղ, ուր պիտի կատարվեր հանդեսը, նա սեղմած էր մի նեղ ձորի մեջ: Այս պատճառով զայրացած Կուրը, խելագարի նման փրփրելով, մռնչելով, իր կատաղի կոհակները առաջ էր մղում, սփռելով իր շուրջը մի խուլ, որոտաձայն դրդոց:

Ինչո՞ւ էին ընտրել այդ աղմկալի ձորը: Ուրիշ պատճառ չկար, բացի նրանից, որ այդ ձորի մեջ, մի բլրի գագաթի վրա դեռ մնացել էին ավերակները մի հին մատուռի¹, ուր ամեն տարի, կանաչ կյուրակների օրը ժողովուրդը սովորության ունեն ուխտով գալ և հանդես կատարել: Զերմեռանդ գյուղացիները, իրանց ընտանիքների հետ, մի քանի բարակ մոմեր իրենց գտակների ծայրին ցցած, դիմում էին դեպի մատուռը: Ոմանք, որ ավելի ունեւոր էին, մի-մի ոչխար էին տանում մատաղի համար:

Մատուռի ավերակները, ինչպես ասացինք, գտնվում էին մի բլուրի գագաթի վրա: Այդտեղից երևում էր նրա ամբողջ գեղադրական շրջակայքը: Մեծ պարոնի գերդաստանը, մի քանի ազնվական ընտանիքների հետ, դեռ շատ վաղ առավոտյան եկել, տեղավորվել էին մատուռից փոքր-ինչ հեռու, դարևոր ընկուղենիների հովանիների ներքո տարածված գորգերի վրա: Կանանց ջերմեռանդությունը այդ դեպքում գերակշռում էր իրանց ամուսինների կրոնական զգացմունքին: Իշխանական տան կնիկները, դեռ արևը չծագած, եկել էին ոտքով, իսկ նրանց ամուսինները եկան հետո, սիգապանծ նիզուկների վրա նստած: Ավելի հասարակ արարածների կնիկները եկել էին բութիկ ոտներով»:

Իր այս նկարագրությունը Րաֆֆին ավարտում է նշումով,

¹ Հավանական է, Կոզմաթի կամ Կալուրանի կոչված եկեղեցիներից մեկի մասին լինի խոսքը:

որ «այն օրվա տոնախմբությունը կառավարող արեղան իր եկեղեցական» դասով հանդերձ ընդառաջ գնաց «մեծ պարոնին» և որ «բլուրը, որի վրա գտնվում էր մատուռը, ծածկված էր ուխտավորների խումն բաղմունքով», քանի որ «ամբողջ Մցխեթը այնտեղ էր» և «ինչպես ասում են՝ ասեղ դցելու տեղ չկար» այնտեղ, իսկ «մատուռի կործանված, քայքայված փլատակների վրա վառվում էին հաղարավոր մոմեր, որ նվիրված էին ջերմեռանդ ձեռքերով» (էջ 187):

Ինչպես մի այլ առթիվ Րաֆֆին նկատում է, ուխտագնացության մասնակից են եղել նաև «Մցխեթի բոլոր ջաղուկները, ժողովրդական պառավ բժիշկները» (էջ 208), որոնք դուշակություններ էին անում Դավիթ-Բեկի սիրուհի Թամարի հետ պատահած դժբախտության շուրջը:

Վեպի երկրորդ գլխի շուրջը խոսքը այլևս շերկարացնելով, կարևոր ենք համարում նշել, որ այն ավարտվում է, թե ինչպես «Դավիթ-Բեկը թողեց Վրաստանի հին մայրաքաղաք Մցխեթը և դուրս գալով վրաց Շահնավազ¹ իշխանի ծառայությունից, իր քառասուն քաջերի հետ² ուղևորվեցավ դեպի Սյունյաց աշխարհը» (էջ 248):

Երրորդ գլխում Րաֆֆին աշխատում է ներկայացնել Վրաստանի ծանր վիճակը XVII—XVIII դարերում, հիմնականում այնքանով, որքանով այն ծանոթ էր նրան ռուսերեն լեզվով Վրաստանի պատմության շուրջը գոյություն ունեցող տեղեկատու դրբերից և հոգվածներից: Ուստի և թույլ է տալիս մի շարք փաստական սխալներ, տեղանունների աղավաղումներ և տեղեկանքի լուսաբանություններ:

Մի կողմից, Րաֆֆին ճիշտ նշում է, հիշյալ դարերում «Վրաստանը բաժան-բաժան էր եղած այնքան մանր, միմյանցից անկախ իշխանությունների, որքան միմյանցից տարբեր ցեղեր և բարբառներ կային այնտեղ» (էջ 261):

Սյուն կողմից, նա ռուսերենի միջոցով աղավաղված ձևով

¹ Այստեղ բացահայտ անախրոնիզմ է. չէ՞ որ Շահնավազ կոչվածը Վախտանգ V թագավորն էր, որը թագավորում էր 1658—1675 թթ., մինչդեռ Դավիթ-Բեկի ժամանակակիցը Դավիթ VI էր (1703—1714, 1716—1724), որը Շահնավազ չէր կոչվում:

² «Քառասուն» թիվը տվյալ դեպքում հիշեցնում է «Դավիթ Սասունցու» քառասուն փահլեվանների կազմը:

է հիշատակում Վրաստանի երկրամասերի անունները. օրինակ (նույնտեղ).

Կարթալինիա (Карталиния), ուղիղ կլինի Քարթլի:

Կախեթիա (Кахетия), ուղիղ կլինի Կախեթ կամ Կախք:

Իմերեթիա (Имеретия), ուղիղ կլինի Իմերեթ, կամ Իմերք:

Օսեթիա (Осетия), ուղիղ կլինի Օսեթ կամ Օսք:

Մինգրելիա (Мингрелия), ուղիղ կլինի Սամեգրելո կամ Եգերք:

Մինչդեռ՝

Գուրիա (Гурия) ճիշտ է՝ Գուրիա:

Աբխազիա (Абхазия) ճիշտ է Ափսազիա:

Օգտվելով առիթից, պիտի նշենք, որ այս ցանկը լրիվ չէ, բայց են թողնված՝ Սվանեթը (Сванетия), Սամցխե-Սաաթա-բագոն (Самцхе-Саатабаго):

Սակայն արժեքավոր է համապատասխան ծանոթագրությունը, ուր Բաֆֆին աշխատում է մահմեդականացած վրաց թագավորների անունները տալ քրիստոնեականի հետ զուգահեռաբար (մեր կողմից ստուգված).

Շահնավադ—Վախտանգ V (1658—1675)

Մուրթուզա-Ալի-խան—Արշիլ

Նազար-Ալի-խան Կուլլար-աղասի—Հերակլ I (1688—1703)

Իմամ-Ղուլի-խան—Դավիթ (1703—1722)

Մամադ-Ղուլի խան—Կոստանդին (1722—1733)

Հյուսեյն-Ղուլի-խան—Վախտանգ VI (1703—1724)

Ալի-Ղուլի-խան—Յաքե (1714—1716, 1724—1727):

* *
*

Բաֆֆիի «Խամսայի մեկիքությունները (1600—1827), նյութեր հալոց նոր պատմության համար» երկասիրությունը, իբրև պատմագրական (և ոչ զուտ գեղարվեստական) գործ, երկրորդն է XIX դ. հայ գրականության մեջ Գ. Շերմազան-Վարդանյանի «Նյութեր աղգային պատմության համար. երեւելի հայկազունք ի Պարսկաստան» գրքից հետո, չնայած որ այս վերջինը միմիայն 1890 թվականին առաջին (և վերջին) անգամ հրապարակ հանվեց:

«Խամսաչի մելիքությունները» ուսումնասիրության մեջ Բաֆֆին, ի միջի այլոց, քննում է մի շարք հարցեր Վրաստանի պատմությանից, որոնց տեսությունը կաշխատենք տալ ստորև՝ կետ առ կետ:

1722 թվականին «մինչև Պետրոս Մեծի Դերբենդ հասնելը, հայերը և վրացիները, առաջուց բանակ դրած Գանձակ բաղաբի մոտ, սպասում էին ընդունելու կայսրին: Վրաց զորքերը գտնվում էին Շահնավազ-Գիորգիի երկրորդ հաջորդ Վախթանգի հրամանատարության ներքո, իսկ հայոց զորքերը Դավիթ-Բեկի հրամանատարության ներքո: Երկու կողմերի զորքերի թիվը հասնում էր 52,000 հոգու: Հայոց բանակի մեջ գտնվում էր հայոց շարժման պարագլուխ Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Բայց այդ միառավոր պատրաստությունը, թե հայոց և թե վրաց կողմից, մնաց անդործադրելի, որովհետև, հանկարծ մի տխուր լուր ստացվեցավ, որ կայսրը Դերբենդից վերադարձել է Աստրախան և այնտեղից Ռուսաստան...

Հայոց և վրաց զորքերը տխուր, սրտաբեկ, խաբված իրանց հույսերի մեջ, վերադարձան իրանց տեղերը: Վախթանգը գնաց Թիֆլիս և աղետալի դեպքերի պատահեց, իսկ Դավիթ-Բեկը գիմեց զեպի Սյունյաց աշխարհը» (էջ 185—186):

Իսկ 1724 թվականին «Վախթանգը, ... հալածված... իր հայրենիքից... [և] բոլորովին հուսահատված, իր ընտանիքով գնաց Մոսկվա» (էջ 187, ծան. 1):

Երկար ընդմիջումից հետո, 1762 թվականին «ռուսաց դահը» ժառանգած «Եկատերինա 2-րդ կայսրուհին... սկսեց ուշադրություն դարձնել Հայաստանի և Վրաստանի վրա» (էջ 231): Այդ միջոցին «Անգլիայից Ս. Պետերբուրգ եկավ հայազգի էմին Հովսեփյանը (ուղիղ՝ Հովսեփ էմինը—Լ. Մ.-Բ.)», որը գիմեց նաև վրաց Հերակլ II թագավորին «Վրաց և հայոց մեջ մի զորեղ դաշնակցություն կապելու համար» (նույնտեղ), որը, սակայն, անկատար մնաց:

Մինչդեռ հայրենասիրական-ազատատենչ զաղափարներ էր տարածում Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյան-Երկայնարագույնը, որը «թղթակցություն ուներ», ի միջի այլոց, «Վրաստանի իշխանների» հետ (էջ 233):

«Հնդկաստանում Հակոբ Շահամիրյանի հեղինակությամբ

տպագրեցին մի գիրք, որ բովանդակում էր իր մեջ հայոց և վրաց միացյալ թագավորությունների վարչական և դատաստանական օրենքները» (նույնտեղ): Այդ Շահամիրյանը «արդեն գնել էր վրաց Գիորգի իշխանից լոռու գավառը և դիտավորություն ուներ գնելու նաև Բորչալուի գավառը և այլն» (նույնտեղ):

«Արևելյան մահմետականության... կատաղի հոսանքի առաջն առնելու համար»... «հարկավոր էր մի միջնապարիսպ», «և այդ միջնապարիսպը պետք է լինեին քրիստոնյա հայերը և վրացիները» (նույնտեղ):

«Վրաց Հերակլ իշխանը ծածուկ բանակցություններ» ուներ հայ «մեկիքների հետ», իսկ «ռուսները խոստանում էին օգնություն հասցնել հայերին և վրացիներին, բայց ուշանում էին» (էջ 235):

«Խրրահիմ-խանը տեսնում էր, որ առանց ռուսների օգնության ևս, հայոց և վրաց միացյալ ուժերը կարող էին նրան միանգամայն ոչնչացնել, մտածեց Վրաստանին կողմնակի կերպով մի հարված տալ, իսկ հետո դառնալ դեպի հայերը» (նույնտեղ):

Նույն «Խրրահիմ-խանը մտածեց վրաց Հերակլ իշխանին զբաղեցնել իր աներոջ բարբարոս լեռնաբնակների հետ, որպեսզի նա ժամանակ չունենա հայերի հետ միանալու և իր դեմ գործելու» (էջ 236):

«Նրա գրգելով Օմար-խանը՝ կովկասյան լեռնաբնակների ահագին բազմությամբ հարձակվեցավ Վրաստանի վրա (1782): Նախ Բորչալուն ավերակ դարձրեց, հետո մտավ լոռու գավառը, պաշարեց Գյումուշ-խանա կոչված բերդը: ... Թեև Հերակլ իշխանը բացի վրացիներից, իր հետ 300 ռուսաց զինվորներ ունենալով, շտապեց Օմար-խանի բարբարոսությունների առաջը առնել, բայց չհամարձակվեցավ մոտենալ նրան: Օմար-խանը կատաղի կերպով ամեն ինչ ավերակ դարձնելով, գերիների բազմությամբ անցավ Ախալցխա (ուղիղ՝ Ախալցիխե—լ. Մ.—Բ.).... Այստեղից Օմարը իր զորքերը ուղարկեց վրաց Վախաճու (ուղիղ՝ Վախանի—լ. Մ.—Բ.) բերդի վրա: Այնտեղ ընտանիքով բնակվում էր իշխան Աբաշիձեն: Օմարի զորքերը հիշյալ բերդը գրավեցին, բնակիչներին գերի վեր առին,

որոնց թվումն էին Աբաշիձեի երկու աղջիկները, որոնցից մեկը Օմարը իր համար պահեց, իսկ մյուսին ընծա ուղարկեց Իբրահիմ-խանին» (նույնտեղ):

«Գարնանը Օմարը թողեց Ախալցխան», և այս «լեռնային գաղանի կատարած այդ փոթորկալից շրջանը Վրաստանի և Հայաստանի միջով մի աղբու ցույց էր...» (էջ 236—237):

«1787 թվին գեներալ Բուրնաշովը վրաց Հերակլ իշխանի հետ ոռոսաց զորքերով մոտեցան Գանձակին: Մելիք-Մեջլումը և Մելիք-Աբովը Շուշի բերդից փախչելուց հետո անմիջապես զնացին Հերակլի և Բուրնաշովի մոտ», որոնք «նրանց խոստացան տալ չորս հազար զինվորներ իշ. Օրբելյանիի հրամանատարությամբ ներքո» (էջ 241): Սակայն «Բուրնաշովը և Հերակլը չկարողացան վատարել իրանց խոստումները» (նույնտեղ): «Հերակլը ոռոսաց զորքի հետ զնաց Թիֆլիս, իսկ Մելիք Մեջլումը և Մելիք-Աբովը, զրկված օգնությունից, զնացին նրա հետ» (նույնտեղ): Մինչդեռ «Իբրահիմ-խանը, երբ լսեց, որ երկու մելիքները ոռոսաց զորքի հետ զնացել են Թիֆլիս, Մելիք-Մեջլումի մորը և Մելիք-Աբովի ընտանիքից մի քանի հոգի բռնել տվեց» (նույնտեղ):

Նորից խոսքը տանք Ռաֆֆուն (էջ 268—269).

«Աղա-Մամադ-խանը դեռ Գանձակից շէր անցել, Թիֆլիսը արդեն սարսափի մեջ էր գտնվում: Հերակլը հրավիրեց իր ազնվականներին, որ պատրաստվեն թշնամու առաջը առնելու: Բայց նրա հրավերքին ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Ազնվականները զբաղված էին իրանց քեֆերով: Նրան օգնության հասավ միայն Իմերեթիայի (ուղիղ՝ Իմերեթի—Լ. Մ.-Բ.) Սոլոմոն իշխանը (թագավորը—Լ. Մ.-Բ.) մի քանի հազար հոգով:

Բայց պետք է ասած, որ Հերակլի երկշտությունը (sic. Լ. Մ.-Բ.) սաստիկ վհատեցրեց նրա զորքերին: Նա իր ընտանիքը Թիֆլիսից տեղափոխեց Վրաստանի խորքերում: Այդ տեսնելով, նրա զորապետները և զորքերը նույնը խնդրեցին, որ իրանց ընտանիքները հեռացնեն, հետո կգան պատերազմելու: Բայց զնացողը այլևս հետ չդարձավ: Եվ այսպես, դեռ թշնամուն չհանդիպած, զորքերի մեծ մասը ցրիվ եկավ:

«Իր մոտ մնացած զորքերով Հերակլը դուրս եկավ Թիֆլիսից և Ղազախի ինչա կոչված գետի մոտ բանակ զնելով, սպա-

սում էր թշնամուն: Բայց երբ լսեց, որ Աղա-Մամադ-խանը արդեն անցավ Գանձակից, նա թողեց իր դիրքը և վերադառնալով կրկին մտավ քաղաքը:

Նա սկսեց կարեւորելն չափ ամրացնել քաղաքը: Այստեղ նրան օգնութեան եկած իմերեկները քաղցածությունից սկսեցին, նախքան թշնամու ավարառությունը, իրանք կողոպտել քաղաքացիներին:

1795 սեպտեմբեր ամսի 12-ին (ուղիղ՝ 10-ին—լ. Մ.—Բ.) Աղա-Մամադ-խանը հասավ Սողանլու գյուղի մոտ, և գիշերը այնտեղ բանակ դնելով, վաղ առավոտյան հարձակվեցավ Թիֆլիսի վրա: Հերակլը դուրս եկավ նրա առաջ, բայց մի փոքրիկ ճակատամարտից հետո վրացիները ջարդվեցան և փախչելով մտան քաղաքը»:

Հայտարարելով, որ «1798 թվի հունվար ամսում վախճանվեցավ վրաց Հերակլ իշխանը (Թաղավորը—լ. Մ.—Բ.)», որին «հաջորդեց որդին Գիորգի XII», Բաֆֆին իրավացիորեն նշում է այն փաստը, թե ինչպես «Հերակլի մահից հետո իշխանական (Թաղավորական—լ. Մ.—Բ.), ընտանիքի թե տղամարդերի և թե կանանց մեջ ծագեցան անհաշտ կռիվներ և անվերջանալի երկպառակություններ»: Իսկ «Ռուսաստանի [հայոց թեմի] Հովսեփ արքեպիսկոպոսը, որը վրաց իշխանական (արքայական—լ. Մ.—Բ.) ղերդաստանի մտերիմ բարեկամներից մեկն էր, շատ աշխատեց միաբանությունը և խաղաղությունը նրանց մեջ վերականգնելու համար: Բայց նրա բոլոր ջանքերը ցանկացած արդյունքը չունեցան: Արքեպիսկոպոսը այդ երկպառակությունները վնասակար էր համարում վրաստանի համար» (էջ 292):

XIX դ. սկզբներին ստեղծվեց այնպիսի մի վիճակ, երբ «վրաստանը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ մի ռուսական նահանգ» (էջ 293):

Ինչպես հայտնի է, «1795 թվից մինչև 1798 թվի սկիզբը պարբերաբար կատարվեցան մի քանի, մինը մյուսից ավելի կորստարեր, ավելի փոթորկալի արշավանքներ» (էջ 291), որի միջոցին, առանձնապես «1797 և 1798 թվականներում, այսինքն՝ սովի և ժանտախտի ամենասաստիկ ժամանակներում, վրաստանում խմբվեցավ Ղարաբաղի հայերի ահադին բաղ-

մություն» (էջ 292): Մինչդեռ «այդ միախմբումը հայերի և վրացիների՝ Հովսեփ արքեպիսկոպոսն ավելի նպաստավոր էր համարում իր նպատակների իրագործումը» (նույնտեղ)՝ միասնական հայ-վրացական պետութուն ստեղծելու ուղղությամբ, վրաց թագավորի զխավորությամբ և Ռուսաց կայսրության հովանու տակ:

Հատուկ էջեր նվիրելով սովի, ժանտախտի և Ղարաբաղի դադթականության տեսությանը (XX XVI և հետագա գլուխները), Րաֆֆին հատկապես լուսաբանում է վրաստան ներգաղթած Ղարաբաղի մելիքների և նրանց հպատակների իրավական դրությունը, քանի որ վրաց վերջին թագավոր Գիորգի XII (թե՛ XIII) համալրանքով էր վերաբերում հայերին:

«Վրաստանն այդ ժամանակ այն աստիճան խռովյալ դրության մեջ էր,— գրում է Րաֆֆին (էջ 295—296),— որ իշխան (թագավոր—Վ. Մ.—Բ.) Գիորգին խիստ նպաստավոր համարեց հայոց մելիքների և նրանց հպատակների ահագին բազմությամբ վրաց հողի վրա բնակություն հաստատելը: Մելիքները կարող էին նրան զորավոր դաշնակիցներ լինել: Կովկասյան լեռնաբնակների հարձակումները մի կողմից, վրաց իշխանական (արքայական—Վ. Մ.—Բ.) զերդաստանի անդամների լրկսլառակությունները մյուս կողմից, երկիրը անդադար ալեկոծության մեջ էին պահում: Գիորգիի եղբայրները, նրա ազգականները ամեն օր նորանոր խռովություններ էին հարուցանում: Եղբայրներից մեկը, իշխանազն (արքայազն—Վ. Մ.—Բ.) Ալեքսանդրը, հակված էր պարսիկների կողմը և գործում էր հակառակ ոռանների և հակառակ իր եղբորը»:

Այս պայմաններում «Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը ստացավ Գիորգի իշխանից (արքայից—Վ. Մ.—Բ.) լոռիի դավառը իր սահմաններով և Բորչալուի մի մասը, որոնց մեջ նա իր հպատակների հետ բնակություն հաստատեց: Իսկ Մելիք-Բեգլարյան Մելիք-Ֆրեյդունը ստացավ Բորչալուի մնացած մասը և Աղջա-Կալան: Իսկ Մելիք-Աբովը (Մելիք-Ֆրեյդունի հորեղբայրը) ստացավ Բոլնիսը իր սահմաններով: Այնուհետև մելիքները ձեռք բերեցին և ուրիշ հողեր, այն չափով, ինչ չափով որ հետզհետե ավելանում էր նրանց հպատակների թիվը» (էջ 296):

Ի դեպ, Աղջակալայի հիշատակութեան կապակցութեամբ հիշենք այստեղ մի տեղեկանք ևս՝ ամփոփված Բաֆֆու «Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում» ճամփորդական նոթերից (հ. VIII, էջ 582, ծան. 1)։ «Այդ գյուղը կոչվում է Աղջակալա նրա համար, որ երբ Գյուլիստանի մեկիքները գաղթեցին Բոլնիս, այնտեղ բնակվեցան Աղջակալա գյուղում և այլն»։

Դժբախտաբար, Բաֆֆին ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե ինչպես Բորչալուում առաջացան հայկական գյուղեր «Խաչեն»՝ անունով, օրինակ «Բոլնիս-Խաչեն», «Դաղեն-Խաչեն» և այլն¹։

Բայց և այնպես, «հայտնի է, որ Բոլնիսը բնակեցրած էր զարաբաղցի գաղթականներով», որոնք, սակայն, «երկու վերջին նշանավոր իշխողների, Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրեյդունի, մահից հետո սկսեցին հետզհետե թողնել Վրաստանը և տեղափոխվել Ղարաբաղ», այնպես որ, ըստ Բաֆֆու, «ներանք մնացին Վրաստանում մոտավորապես տասներկու տարի (1797—1809)» (էջ 311)։ Դրանից հետո, չնայած որ «ժողովրդի ամենափոքր մասը միայն մնաց Վրաստանում», այն էլ «գաղթեց 1812 թվին դարձյալ դեպի Ղարաբաղ» (էջ 311, ծան. 2)։

Ըստ նույն Բաֆֆու, «այն գավառները, որպես էին Բոլնիսը, Լոռին, Բորչալուն, որ տվել էին հայ գաղթականներին բնակության համար, իսկապես հայկական գավառներ էին» (էջ 311, ծան. 3)։

Ղարաբաղցիների՝ Վրաստանից նորից Ղարաբաղ վերադառնալու պատճառը Բաֆֆին բացատրում է այսպես. «Վրաստանում այդ ժամանակ տիրում էր ճորտատիրության իրավունքը։ Թեև մեկիքները Վրաստան գաղթելով, չկամեցան իրանց հպատակների վերաբերությամբ ընդունել ճորտության իրավունքներ, այսուամենայնիվ, նրանք պահպանեցին տիրապետողի և հպատակի իրավունքները, այն ձևերի մեջ, որպես վաղուց սովորական էին Ղարաբաղում։ Երբ այդ իրավունքներից ևս կամենում էին զրկել նրանց, այնուհետև ուրիշ ոչինչ

¹ «Խաչեն» վրացերեն հնչում է «Խաչիանի», ճիշտ այնպես, ինչպես Հայկ. «Գաչեն»-ը վրացերենում «Գաչիանի» է (հմմ. Մրեկ-ժրիապի, Բասեն—Բասիանի, Թոնդը—Թրիա—Թրիալեթի և այլն)։

չէր մնում, բայց միայն թողնել Վրաստանը և կրկին տեղափոխվել Ղարաբաղ» (էջ 311):

Ի վերջո, կարևոր է նշել, որ Րաֆֆու այս ուսումնասիրությանը կցված է հանգամանորեն կազմված ցուցակ բոլոր այն զորչազիր և թե տալազիր աղբյուրների ու գրականության՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնք հիմք են ծառայել ուսումնասիրության շարադրման: Եվ Րաֆֆու փաստական տվյալները, անկախ նրա մի շարք կոահումների միտումնավորության, հիմնականում չեն հակասում վրացական աղբյուրների տեսություններին: Այսուհանդերձ, սակայն, կատարյալ զաղտնիք և հանելուկ է ներկայացնում նույն Րաֆֆու «Դավիթ-Բեկ»-ը, որի Վրաստանի հետ ունեցած կապի տեսությունները ոչ մի արձագանք չեն գտնում ոչ վրաց աղբյուրներում և ոչ էլ, մասնավանդ, վրացական բանահյուսության մեջ: Եթե մի կողմը թողնենք Դավիթ-Բեկի սիրուհի Թամարի կերպարի խնդիրը, միանգամայն կասկածելի է վրաց արքունիքի (պարոնի) գտնվելը Մցխեթայում (Մցխեթում) և ոչ թե Թիֆլիսում կամ Մուխրանիում, որը վրաց Բագրատունիների (Բագրատիոնների) «հայրենիքին» էր: Մինչդեռ Մցխեթան վերջին դարերում Գեղեվանիշվիլիների կալվածքն էր համարվում: Եվ, որ գլխավորն է, Մցխեթան XVIII դ. սկզբներին ոչ միայն վրաց թագավորների նստատեղին չէր, այլև վրաց կաթողիկոսների լոկ ձևական աթոռանիստ էր, բանի որ նրանք ևս, հետևելով մարմնավոր իշխանության, «նստած» էին մայրաքաղաք Թիֆլիսում:

Ի միջի այլոց, տարօրինակ է թվում վեպում արձարժած «հայազգի Օրբելյան իշխանի» (120) կապը Մցխեթայի հետ. մինչդեռ XVIII դարում հայազգի Օրբելյան իշխաններ Վրաստանում գոյություն չունեին, իսկ վրացի Օրբելյանի կամ Զամբակուր-Օրբելիանի իշխանները ոչ մի կապ չունեն Մցխեթայի հետ:

Րաֆֆիի «Դավիթ-Բեկ» և «Խամսայի մեղիքություններ» երկերում սակավաթիվ են վրացական բառերը: Դրանք են. «քոքոլա» (էջ 144, ծան.)—«գլուխ հողեմ» իմաստով, իսկ «թավադ» բառը սխալմամբ թարգմանված է «աղնվական» (էջ 175), մինչդեռ պիտի լինի «իշխան» (աղնվականը «աղնաուրի» է):

Մենք դիտմամբ հետաձգեցինք վերջին հերթի Բաֆֆու երկրի ժողովածուի ուրբոուդ հատորի քննությունը, որը հիմնականում պարունակում է վիպասանի չափածո գրվածքները և արձակից մի քանի մանրուք:

Մի վրդմբ թողնելով «Կտակ»-ը, որ «Զահրումար» վեպի մի տեսակ հավելվածն է ներկայացնում և որի հետ մենք արդեն ծանոթացանք վերևում, այստեղ մենք առաջին հերթին կանգ կառնենք «Մոդա»-ի վրա, որ գրված է 1871 թ. (էջ 61):

Բանաստեղծությունը բաղկացած է 10 բառատող սուրից, և պատկերում է Թիֆլիսի քաղքենիական խավերի կենցաղը, որի պերսոնաժներն են կանայք՝ Նինան, Նորան, Լիզեն, Կեկելը և Նատաշան:

Ահա և այդ բանաստեղծությունը.

Մ Ո Ղ Ա

էս ամսումը մեր քաղքում
Եկել է մի նոր մոդա,
Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ սիրուն,
Հրաշք ասեմ, հավատա՛:

— Բո արեւը, է՛յ Նինո,—
Ասաց Նորան մեր Լիզեն,
Էդսիսի սիրուն մոդա
Զեր չէ եկած Փարիզեն:

Կեկելն ու Նատաշան,
էս նոր մոդի նոր շորով,
Երեկ շիկով հագնված,
Պտրտում էին փողոցով:

Բայց ես տխուր, ամոթից
Տանիցը դուրս չեմ գնում,
Զի իմ շորի տեսակը
Հիմա ոչ ով չէ հագնում:

Ա՛խ, մեռնում եմ նախանձից,
Երբ ուրիշն է հագնւած,
Ես տընումն ընկած եմ,
Որպէս մի խեղճ բանտարկւած:

— Դարդ մի՛ արա, իմ քույրի՛կ,
Ասաց նինոն մեր Լիզին,
Գնա մարդեղ դու փող բե՛ր,
Դիմենք մոզնի մագաղին:

Ո՛ւմ կնկանիցն ես սպկաս,
Որ մոզիցը ետ մնաս,
Գործն ալլ է, երբ որ դու
Մսխելու փող շունենաս:

— Ա՛խ, անբախտ եմ ես, նինո,—
Լիզեն տվեց պատասխան,
Թեև ունեմ ամուսին
Հարուստ, ծերուկ մի իշխան:

Գրո՛ղը տանե թո՛ղ նորան,
Գուցե ես էլ պրծընեմ,
Նա ինձ համար չէ առնում
Մոզնի շորեր, որ հագնեմ:

Ես էլ նրա ջիգրիցը
Մի ուրիշին կըսիրեմ,
Նա կառնե ինձ համար
Մոզնի շորեր, որ հագնեմ:

Այսպիսին է նաև «Օսան» բանաստեղծութունը, գրւած 1871 թ. (էջ 61—62), որի պերսոնաժներն են Օսանը և Սոփոն, և «Սեր» (էջ 87—90), գրւած 1873 թ., որի պերսոնաժներն են Անիշկան և Մական «Կրուժոկ»-ով (ակումբի անունն է) հանդերձ, երկուսն էլ օրիորդների «ամուսնութեան» պրոբլեմի հետ կապւած:

Հին Թիֆլիսի կոլորիտի պատճենավորումն են ներկայացնում՝ «Թիֆլիսեցու հիշողութեաններից», գրւած 1871 թվա-

կանին, «Շուայլություն (թիֆլիսեցու դանդաժներ)», գրված 1872 թվականին, և «Մեր քաղաքացի Պետոն», գրված նույն 1872 թվականին, ընդարձակ զավեշտական բանաստեղծությունները, որոնցից առաջինը, բաղկացած 27 տունից, ձայնակցում է Խ. Աբովյանի «Հաղարպիեշեն» պոեմին, Ռ. Պատկանյանի «Թիֆլիսի բեֆ»-ին և հենց իրեն՝ Բաֆֆու «Կտակ»-ին:

Քանի որ սրանցից առաջինում, որ կոչվում է «Թիֆլիսեցու հիշողություններից», իրար հակադրված են «հին» և «նոր» Թիֆլիսը, (իհարկե, 1871 թվականի տեսակնոցով), և, միաժամանակ, բոլոր պերսոնաժները ժամանակի կենդանի տիպեր են, բերում ենք այն ամբողջությամբ, մեր ուղղումներով հանդերձ, Թիֆլիսի բարբառի առանձնահատկությունների հարադատությունը վերականգնելով.

Վատ աղաթներ (ուղիղ՝ աղաթնլր) ներս բերավ
Մի քաղկումը Եվրոպեն,
Քեփն ու սափեն դիփ կորավ,
Փըշացավ էսղանցորեն...

Ո՞վ էր տեհի մե մանեթ
Կախեթու գինու թունգին,
Մե արասով էր առաջ,—
էն էլ շատ-շատ խիստ թանկ (ուղիղ՝ թանգ) գին:

Դե՛, արի դուն, իմ պարուն,
Կուշտ փուրով խմե գինի,
Ո՞վ կու դիմնա էդ մխսին,
Շուտով կուդր (ուղիղ՝ կուտր) չի նընգնի:

Ու էնպես էլ էդ լոբոն,
Ցոցխալ, փիշխուլն ու զութխին,
Արնի գնով ծախում ին,
Ի՞նչ ձեռք կու տա մի քալխին:

Թե առնում իս.—էդքան փուղ
Դուն ի՞նչ սրտով պիտի տաս,

Թե չիս անուամ, ուրիշ վատ,
Զուկիցը պատ կու մնաս:

Միտս է գալիս վաղօրոք,
Ճիպինի տղա Պոխրոն,
Ես (ուղիղ՝ յիս), Զանդակինց Թաթուխը,
Ի՞նչ մարդ էր էն օխերոն...

Մեկն էլ պաճո-Սոսիկոն,
Թուշինի տղա Ճանճուրը
Ու կոճլո Արտեմը՝
Մախոխի տղի պուճուրը:

Դիփ էլ աղնիվ քաղկըցիք,
Օջախի վուրթիք պատվավուր,
Զըկեր միր մեջ Շան ճրագ,
Կոռ կամ Զոկ մոթրեվուր:

Օրթաճալումը դիփունանքս
Նստիլ էինք Քոփ ափին,
Ո՞վ կանա պատմել (ուղիղ՝ պատմիլ) հիմա
Զողն ու սափեն միր քեփին...

Սաղանդարնիր ունեինք,
Ամենքը լավ-լավ տղա,
Նրանց համն էւ ըժուկում
Ո՞վ է տըվի, իմ տղա:

Քեչալ (ուղիղ՝ Կաչալ) Դառչոն էր մեկը,
Ամենքը լավ կը ճանաչեն,
Ո՞վ կարա ածել (ուղիղ՝ ածիլ) հիմա
Նրա թառն ու քամանչեն:

Ու էնպեսդ էլ Գիգուին,
Երբ (ուղիղ՝ Յիփ) կոծեր իր դայիրան,
Սաղ աշխարքն արմըցած՝
Մտիկ կոներ իր վրան:

Ախ, բո՞ւ Գաբոյի զառնի
Գիտե՞ս (ուզիղ՝ գիղի՞ս) ձենն ո՞ւր է էրթում,
Սողակում կը (ուզիղ՝ կու) լսեիր,
Երբ (ուզիղ՝ յիփ) նա կոծեր Թելթում:

Խոսքոնց Բաղդանոսի
Ո՞վ կոծե դիպլիարտոն,
Հեսաի դոշախ, մասխարա,
Օյինբազ էր էն կինտոն...

Չոփուրի տղա Մատուրի
Ծիանուրն ու սազը...
Հիմա (ուզիղ՝ հիմի) ի՞նչ աշըղ կոսե
էն թուրքի մուխամբազը:

Մազրամ հիմա (ուզիղ՝ հիմի) վուշ մեկը
Չեն (ուզիղ՝ Չին) մնացել (ուզիղ՝ մնացիլ) էս
աշխարհում...

Աստված օղորմի նրանց
Ամենքի էլ լիս հորուն:

Նստիլ ինք Քոի ափին,
Կորու տղա Յազուլը
Դամբ է գցում, նավեմեն
Դուրս է տալիս փշխուլը...

Ափին կրակ ունինք վառած,
Վրեն պղինձն է դրած,
Մե կողմից չալաղաջին
Շամփրով անում խորոված:

Մեկ կողմից էլ պղնձի մեջ
Ածում ենք (ուզիղ՝ ինք) սաղ ցոցխալը,
Դուն տես (ուզիղ՝ տիս) հիմա (ուզիղ՝ հիմի)
մեր (ուզիղ՝ միր) տղորց
Քեփի, զովղի դիփ հալը...—

Տկճուրներով (ուզիղ՝ Տկճուրնիրով) լավ գինին
Շարած ունինք չուրս կողմով,

Ամպա՛ր, ասա՛, ի՞նչ գինի,—
Լավ ռանգով, լավ համով:

Հաղար-փեշեն ձեռից ձեռ
Պտուտ է գալիս պլպլուն,
Խմե՛ ու խմե՛ գինին,
Վուրքան կուզես (ուղիղ՝ զուղիւս), իմ պարուն:

Ծափ ինք տալիս, դե՛ ծափ տո՛ւր,
Հարա՛յ հրո՛ց, ղիժինա՛...
Ո՛ւ չի ուզի էդպես քեֆ (ուղիղ՝ քեֆ),
Գինի խմե, գրժանա:

Սաղանդարնիրը զոռ ին տալի
Իրանց սաղին, շոնգուրին,
Թուշինի տղեն խաղում է
Հեստի ղոշաղ լեկուրին:

Ի՞նչ գլուխդ ցավացնիմ,
Կարճն ասիմ, իմ պարուն,
Էնենց մինք սաղ մե շաբաթ
Քեփ արինք Օրթաճալում:

Էնդու էդնեն քաղկումը
Միր մխսը հեսաբ արինք,
Մե մինալթուն կես շայի
Ամեն մեկս փըսոն տվինք:

Հիմա (ուղիղ՝ հիմի) ո՛ւր է էն վուխտը,
Գնա՛ց... մեկ էլ յիդ չի գա,
Վուր էլ էնպեսդ քեփ անենք (ուղիղ՝ անինք),
Ո՛ւր է էն գինին... էն ձուկը...

Վադ ադաթնիր ներս բերավ
Միր քաղկումը Եվրոպեն.
Քեփն ու սափեն դիփ կորավ,
Փըշացավ էսղանցորեն...

Նույն ոգով է գրված «Շռայլություն (Թեֆլիսեցու գանգատ-ներ)» զավեշտական բանաստեղծությունը, ուր, սակայն, Թիֆ-լիսի բարբառի նորմաները բավականին խախտված են. ուստի և այն ամբողջությամբ կարոտ է «վերականգնման»:

Մյուս կողմից, այս երկում ավելի, քան որևէ այլ գրված-քում Բաֆֆին կուտակել է բաղմամբիվ վրացերեն բառեր, սկսած միակ պերսոնաժ «Մղալոր» անունից և մինչև ժողո-վրդական խաղերից քաղած արտահայտությունները:

Այգալիսիք են՝

ձլիվ—հաղիվ

ղեկաքնուրի—ղեղարքունի (ձկան կամ իշխանաձուկի ան-վան վրացական ձևն է)

մոթրեվուլ—թրե եկած

տուտուց—հիմար

մագրամ—սակայն, բայց:

Սակայն ամենակարևորը այն է, որ Բաֆֆին այստեղ օգ-տագործել է հենց նույն վրացական ժողովրդական երգը, որը հայտնի է «Լոթինների մուխամբալ» անունով և որը վրաց գրա-կանության մեջ մտել է բանաստեղծ Ալեքսանդր Ճավճավա-ձեի երկերում, իսկ հայ գրականության մեջ առաջին անգամ Գ. Սունդուկյանի «Եվ այլն կամ նոր Դիոգինես» պիեսի մեջ 1869 թ.:

Բաֆֆու վարիանտը կարդացվում է այսպես (էջ 75).

«Ես (ուղիղ՝ Յիս) սիրում եմ (ուղիղ՝ Իմ) խշխշուն

Ձեր (ուղիղ՝ Ձիր) յուբկա և կրինուին,

Տարի լալե... լա լալե...

Տարի լալե... տայ լալին...»:

«Մեր քաղաքացի Պետոն» զավեշտական բանաստեղծու-թյունը Բաբոսի պաշտամունքի բնագավառին է վերաբերում, որի ասորիբուտները կենտրոնացած էին Թիֆլիսում «Շիրաչ-խանա» կոչված թաղամասում:

Դժբախտաբար, այս տեղանունը աղավաղված է Բաֆֆու մոտ հետևյալ տան մեջ՝ էջ 78:

Երբ նա տեսավ շիրախանումը:
Թիֆլիզու մեծ ըռումբին,
Հարյուրներով յուր մեջ կաններ
Կախաթու գինու թունդին:

Մի քանի խոսք Բաֆֆու պոեմների մասին:

«Նինո»-ի, որ գրված է 1872 թ., պերսոնաժն է «Նովոմոդ-նիյ աղջիկ» Նինոն, Աղալոյի դուստրը, նա շուրջ կյանք է վարում, փնտրելով հարուստ ամուսնացու, ամբողջ կյանքը անց է կացնում «վեշերներում», «կրուժոկում» (կլուբում) կամ դրոս-նելով դեպի Մուշտալիդ, բուլվար և այլն, մի խոսքով նման է մայրաքաղաքում դաստիարակվող երիտասարդ աղջկան, որի հետևանքով հայրը սնանկանում է: Տուն քանդողը, իհարկե, Աղալոյի կինն է, որը չէր կարողանում հասկանալ, թե

Ի՞նչ միտ բանն է, ախպեր ջան,
Նովոմոդնիյ աղջիկը...

«Սառա» պոեմը, որը գրված պիտի լինի 1873—1874 թվականներին, պարունակում է իր մեջ, ի միջի ալյոց, հիշատակով՝ յուն «քուլյո-եղբայր լինել միմյանց» վաղեմի սովորույթի, որի նման երևույթը դիտել է Վրաստանի լեռնականների (Փշավ-խեվսուրեթում) մոտ պոեֆ. Ս. Մակալաթիան¹: Մի այլ վաղեմի սովորույթ, որ նշված է այս պոեմում, կապված է «Նուրին»-ի հետ, որին, ըստ Բաֆֆու, «Թիֆլիսում ասում են լազարե»: Դա նույն Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր»-ի Նուրին-Նադարեն է, վրացական կաղարեն²: Այս կաղարեի խնդրին Բաֆֆին անդրադառնում է իր «Հիշատակարան»-ում (էջ 643):

«Ակն ընդ ահան» պատմվածքը, գրված 1893 թվականին, մի փոքրիկ էսքիզ է Թիֆլիսի կյանքից, որի պերսոնաժներն են Վասոն, Բաստամ Մարտինիչը, Իսակ Փալանիչը, Սոնան, Թաթոխովը, Թինաթինը, աղախինը, Պյոտր Իվանիչ Զուլֆիկարովը, Աննա Բաստամովնան, փոքրիկ Կոտեն: Հիշատակված է

¹ Ս. Մակալաթիա, Փշավական Մաժլուբա և խստորական սմոլփոբան, Թբ. 1925:

² Հմմ. Լ. Մելիսեթ-Ռեկ, Նուրին-Նադարեի երգի բանալին. «Գիտական ժողովածու», Երևան, 1941, էջ 187—196:

Գոլովինսկի պողոտան, Շնիգելենց տունը և այլն: Գործածված են վրացական բառեր՝ «զանա»—միթե, «մագրամ»—բայց, սակայն: Պերսոնաժներից ոմանք, օրինակ Բաստամ Մարտինիչը և նրա կին Աննա Բաստամովնան, գործածում են Թիֆլիսի բարբառը:

«Հիշատակարան»-ում, որ գրված է 1872—1888 թվականներին, Բաֆֆին, ի միջի ալոց, անդրադառնում է Մղալբեի տիպին, որը հայտնի է «Շռալություն» բանաստեղծությունից (1872), հանդերձ «Վեչերների, դամինո-լոտոյի, բեզիկների և պիկնիկների» հիշատակությամբ (էջ 648), ապա բերում է մի քանի բանաստեղծություններ Թիֆլիսի բարբառով և, վերջապես, հիշատակում Թիֆլիսի զբոսատեղերի մեջ ամենանշանավորը՝ Մուշտալիզը, ապա բացականչում (էջ 648—649):

«Մուշտալիզ»՝ Ի՛նչ գեղեցիկ հնչում է այդ բառը:

Իսկամբ տալիս է այդ անունը յուր դենի գլխավոր վարդապետներին:

Իսկ Թիֆլիսում այդ անունով կոչվում է մի հիանալի այգի:

Եթե թույլ կտար մեզ փոխաբերական բանաստեղծունը, մենք չենք սխալվիլ ասելով, որ այդ անունը մի խորհրդավոր մտքով հարմարված է այդ այգիին,—որովհետև նա ևս մի վարդապետաբան է այս քաղաքի զանազան տեսակ զվարճությունների»:

ՐԱՅՅԻՆ ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ա. Թարգմանություններ Բաֆֆուց

1. «Արքայադն Ալեքսանդրի կյանքը Պարսկաստանում», թարգմ. Գ. «Դրոբա» 1872, 21. VII, № 28:

2. «Տնային փեսա», թարգմ. Իսսեր Ստեփանովի. «Դրոբա», 1881, № 174, էջ 1—3, № 175, էջ 1—3, № 176, էջ 1—3, № 177, էջ 1—3, № 179, էջ 1—2:

3. «Ֆիրզովսի», հեղինակի պատկերով, թարգմ. Զ. Մամուլյանցի, «Նորաթի», 1884, № № 7—8—9, էջ 357—375:

4. «Մի քանի պատմվածք», հեղինակի պատկերով և համառոտ կենսագրությամբ, թարգմ. Դավիթ Տեր-Պավլյանի, Թիֆլիս, 1891:

5. «Դերվիշ», հեղինակի պատկերով՝ թարգմ. Դ[ավիթ]-Տեր-Դ[ավիթյան] ցի, «Կվալի», 1893, № 35, էջ 12—13, № 36, էջ 12—13:

6. «Արքայադն Ալեքսանդրի կյանքը Պարսկաստանում», հեղինակի պատկերով. թարգմ. Դավիթ Տեր-Դավթյանի, «Կովալի», 1893, № 41, էջ 8—10:

7. «Խենթ, ռուս-օսմանյան վերջին պատերազմի (1877—1878) ժամանակվա պատմական վեպ, հեղինակի պատկերով, թարգմ. Բ. Եվանգուլովի, «Մոսմբե», 1902, № 8, էջ 79—114 (գլ. 1—6), № 9, էջ 1—59 (գլ. 7—13), № 10, էջ 15—79 (գլ. 14—21), № 12, էջ 93—134 (գլ. 22—26), 1903, № 1, էջ 53—106 (գլ. 27—31), № 2, էջ 23—76 (գլ. 32—37), № 3, էջ 65—124 (գլ. 38—43):

8. Նույնը—առանձին զրքով, թարգմանչի առաջարկով (էջ I—II) և հեղինակի պատկերով, Թիֆլիս, 1903, VI+364+1 էջ:

բ. Հատուկ գրականություն Բաֆֆու մասին

1. «Իվերիա», 1888, №№ 88, 89, 90:

2. Նույնը. 1903, № 172:

3. Իվ. Բեզլարով, Հակոբ-Մելիք-Հակոբյանը (Բաֆֆի) և վրաց հասարակությունը. «Բուլշեվիկների կադրերի սափվիս» [Բուլշեվիկյան կադրերի համար], 1936, № 24, էջ 4, 1937, № 2, էջ 4:

4. Նույնը. Բաֆֆին և վրաց հասարակությունը. «Սարճոթա խելովներա» [Սովետական արվեստ], 1935, № 10, էջ 69—74 (նույնը հայերենի վերածած՝ «Խորհրդային վրաստան», 1939, № 250, էջ 3—4):

ՊԵՐՃ ՊՌՈԹԵՆ
(1837—1907)

Պերճ Պրոշյանը իր կյանքի և գործունեության մեծ մասը անց է կացրել Թիֆլիսում, նախ՝ իբրև աշակերտ Ներսիսյան դպրոցի՝ 1851—1855 թվականներին, ապա մանկավարժական և գրական ասպարեզում՝ 1858—1863 և 1887—1898 թվականներին։ Վախճանվել է 1907 թվականին Բաքվում և թաղվել Թիֆլիսի «Խոջիվանքի» պանթեոնում։

*
*

«Սոս և Վարդիթեր»-ի մեջ (1860) Պ. Պրոշյանն աշտարակեցոց հավատալիքները նկարագրելիս, ի միջի այլոց, հիշատակում է մի սովորույթ՝ կապված այսպես կոչված Նուրին-Նաղարեի պաշտամունքի հետ, որն, ըստ մեր հետազոտության, գալիս է նախնադարյան-տոհմային հասարակարգի մայրիշխանության (մատրիարխատի) ստադիայից և, իբրև այդպիսին, շատ մոտ է համապատասխան վրացական սովորույթներին։

Վիպասանը նկարագրում է, թե ինչպես երաշտի առթիվ «երեխեքն ... Նորին շինեցին ու ման ածին», «երկուսը կռնիցը բռնեցին, մինն էլ տոպրակ ա վեր կալել, մեկին էլ մի պատի բժույթ (կճուճ) ու ման են գալի տները» և որ «գոան առաջին կաննում են, ասում են»՝

Նուրին Նուրին եկել ա,
Աջբա հուրին եկել ա,
Շիլա շապիկ հագել ա,
Կարմիր դոտիկ կապել ա,
Եղ բերե՛ք պորտը քոնք,
Զուր բերե՛ք գլխին ածենք,

Մեր նուրիների փայլը տվեք,
Ուտենք, խմենք, բեֆ անենք:

«Կնանիքը,— շարունակում է վիպասանը,— մի աման ջուր բերում են, լցնում էդ նուրիների գլխին ու երեխեքոնցը բրինձ, կամ եղ, կամ ձու տալի, որ տանեն քեֆ անեն»¹:

Դեռևս 1864 թվականին Մ. Նալբանդյանը Պետերբուրգի Պետրոպոլիտական բանտում կալանքի մատնված ժամանակ ծանոթանալով Պ. Պոռոջյանի «Սոս և Վարդիթեր»-ի հետ, գրում է իր ընդարձակ մատենախոսությունը՝ «Կրիտիկա»-ն և կարեւոր համարում ոչ միայն անդրադառնալ Պոռոջյանի նկարագրած սովորույթի խնդրին, այլև տալ իր սեփական դիտողությունները նման սովորույթի մասին՝ նկատված նոր-նախիջևանի հայերի մեջ, միաժամանակ կանդ առնելով երգախաղի մի այլ տարբերակի վրա, հետևյալ բովանդակությամբ.

Նորին նորին նազարեթ,
Նորինը բաղջան էկիլ է,
Շալե շապիկ հագել է,
Կարմիր գոտի կապել է:

«Երաշտության ընդդեմ նուրիների ավանդությունը, թեև իսպառ շղիտենք թե ինչ բան է այդ և ինչ արարողության մնացորդ, բայց և այնպես, կարծում ենք,— գրում էր Մ. Նալբանդյանը,— թե հին բանք լինի: Սաստիկ գրգռում է այդ բանը մեյ՛ հարցասիրությունը, մանավանդ երբ տեսնում ենք, որ շատ խոր արմատացած է նա ազգի հասկացողության մեջ և մեծ վարկ ունի ազգը նորա մեջ»²:

Անկախ Պ. Պոռոջյանից և Մ. Նալբանդյանից, նուրիների սովորույթը նկատել է Թիֆլիսում Բաֆֆին անցյալ դարի 60-ական թվականներին: Այդ իսկ պատճառով Բաֆֆին «Սառա» պոեմի մեջ մատնանշում է, թե ինչպես «մեր կնանիքը շատ ման ածին

¹ Պեռն Պոռոջյան, Երկերի ժողովածու երեք հատորով: Հ. I, Երևան, 1953, էջ 95:

² Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1940, էջ 141—142:

Նուրին»¹, այսպիսի ծանոթագրությամբ. «Նուրին, Թիֆլիսում ասում են լազարե, իսկ Պարսկաստանում՝ շամշի-խաքուն. դա փայտից շինած և հագցրած մի տիկին է, որ կանայք երաշտության ժամանակ գլուղի մեջ ման են ածում, զանազան երգեր երգելով, որք հարմարեցրած են այդ գործողությանը: Ամեն մի տանեցին Նուրինի գլխին ջուր է ածում և նորա պտրտցնող-ներին մի բան է բաշխում»²: Այս լազարեի խնդրին Բաֆֆին անդրադարձել է նաև իր «Հիշատակարան»-ում:

Մ. Նալբանդյանի «Կրիտիկա»-ի 1940 թվականի հրատարակության առթիվ գրած մեր հատուկ հոդվածում աշխատել ենք ցույց տալ, որ Նուրինի (Նորինի) կամ Նորին-Նազարեթի սովորույթը շատ տարածված է եղել հայ ժողովրդի այլևայլ հատվածներում, և ոչ միայն հայ ժողովրդի, այլև հղբայրակից վրաց ժողովրդի մեջ, որ համապատասխան երգախաղը «Օյ, կազարե, կազարե» է կոչվում և որը, անկասկած, մայրիշխանության ստադիայից եկող սովորույթ է»³:

Մեր ելույթից հետո պարզվել է նաև, որ Նուրին-Նորին-Նազարեթը գորտի տոտեմի (պաշտամունքի) հետագա կերպարանափոխումն է⁴, իսկ Նազարեթը, անկասկած, նույն լազարեն է, ինչպես ճիշտ դիտել էր մեզանից առաջ Բաֆֆին. ուրիշ խոսքով ասած՝ աշխարհագրական անվան է վերածված բիր-լիսկան լազարեն (Ղազարոսը), որը հարուստն է առնում ծաղկազարդի նախօրյակին, այսինքն այն օրը, որը կոչվում է «Յիշատակ յարութեան Ղազարոս»:

* *
* *

«Կովածաղիկ» պատմական վեպում (1878), որը գրված է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի ուժեղ ազդեցության

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու ութ հատորով, հ. VIII, Երևան, 1957, էջ 179:

² Բաֆֆի, Երկերի ժողովածու, ութ հատորով, հ. VIII, էջ 179, ծան. 2: Հմմ. նույնտեղ, էջ 643:

³ Լ. Մեկիսեք-Քեկ, Նորին-Նազարեթի երգի բանային, «Գիտական ժողովածու», Երևան, 1941, էջ 187—196:

⁴ Վարդ Բղոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, «Աշխատություններ Հայաստանի պետ. պատմական թանգարանի», հ. III, Երևան, 1950, էջ 50—71:

տակ, ի միջի այլոց, հիշատակված են նաև XVIII դարի վերջերի իրադարձությունները՝ կապված վրաց Հերակլ Բ թագավորի ռազմական գործողությունների հետ:

Ահա Երեանի բերդի պաշարումը Հերակլի զորքերի կողմից: Թագավորը առաջարկում է Երեանի սարդար Հյուսեյն-Ալի-խանին անձնատուր լինել: Խանը երեք օր ժամանակ է խնդրում: Վրաց թագավորի կողմից միջնորդի դերում հանդես է գալիս ամենայն հայոց Սիմեոն կաթողիկոսը: Խանը համաձայնվում է հաշտություն կնքել թագավորի հետ: Երկու օրից հետո թագավորը հրամայում է իր զորքերին վերադառնալ Վրաստան: Իսկ ինքը, կաթողիկոսի հրավերով, երեք հարյուր հոգուց բաղկացած շքախմբով և պահակազորքով այցելում է էջմիածինը, ուր մեծ հանդիսավորությամբ ընդունվում է կաթողիկոսի և միաբանության կողմից: Ապա թագավորը անցնում է Աշտարակ, ուր հյուրասիրվում է Գեորգ Խալֆաչի տանը. այստեղ նրան ներկայացնում են մի քանի երեխաների, որոնց թվում նաև 9 տարեկան Թորոսին, ապագա Ներսես Աշտարակցուն: Երեխան դիմում է թագավորին ասելով. «Թե որ դու լավ թագավոր ես, ինչի՞ հս մեր գյուղը թուռքի ձեռքին թողնում, մենք մե՞ղք չենք, էս ի՞նչ է մեր հալը»: Թագավորը, հիացմունքի գալով այս խոսքերից, մեծ ապագա է գուշակում երեխային, իսկ ժողովրդին ռաջարկում է գաղթել Վրաստան: Այս առաջարկին երեխան պատասխանում է. «Մեր գյուղը թողնենք, ուրիշ տեղ գնա՞նք. վեր գցենք շինած տուն, այգի, մուլք, մեր Միրանավորը, մեր ժամերը, մեր Մոզնու ս. Գեորգը ու գնանք օտա՞ր աշխարհ»:...

«Լուսանկարչի հիշատակարանից» պատվածքում (1893) Պ. Պոռչյանը նկարագրում է թե ինչպես «գլուխն երկնքին հասցրած Կովկասի սարի փեշովը ճանապարհ ընկա դեպի Սաղխենիս զինվորաբնակ պահականոցը» և ինչպես այդ «Սաղխենիս զորանոցում մի ընտանիքի տեր հրեա զորականից ամսական չորս մանեթով սենյակ վարձեցի և մեջը մտա: Իսկ մինչ այդ, Սաղխենիս հասանք թե չէ, վերջին մանեթս հանեցի և բուռը դրի»: «Սաղխենիսի զորանոցի միակ հայն էր Ղազոն», որի «խանութը տրաքում էր», քանի որ «աստծու տակին եղած ամեն բարիք մեջը դարսած էին»: «Քիզմեն գանա փուղ հիմի

ո՞վ գուզե, — հայերեն լեզուն ջարդափշուր անելով, հասկացրեց վրացախոս միկիտանը և մի ձեռնաշափ տետրակ առաջս դրեց, ասելով, — չիփ գուզիս, էն շախը տու, աղա ջան»:

Այսպես է նկարագրել վիպասանը Սացխենիս կոչված վայրը.

«... Սացխենիս դորանոցը Կովկասի սարերի մեջ մի խոր ձորում է շինած, հենց կարծես ահագին լեռը երեք կողմից հիմի փուլ կգա և տակովը կանի դորանոցը, մարդի սիրտ[ը] սեանում է էս մութն աշխարհում: Մշուշն էնքան թանձր է, որ շատ անգամ մարդիկ ճանապարհին իրար են հանդիպում, մին մնի քիթ ու պոռնդ ջնջխում, մին մնի հետ երկու կովարար ցլերի նման ճակատ ճակատի տալիս:

Մարդ մոլորած մնում է, մտածելով, թե ինչի՞ համար, ուրեմն, էս վայրենարնակ տեղումը մի ամբողջ զորագունդ են տեղավորել:

Պատասխանը պարզ է. Շամիլի հրոսակների աշխարհավեր ճանապարհներից միսն էլ Սացխենիսի ձորն էր...»:

* *
*

«Շատերից մեկը» պատմվածքում (1893) հիշված է Թիֆլիսի «Թուրքի մեկդան կոչված հրապարակը» — «Թիֆլիսի մթերավաճառության այդ սիրտը»: «Ալյուր, գարի, յուղ, պանիր, մածուն, թան, բուրդ, ձեթ, սոխ, կարտոֆիլ, սիսեռ, լոբի, մաշ, բակլա, խաղող, սերկեիլ, ինչ տեսակ արմտիք, ինչ պտղեղեն որ պետք է՝ ամառ-ձմեռ մի շեն տան մառանը լիքը պահելու համար, իրար վրա թափված են այդ փոքրիկ հրապարակումը»: «Հայ, վրացի, պարսիկ, հրեա, ռուս, լեհացի, գյուղացի, քաղաքացի, աղքատ, հարուստ իրար դիպչելով, միմյանց հրելով, բռնելով՝ անդադար վիստում են այնտեղ»:

Ապա՝ վիպասանը շարունակում է.

«Ոչ քաղաքավարության կանոններին նայել կա այստեղ, ոչ պատմապահության կամ ներողություն խնդրելու սովորություն, ով ուզում է Թիֆլիսումն ապրել ու ամեն մթերք յուր ժամանակին տուն ածել, ով ուզում է անխիղճ մանրավաճառների ապառիկի յուղոտած ու ճենճոտված տետրակից գլուխն աղատ պահել, նա առավոտյան անուշ քունը կտրում է ու

ձեռքն ընկած կոպեկները գրպանը դնում, շտապում Թուրքի մեյդանը: Այնտեղ նա նեղվում, սեղմվում, ձգմվում, ճխլվում է, յուր առնելիքն առնում է, փախնված բեռնակրի շալակին բարձում և ուրախ-ուրախ տուն է դառնում:

Այսպիսով, «Թուրքի մեյդանի ճիշտ նկարագրության հարյուրերորդական մասի պատկերը ներկայացնելով», վիպասանը անցնում է Թիֆլիսի անցյալի և ներկայի ալլեալլ երևույթների բնութագրմանը, մասնավորապես հիշատակում է «Թուրքի մեյդանի գլխին կանգնած՝ բերդի կոշված հայ եկեղեցու սուր և փայլուն դանգակատունը», ուր, այսինքն «ժամումն երկու զույգ մի կենտ ծերունիք ու պառավներ էին», հիշում է նաև «աչն ժամանակվա միակ հայ դպրոցը—այսպես կոշված վանքի ուսումնարանը, որ նույնն է՝ ամբողջ Կովկասում անդրանիկ ներսիսյան դպրոցը» կամ նույն «Վանքի շկոլեն», նաև «խոջիվանքի հայոց գերեզմանատունը» և այլն:

Հեղինակը լավ ճանաչում է «Թիֆլիսի նպարավաճառ կինտոներին», «երիտասարդ երեցփոխին», որի «պատանի գեղեցկուհի ամուսինը» երազում էր ունենալ վրացախոս (իմերել) «սխալակալի լաբեյ (սպասավոր)», այն էլ «ատլաս արխալդի ու ոսկեհուռն շերքեղի մեջ»:

* * *

«Տատ Բարբարեի վերջին առակը (նմանողության պես մի բան)» պատմվածքում (1899) հանդես է գալիս «լվացարար» տատ Բարբարեն՝ «քաղկումը հայտնի առակախոս կինը», որը «շատ ու շատ առակներ է ասել», «մեկով՝ լսողներին ծիծաղացրել, թուլացրել, մյուսով՝ լացացրել, աչքերն է կարմրացրել»:

Պերսոնաժներն են Թիֆլիսի իրականությունից վերցրած Վասոն կամ նույն Վասիլ Ծղալորիչը, Կեկելը, Մաշոն, Միկիտան Ղադոն, «չաթուքյասաններ» և այլն:

* * *

«Օրը կյուրակի է, երազը սուտ (մի փոքրիկ պատկեր)» պատմվածքը (1903) հյուսված է Թիֆլիսի միջավայրի և նրա սպեցիֆիկ վոլմերի վրա:

Մասնավորապես, հիշված են «Քարափի թաղը», որը «Թիֆ-
լիսի լեռնալանջի վրա է գտնվում», «Բաղադխանան», այսինքն
«Կտավեղենի վաճառանոցը», «Խոշիվանքը», այսինքն՝ «Թիֆ-
լիսի հայոց գերեզմանատունը», «Օրթաճալան», այսինքն
«Թիֆլիսից ներքև Կուր գետից կազմված կղզին», «ուր Թիֆ-
լիսի աղբիներն են և ոռոգվում են գետից արհեստական կեր-
պով բարձրացրած ջրով»:

Պերսոնաժներն են Աղալո Շաքարովը, նրա մայր Մաթոն
(Դեղա-Մաթո), տեր Կիրակոսը, Բախշիովը և այլն:

* *
*

Պ. Պոռչյանի «Հուշիկները» (գրված XIX դարի վերջերին)
կարեւոր նյութ են պարունակում հայ հասարակական կյանքի և,
մասնավորապես, թատրոնի պատմության համար Թիֆլի-
սում:

Ընթերցողի առջևով անցնում է Վրաստանի հայ գործիչների
մի ամբողջ շարան՝ Ներսես Աշտարակեցին, Գեորգ-Գարեգին
Մուրադյանը (հետագայում Մելիքսեղեկ եպ. Մուրադյան),
Պետրոս Շանշյանը, Անդրեաս վ. Գորեցին, որը «կուլի, կոսե-
ներով» էր խոսում, ուսուցիչ Երեմիա Իսահակյանը, որը եր-
բեմն ման էր գալիս «վրացի Դատիկո (ուղիղ՝ Դաթիկո—
Լ. Մ.—Բ.) խոհարարի ուղեկցությամբ», իսկ «Դատիկոն (Դա-
թիկոն) դաշույնը հանած, ձեռքին բարձրացրած. միամտեցնում
է «բատռն» (տեր) ուշիակոյին, որ մոտ եկողի փորը կթափի».
այսպէ՛ Մանդինյան քահանան, Թալիբյան սրբատալը, «Սև
տեր-Գեորգ վաճառականույալը», Գաբրիել Խատիսյանը՝ բնա-
գիտության դասատուն Ներսիսյան դպրոցում, Հակոբ Կարեն-
յան և Միքայել Պատկանյան դասատուները, Հովսեփ ա. ք.
Օրբելին, Սարգիս եպ. Զալալյանը, Մինաս ա. ե., Դավիթ Ար-
զանյանը, Ռաթմազյանը, Գաբրիել ա. ե. Այվազովսկին, Հով-
հաննես աղա Ամրիկյանը և շատ ուրիշներ:

Այս հուշիկներն արժեքավոր նյութեր են պարունակում,
ի միջի այլոց, Թիֆլիսի հնագրության, աղագրության և, որ
զգեսավորն է, դասակարգային պայքարի մասին (ի նկատի ու-

ներք 1865 թվականի համբարների ասպտամբուլյան շուրջը գրի առնված հիշողությունները):

Հիշելով «Թիֆլիսի ազնվականաց գիմնազիա»-ն, վիպասանը «միջանկյալ» նշում է, որ իր «ժամանակն ընդհանրապես Թիֆլիսումը հայերեն խոսքը շատ սակավ գաղթականների սեփականությունն էր, ռուսերենը նոր-նոր սկսել էր գործածական դառնալ բարձր շրջաններում, այսինքն այն դասակարգերի մեջ, որոնց որդիքը գիմնազիական էին, իսկ մնացյալ տեղերը վրացերենն էր թագավորում»: Նշված է նաև «Սոմխեթ (ուղիղ՝ Սոմխիթ—Լ. Մ.-Բ.) գավառի Թոնեթ կոչված» գյուղը:

«Հուշերի» ա. մասի ԿԵ գլուխը ամբողջապես նվիրված է «լեզգիների տեր՝ Իմամ Շամիլի առաջին նայիր (նախարար, խորհրդական) Հաջի-Մուրատ անհաղթելի հերոսի»։ Շամիլից անջատվելու և փոխարքա Վորոնցովի մոտ Թիֆլիս գալու հանգամանքների պատմությունը: «Էլ չգիտեմ՝ բացառապես Հաջի-Մուրատի պատվի համա՞ր էր, թե այլ նպատակով՝ մի կյուրակի օր ամբողջ Թիֆլիսը հավաքեց դաբախի (ուղիղ՝ Դաբաղխանի—Լ. Մ.-Բ.) հրապարակը»:

Այս վիպասանը հաղորդում է տվյալներ Հաջի-Մուրատի ճանապարհորդության մասին Վրաստանում:

«Զգիտեմ, քանի ժամանակ մնաց Թիֆլիսում Հաջի-Մուրատը:

Նա իրավունք է ստանում իշխան Վորոնցովից ճանապարհորդել Թիֆլիսի շրջակայքը:

Գնում է Կախեթ—Թելավ, Սղնախ, Զաքաթալա, դիտում է Կովկասի սարերի ճանապարհները, իմանում է սահմանապահ զորքերի որքանությունն ու ճանապարհն ուղղում է դեպի Նուխի» և այնտեղից իր հայրենիքը:

Ոչ պակաս հետաքրքիր են վիպասանի հաղորդած տեղեկությունները Շամիլի ներխուժման մասին Վրաստանի սահմանները, Թիֆլիսին սպառնալու հանգամանքների առնչությամբ.

«Լսվեցավ, որ Շամիլը Թելավին տիրել է և մտադիր է գալ Թիֆլիսի վերա...»

Թիֆլիսում մի քանի հարյուր զինվորներ էին մնացել միայն պահակության պետք գալու:

Շամիրին երկյուղ ազդելու խելացի նպատակով այդ սա-
կավաթիվ զինվորներին ամեն օր վարժեցնում էին Թիֆլիսի
Հյուսիսային կողմը՝ Մախաթի սարի ստորոտի դաշտավայ-
րում:

Ողջ դաշտի վերա վրաններ էին տնկված՝ լեզգուն ցույց
տալու, թե զորքը բանակած է Թիֆլիսում:

Բայց լեզգին չի խաբվում. հանդգնությունը ծայրահեղու-
թյան են հասցրել, տասնյակ լեզգիներ հրադինված՝ օրով-ցե-
րելով, արձակ-համարձակ դուրս են գալիս Մախաթի սարի
հետևից և ձիանքը բշկով, անվախ անցուղարձ անում վրան-
ների մոտերքով:

Համարելով լեզգիների այս վարմունքը մի տեսակ «նախա-
տինք», Թիֆլիսի «քաղաքացիք», մասնավորապես «համբարն
ինքնաբուխ յուր պատրաստականությունն է հայտնում ան-
ձամբ քաղաքը պաշտպանելու»: Նրան միանում է և ազնվակա-
նությունը: «Ահա փակվեցան խանութները, ձեռքին զենք
բռնել կարացող սրատանուց սկսած մինչև 50, 60 տարեկան
ծերունիքը բոլորեքյան զենք առան»: Դեպի «Մախաթի սարի»
ստորոտը ուղղվողները գնացին. «այնքան երկար էր, որ մի
ժամ էր տևում»:

Զենք առած քաղաքացիներն ունեին «իրանց զորավարներն
ու զորապետները»: Մինչդեռ «վրաց իշխանազուները թավշից
բուլաջահրով շքեղ զարդարված, ոսկեհուռն զենքերը կապած,
շատերը միջնադարյան ասպետների երկաթի թելից հյուսված
զրահները հագին, երկաթի սաղավարտը գլխներին, սանձակո-
տոր զարդարուն նծույգների վերա հեծած, բաց սրերը ուսերին
շողացնելով, սպաների դեր էին կատարում, տասնապետները,
հիսնապետները, հարյուրապետներն ու հազարապետները ճա-
նաչում էին իրանց անձնազոհ հոժարակամ զինվորներին,
սրանք իրանց զինավառություն երկրորդ օրվանից փորձառու
զինվորներ էին արդեն՝ պատրաստ միանգամայն արյունով
պաշտպանելու յուրյանց ծննդավայր Թիֆլիսը»:

Եվ պարզ է, թե ինչու «Թիֆլիսեցոց այս ընդհանուր ոգևո-
րությունը Շամիրի մեջքը կոտրեց»:

Շամիրի նահանջի առթիվ հեղինակը տալիս է հետևյալ
պատճառաբանությունը.

«Լսվեցա՛վ, որ երբ յուր լրտեսները հայտնել են Շամիրին թիֆլիսեցոց զինավառությունը, նա, իբր թե, ասել է՝ իգիթ թիֆլիսեցիներին եմ բաշխում Թելավը. գնանք, բաշվենք, նամարդություն է հայրենիքի համար դուխները ետ դրած ազնիվ ժողովրդի խաղաղությունը վրդովել: Ոմանք խոսում էին, իբր թե Շամիրն ասել է՝ ով կամենում է գլուխը Թիֆլիսումը թողնել, թող գնա. երբ մարդ ինքն է իր տան պաշտպանության հոգսը բաշում, այնտեղ թշնամին հաջողություն չի ունենալ»:

Այս տողերին վիպասանը կցում է այսպիսի եզրակացություն. «Իհարկե, այս ամենը թուուցիկ լուրեր էին: Ըշմարտությունն այս է, որ Շամիրը լսում է թիֆլիսեցոց պատրաստություններն ու գլուխ առնում բաշվում յուր սարերը»:

Վիպասանն իրավացիորեն ընդգծում է ներսիսյան դպրոցի շենքի անհարմար տեղում կառուցելը, քանի որ այն «իբրև դպրոցական շինություն, միանգամայն անհամապատասխան է. ոչ օդ ունի, ոչ երեսաներին խաղալու բակ ունի, ոչ բավականաչափ լույս կա մեջը և ոչ հնար է լինում Մուխրանսկու խանութներում զետեղված դարբնոցների կռանահարությունից խոսելու կամ լսելու»: Իսկ Շանշյանցը «չգիտեր, որ մի քանի տարուց հետո ներսիսյան դպրոցի շորս կրղմը բազար է դառնալու»: «Ահա այս և ուրիշ բաղմատեսակ անհարմարություններն էին,— գրում է Պ. Պոռշյանը,— որոնք ստիպեցին ներսիսին տեղափոխել դպրոցն յուր հին շինությունից փոշտի տները, ուր կա մինչև այսօր»:

Այնտեղ, որտեղ «1851 թվին» հիմք դրվեց «Վորոնցովի կամրջի»-ն, ըստ վիպասանի. «առաջ հասարակ փայտյա նեղ կամուրջ էին կապում, ներկա կամրջից բավական վեր և հարկավորվում էր երբեմն տարին երկու-երեք անգամ փոխել, գետը վարարում, սրբում, տանում էր»:

Հենց այս՝ Կուր գետն էր ընկել և խեղդվել Քեդիսուդյան-Քեդիսուդովը՝ հոտած մսի վաճառման կապակցությամբ տեղի ունեցած իրարանցումի պահին, երբ «համբարությունը քանդել էր սպանդանոցը»:

Սակայն. «միայն միսն ու դարբինները չէին մեր դասերը խանգարում,— շարունակում է վիպասանը,— օրական նոր-նոր աղմուկներ միշտ անպակաս էին լինում»:

Վիպասանը Թիֆլիսում հաճախ ականատես է եղել աթրմայի և մուշտակովի (բռնցքամարտի)։

«Սաթամուռի մի ծայրը՝ Թամամշյանցի բարվանսարայի մոտն էր, մյուսը հասել էր այժմյան Աղեքսանդրյան կոչված ալգին։ Վանքի փոքր փողոցից շուրջ բոլորած, ներկա փողոտի փողոցները, բոլոր տեղերը մուշտակով էր. պատառոտած գլուխներ, արյունաշաղախ երեսներ, դուրս թափված աչքեր ամեն տեղ տեսնվում էին. քարեր է, որ ամեն կողմից դալիս են կարկտի պես, լուսամուտների ասրակիք են, որ փշրտվում են»։

Ջուր աղգագրական բնույթի պատկերներից ընթերցողի ուշադրությունն է գրավում Աղա-Մահմադ-խանի 1795 թվականի սեպտեմբերի 11-ին Թիֆլիսն ավերելու առթիվ հորինված «Ղեկնորա» կոչված ծաղրախաղը, որը կատարվում էր Թիֆլիսում տարվա որոշ ժամանակ՝ բարեկենդանին։ Այս «խաղը», ինչպես հայտնի է, օգտագործված է մեր շնորհալի նկարիչների՝ Ա. Շամշինյանի և Գ. Շարբաբջյանի կողմից¹։ Այն նկարագրությունը, որը առկա է Պ. Պոռշյանի մոտ, հնարավորություն է տալիս ընթերցողին գաղափար կազմել «Ղեկնորայի» մասին։

«Միայն Ղեկնորան էր, որ մի առանձին հաճություն էր պատճառում ներսիսյան դպրոցի սաներին...

Շատ ժամանակ չէ, որ Ղեկնորայի սովորությունը վերացել է, բայց հին ժամանակն ավելի փառավոր էին կատարում։

Ղեկները ներկայացնում էին հարսն ու փեսա. թուրքի խաների կամ փաշաների հարսանիքներն էին ծաղրվում։

Նստում էր չալմեն գլխին փաթաթած ղեկն փեսան իշի կամ ուղտի վերա և խրկայն փայտը, ծխամորճի փոխարեն բերանին բռնած, ուրախ-ուրախ ժպտում էր յուր կողքիցը գնացող, նույնպես իշի, կամ ուղտի, կամ լղար մատակ ձիու վերա բազմած յուր հարսին։

Պատահում էր, որ միայն հարսի երեսին էր դիմակ լինում. այդ ժամանակ մրով սևացրած փեսան արարի հոգևորական էր

¹ Առաջինն այժմ գտնվում է Թիֆլիսի քաղաքային թանգարանում, իսկ երկրորդը էջմիածնի հոգևոր ճեմարանի դահլիճում։

ներկայացնում. երբեմն երկուսն էլ դիմակավորված էին լինում:

Նրանք ոչ ոք էին, իհարկե, եթե ոչ Թիֆլիսի կինտոնները, որոնք դափ ու զուռնան ածելով, բազմամարդ փողոցներ շրջելով կամ հարուստ իշխանների լուսամուտները թափելով, փող էին ժողովում մեծ պահոց երկուշաբթի օրը:

Երբեմն նրանց ուղեկցում էր և հանրահռչակ ձևոնածու Աբելն յուր փայտե ոտքերովը¹:

Ինչ վերաբերում է Աբելին², նրա բնութագրումը տրված է այսպես.

«Աբելը մի հյուսն էր, որ երեք-չորս սաժեն բարձրությամբ ձողերի ծայրը բարձրացած, լոք-լոք անելով, շրջում էր հանդիսավոր օրերին բաղաքի կենտրոններում, որոնցից մի գլխավոր կենդրոնը Ներսիսյան դպրոցն էր»:

Բացի այս ամենից, Պ. Պոռշյանի ուշադրությունը գրավել էր մի շնեք, որը հետաքրքրություն էր ներկայացնում իբրև հնագիտական օբյեկտ:

«Վանքի ավագ եկեղեցու հյուսիսային կողմը մի բոլորածեբրդանման սենյակ մինչև այսօր ևս անխնամ ընկած է: Հնումն այն սենյակը կոչվում էր Մինաս եպիսկոպոսի բուրգ կամ բուրջ», նույնիսկ «քյոշկ»։ «Այդ բրգում էր ապրում զառամյալ կարճահասակ Մինաս արքեպիսկոպոսը»:

Վիպասանը պատմում է, թե ինչպես նրան վիճակվել է այդ բրգում կամ «քյոշկում» ապաստան գտնել Թիֆլիս եկած պահին, այն էլ «վանքի քահանա ու կոնսիստորի անդամ...» «Սատանի չաբուճ» մականվանյալ» տեր-Մկրտչի կարգադրությամբ:

«Սենյակ, ի՞նչ սենյակ», — բացականչում է Պ. Պոռշյանը, և ապա շարունակում. «Սենյակ չէր այն, այլ դեերի խորհրդարան: Ես ինձ վրա զարմացել եմ, ինչպես աներկյուղ ներս մտա: Էսօր էլ զարգանդում եմ, երբ մոտիցն անց եմ կենում: Մի բոլորակ քյոշկ (բուրգ) էր այն՝ բլբլված առաստաղով. պատերի մեջը համարյա բոլորը դատարկ էր, դարակներով բա-

¹ Ղենոբայի մասին տես՝ Я. Г. Вейденбаум. Кееноба, „Тифл. Листок“, 1899, №5, или. приб., նկարով:

² Սրան հիշում է և Գ. Սունդուկյանն իր «Նաթաբալա» պիեսում (III,

ժանաժ՝ անոթեղեններ պահելու համար, իսկ դրսից ամրացած էին այդ դարակները դռնակներով:

Սենյակի դուռը մտար թե չէ, պարտական ես աջ ծովել, թե չէ, հենց որ սխալվեցիր, ոտդ ձախ կոխեցիր, կյանքիդ բարեմնա ասա. գշիրաձև սանդուղքներով կունդիկ-կունդիկ անելով՝ մինչև անդունդը կգլորվես ու ջրի մեջ կլողաս:

Չէ՞ որ Մինաս եպիսկոպոսի սենյակը Կուր գետի ափին է շինած և հիմքը գետի մակերևույթից՝ մի քանի սաժեն խոր է դրած, որ չլինի թե գիժ Կուրն իր վարարած ժամանակ սրբի ու մինչև Սալիան մին տանի:

էս ծակ ու ծովերը, էս փոս ու դարակներն են, որ քամին մտած ժամանակ սաղ ու դուռնայի ձայն են հանում»:

Նկարագրած բուրգ կամ բուրջ, նույնիսկ քոշկը, այն պարիսպի մասն էր, որը կառուցվել էր XVII դարում իբրև քաղաքի պատնեշ հյուսիսից:

Պ. Պոռշյանի «Հուշիկների» Բ մասը և մի շարք հոդվածներ, ինչպիսիք են «Հայոց թատրոնի սկզբնավորությունը Թիֆլիսում», «Միհրդատ Ամրիկյանց», «Մի անհայտ թատրոնական գործիչ», «Միքայել Պատկանյան» և այլն շատ արժեքավոր նյութեր են պարունակում Թիֆլիսի հայոց թատրոնի պատմության և թատրոնական գործիչների կենսագրության համար, որը ըստ արժանվույն օգտագործում են հայ թատերագետները, ուստի և այս նյութերի քննության վրա մենք այստեղ կանդ չենք առնում:

Մենք կուղեինք միմիայն ծանրանալ այն բնութագրի վրա, որը Պ. Պոռշյանը տալիս է Թիֆլիսի հայության մեջ ծագած անտափոնիդմին՝ այսպես կոչված բնիկների և նորեկների միջև:

«Թիֆլիսեցի հարգելի բնիկները, — գրում է Պ. Պոռշյանը, — մի տեսակ ինքնաբավական հպարտությամբ բիթ էին ցցում իրանց հայաբարբառ եղբայրակիցների հասցեին: Այլապես, ինչպե՞ս կարելի էր, չէ՞ որ իրանք մոֆալաֆներ (քաղաքացիք) են: Նույնիսկ ամբողջ Հավլաբարը՝ Թիֆլիսի մեծագիր արվարձանը, ուր կես դարից հետո բնակվում էին Երևանից և ուրիշ կողմերից գաղթած հայերն ու հայերեն էին խոսում, դարձյալ արհամարհելի էր Կուր գետի աջակողմյան երջանիկների աչքում:

Հավիարարցի շանճրագ, լսում էր գետի ձախակողմյան բնակիչ Թիֆլիսի խորթ զավակ և արտաքուստ ապուշական անտարբերությամբ, իսկ ներքուստ՝ հոգեկան վիրավորանքով լսում և համբերում»:

Ահա այս, այսպես կոչված, բնիկների կամ մոքալարների և այսպես կոչված նորեկների կամ ախալմոսուլիների միջև էր, որ տարածայնությունը հետզհետե խորանում էր և 1865 թ. պայթեց իբրև համբարների ապստամբություն:

Այս կապակցությամբ հատուկ ուշադրության արժանի է Պերճ Պոռչյանի հուշերը Թիֆլիսի համբարների 1865 թ. հուլիսյան ապստամբության մասին: Սա հազվագյուտ փաստաթուղթ է այդ ապստամբության շուրջը, գրեթե միակը հայ գրականության մեջ, որի վրա արժեք մանրամասն կանգ առնել¹:

«1865 թվականն է, ամառն է, ես վերադարձած Ղարաբաղից, մի հարգելի բնտանիքի հետ Թիֆլիզամերձ Մավկիս գյուղում ամառային դով օդ եմ ծծում: Պ. Հ.-ի աղջիկների հետ հայերեն եմ պարապում:

Տան դուրս պատվելին, գործով զբաղված, միայն կյուրակի օրերն է կարողանում բնտանիքին այցելել: Գալիս է շաբաթ երեկոները և երկուշաբթի առավոտը վերադառնում քաղաք:

Երկուշաբթի է. պ. Հ.-ն արդեն գնացել է: Հանկարծ, մի ժամից, գյուղացիների կողմից լուր է հասնում, թե Թիֆլիսն արյունը տանում է, թե երեկ՝ կյուրակի օրը՝ համբարը ոտքի է ելել ու քաղաքագլխի տունը կործանել, թե քաղաքային վարչության բնակավայրը վտանգի մեջ է, և բոլոր խանութները փակված են ու բազմությունն առանց հացի է մնացել և այլն, և այլն:

Անմիջապես տանտիրուհու խնդրանք, ձեռավորվում եմ և շտապում Թիֆլիս՝ տան գլխի որպիսությունից և քաղաքային վարչատեղից լուր հասցնելու:

Տիկինն իրավունք ուներ անհանգստանալու, քաղաքային վարչությունն իրանց սեփական տանն էր վարձով զետեղված. իսկ ամուսինը մերձավոր բարեկամ էր քաղաքագլխին:

— Որքան կարող ես, շուտ վերադարձիր, — աղաչում է

¹ Պերճ Պոռչյան, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1954, էջ 583—590:

տիկինը, — ձիուդ մի՛ խնայիր, ժամ առաջ ինձ լուր հասցրու։
Թեկուզ դրաստը շունչը փչի, մեկին երկու պատրաստ եմ վճա-
րելու, միայն թե սիրտս հանգստանար։

Քար ու ձոր չեմ նայում, արշավելով սլանում եմ լեռնա-
դաշտն ի վայր։ Մեր ամառանոցի հեռավորությունը քաղաքից
յոթ վերստ է հաշվում, բայց ես, հակառակ տված խոստմանս,
երեք վերստ տալածություն հաղիվ անցած՝ ստիպվում եմ
ձիուս սանձը ձգել ու կանգնացնել։ Քաջասուաց երիվարս չէր
մեղավորը, ճանապարհին շաղ անցած անսովոր իրերն էին
ոտքս ծանրացնում։

Սկզբումն ուշք չդարձրի շապկանման մի սպիտակ կտավ-
քի։ Թեկուզ անպետք փալաս չլինի, ողջ շապիկ լինի, մտածեցի
ես, գեղջուկի մեկը, երեկ, կռան տակից վայր է ձգել, կորցրել,
հագնողս ո՞վ է, արժե՞ միթե հարգելի տիկնոջ աչքը ջուր
կտրեցնել։ Ձեռքս թափ տվի ու անցա։ — Վա՛հ, ի՞նչ է այս,
քսանաչափ քայլից դարձյալ ստիպվեցա գնացքս ծանրացնել՝
աչք տնկելով ճանապարհից դուրս ընկած մի պատվական նոր
գորգի երկու ձեռնաչափ կտորի վրա։

Դարձյալ անուշադրություն. փուլթ չէ, ում պետք է, թո՛ղ
նա վերցնի. բայց արի տես, որ մի քանի քայլից, շմամ ու
շվարած, ուսերս վեր քաշեցի ու ձիուց իջա։

Մեղադրելու չէի. այս անգամ դետնին ցրիվ անցած իրերի
կտորները սրտիս մոտ առարկաներ էին։ Շուտ-շուտ կռանում,
վերցնում, սարսափում ու ափսոսալի թառաչ եմ հոգվույս խոր-
քից դուրս վիժում։ Գիտե՞ք ինչ։ Մագաղաթյա հայ ձեռագիր
հնությունների պատառներ, կապույտ հնադարյան հաստ թղթի
վրա գրած ձեռագիրներ և, ով զարմանք, իմ սեփական ձեռ-
քով արտագրված մի պարոնի «քաղցրավենիք շինելու» ձեռ-
նարկի թերթեր էին հավաքածներս։

Այլևս կասկածելու կարիք չմնաց. քաղցրավենու սիրահար
վարպետը բնակվում էր քաղաքագլուխ Գալուստ Շերմաղան-
յանցի տանը, անկասկած էր, ուրեմն, որ քաղաքագլխի տունն
ավերված ու նրա թանկագին հազվագյուտ մատենադարանը
ցրիվ տված է։

Քաղաքագլուխ Գալուստ Շերմաղանյանի մատենադարա-

նի հռչակը հայտնի էր հնության սիրահար բոլոր հայ և օտարագրի բանասերներին, առավելապես հայերին:

Սկսած հեռավոր Պարսկաստանից, շարունակած ուսական սահմանում գտնված մեծահռչակ Տաթևի, Որոտնա և այլ վանքերից ու յոթը պորտով տերտերական տներից, Գալուստը ժողովել էր բոլոր պիտանի ձեռագիրներն և արժանավոր հնությունները, որոնց թիվը 1000-ների էր հասնում: Կային ասողներ, թե տեսել են Գալուստի մատենադարանի հնությունների շարքում Մահմեդի կնքով վավերացրած, մեծ մարգարեի ինքնաձեռագիր հայերին շնորհած արտոնագիրը, որով Իսլամի օրինատուն աղատում է ի բնե հլու-հնազանդ հայ ազգին մոե-ռանդ մահմեդականների բռնակալությունից, իսկ հակառակ վարվողներին խելացի կրոնապետը սպառնում է զրկել գրախտի հանգերձյալ քառասնական մշտադալար հուրի-փարիններից:

Զգիտեմ, արևելյան չափազանցության արդյունք էր, թե ճշմարտապատում եղելություն. ասում էին, իբր թե Գալուստի ճանգն էր ընկել և Մահմեդի անձեռագործ պատկերը, որ, իբր, Իսլամի օրինագիրը զիջանելով իրան սիրողների թախանձանքին, կտավն երեսին էր քաշել ու ինքնին նկարված պատկերն ընծայել յուր ջերմեռանդ զինակիցներին:

Այնուհետև իմ աչքումս նշանակութուն չունեցան ճանապարհին թափթփոտված բարձերի ու անկողինների փետուրներն ու բուրդ ու բամբակեղենը, որոնք, անշուշտ, հետաքրքիր գյուղացիների ձեռքով լեռը բարձրացել և իբրև անպետք շարտվել էին:

Ես միայն ցավում, ժողովում և թաշկինակիս մեջ տեղավորում էի մեր երանաշնորհ նախնիքների հավիտյանս կորցրած մտավոր ծնունդների կտորտանքները:

Բայց, ախար, ո՞ր մեկի ետևիցն ընկնեի, քանի մոտենում էի Թիֆլիսին, այնքան շատանում և բազմազան էին դառնում ոտնատակ տված ձեռագրների պատռուտքները, ուստի և ձեռքս թափ տվի ու ապուշի մտամոլորությամբ, ձիուս սանձը թույլ թողած՝ կարգում և, իբր թե ուսումնասիրում էի ձեռք բերածս թանկագին հնությունները. սակայն ձեր մեղացը տեր լինեմ, թե զլուսս բան մտած լինի: Զուր էլ մոռացել էի,

որ ինձ վրա սուրբ պարտականություն էր դրված՝ թուղունի թեկերով Թիֆլիս գնալու և վերադառնալու:

Ժամը 11-ն էր և ես հագիվ թե հասա պ. Հ.-ի տունը և ձիս ծառային հանձնելով՝ վեր բարձրացա պարոնի մոտ:

Փառք աստուծո, պ. Հ.-ն ողջ-առողջ, յուր առանձնասենյակում պառապում էր. քաղաքային վարչությունն անվնաս և անձեռնմխելի էր մնացել: Տանտիրոջ ասությունք, խուժանի նպատակը ոչ քաղաքային վարչությունը, այլ քաղաքագլխին հարվածելն է եղել, և արել են:

Ժողովրդի հասկացողությամբ, մասնավորապես քաղաքագլխի հաճությամբ, գուցե և նախաձեռնությամբ ու դրդմամբ է վարգավորված եղել քաղաքում ներմուծելիք նոր օրինական փոփոխությունները:

Շերմաղանյանցն, իբր թե, արդեն ստորագրել, ընդունել և շուտով գործադրելու է նոր կարգերը, ավելանում են, որպես թե, նոր-նոր հարկեր, վճարքներ ու պարտավորություններ. ո՛չ միայն ձիանոցից, ո՛չ միայն շներից ու կատուններից, հարկեր կան հատկացրած, իբր թե, դեպի փողոց բացվող պատուհանների վրա:

Այսպիսի այլևայլ, ճիշտ ու անճիշտ մեղադրանքներ, (հայտնի չէ, ումնից սկիզբն էին առել, ամբոխի ականջին արձձի ծանրությամբ հալվել և քորոցի մեծության լուրերը լեռնաշափ մեծացել ու դյուրամար կայծից հրդեհ բորբոքելու առիթ տվել:

Ոչ ոք չէր կարող դրական մի բան ասել, նույնիսկ խոռվարարներից գլխավորներին ևս եթե հարցնելու լինեինք, նրանք էլ չէին կարող բացատրել իրանց արած անկարգությունների պատճառը:

Հերիք էր, որ համբարի ուստաբաշխներից երկուսը համոզվեին, թե քաղաքագլուխը քաղաքացիների շահերին դավաճանել էր, և, ահա, ձեռնաշափ փոքրիկ խմորը կանե՞ր¹, կուռչեր, կգար, կհասունանար և տաշտի եղրներով դուրս կթափվեր:

Հենց այդպես էլ եղել է:

Այլապես էլ սպասելու չէր. համբարությունը կազմում էր

¹ Այս բառը բաց է թողնված 1954 թ. հրատարակության մեջ (էջ 586):

այն ժամանակ Թիֆլիսի ամենաուժեղ տարրը, համքարությունը հաստահիմն պատվար ու քաջ պաշտպան էր քաղաքի ստորին դասակարգի համար: Շատ բնական երևույթ, անձնապաշտպանության սուրբ սկզբունքն էր այդ, և համքարն իր այդ բարոյական պարտքը կատարելով՝ իրան էր պաշտպանում:

Ըստ իսկության, Թիֆլիսի մեջ այն ժամանակ քիչ էին անգործ թափառաշրջիկները, սկսած բաղմաթիվ անչափահաս որբերի տեւ այրի մորից, մինչև արհեստավորների ամենահարուստը՝ բողոքեյան համքարությանն էին պատկանում և նրանցից յուրաքանչյուրը դառը քրտինքով իր հացը ճարում էր: Ի՞նչ մեղավոր էր, ուրեմն, ամբոխը, որ գլխավորապես համքարության ներկայացուցիչներն էին, եթե նրանք միացած ուժով կամենային իրանց շահերը ոտնատակ տվողից վրեժխնդիր լինել:

Համքարին հասկացրել էին, թե քաղաքագլուխը քո թշնամին է, և նա անկարող լինելով թափանցել դործի ներքին պատճառի մինչև խորքը, հույսն չուր ուժի վրա դրած՝ փութացել էր կինչի օրենքով դատաստան կատարել:

Նվ, իհարկե, ի՞նչ կարող էր համքարը հասու լինել Շերմաղանյանցի դեմ լարված դավադրություններին, որոնք ոչ այլ ինչ էին, ինչպես վերջը խեղացի մարդիկը մեկնեցին, եթե ոչ մոխալաֆուքյան և ախալմոսուլուքյան կնճաղից մրցումը:

Այն օրվա Թիֆլիսը բաղկացած էր երկու գլխավոր տարրերից՝ բնիկներից և նորեկներից: Հաշվի մեջ չեն առնված, անշուշտ, ծառայող և աղնվական դասակարգերը, որոնք քաղաքի գիծ մոզիներն էին և մասը շունեին վճարելիք քաղաքային հարկերին, ըստ առածին՝ «մեջ ուտում էին, ափափ՝ ման գալիս»:

Բնիկ կամ բնիկացած թիֆլիսեցին փրուն գոռողությամբ ալհամարհում էր նորեկ, կամ ախալմոսուլի եկվորներին, և ամեն դեպքում նրան ճնշում ու ծաղրում: Քաղաքային վարչություն, քաղաքի վրա բարձր հոգատարություն բնիկների կամ մոխալաֆների ձեռքն էր, ձայն ու իրավունք սրանց սեպհադանությունն էր, իսկ ախալմոսուլիքը միայն ստորագրյալներ և անձայններ էին: Բայց, ախար, փոխվել էր ժամանակը. մի օր,

գուցե, մինչ նորեկների թիվը սակավ էր, այդպես էր պատշաճ, իսկ հիմի վերջիններս աճել և բնակալել են և իրանց անբռնաբարելի իրավունքն են համարում իրանց անդրանիկ եղբայրների հետ, միասին կրել քաղաքային ծանրության և իրավունքի լուծն ու արտոնությունը:

Մինչև այդ օրը նորեկի մտքով չէր անցել, թե ինքը կարժանանար քաղաքագլխության պատվին, իսկ այսօր Շերմազանյանցն առաջինը քանդեց տարբերությունը հաստատուն պահող պատենչը և ախարմոսունների ձեռքով քաղաքագլուխ դարձավ:

Միակ իզմիրյան Գրիգորն էր մոխալաֆների ներկայացուցիչ, որ ոտնատակ տվեց յուր քայֆայի բռնապետության իրավունքը, և մնացած իրան սիրող համբարի հետ, Գալուստ Շերմազանյանցին բարձրացրեց մոխալաֆների անկասպտելի սեպհականությունը համարված քաղաքագլխության գահը:

Այսօր, ահա, նույն ժողովուրդն էր, որ թելադրված, գուցե, և կաշառված մոխալաֆներից՝ գլխի վրա կործանեց «իր տակը փորող» Շերմազանյանցին և քանդեց յուր տունը քանդողի տունը:

— Երեկ, կյուրակի օրը, — ասաց ինձ պ. Հ-ն, — մինչ ես ու դու Մավկիսի մացառուտների ղովարար օդն էինք ծծում, Ուձոյի ականակիտ աղբրի ջուրն էինք խմում, համբարը շտապել է խմել Գալուստ Շերմազանյանցի արյունը:

Մաքուր էր ժողովրդի սիրտը, նրանք աստվածային արդար վրեժխնդրության արդար զենքն էին համարում նրանց գլուխը և գնացել էին իրանց թշնամու հետ հաշիվ վերջացնելու:

Ուղի՞ղ, թե սխալ էր ամբոխի արած քայլը, այդքանը նա չէր դատում:

Դիտե՛ք՝ ինչ էր արել համբարը: Մի ամբողջ շաբաթ նա, ինչպես ասում են, երկու շաբաթվան ուտեստի ու պաշարի նախապատրաստություն էր տեսել, ամեն մի ժողովրդի անդամի տուն երկու շաբաթվան թխած հաց ունեւ մթերած:

Գալիս է կյուրակեն և հանկարծ բոլոր խանութները կողոպտվում են ու խուժանն առանց ոչ մի զենքի, յուր բազուկների ջլոտություն իրան զենք արած, գրոհ է տալիս զեպի

Շերմազանյանցի տունը՝ նրան ալյուր-աղցան անելու և ջրն-
ջելու:

Շատ էր ուշացել խելացի Շերմազանյանցը, ապա թե ոչ,
նա և յուր գլուխը կաղատեր, և յուր ընտանիքն ու ստացված-
քը կփրկեր վերահաս վտանգից:

Ավա՛ղ, նա յուր բնատուր խորագիտությամբ միայն անձն
աղատելու հնարը գտավ, իսկ ընտանիքին թողեց բաղդի խա-
ղալիք և յուր ստացվածքը մատնեց անփրկելի կորստի. թուրքի
կնոջ չարսավի մեջ փաթաթվեց և իրան ձգեց ժամանակի աղ-
ղեցիկ հարուստ Աղ. Թայրյանցի տունը:

Երևի, շատ լավ էր ճանաչում Գալուստը համբարի վե-
հանձնությունը, որ ընտանիքին կրակի մեջ բարձի թողի անե-
լու համար, իրան նախատողներին պատրաստել է. — կարմիր
կոճին ևս էի, որ մեջտեղից դուրս պրծա, ափսոսելին, իմ ձե-
ռագիր հնություններն են, որ կոչնչանան, իսկ ընտանիքս
բիթը չի արյունոտվիլ:

Գալուստի խոսքը կատարվեց, կնոջ պատվին նախանձա-
խնդիր համբարը պատկառանքը ճանապարհ տվեց քաղա-
քագլխի ընտանիքին, մեկ-մեկ՝ կնոջն, աղջկանը, տնեցիներին,
ծառա ու աղախիններին և տանը պատսպարված բոլոր իրա-
վորներին և օտարներին նախապես միջոց տվեց հեռանալու,
ապա թե թափեց յուր սրտի մաղձը Շերմազանյանցի սեպհա-
կանության վրա:

Մի հատ ասեղ, կոպեկի արժեք ունեցող մի շնչին իր
չվերցրեց, չլուրացրեց համբարը, բայց և չթողեց ոչինչ, որ
չոչնչացրեց:

Մահվան պատժով սպառնալիք էր կարգացված ամբոխի
այն ցած ու անպատիվ շահասեր անդամին, որ կհանդգներ մի
բան գաղելու: Նրանք եկել էին ոչ ավար տալու, այլ ավերե-
լու, քանդելու և ոչնչացնելու, և այս այն դեպքում, եթե ճո-
ղոպրեր քաղաքագլուխը վրեժխնդրության դատաստանից:
Վճռված էր՝ Գալուստին սպանելուց հետո՝ ոչ մի ծղոտի չդիպ-
չել:

— Տղե՛ք, որսը ձեռքներիցս թռավ, — ամեն ծակ ու ծուկ
հետախուզելուց հետո, ձայն ձայնի էին տվել ամենքն իրարու.
քանդեցե՛ք, քարատակեցե՛ք, փշրտեցե՛ք ու խորտակեցե՛ք:

Գծին մի հուշտն էլ բավական է, և այդ բոսկին ամբողջ ամբոխն էր դժված:

Մրջունի քարավանների նման հարձակում են գործում նրանք, և չի տեսում կես ժամ, տան վերնահարկը ավերվում է: Պարսկաստանից բերած թանկագին գորգեր, տան բոլոր իրենդենները, կահկարասիք, անկողին, կանացի զարդեր ծվիկ-ծվիկ ծվատվում են, բախն ու փողոցը փալասներով լցվում է. օդը մեղմ է լինում, բայց բարձերի փետուրներն անսպասան օդում վերև են բարձրանում. և ի՞նչ զարմանք, եթե պատավածների ծայրը մանուկների և ամբոխի հետ մասը չունեցող հետաքրքիրների ձեռքով քաղաքի սահմաններից այն կողմը կանցներ. սկզբումն ամենքը կհավաքեին, բայց երբ կհավաստիանային, թե ոչնչի պիտանացու չեն լինելու, մի փողոցից մյուս փողոցում կշարտեին. ըստ որում, այնպես չէին մանրված ու փշրտված, որ հնարավորութուն լիներ պետք ածելու:

Ավա՛ղ, միայն ես չեմ եղել, որ արտասովաառն աչքերով մի կապոց լիքը հին ձեռագրի կտորտանք եմ ժողովել, ինձ նման շատերը՝ հաղվագյուտ սրբությունները ժողովելու համար՝ մատներ ու ձեռքերը հողոտել ու փռոտել են, բայց և նրանք ինձ պես ստիպված են եղել լալով թափելու և, ինչպես նվիրական նշխարք, մի կտոր ծոցներումը պահելու:

Երեք տարի իմ արկղում երկաթագիր մագաղաթի մի անվերժանելի՝ կտոր մնում էր: Ժամանակը սրտիս վերքը բժշկեց, և խեղճ հնությունը, իր պատիվը կորցրած, ոչնչության մատնվեց:

Դեռ մի գիշեր էր լուսացել չարաղետ պատահարից հետո, և արդեն բաղմաթիվ առասպելներ հորինվել էին Շերմաղանյանցի տան ու տեղի վրա:

Ասում էին, իբր թե Գալուստի ամուսինը, երբ տեսնում է, որ ավերիչները քաղաքավարությամբ մոտենում են իրեն և հանելով վրացից թանկագին զարդերը՝ ոտնատակ են տալիս ու փշրտում, ինքը դիտամբ ուշակորույս է լինում, վայր ընկնում վառարանի բաց դռան մոտ և ծոցումն ունեցած թաշկինակի մեջ կապած գոհարեղենը շարտում է վառարանի մոխրի մեջ ու գիշերը գալիս հանում: Պատմում էին, իբր թե կատաղի

¹ Տպված է՝ անվերժանելի:

ամբոխն, երբ ամեն ինչ ոչնչացնում է և սրտի փութը դարձյալ չի կարողանում իջեցնել, կանացի սպիտակեղենն ատամների տակն է առնում, ծամում, ծամծմոտում ու գոշում, — Գալուստի սիրտն էմ ծամում: Մի քանի ստահակ, կապը կտրած ջահելներ, ձողի գլխին ցցած մի կանացի ներքնահագուստ՝ սպտի գլուխն են հանում. բայց ամբոխի ծանրագլուխ ղեկավարները մի-մի ապտակ տալով անողներին, հրամայել են չհանդգնել կանացի պատվի դեմ մեղանշելու:

— Ինքը քաղաքագլուխն է մեր վրեժխնդրության առարկան, ինքը ձեռք չընկալ, նրա սիրտը դադարելու համար՝ նրա շարժական և անշարժ սեպհականությունն ենք ավերում ու փչացնում, իսկ նրա քնտանիքն ընչո՞վ են մեղավոր, նրանք մեր մայր և քույրերն են, — հանդիմանել են ջահելներին մեծերը և իսկույն իջեցրել կտավիքն ու պատռտորել:

Այս ավերածությունները կատարվել էին նախընթաց կյուրակի օրը, իսկ լույս երկուշաբթի, երբ ևս մտա Թիֆլիս, քաղաքում ոչ մի բաց խանութ և ոչ մի ադամորդի չտեսա. եթե Ադամա հարազատ զավակներ չհամարենք թնդանոթածիգ այն ղինվորները, որոնք մի-մի, կամ երկու-երկու թնդանոթ, բերանները դեպի Հավլաբարի կողմը դարձրած, փողոցների բերանում վառ պատրուզքը ձեռքներին, պատրաստ կանգնած էին»:

ԳԵՐՐԻԵԼ ՍՈՒՆԳՈՒԿՅԱՆ
(1825—1912)

Հայ ռեալիստական թատերագրութեան փառք ու պարծանք Գաբրիել Սունդուկյանը հին թիֆլիսեցիների՝ Մկրտիչ (Նիկիտա) Սունդուկյանի և նրա կնոջ Թինաթին Ռոտինյանի զավակն էր, ծնված Թիֆլիսում 1825 թվականին:

Ապագա մեծ թատերագիրը իր ամբողջ կյանքը համարյա թե Թիֆլիսումն է անցկացրել: Այստեղ Խ. Աբովյանի պանսիոնում ստացավ նախնական կրթութունը և ապա միջնակարգ ուսումը՝ այսպես կոչված «բարեօնունդ զավակների դպրոցում», որը առաջին արական գիմնազիայի վերածվեց (այժմյան 1-ին միջնակարգ դպրոցը Թբիլիսիում):

Բացառությամբ են կազմում միմիայն ուսանողական տարիները (1846—1850), երբ նա ուսանում էր Պետերբուրգի համալսարանում, ինչպես և ծառայութեան սկզբնական մի շրջան (1853—1858), երբ նա, իբրև «աքսորյալ», պաշտոնավարում էր Դերբենտում:

Գրական առաջինը իջնելով 1863 թվականին, Գ. Սունդուկյանը կես դար շարունակ գործել է Թբիլիսիում՝ սպասավորելով թե հայ և թե վրաց թատրոններին, միաժամանակ շփում ունենալով և սերտ կապ հաստատելով հայ և վրաց կուլտուրայի գործիչների հետ:

Այստեղից պարզ է, որ Գ. Սունդուկյանի ստեղծագործության անաչառ հետադոտողը չի կարող այնպիսի հարցերի կողքովն անցնել, ինչպիսիք են մեծանուն թատերագրի ստեղծագործության առնչությունը վրաստանի, մասնավորապես Թբիլիսիի, և առհասարակ վրաց իրականության հետ:

Գ. Սունդուկյանը, հավանական է, անմիջապես ոչ մի շփում չի ունեցել և չէր էլ կարող ունենալ վրաց կլասիկ գրականության ականավոր ներկայացուցիչ, բանաստեղծ Ալեքսանդր Ճավճավաճեի կամ, ըստ հայկական հորջորջման,

Ճավճավազի (1786—1846) հետ, որն իր փեսա Ա. Գրիբոեդովի հետ միասին մեծ ծառայություն մատուցեց հայ ժողովրդին պարսից լծից նրա ազատագրման գործում¹։ Ալ. Ճավճավաձեն հորինեց իր սքանչելի՝ «Գեոկչա» բանաստեղծությունը²։

Անկասկած, Գ. Սունդուկյանը դեռևս Թբիլիսիում լսած կլիներ Ալ. Ճավճավաձեի հորինած և լայն ժողովրդականություն ստացած «Լոթինների մոխամբազը» (վրացերեն՝ «Մոխամբազի լաթախուրի»), որ երգվում էր ինչպես հիմնական տեքստով, նույնպես և «հեղինակին չպատկանած վարիանտներով»³։

Հենց նույն 1846 թվականին այս երգի մի վարիանտը լույս է տեսնում Պետերբուրգում այնտեղի համալսարանի պրոֆեսոր վրացագետ Դավիթ Չուբինովի կազմած «Վրացերեն ծաղկաբաղ»-ում⁴, որը ոչ մի կերպ չէր կարող վրիպել Գ. Սունդուկյանի ուշագրությունից։ Այդ երգը նույնությամբ վերահրատարակվում է Դ. Չուբինովի «Ծաղկաբաղ»-ի երկրորդ հրատարակության մեջ՝ Պետերբուրգում 1863 թվին⁵, ինչպես նաև Սկանդար-նովայի «Սալխինո սաղանդարի» երգարանում սկսած 1870 թ. մի շարք հրատարակություններում⁶։

¹ Акты Кавказской Археографической Комиссии, VII, 607, 608, 767—770 etc. Ալ. Եփեցեան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում. մասն ա (1800—1832), Թիֆլիս, 1894, էջ 352—355, 387—389, 394, 407—413 և այլն («Երևանի նահանգում գաղթական հայք տակավին սիրով հիշում են իշխ. Աղեքսանդր Ճավճավաձեի բարի անունը», էջ 355)։ Վ. Պարսամյան, Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 96, 118, 131, 166—167, 171, 187, 215, 225։ Ա. Մաղլակելիձե, Նյուսեր Աղեքսանդր Ճավճավաձեի կենսագրության համար. «Սախտորիո մոմբե» [Պատմության Տեղեկագիր], II, Թբ. 1946, էջ 183—217, 223—224, 260—261։

² Այս բանաստեղծության ոչ լրիվ հայերեն թարգմանությունը՝ «Սևանի ափերին» վերնագրով՝ տես Գեորգ Ասատուր, Մերձարևելքի գրականության պատմություն, Վրաց գրականություն, I, նմուշներ պոեզիայից, Երևան, 1931, էջ 39—40։

³ Նույն տեղում, էջ 41—42։

⁴ „Грузинская хрестоматия.. составленная Д. Чубинковым, ч II. Стихотворения. СПб., 1846, стр. 233—234։

⁵ Նույն տեղում, 1863, էջ 90։

⁶ 1870, էջ 26—29, 1873, էջ 50—53, 1875, էջ 39—42, 1895, էջ 46—49 և այլն։

1869 թվականին Գ. Սունդուկյանն ավարտում է իր «Եվ այլն կամ նոր Դիոգենես» կատակերգությունը 2 արարվածով, ուր, ի միջի այլոց, օգտագործվում է Ա. Ճավճավաձեի այս երգը, սակայն ոչ թե ըստ Գ. Չուրխնովի 1846 և 1863 թվականների հրատարակությունների, այլ մի փոքր տարբեր վարիանտով, որը կարող էր ծանոթ լինել նրան և Գ. Չուրխնովից անկախ: Խրախճանքի այս երգը Գ. Սունդուկյանը բերում է ոչ թե ամբողջությամբ, այլ միմիայն 1, 2, 3, 4, 11 և 13-րդ տները, մինչդեռ ամբողջ երգը 14—15 տուն է¹: Բացի դրանից, Գ. Սունդուկյանի օգտագործած վարիանտի տեքստի ծանոթագրություններում կցված է Ն. Տ.-Ղ.-ի հայերեն չափածո թարգմանությունները²:

Օգտվելով առիթից՝ նշում ենք Ա. Ճավճավաձեի «Լոթինների մոլխամբալ»-ի հիմնական տեքստի և Գ. Սունդուկյանի պիեսում օգտագործված վարիանտի տարբերությունները:

Նախ՝ Գ. Սունդուկյանի օգտագործած վարիանտում աչքի է ընկնում յուրաքանչյուր տան առաջին և երրորդ տողերին կցված «արիա-լալի», իսկ երկրորդ և չորրորդ տողերին՝ «թա-րիա-լալի» կրկնեղբ. մինչդեռ հիմնական տեքստում սրանք բացակայում են:

Ապա այլևայլ տուններում նկատվում են հետևյալ տարբերակները.—

Ըստ Գ. Ս.		Ըստ բնագրի	
Տուն	I ₃ շեմոդգոմամա	I ₃	շեմոդգոմաման
»	III ₁ սաղվինո	III ₁	սաղվինն
»	III ₁ մամե	»	մոմե
»	IV ₂ դեմովներա	IV ₂	դեմեբա
»	IV ₃ թիթոն	IV ₂	թվիթոն
»	VI ₂ մծվաննթ մոսիլա	XIII ₂	մծվանիթ շեմկուսա

¹ Ալեխանդր Ճավճավաձե, *Երկեր*, Թբիլիսի, 1940, էջ 5—6 (վրացերեն), ընդամենը 15 տուն, մինչդեռ Գ. Չուրխնովի վարիանտը 14 տունից է բաղկացած: Գ. Ասատուրի թարգմանությունը պարունակում է 1, 2, 3, 4, 5, 6, 10, 9 (հտուտառջ), 11 և 12 տունները:

² Այս թարգմանությունը (1869) տարբերվում է Գ. Ասատուրի թարգմանությունից (1931):

Պետերբուրգի համալսարանն ավարտելուց հետո Գ. Սունդուկյանն, ինչպես հայտնի է, վերադառնում է Թիֆլիս, ուր և մտնում է պետական ծառայության՝ Կովկասի փոխարքայի դիվանատան բանավոր թարգմանչի (словесный переводчик) պաշտոնով՝ 1850 թվականի 5 դեկտեմբերից, և այդ օրվանից հաստատվում է կոլլեժսկի բարտուղարի (коллежский секретарь) աստիճանում: 1853 թվականի դեկտեմբերից Գ. Սունդուկյանը նույն հիմնարկում նշանակվում է սեղանապետի կրտսեր օգնականի (младший помощник столоначальника) պաշտոնում՝ միաժամանակ հաստատվելով տիտուլյար խորհրդականի (титulyарный советник) աստիճանում, ինչպես երևում է Վրաստանի կենտրոնական պատմական արխիվում պահված գործից:

1853 թվականին Գ. Սունդուկյանն ինչ որ ընդհարում է ունենում Կովկասի փոխարքայի դիվանատան բաժանմունքի պետ և նույն դիվանատան դանձապահ, կոլլեժսկի բարտուղար Բելյակի հետ, որի կապակցությամբ Գ. Սունդուկյանը, դիվանատան դիրեկտորի կարգադրությամբ դիվանատան կից տնային կալանքի է ենթարկվում¹: Սակայն Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովն՝ անբավարար համարելով իր դիվանատան դիրեկտորի միջոցառումը Գ. Սունդուկյանի նկատմամբ՝ կարգադրում է աքսորել վերջինիս Դերբենտ տեղիս Ղինվորական նահանգապետի դիվանատան գործերի վարիչի պաշտոնով, նույն նահանգապետի (գեներալ-մայոր Մինկվիցի) հրավորության տակ:

Մեր տրամադրության տակ է Կովկասի փոխարքա և նույնորոսիայի ու Բեսարաբիայի գեներալ-գուբերնատոր իշխ. Մ. Ս. Վորոնցովի 1853 թվականի դիրեկտորի № 3270 թվահամարով առաջադրությունը իր դիվանատան դիրեկտորի անունով, հետևյալ բովանդակությամբ (էջ 65ա—95բ).

¹ Հմմ. Ե. Շահագիր, Գաբրիել Սունդուկյանց (Մենդյան հարյուրամյակի առթիվ), Կենսագրական նոթեր, «Տեղեկագիր» ՀեՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, № 2, Երևան, 1927, էջ 136—137:

«Господину директору канцелярии моей по званию Наместника Кавказского.

Дошло до сведения моего, что летом нынешнего года младший помощник столоначальника канцелярии моей титулярный советник Сундукянц дозволил себе дерзкие предосудительные выражения против начальника отделения и казначея канцелярии моей, коллежского советника Беляева, при объяснениях по службе, и что Ваше Превосходительство ограничились орестованием его при канцелярии.

Находя эту меру взыскания совершенно недостаточною, тем более, что чиновник Сундукянц не согласился даже просить прощения у обиженного им, я предлагаю Вашему Превосходительству сделать немедленно надлежащее распоряжение о безотлагательном отправлении Сундукянца на службу к дербентскому военному губернатору с увольнением из канцелярии моей, поручив генерал-майору Минквицу иметь наблюдения за поведением его, не дозволяя ему выезда из Дербента без особого разрешения моего».

Գ. Սունդուկյանի գործի¹ այսպիսի ընթացքի հետևանքով նրա մայր Թինաթին Սունդուկյան-Ռոստինյանը հայցադրեր է ուղղել, ուր հարկն է, որպեսզի իր որդի Գաբրիելին վերադարձնեն Թբիլիսի, պատճառաբանելով իր ծանր վիճակը:

Այսպիսի մի թուղթ² գրված ուսանողն, բայց վրացերեն ստորագրությամբ³ Թինաթին Սունդուկյանը մատուցել է 1856

¹ Գ. Սունդուկյանի ընդհարումը ցարական շինովնիկի հետ հիշեցնում է և. Արուսյանի նույնպիսի ընդհարումը Թբիլիսիի այգիներից մեկում, նրա շինովնիկ նրան վիրավորանք են հասցնում:

² Այս հանգամանքը և. Շահագիզը (հիշյալ գրվածքում) բացատրում է նրանով, «որ նա, Թինաթինյան, հայերեն գրել-կարդալ չի խմացել», հետևապես և Գաբրիելն ևս «յուր մանկության օրերում հավանորեն վրացերեն է թսթովել ու հայերենը հետո է սովորել»: Մեր կարծիքով, Գաբրիելի մայրը կարող էր հայերեն գրել-կարդալ չիմանալ, բայց Թբիլիսիի բարբառով խոսեր և այդ բարբառը մատչելի դարձնելու ջուրայիններին:

թվականի դեկտեմբերին, նոր նշանակված փոխարքա իշխ-
Ա. Պ. Բարյատինսկու¹ անունով:

Միաժամանակ՝ դործն հաջողեցնելու նպատակով Թ. Սուն-
դուկյանը միջամտություն է խնդրում նույն տարիներին մերձ-
կասսյան երկրից երբեմն Թբիլիսի եկող վազեմի ծանոթ Գրի-
գոր Օրբելիանուն²: Եվ, ի հետևումն այսպիսի միջնորդության,
Գր. Օրբելիանին իր կողմից հատուկ նամակով դիմում է Կով-
կասի փոխարքայի դիվանատան դիրեկտոր Ալեքսեյ Ֆեոդորո-
վիչ Կրուլենշտերնին համապատասխան պատճառաբանու-
թյամբ:

Քանի որ Գրիգոր Օրբելիանու այս նամակը, գրված 1857
թվի 25 փետրվարին, կարևոր փաստաթուղթ է Գ. Սունդուկ-
յանի և Գ. Օրբելիանու փոխհարաբերությունների լուսաբան-
ման համար, որ չի օգտագործվել ինչպես Գ. Սունդուկյանի,
նույնպես և Գ. Օրբելիանու կյանքի ու գործունեության ուսում-
նասիրությամբ զբաղվող մասնագետների կողմից, այն ևս
ընդօրինակում ենք այստեղ:

«Милостивый Государь Алексей Федорович!

Во время пребывания моего в Тифлисе, несколько
раз, приходила ко мне мать служащего в канцелярии
дербенского военного губернатора, титулярного совет-
ника Сундукянца и, объясняя крайнее во многих отно-
шениях положение, терпимое ею со времени высылки
сына ее на службу в Дербент, просила моего ходатайст-
ва о переводе его в Тифлис, на прежнее место служения.

Вследствии этого и зная Сундукянца, как отличного
молодого человека, рекомендованного всегда ближай-
шим его начальством за его похвальную службу и при-
мерное поведение, я не мог отказать матери в участии
своем в просьбе её сына, и желая лично передать Вам
покорнейшую просьбу о нем; но разные дела и хлопоты,

¹ Կովկասի փոխարքաներ էին. Մ. Ս. Վորոնցով՝ 1844—1854, Ն. Ն. Մուրավյով՝ 1854—1856, Ա. Պ. Բարյատինսկի՝ 1856—1862:

² Լինելով մերձկասսյան երկրի զորքերի հրամանատար և քաղաքացիա-
կան մասի պետ՝ Գր. Օրբելիանին մեծ մասամբ ապրել է Դերբենտում, ուր
և, հավանական է, շփում կունենար տեղիս ղինվորական նահանգապետի,
նրա դիվանատան ու վերջինիս վարիչ, երիտասարդ Գ. Սունդուկյանի հետ:

в которых я был во время пребывания своего в Тифлисе, помешали мне.

Ныне отъезжая, я решаюсь обратиться к вам письменно, с убедительной просьбой о принятии в судьбе Сундукианца благосклонного участия и перевода его на службу в Тифлис, на соответственное место, когда только Вы найдете это возможным».

Եվ ահա, անտարակույս, Գր. Օրբելիանու այս միջամտության հետևանքով է, որ 1858 թվականին Գ. Սունդուկյանը վերադառնում է Թբիլիսի, ուր մի ժամանակ պաշտոնավարում էր ճանապարհների հաղորդակցության վարչությունում, ապա Թբիլիսիի նահանգական վարչությունում:

Սակայն Գր. Օրբելիանու միջամտությունը երիտասարդ Գ. Սունդուկյանին աքսորից ազատելու և Թբիլիսիում վերադնակվելու համար, միակ դեպքը չէր, որով Գր. Օրբելիանին ցուցաբերեց իր հոգատար վերաբերմունքը դեպի Գ. Սունդուկյանի անձնավորությունը:

Մի քանի խոսք 1865 թվականի 27—28 հունիսի դեպքերի, Թբիլիսիի համքարների ապստամբության մասին, որի «ղբերդիչների» ու «գրգռիչների» դերումն են եղել, ի միջի այլոց, Թբիլիսիում գործող առաջավոր հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչները, Վասիլաժ «Հյուսիսափայլ»-ի հետ, և սրանց թվում Գ. Սունդուկյանը, որին սպառնում էր կալանք, բանտարկություն, աքսոր և այլն, և որից դարձյալ նրան ազատել է Օրբելիանին՝ ոստիկանական և դատաստանական բնությունը ընթացքին այլ ուղղություն տալով¹:

Գ. Սունդուկյանի անունն այս ապստամբության վերաբեր-

¹ Գ. Սունդուկյանի առնչության մասին 1865 թ. ապստամբության հետ, տե՛ս՝ Լ. Մելիսեբ-Ռեկ, Համքարների ելույթը Թբիլիսիում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, — «Նորհրդային Վրաստան» 1938, № 19 և 20: Լ. Մելիսեբ-Ռեկ, Արխիվային նյութեր Թբիլիսիի համքարների 1865 թ. «Ելույթի» պատմության շուրջը, «Սախտորիո մոսմեր» [= Պատմության տեղեկագիր], III, Թբ. 1947, էջ 1—144, և առանձին (նյութերը՝ ուսերեն, վրացերեն, հայերեն, և գերմաներեն, մեր վրացերեն առաջարանով): Լ. Մելիսեբ-Ռեկ, «Հյուսիսափայլ»-ի գաղափարախոսները և ցարական վարչապետները Կովկասում: «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1946, № 5, էջ 67—68:

յալ փաստաթղթերում հորովվում է անվան 6 անգամ.—

1. 1865 թվականի 27—28 հունիսի «Ելույթը» քննող կոմիտայի որոշման մեջ № 19 ներքև կարդում ենք (фонд особо важных дел ЦГИА Арх. Упр. МВД Груз. ССР № 215, стр. 56а—63б; ср. фонд 7/16 дело № 465, стр 51а—59а).

«Самым главным двигателем этого замысла, по объяснению Вартанова, был надворный советник Григорий Измиров, происходящий из сословия почетных граждан, а сообщниками: советник Тифлисского губернского правления надворный советник Гавриил Синдукианц, доктор Ротинианц, помощник квартирного надзирателя Салагов (все три происходящие из граждан), а состоящий с Ротинианцом и Сундукианцом в товариществе по содержанию типографии, член Тифлисского городского общественного управления Амбарцум Энфиаджианц, редактор печатаемой в типографии Энфианджианца газеты «Пчела Армении» Петрус Симонианц и почетные граждане....

Против Гавриила Сундукианца и свояка его доктора Ротинианца Шермазан-Вартанов приводит вражду их к нему за наложение запрещения на имение последнего из них. Сверх того Сундукианца обвиняет еще как в распространении, во время поездки Измирова в Эчмиадзин, ложных слухов, что будто-бы тифлиссские граждане будут платить торговую пошлину наравне с торгующими здесь иностранцами, так и в угрозе ему, Вартанову, по поводу наложения запрещения на имение свояка его доктора Ротинианца, но доказательства по первому обвинению не представил, а по последнему ссылается на губернатора, в присутствии которого Сундукианц пригрозил ему, Вартанову...»

2. Նույն փաստաթղթի եզրափակման մասում ասված է (տե՛ս նույն գործը)¹:

¹ 1. Մելիքսեր-Յեկ, Արևիվային նյութեր Թբիլիսիի համարների 1865 թ. «Ելույթի» պատմության շուրջը, Թբիլիսի, 1947, էջ 36:

«Ввиду сих соображений, а также по важности и особенности сего дела, следственная комиссия определяет сделать следующее:

1) надворного советника Григория Измирова, помощника комиссара Монсея Салагова, члена Тифлисского городского управления Амбарцума Энфианджянца, почетных граждан: Назара Назарбегова, Егора Придонова, Даниила Измирова, Ивана и Иллариона Пораковых, Артема Байсаголова, гражданина Степана Сагинова (он же Колот) и Гевы Гозалова, одновременно со взятием их к допросу, заключить под стражу в Тифлисском Метехском замке, и когда они будут арестованы, в тот же день приступить к допросу их; 2/...; 3/ Что же касается доктора Ротинианца, редактора газеты «Пчела Армени» Петруса Симонианца и советника Тифлисского губернского правления, надворного советника Сундукианца, то, по недостаточности в настоящее время улик, должествующих служить основанием ко взятию их к следствию и под арест, поставить особое заключение, когда впоследствии при дальнейшем производстве исследования выяснится прикосновенность их к делу, с большой осторожностью...»:

3. Նույն քննիչ կոմիսիայի գաղտնի քննության արձանագրության մեջ 1865 թվականի սեպտեմբերի (?) թվահամարով, ի միջի այլոց, նշված է (տես նույն գործը, էջ 102ա—104ա)¹.

«Армянская газета «Пчела» печатается в типографии, принадлежавшей Амбарцуму Энфианджянцу, Гаврииле Сундукианцу и доктору Ротинианцу...

Все трое находятся в переписке с различными агентами за границей. К партии этой принадлежит: Григорий Измиров, Амбарцум Энфианджянц, доктор Ротинианц и служивший в Губернском Правлении Гавриил Сундукианц.

¹ 1. Մելիսեք-Քեկ, Արխիվային նյութեր Քրիլիսիի համարների 1865 թ. «Էկուլթի» պատմության շուրջը, Քրիլիսի, 1947, էջ 55—56:

«Первые трое весьма осторожно стараются распространить во всех лучших армянских домах идеи о свободе, порицают действия правительства нашего, вселяют к нему ненависть и уговаривают детей отправлять для воспитания за границу и преимущественно в Базель.

Измиров и Энфиаджианц в том же духе действуют на народ, сообразно понятиям черни, в духе их интереса, выставляя им на вид обременительные налоги, вводимые правительством, пугая их рекрутчиной, и что правительство положительно стремится обратить их в православную веру и окончательно поработить весь армянский народ.

Доктор Ротинианц... воспитанник Дерптского университета и под видом медика везде бывает и проводит в народе те же идеи, чем также занимается и Сундукианц; главная же роль Сундукианца заключается в том, что он обязан узнавать, следят ли за их действиями тайная и местная полиция, и, как говорят они, он в этом отношении доставляет обществу довольно положительные и верные сведения».

4. Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության գաղափար զործերի դեպարտամենտի գրութունը՝ բնիկ կոմիսիայի նախագահի հասցեով 1865 թվականի 17 սեպտեմբերի թվահամարով՝ Գարրիել Սունդուկյանի և Գալուստ Շերմազան-Վարդանյանի բարոյական կերպարի մասին, ըստ ժանդարմների կորպուսի 6-րդ շրջանի պետ գեներալ-լեյտենանտ Մինկվիցի¹ տվյալների (տես նույն գործը, էջ 1080—1090)².

«...Генерал-лейтенант Минквиц, представляя извлечение это при рапорте от 10 сего сентября за № 119, за отсутствием великого князя наместника генерал-адъютанту князю Орбелиани, присовокупляет, что показанный в числе прочих лиц Гавриил Сундукианц более других известен ему за человека честных правил, благона-

¹ Դերբնտի նախկին զինվորական նահանգապետն է, որի զիվանատան վարիչն էր Գ. Սունդուկյանը 1853—1858 թթ.:

² Լ. Մեխիսեր-Քեկ, Արխիվային նյութեր..., էջ 62:

меренного и умного настолько, чтоб ясно понимать выгоды положения армянского народа под благотворными законами нашего правительства; остальные лица хотя ему известны менее, но, судя по их образованию, думается, что и они не чужды тех же мыслей, вытекающих прямо из настоящего их спокойствия и благосостояния. Затем генерал-лейтенант Минквиц объясняет, что бывший городской голова Калуст Шермазан-Вартанов, сколько он знает, известен за человека неблагонамеренного недобросовестного: обвиняя эти лица голословно, дает право думать, что этим поступком, происходящим может быть из личных его интересов, желанием отклонить от себя могущее возникнуть подозрение в его собственной виновности, и потому генерал Минквиц не может дать веры его оговору, как бездоказательному и не принимаемому законами, а тем более делать какие-либо распоряжения, не входящие в круг его служебных обязанностей».

5. *Կովկասի փոխարքայի՝ Կառավարիչ Սենատի հասցեով ուղարկված զեկրոցագրում (ռապորտում)՝ 1869 թվականի օգոստոսի թվահամարով, ի միջի այլոց, ասված է* (фонд ЦГИА 7/20, дело № 2, стр. 32—44а).

«... Вартанов заявил обвинение противу следующих лиц: надворного советника Сундукианца и свояка его доктор Ротинианца, что они питают к нему вражду за наложение запрещения на имя последнего и что Сундукианц, сверх того, распространял ложные слухи, что будтобы тифлисские граждане будут платить торговую пошлину наравне с иностранцами...

Следственная комиссия, на основании его (Вартанова) заявления постановлением, 28 июля (185 г.) состоявшимся, определила: поименованных в объяснении Вартанова лиц, за исключением Ротинианца, Симонианца и Сундукианца, заключить под стражу и затем приступить к допросу их...»¹.

¹ 1. Մելիքյան-Բեկ, Արխիվային նյութեր..., էջ 102:

6. Գր. Օրբելիանիի անձնական արխիվում պահված մի թղթում, որ ինքն է գրել մատիտով, վրացերեն, «Գալավի տան ավերման պահին եղել են» նյութի շուրջը, ի միջի այլոց, 3-րդ կետում կարդում ենք (Վրացական ՍՍՌ ԳԱ Վրաստանի պետ. թանգարանի Ա ֆոնդի 155a, XVI-րդ կապոց)¹:

«Սունդուկյանց: Իվան Ադամիչ Փորաբովն ասաց գալավին (այսինքն Թբիլիսիի քաղաքագլուխ Գալուստ Շերմադան-Վարդանյանին. Վ. Մ.-Ք.), որ կիրակի օրը, երբ ոստիկանատան առաջ ժողովուրդ էր հավաքված, Սունդուկյանցը այս ու այն տեղ խոսում էր ժողովրդի հետ [հասկացնելով], որ գալավան է մեղավոր և պիտի պատժվի»:

Այսպիսով, պաշտոնական, մասամբ և ոչ պաշտոնական փաստաթղթերից քաղված այս մեջբերումները միաբերան վկայում են, որ Գ. Սունդուկյանն ուղղակի թե անուղղակի կերպով կապված է եղել 1865 թ. 27—28 հունիսին Թբիլիսիում պայթած համբարների (արհեստավորների) ապստամբության մասնակիցների հետ, լինելով նրանց «գրդիչների» կամ «գրդոխների» շարքերում, իբրև շարժման «գաղափարախոսներից» մեկը:

* * *

Գ. Սունդուկյանն առանձին սիրով է հիշում վրաց քանաստեղծ և ազգագրագետ, իրեն հասակակից Ռաֆիել էրիսթավուն (1824—1901)², որին երախտապարտ էր հատկապես «Պեպո»-ն վրացերենի վերածելու գործում օժանդակելու համար դեռևս 1874 թվականին, որից հետո միայն՝ 1875 թ. նոյեմբերի 27-ին այն առաջին անգամ բեմադրվեց վրացերեն լեզվով:

«Պեպո»-ի՝ 1880 թվականին ժուռնալ «Իվերիա»-ում և

¹ «Արխիվային նյութեր...», էջ 143—144: Հմմ. Վ. Մելիսեք-Քեկ, Համբարների ելույթը Թբիլիսիում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, «Ե. Վրաստան», 1938, № 20: Նույնի՝ «Հյուսիսփայլ»-ի գաղափարախոսները և ցարական վարչապետները կովկասում, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1946, № 5, էջ 67—68:

² Ռ. էրիսթավուն մասին տես՝ Գ. Ասատուր, Մերձարևելքի գրականության պատմություն. Վրաց գրականություն, I, նմուշներ պոեզիայից, Երևան, 1931, էջ 61—65:

սուանձին հրատարակութեամբ ևս լույս տեսած վրացերեն թարգմանութեան առաջարկներ սկսվում է Գ. Սունդուկյանի ղեկավարութեամբ արտահայտած երախտագիտական խոսքերով։ «Տպագրելով վրացերեն այս իմ երկասիրությունը՝ նախ և առաջ պարտք եմ համարում սրտագին շնորհակալությունս հայտնել բանաստեղծ իշխ. Ռափիել էրիսթավուն, որն եղբայրական օգնություն ցույց տվեց ինձ 1874 թվականին, երբ այս երկասիրությունը թարգմանում էի»։ Ապա Գ. Սունդուկյանը նշում է Դավիթ ավագ քահանա Յարալյանի և Իոսեբ Բաբրաձեի անուններն ևս, որոնք նմանապես որոշ օժանդակություն են ցույց տվել իրեն¹։

Առանձնապես կարևոր է նշել Գ. Սունդուկյանի մասնակցությունը Ռ. էրիսթավուն գրական դործունեության 50-ամյա հոբելյանին, որ տեղի է ունեցել 1895 թվականի դեկտեմբերին։

Ի պատիվ Ռ. էրիսթավուն 1895 թվականի 29 հոկտեմբերին կազմակերպված ճաշկերույթի մասին, որին ներկա է եղել մոտ 300 հոգի, մանրամասն գրում է ժուռնալ «Կվալի»-ն։ Նույն այդ ճաշկերույթին բաժակաճառեր են արտասանել Գր. Աբաշիձեն, Ակակի Մերեթելին, Վելիշվոն, Իլիա Ճավճավաձեն, Գիորգի Մերեթելին, Կ. Չխեիձեն, Իվանե Մաչաբելին, Գաբրիել Սունդուկյանը, Մ. Մաչաբելին և ուրիշներ, որոնց արտասանած խոսքերը տպված են նույն հանդեսում։

Մասնավորապես Գ. Սունդուկյանի մասնակցության մասին այդ խնջույթին նույն տեղում կարդում ենք հետևյալը.

«Խմեցին նաև հայ թատերագիր Սունդուկյանցի կենացը, որին պ-ն Սունդուկյանցը պատասխանեց հետևյալ հայտարարությամբ հասարակության առաջ.

«Ես այսօր առանձնակի կենացի արժանի չեմ, քանի որ այս տեսակ բոլոր կենացները միմիայն հոբելյարին են պատկանում։ Այս ևս կհայտնենի մեր ազգի անունից, որ մենք՝ Վրաստանում սնված հայերս՝ վրաց հոգով ենք հասունացած, Վրաստանի փորձանքի և ուրախության մենք միշտ հաղորդակից ենք եղել ու կլինենք»²։

¹ «Իվերիա», 1880, № 3, էջ 207, առանձին հրատ., Թբ. 1880, էջ 3։

² «Կվալի», 1895, № 46, էջ 8։

Վրաց մեծ բանաստեղծ, վիպագիր, հրապարակախոս և հասարակական գործիչ Իլիա Ճավճավաձեն (1837—1907) մեծ հոգատարություն էր վերաբերում դեպի Գ. Սունդուկյանը, չնայած այն հանգամանքին, որ երբեմն նույնիսկ սուր քննադատության էր ենթարկում նրա ստեղծագործությունը:

Իլիա Ճավճավաձեի շնորհիվ է, որ Գ. Սունդուկյանի երկերը մատչելի դարձան վրաց ընթերցող հասարակությանը:

Այս ասելով մենք ի նկատի ունենք զոնե այն երկու երկը, որոնք իրար հետևից լույս տեսան վրացերեն թարգմանությամբ Ի. Ճավճավաձեի «Իվերիայում», այն է՝ 1879 թվին «Վարինկի վեշերը», Պ[ետրե] Ու [միկաշվիլ] ռ թարգմանությամբ, № 5—6, էջ 74—116, և 1880 թվին «Պեպո»-ն, հեղինակի թարգմանությամբ, № 3, էջ 205—317, և առանձին զբոսով՝ Թբիլիսի 1880, 80 էջ:

Նույն Իլիա Ճավճավաձեի «Իվերիա» թերթի էջերը միշտ հյուրընկալել են Գ. Սունդուկյանին այս կամ այն առիթով ելույթի համար, «նամակ խմբագրության»-ի ձեռով, օրինակ 1886 թ. № 49, 1901 թ. № 99 (այսպիսի մի նամակ տպված է նաև «Դրոբա»-ում 1883 թ. № 219)¹:

Վերջապես, թե «Իվերիա» հանդեսը և թե թերթը, սխառմատիկ կերպով արձագանքել է Գ. Սունդուկյանի պիեսների բեմադրությանը մանավանդ վրացերեն՝ համառոտ կամ ընդարձակ հաշվետվություններ տալով նրանց մասին, սկսած 1877 թվից (№ 6) մինչև 1904 թ.: Սրանցից մեկում (1886 թ. № 44) նույնիսկ նշված էր, որ «Գ. Սունդուկյանի «Խաթաբալա»-ն և առհասարակ նրա բոլոր պիեսները վրաց բեմի վրա ավելի հաջող են կատարվում, քան թե հայկականում, որ ինքը պատվարժան հեղինակն էլ լավ գիտե»:

Ինչ վերաբերում է անձամբ Իլիա Ճավճավաձեին, նա լիկ

¹ Այս նամակների հայերեն թարգմանությունները տես Վ. Մելիքսեբեկի, Գ. Սունդուկյան և վրաց կլասիկները. «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1950, № 8, էջ 78—80:

մի անգամ է առիթ ունեցել արտահայտվելու Գ. Սունդուկյանի ստեղծագործության, հատկապես «Պեպո»-ի մասին:

Դա՝ «Իվերիա» թերթի 1889 թ. 4 փետրվարի (№ 27) առաջնորդողն է, նվիրված «Մուրճ» ամսագրի լույս տեսնելուն, որի առաջին իսկ համարում զետեղված էր Գեորգ Չմշկյանի «Գ. Սունդուկյանց. կենսագրական ուսմածք»-ը:

Քննադատելով Գ. Չմշկյանի հոդվածը և մեր թատերագրին «պատվարժան հայ դրամատուրգ պարոն Սունդուկյանց» անվանելով, Իլիա Ճավճավաձեն, ի միջի այլոց, այն միտքն է արժարժում, որ «վրացական [թատրոնական] ռեպերտուարում, չհաշված թարգմանական գործերը, [այնուամենայնիվ] «Պեպո»-ն ավելի հաջող գործ է»¹: Թեև Գ. Սունդուկյանի տված կինոյի դրական կերպարը Խ. Ճավճավաձենին, ըստ երևույթին, չէր բավարարում:

* * *

Վրաց գրականության ներկայացուցիչներից Գ. Սունդուկյանը ամենից ավելի մոտ է եղել բանաստեղծ Ակակի Ծերեթելու հետ (1840—1915): Այդ հարաբերությունը կամ, ավելի ճիշտն ասած, անձնական բարեկամությունը, որն իր ժամանակին մի տեսակ արտահայտությունն էր հայ և վրաց ժողովուրդների ու գրականությունների եղբայրակցության, ամենափայլուն օրինակն էր հայ և վրաց ինտելիգենցիայի մերձեցման և փոխադարձ կապի:

Սակայն կարևորն այն է, որ Ա. Ծերեթելին ուղիղ 15 տարով Գ. Սունդուկյանից կրտսեր լինելով՝ նայում էր վերջինիս իբրև իր մեծ եղբոր:

Ուստի և միանգամայն հասկանալի է, թե ինչու ընդամենը 11 տարվա ընթացքում Ա. Ծերեթելին այս կամ այն առիթով մեկը մյուսի հետից նվիրում է Գ. Սունդուկյանին առնվազն 3 բանաստեղծություն. 1. «Մտերիմիս (նվիրում եմ պ-ն Սունդուկյանցին)», 8 տուն, 1901 թվին, «Պեպո»-ի բեմադրու-

¹ Իլիա Ճավճավաձե, Երկերի լիակատար ժողովածու, հատոր II, Թբիլիսի, 1941, էջ 195—198:

թյան 30-ամյակի առթիվ, 2. «Գ. Ն. Սունդուկյանցին», 4 տուն, 1910 թվին՝ հավանական է նրա ծննդյան 85-ամյակի առթիվ, և 3. «Գաբրիել Սունդուկյանցի թաղման օրը», 4 տուն, 1912 թվին՝ նրա թաղման օրը գերեզմանի առաջ արտասանած¹։ Ներկայումս Գ. Սունդուկյանը հանգչում է «Խոջիվանքի» պանթեոնում։

Ահա Ա. Մերեթելու երեք բանաստեղծությունները հայերեն թարգմանությամբ.

Ա.

ԲԱՐԵԿԱՄԻՍ

(նվիրում եմ պ-ն Սունդուկյանցին)²

Առանց ազգի խրտրության ես
Բարիքներ եմ մաղթում նրան,
Ով որ մարդ է ճշմարտապես՝
Արեգական լույսի նրման։

Միության և եղբայրության
Ոչ մի բան չեմ գերադասել.
Ուժը սրբանց զուգակցության
էն գրլխիցն եմ ասել, ասել։

Բայց ի՞նչ արած, թե մի ընկեր
Տունըս մըտավ, սարքեց դավեր,
Եվ ինձ ասաց. «Իմըս իմն է»,
«Ինչ որ քոնն է, այն էլ իմն է»։

Եղբայր, ինչո՞ւ զըրկանք կըրեմ,
էլ չեմ պաշտո՞ւմ երկիր-գետին...

¹ Երեքի բնագրերը համապատասխան կոմենտարներով տե՛ս Լ. Մելիք-սեք-Յեկ, Գ. Սունդուկյանը վրացական պոեզիայում (վրացերեն), «Լիտ. Մարարթվելո», 1940, № 3։

² Բնագիրը՝ «Մեղորարս (վուժդլնի բ-ն Սունդուկյանց)», տե՛ս «Իվե-րիա» թերթի 1901 թվի № 124, Ալակի Մերեթելի, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, Բանաստեղծություններ, Թբիլիսի, 1940, էջ 603—604։

Դու էլ կացիր... ես էլ լինեմ,
Ձենք խանդարի մեկը մեկին:

Շիրմիս վերա պալատ շինե՞ս,
Աշխատեցնե՞ս քարկոյի մըշակ.
Դու ինձ տատասկ քաղել ստիպե՞ս,
Ինքըդ քաղե՞ս վարդ-մանիշակ:

Սրա անունն է ոտնաճարում,
Եվ անարդար զըջում-զըռփում...
Մոռացե՞լ ես, շե՞ս տարբերում՝
Վերե կայծակ, ներքե խըլրտում...

Եղանակն է մերթ լավ, մերթ վատ,
Այսօր այսպես, վաղըն այնպես,
Տիեզերքի օրենքն է այդ...
Ձեա խուսափի, ինչ էլ անես:

Թե ինձ ճընշես... լինես խրդճուկ,
Կըճըրճվի լուկ թըշնամին մեր.
Ինքներս կասենք. «Վայ և եղուկ»,
Իսկ նա՝ «մրավալ ժամի-ի-եր»:

(Թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկի)

Բ¹

Գ. Ն. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՅԻՆ

Ես մի վերացի, իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով եղբայր ենք հիմի,

¹ Բնագիրը՝ «Գ. Ն. (սխալմամբ տպված է Ս.) Սունդուկյանց»։ Լ. Մելիք-սեթ-Բեկ. հիշյալ հոդվածը։ Ակակի Մեռեթի, Երկեր, հ. I, էջ 822։ Հայերեն թարգմանությունները՝ անստորագիր — «Խ. Վրաստան», 1937, № 73, 1940, № 123, Գ. Սարյանի և Ա. Մեհրաբյանի «Խ. Հայաստան», 1937, № 37, Գ. Սարյանի ժողովածուում «Ակակի Մեռեթի», Երևան, 1940, էջ 44, «Խ. Հայաստան», 1940, № 143. «Գրական թերթ», 1940, № 17, «Արշավ», 1940, № 3, էջ 21, Հովհ. Կարապետյանի (Կարայանի)՝ «Հոկտեմբերյան սերունդ» (Թրիլիսի), 1940, № 1, էջ 11։ Մանըամասն բիրլիոգրաֆիան՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Ակակի Մեռեթիու Երկերի հայերեն թարգմանությունները, «Բիրլիոգրաֆիա մոսկով», Թրիլիսի, № 2—3, 1941, էջ 220—221։

Երկուսս էլ զավակ նույն հողի, ջրի,
Եվ նույն բընության և նույն լեռների:

Մեծ Կովկասը իր դադաթներով վեհ
Բընածին ձիրքիդ հասակ է տրվել:
Եվ բընությունն այս փարթամ ու ծաղկուն՝
Գույներ է տրվել տանջված բո հոգուն:

Եվ տառապանքիդ հուղումներն անվերջ
Հյուսել ևս հըմուտ՝ բո երկերի մեջ.
Ու ժառանգել ևս անմահ մի անուն,
Սերունդից սերունդ դարձել միս, արյուն:

Բաղմաթիվ մարդկանց հույզ ու տենչերին
Միացնում եմ ևս բաղձանքները իմ.
Խոնարհվում եմ մեծ գործիչի առաջ,
Կըրտսեր հղբոր պես՝ մեծ հղբոր առաջ:

(Թարգմ. Գ. Սարյանի)

Գ՝

ԳԱՔՐԻՆԸ, ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑԻ ԹԱՂԱՄԱՆ ՕՐԸ

Այսօր հողին ևն հանձնում
Ուշիմ մարդու սառած դին,—
Որ լույս-շողեր էր սըփռում
Մեր տարացեղ աշխարհին:

Փայփայում էր հրաշագեղ
Իղձեր, տենչեր հուսալի.
Մարդ էր փընտրում ամեն տեղ
Եղբայրական սիրով լի:

Մարդը միայն մարդ լինի,
Բոլորն իրար հավասար,—

¹ Բնագիրը «Գաբրիել Սունդուկիանցիս դամարտիկս ղղես». «Թեմի»
շաբաթների, 1942, № 64, Լ. Մելիքսեթ-Բեկ, հիշյալ հոդվածը, «Լիտ. Սա-
րարթվելո», 1940, № 3: Ակակի Մեհերեբլի, Երկեր, հ. I, էջ 839:

Հեղինակըն անվանի
Քարոզում էր անդադար:

Վրսեմ գործով վայելեց
Ժողովրդի սեր, հարգանք.
Հըստակությամբ վաստակեց
Հավերժ բուն և մեծարանք:

(Թարգմ. Լ. Մելիքսեթ-Յեկի)

* *
*

Սակայն Ա. Ծերեթեկին միակը չէ վրաց գրականության
բնագավառում, որը գնահատել է Գ. Սունդուկյանին:

Հայտնի է երկու «ձոն» ևս, նվիրված Գ. Սունդուկյանին. ա.
Սկանդար-Նովայի (Սկանդարյանի)՝ «Գարրիել Նիկիտիչ Սուն-
դուկովին», 1875 թ. փետրվարի 10-ի թվահամարով¹, և բ.
Կոնստանտին Մեսխիի՝ «Գարրիել Սունդուկյանցին», 1901 թ.
ապրիլի 29-ի թվահամարով²:

Գ. Սունդուկյանի ստեղծագործությանը և սլիեսների բեմա-
դրություններին վրաց թատրոնում հաճախակի արձագանքել
են այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Պ. Ումիկաշվիլին («Վա-
րինկի վեհերի» թարգմանիչը), Կ. Ղիփիանին, Ս. Մեսխին, Ան-
տոն Փուրցելաձեն և շատ ուրիշներ³: Գ. Սունդուկյանը մոտ է
եղել նաև հայտնի հրապարակախոս և հասարակական գործիչ
Ն. Յ. Նիկոլաձեի հետ:

¹ Բնագիրը՝ «Գարրիել Նիկիտիչ Սունդուկովին», «Սալիսինո սաղանդարի»,
3-րդ հրատ., Թբիլիսի, 1875, էջ 145—147, 4-րդ հրատ., 1895, էջ 217—219:

² Բնագիրը՝ «Գարրիել Սունդուկյանց», որ գտնվում է Հայաստանի գրա-
կան թանգարանում (Գ. Սունդուկյանի արխիվում), հրատարակված՝ Լ. Մե-
լիքսեթ-Յեկի, Գ. Սունդուկյանը վրացական պոեզիայում, «Լիտ. Սաքարթվելո»,
1940, № 3:

³ «Վրացական ամսագրերի և ժողովածուների անալիտիկ բիրլիոգրաֆիա»,
պրակ II (1877—1892), հրատ. Վրացական ՍՍՌ Կ. Մարքսի անվան Հանրա-
ին գրադարանի, Թբիլիսի, 1941, ըստ անվանացանկի (էջ 400): Նույնը,
պրակ. III (1893—1905), 1944, ըստ անվանացանկի (էջ 820): Երկուսն էլ
վրացերեն է: Մասամբ տես՝ Գ. Սունդուկյանց, երկերի լիակատար ժողովա-
ծու մի հատորով, Երևան, 1934, էջ 522—523:

Հայ մեծ թատերագրի ծառայությունը վրաց թատրոնին ցայտուն կերպով շեշտված է վրաց թատերական և այլ գործիչների ողջունի խոսքերում՝ «Պեպո»-ի բեմագրություն 30-ամյակի առթիվ 1901 թվին, որոնք հասել են մեզ ուսերեն և վրացերեն լեզուներով¹, և սրանց թվում Կոնստանտին Գիմիարիի Ղիփիանու ուղերձը 1901 թ. ապրիլի 29-ի թվահամարով²:

Բն որբան մեծ էր Գ. Սունդուկյանի, իբրև թատերագրի և թատերական գործչի, կշիռն ու նշանակությունը վրաց թատրոնի սլատմության մեջ, վկայում են այն նյութերը, որ ամփոփված են Գ. Սունդուկյանի անձնական արխիվում (Հայաստանի գրական թանգարանում) պահվող թղթապանակում: Թղթապանակը վրացերեն լեզվով մակագրված է այսպես. Քնար. պատկառելի դրամատուրգ Գ. Ն. Սունդուկյանցին. Ի հիշատակ «Պեպո»-ի բեմագրության 30-ամյակի. 29 ապրիլի 1901 թ. Բիֆլիս»:

Հենց այս թղթապանակում Գ. Սունդուկյանին մատուցվել էր ուղերձ վրացերեն լեզվով վրաց բեմի գործիչների ստորագրությամբ: Սրան կից ուշադրության արժանի են շնորհավորական հեռագրերը Գ. Սունդուկյանի հասցեով:

Այդ հեռագրերից մեկն է Ղվիրիլայից, Ալեքսի-Մեսիխի-Վիրու ստորագրությամբ, որ ասված է. «Кутанская грузинская труппа, присоединяясь к общему торжеству празднования тридцатилетия появления первого произведения (sic. է. Մ.—Բ.) любимого драматурга Гавриила Никитича, желает ему многолетия на пользу чистого (sic. է. Մ.—Բ.) искусства».

¹ Սրանց մի մասը Հայաստանի գրական թանգարանումն է գտնվում:

² Այս ուղերձի, ինչպես և ողջունի մի քանիսի ուսերեն բնագրերը տե՛ս Ա. Меликсет-Бек. К биографии Г. Сундукяна (в связи с 70-летием первой постановки «Пепо.») «Արմֆանի տեղեկագիր», 1941, № 2, էջ 19—24: Վրացերեն թարգմանությունը մեր հոգովածներում՝ է. Մեխիսեր-բեկ, Գ. Սունդուկյանը վրացական պոեզիայում, «Լիտ. Մաքարթվելո», 1940, № 3: «Գ. Սունդուկյանը և վրաց թատրոնը», նույն տեղում, 1940, № 15: Կ. Ղիփիանու ուղերձի հայերեն թարգմանությունը մի փոքր կրճատված ձևով (վերջին մասում) տե՛ս Ն. Շահազիզ, Գաբրիել Սունդուկյանց, «Տեղեկագիր ՀՍՍՐ գիտության և արվեստի ինստիտուտի», № 2, Երևան, 1927, էջ 147—148:

Նույն Ղվիրիլայից վրաց բեմի գործիչների անունից և նույն Ալեքսի-Մեսիիշվիլու, Գունիայի, Չխեիձեի, Գվետաձեի, Չիր-վանու, Ուրուշաձեի, Իմեդաշվիլու, Արաբիձեի, Մուծունավայի, Գրիգոլ Չարկվիանու և Բեզլարիձեի ստորագրությամբ, ասված էր. «Артисты гастролирующей в провинции грузинской труппы, приветствуя маститого драматурга, уважаемого Гавриила Никитича, желают ему на многие лета бодрости и силы во славу и на пользу родственных (ընդգոմը մերն է—Լ. Մ.—Բ.) туземных сцен».

Բարձրից ստացված երկու հեռագրերից մեկում՝ վրաց թատրոնի (Սուխանիշվիլու) հասցեով և էլիաշվալու ստորագրությամբ, ասված էր. «Бакинские грузины шлют самые лучшие пожелания маститому драматургу Сундукианцу, славному поборнику просвещения родного края», իսկ մյուսում՝ նույն թատրոնի հասցեով (Կոնստանտին Մեսիիժին) և նույն էլիաշվիլու ստորագրությամբ, ասված էր «Передай мое поздравление дорогому писателю Пепико».

Թիֆլիսի վրաց թատերական դասի ուղերձը վրացերեն լեզվով, որի ոտաներեն թարգմանությունը մենք ենք տվել¹, ստորագրված է հետևյալ գործիչների կողմից. Կոտե Ղիփիանի, Ալ. Ներիերիձե, Բարալե Ներիերիձե, Նատո Ջավախովա, Միխեիլ Թումաշով, Գիորգի Ավալիանի, Վ. Աբաշիձե, Ակունդելի, Ավիմոն Սիմոնիձե, Նատալիա Գարունիա-Յազարելի, Գեդեոն Գեդելանով, Շաբրո Սափարով, Կ. Մեսիի, Գր. Տատիշվիլի, Մ. Սափարովա-Աբաշիձե, Տասո Աբաշիձե:

Հատկապես նշանակալից է Կ. Գ. Ղիփիանու ուղերձը, վրաց բեմի համառոտ պատմությամբ հանդերձ, որը մենք բերում ենք այստեղ ամբողջությամբ.

«Дорогой Гавриил Никитич!

История грузинского театра претерпела два резких периода своей жизни. Первый период относится к 1850-ым годам, ко времени появления в нашем обществе незабвенного князя Георгия Эристова, давшего основание грузинскому театру и давшего для его преуспея-

¹ «Տեղեկագիր Արմֆանի», 1941, № 2, էջ 21:

ния свои драматические произведения, наряду с другим, таким же деятелем — Зурабом Антоновым, пьесами которых и существовал тогда грузинский театр.

Затем наступило затишье; по различным причинам постоянный грузинский театр закрылся, и никого не щадающее, неумолимое время взяло этих людей с общественного поприща, и театр грузинский заснул более чем на 25 лет и деятели его безмолствовали.

Появились Вы—и для грузинского театра настала другая эпоха, настала новая жизнь; пробудившись от 25-летнего летаргического сна—настала эпоха возрождения.

Этим возрождением наш театр всецело обязан Вам, так как Вы Вашими драматическими произведениями вдохнули новую жизнь и дали возможность утихшему пульсу театра забиться новой силой!

Вы, высоко держа знамя искусства, под его шелест и под его тенью дали нам высоко-художественные произведения, высоко-поэтические. Вы не драматург, а Вы поэт, писавший не рифмой и не стихами, а писавший нашей живой речью.

Типы, выведенные Вами, мы все встречали на жизненном нашем пути беспрестанно, на каждом шагу, да встречаем их и теперь, и сейчас, но никто из нас не обращал на них никакого внимания, пока Вы не воплотили их в Ваших драмах и комедиях и пока этим не открыли нам глаза на окружающую нас среду. Вы, Вашим пытливым умом, в нашей будничной жизни подметили выдающиеся типы и воспроизвели их в искусстве. Вы, перебирая проблески нашей жизни, нашли поразительное явление человеческой воли, и когда мысль о воплощении этой воли запала в Вашу душу, Вы усвоили в себе эту волю, обратили её в свою духовную собственность и воплотили в готовый материал для искусства, потому что в Ваших произведениях ярко светит глубокая мысль.

Такою способностью Вы оживили общество, и появилась у нас целая плеяда драматургов, самостоятельных авторов, переводчиков, переделывателей, и таким образом Вы дали сильный толчок вперед и нашей литературе. Благодаря Вашим сочинениям — появилась у нас также целая плеяда артисток и артистов: Ваши произведения открыли у нас таланты, коих прежде мы не знали.

Если события нашей жизни обратили на себя Ваше пытлиное внимание и вызвали в Вас сочувствие к себе, то источник этого сочувствия заключается в мыслях, выраженных Вами в Ваших пьесах. А для того, чтобы Ваше авторское художественное чутье повторилось бы и в нас, мы должны были пройти тот же путь, какой был совершен Вами: мы должны были испытать лично на себе все те впечатления, какие Вы вынесли из наблюдений нашей жизни, кои Вы выразили в Ваших произведениях; в таком только случае артисты родного Вам театра могут являться новыми творцами произведения, воссоздавая идею художника, и артисты, к чести их будь это сказано, вполне достигли этой трудной задачи, воспроизведя Ваши типы так, что каждый из них является вполне законченной картиной. Не всем смертным дается свыше такая творческая способность, потому мы Вас и отличаем теперь из нашей среды, как крупную единицу высокого дарования!

Да! Вы поэт, что из нашей будничной, серой и меркантильной жизни выдвинули вперед типы, кои никогда не умрут среди нас, коих Вы сделали бессмертными: разве можно забыть Ваших: Замбахова, Осепа, Зимзинова, Пепо, Какули, Гико, Эпемию, Оскана Петровича, Исая, Георгия Масисянца, Абель Мастакяна, Маргариту и многих других!

Грузинская труппа сегодня чествует Вас за 30-летнюю Вашу плодотворную деятельность; сегодня минуло 30 лет как появился Ваш знаменитый «Пепо», только

что здесь разыгранный, в каковой пьесе я играл 30 лет тому назад ту же роль «Гико», каковую только что теперь я исполнил.

Я, как старейший из деятелей грузинского театра, тем радостнее приветствую Вас с сегодняшним торжеством, что мы, деятели родного театра, выросли на Ваших пьесах: мы обучены искусству на Ваших типах; мы вдохновлены Вашими произведениями; и, являясь, таким образом, Вашим учеником, отраднее поздравляю Вас с сегодняшним юбилеем, что не всякому из нас выпадает на долю такая благодарность потомства, как Вам.

Я помню и горькие минуты в Вашей жизни; помню Вашу печаль, даже и слезы, что артисты не так понимали Ваши типы, как нужно было и как следовало их понимать, и когда Вы после усилий и трудов, после объяснений и наставлений видели, что, наконец, артисты постигли Вашу мысль, Вы радовались тогда и печаль Ваша сменялась ликованием.

Пожелаю Вам, дорогой Гавриил Никитич, еще много лет здоровья для плодотворной деятельности на благо и на преуспеяние родного Вам театра.

Позвольте мне, благодарному вашему ученику, с чувством сыновней любви, публично обнять Вас и расцеловать незабвенного руководителя и наставника.

Константин Димитр. Кипиани.

29 Апреля 1901 г.

г. Тифлис

Գ. Սունդուկյանի երկերը, մասնավորապես պիեսները, ինչպես վերևում նշեցինք, թարգմանվել են վրացերեն դեռևս 1870-ական թվականներից: Այսպիսով, հետզհետե, Ռափիել էրիսթավիի, Իոսեբ Բաքրաձեի, Վաստ Աբաշիձեի և Դավիթ քաչ. Տեր-Դավթյանի միջոցով, թարգմանվել են բոլոր այն պիեսները, որոնց բեմադրությունը հաջողվել է վրաց թատրոնում: Սակայն այս թարգմանություններից չնչին մասն էր հրատարակված մինչ 1950 թվականը, այսինքն՝ մինչև մեծ թատերադրի ծննդյան 125-ամյակի տոնակատարությունը:

Մինչև 1950 թվականը հիշյալ թարգմանություններից հրատարակված էին «Վարդիկի վեչերը»¹, «Պեսպո»-ն², «Գիշերվան սարբը խեր է»³ և «Կտակ. իմ մահն ու թաղումը»⁴: Մնացած երկերի (պիեսների) թարգմանությունները ձեռագիր վիճակում պահվում էին Թբիլիսիի թատերական թանգարանում, իսկ մեկի, այն է՝ «Օսկան Պետրովիչն էն կինքում»-ի, մի վարիանտը, առկա է Հայաստանի դրական թանգարանում (Գ. Սունդուկյանի արխիվում)⁵:

1950 թվականի հոբելյանի օրերին Թբիլիսիում, վերջապես, լույս տեսավ Գ. Սունդուկյանի երկերի միահատորյակը վրացերեն, որի ախտղոսաթերթը կարգացվում է այսպես.

«Գ. Սունդուկյանց. Պիեսներ, Ի. Գրիշաշվիլու խմբագրությամբ, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով», Սարճոթա Մծեբալի [Սովետական գրող] հրատարակչություն, Թբիլիսի, 1950, 8000 տպաքանակով:

Գիրքը բացվում է Գ. Սունդուկյանի լուսանկարով և վրացերեն ֆաբրիմիլետով, որին հետևում է Ի. Գրիշաշվիլու «Ներա-

¹ «Իվերիա», 1879, № 5—6, էջ 74—116:

² Նույն տեղում, 1880, № 3, էջ 205—216, և առանձին, Թբիլիսի, 1880, 80 էջ, նաև՝ Շ. Թարովաշվիլի, եղբայրակից սովետական պետությունների դրականությունը, Բ հրատ. Թբիլիսի, 1946, էջ 579—599 (համառոտած):

³ Առանձին գրքուկով՝ Թբիլիսիում, 1911:

⁴ «Թեմի», 1912, № 65:

⁵ «Օսկան Պետրովիչն էն կինքում, կտակ մի արարվածով, Գաբրիել Սունդուկյանցի (թարգմանություն հայերենից)», ձեռագիր տետրի ծավալով, 8 էջ:

ծական» հոգւածը՝ «Սունդուկյանցը վրացական բեմի վրա» (էջ 5—28), որը 1952 թ. սկսած արտատպւեց «Գրականագիտական պրպտումներ» ժողովածուում (մի քանի հրատարակութեամբ) մի ալ, այն է՝ «Գաբրիել Սունդուկյանցը և վրաց հասարակայնութիւնը» վերնագրով: Վերջինս լույս տեսավ նաև հայերէն թարգմանութեամբ՝ «Սովետական գրականութիւն և արվեստ», 1950, № 7, էջ 119—133:

Միհատորյակի բուն նյութն են կազմում Գ. Սունդուկյանի հետեւյալ պիեսները.—

ա. «Պեպո», իր՝ հեղինակի թարգմանութեամբ (էջ 1—64),

բ. «Խաթաբալա», թարգմ. Իոսեբ Բաքրաձեի (էջ 65—139),

գ. «Քանդած օջախը», թարգմ. նույնի (էջ 141—209),

դ. «էլի մեկ ղոհ», թարգմ. Վ. Աբաշիձեի (էջ 210—281),

ե. «Բաղնըսի բոխչա», թարգմ. նույնի (էջ 283—311),

զ. «Գիշերվան սաբըր խեր է», թարգմ. նույնի (էջ 313—327),

է. «Օսկան Պետրովիչն էն կինքումը», թարգմ. Դ. Տեր-Դավթյանի (էջ 328—341):

Բուն նյութին կցւած են Ի. Գրիշաշվիլու կազմած «Ծանոթագրութիւնները» (էջ 343—358) և «Բառարան»-ը (էջ 359—366), ալի բաղմաթիվ սլատկերներ և աֆիշների ընդօրինակութիւններ:

Սույն հրատարակութեամբ, ինչպես մի ալ առիթով մենք արդեն նշել ենք¹, մեծ ծառայութիւն մատուցեց վրաց հասարակութեանը հայ մեծ թատերագրի ստեղծագործութիւնը նրան մատչելի դարձնելու համար, որի կապակցութեամբ ղգալիորեն աշխուժացավ հետաքրքրութիւնը Գ. Սունդուկյանի նկատմամբ նաև վրաց թատրոնում, որտեղ վերակենդանացավ «Պեպո»-ի բեմադրումը, այն էլ շատ հաջող (երբեմն հայ դերասանների մասնակցութեամբ):

Ցավալի է միայն, որ այս միհատորյակում ամփոփւած չեն Գ. Սունդուկյանի մյուս երկերն ևս, որոնք վաղուց առկա են

¹ Լ. Մելիքսեբ-Քեկ, Ի. Գրիշաշվիլին և հայ գրականութիւնը, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1956, № 2, էջ 34, նույնը վրացերէն «Թրիլիսիի Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի աշխատութիւնները», հ. XI, 1957, էջ 255:

վրացերեն թարգմանությամբ, օրինակ, «Վարինկի վեչերը», իսկ 1911 թվականի օգոստոսի 11-ին Բորջոմիում գրած «Կտակ»-ը ամբողջապես ղետեղված է գիտական հրատարակչի «Ներածական» հոդվածում իբրև լույս մեջբերում (ցիտատ)։

Մի շարք դժեռ Գ. Սունդուկյանի կյանքից Ի. Գրիշաշվիլին բնութագրում է իր «Հին թատրոնում» («Զվել թեատրշի») գրքում, Թբ. 1948, էջ 95—96 և հետագա հրատարակություններում։

Հիշատակության արժանի է նաև «Զինորս Պեպոյի երգը», որը Ի. Գրիշաշվիլին հորինել է «Պեպո» կինոֆիլմի ձևակերպման առնչությամբ, հատուկ պատվերով (առաջին անգամ տպվեց «Կոմունիստի» թերթում 1935 թ. № 97, ապա սխտեմատիկաբար վերահրատարակվում է բանաստեղծի միհատորյակում)¹։

Առանձնապես հետաքրքիր են Գ. Սունդուկյանի երբեմնի խոհարար Յակոբ Թութաձեի հուշերը Գարրիկի կյանքի ինտիմ մի շարք դժեռի մասին, որը՝ Թութաձեից լսելով՝ գրի առավ և հրապարակ հանեց Իլիա Ճավճավաձեի «Իվերիա»-ի երբեմնի աշխատակից Իլիա Զուրաբաշվիլի-Էլեփթերիձեն²։ Մի շարք այլ դժեռ Գ. Սունդուկյանի կյանքից նշված են մեռ³ և հանգուցյալ դոց. Իվ. Բեգլարովի⁴ հոդվածներում (վրացերեն), ինչպես նաև Գ. Բուխնիկաշվիլու գրքում⁵։

* * *

Գ. Սունդուկյանի ամբողջ ստեղծագործությունը, այսինքն՝ ինչպես պիեսները (կատակերգություններ), նույնպես և

¹ Սրա հայերեն թարգմանությունը կատարել է Արմեն Ծովակը (1935) և Ս. Կապուտիկյանը (1941, 1951)։

² Իլիա Զուրաբաշվիլի (Էլեփթերիձե), Գարրիկ Սունդուկյանցը իբրև մարդ (Ե՛ր քանի էպիգրոդ նրա ինտիմ կյանքից), «Մնաթորի», 1937, № 6—7, էջ 189—195, նույնի հոդվածը «Լիտ. Սաբարթվելո»-ում, 1937, № 15։

³ Լ. Մելիսեթ-Բեկ, Գարրիկ Սունդուկյանի ծննդյան 100-ամյակի առթիվ, «Կոմունիստ» օրաթերթ, Թբիլիսի, 1926, № 9։

⁴ Իվ. Բեգլարով, Հայ ժողովրդի մեծ թատերագիրը (Գարրիկ Սունդուկյանի մահվան 25-ամյակին). «Մնաթորի», 1937, № 6—7, էջ 186—188։

⁵ Գ. Բուխնիկաշվիլի, Գարրիկ Սունդուկյան, Թբիլիսի, 1950, 86 էջ (վրացերեն)։

«Վարինկի վեհերը» պատմվածքը և Համալի ու Հադիդի մասլահաթները, գրված Թիֆլիսի բարբառով (բացի միմիայն «Ամուսիններ» պիեսի [1889], ուր իբրև բացառություն օգտագործված է աշխարհաբարը), առանձին-առանձին կտավներ են հին Թիֆլիսի կյանքից, որոնք միասին վերցրած կազմում են մի հոյակապ գաղերես (պատկերասրահ) բառիս բուն առումով:

Խոսելով, մասնավորապես, Գ. Սունդուկյանի պիեսներին մասին, չի կարելի չնկատել, որ բոլորի «գործողությունը» կատարվում է Թիֆլիզում, ինչպես նշում է և ինքը հեղինակը:

Այսպես, օրինակ, եթե հեղինակի խոսքերով ասենք, 1. «Գիշերվան սաբըր խեր է» կատակի (1863) «անցքը պատահում է Թիֆլիսում Օսկան Պետրովիչ Իրասածովի տանը 1863-ին»։ 2. «Խաթաբալա», կատակերգության (1866) «անցքը պատահում է Թիֆլիզում 1860-ին»։ 3. «Օսկան Պետրովիչն էն կինըրումը» կատակի (1866) «անցքը պատահում է դժոխքի կտուրի վրա. Օսկան Պետրովիչի տանը [Թիֆլիսում] և դժոխքի մեջ»։ 4. «Եվ այլն կամ նոր Դիոգինես» կատակի (1869) «անցքը պատահում է Թիֆլիզում վաթսունական թվականներին»։ 5. «Էլի մեկ զոհ» կատակերգության (1870) «անցքը պատահում է Թիֆլիզում 1860-ին»։ 6. «Պեսպո» կատակերգության (1870) «անցքը պատահում է Թիֆլիզում 1870-ին»։ 7. «Քանդած օջախ» կատակերգության (1872—1873) «անցքը պատահում է Թիֆլիզում 1871-ին»։ 8. «Ամուսիններ» կատակերգության (1889) «անցքը պատահում է Թիֆլիզում», ժամանակը անորոշ, 9. «Բաղնիսի բոխա» կատակի (1907) «անցքը պատահում է Թիֆլիզում անցյալ դարում»։ 10. «Սեր և ազատություն» կատակերգության (1912) «անցքը պատահում է Թիֆլիզում 1909 թվի ամառը. մի օրվա ընթացքում», 11. «Կտակ» կատակերգության (1912) «անցքը պատահում է Թիֆլիզում մեր օրերին, Ալուբլյանի տանը»:

Այսպիսով, Գ. Սունդուկյանի պիեսներում պատկերված իրականությունը՝ դա հիմնականում XIX դարի երկրորդ կեսի Թիֆլիսի կենցաղն է, այսինքն՝ մինչնեֆորմյան և ետնեֆորմյան, երբ վաղեմի ֆեոդալական հարաբերությունները տեղ էին տալիս նոր՝ կապիտալիստականին և երբ Թիֆլիսի տարաշերտ ազգաբնակչության մեջ ափսիսով դեր էին խաղում առևտրական-

վաշխառուական տարրերը, որոնց զոհ էին գնում ցածր խավի ներկայացուցիչները, նրանց թվում կիրատոները և դարաշուխենները: Պիեսների պերսոնաժները մեծ մասամբ հայեր են, որոնք խոսում են Թիֆլիսի բարբառով. նաև կոտորած վրացերենով կամ ռուսերենով:

Զնայած այն հանգամանքին, որ այս պիեսների կենտրոնում «քաղբենի» Թիֆլիսն է ներկայացված «հայ համայնքով» հանդերձ, սակայն նրանց մեջ մենք հանդիպում ենք մասամբ և այլ «տիպերի», առաջին հերթին, իհարկե, վրաց իրականությանը, ինչպիսիք են, օրինակ, Քիտեսին՝ «խամ իմերեկ, Իրասածովի ծառան» («Գիշիրվան սաբրը խեր է»), Թինան՝ «աղախին»-ը («Կտակ») և այլն:

Առանձնապես աչքի են ընկնում վրացական անձնանունները, որ կրում են Թիֆլիսաբնակ հայ պերսոնաժները, օրինակ Կեկեկ («Գիշիրվան սաբրը խեր է»), «Օսկան Պետրովիչն էն կինքումը», «Պեպո»), Քեթեան («Խաթաբալա»), Նինո («Նվ ալն կամ նոր Դիոգինես»), Քանդած օջախ»), Բարբարե («Էլի մեկ զոհ»), Նատո (Նույնտեղ, «Սեր և ազատության»), Քալի («Քանդած օջախ»), Շաբարո («Սեր և ազատության») և այլն:

Մի շարք գործող անձինք հանդես են գալիս պիեսներում վրացական տարազով, օրինակ.

«Խաթաբալա»-ում. Մարգարիտը «տեղական վրաց հագուստով, գլուխը վրացնակ զարդարված», որը «առաջին արարվածում հագնված է բավականին հասարակ և առանց գոտկի, իսկ երկրորդում և չորրորդում ամենաշքեղ ձևով, գոտկով և զանազան ակնեղեններով զարդարված»: Նատալիան, որն ունի «երկու ձեռք բուն վրաց գեղեցիկ հագուստ՝ մինը առաջին արարվածում, իսկ մյուսը երրորդ և չորրորդ արարվածներում, գլուխը վրացնակ զարդարված»: Քեթեանը, որին բնորոշ է «վրաց հագուստ, գլուխը վրացնակ զարդարված, հասարակ չիբիլա, մուգ, դալամբարի ճակտի աղլուխ առանց քորոցի, մետաքսյա սև գլխի-փաթաթան, մուգ մաշիշակագույն դոշ սև թավիշե ժապավենով բոլորած և հասարակ քորոցով, մուգ միխակագույն մետաքսյա դերիա և քիրմանի շալե սև գոտիկ»:

«Պեպո»-ում, Պեպոն, որն «ունի երկու ձեռք Թիֆլիզի բուն լոթու հագուստ՝ մինը հասարակ, մյուսը զարդի» և «Իմերեթու

մետաքսի գոտի», Շուշանը «վրացնակ հասարակ հագուստ»-ով, գլխին «սև ճակտի-աղլուխ, սպիտակ հաստ չիբի-լա», Կեկելը նույնպես «վրացնակ հասարակ հագուստով (ճակ-տի-աղլուխ, չիբիլա, շիբ դերյա և այլն), Գիֆոն նույնպես «վրացնակ հագուստ»-ով, աչսինքն՝ «սպիտակ շապիկ, կտրծքը սև դաշթանով բոլորած, սպիտակ դալամբարն կամ մուգ-կա-պույտ նաշուրի արխալուխ, սև մահուդից կարճ և լայն շալ-վար» և այլն: Կակուլին, որին բնորոշ է «Թիֆլիսի բուն պաժարնու կամ կինտոյի շքեղ հագուստ»։ Գիգուլին «վրացնակ հասարակ հագուստ»-ով (արխալուխ, կաբա):

«Քանդած օջախ»-ում. Խախուն «վրաց հագուստ»-ով, «գլու-խը վրացնակ ծածկված հասարակ չիբիլայով և մուգ-դալամ-բարն ճակտի-աղլուխով, առանց բորոցի» և այլն: Քալին, որին բնորոշում է «հագուստը բոլորովին վրացնակ՝ չիբիլայով, ճակտի-աղլուխով և դոշ ու գոտիով» և այլն: Դարչոն «տեղա-կան հագուստ»-ով (կաբա). Մարքան «բոլորովին վրաց հա-գուստով». Փոփոն «վրաց շքեղ հագուստով». Նինոն «վրաց նույնպես շքեղ հագուստով», նաև բազմաթիվ կանայք (մոտա-վորապես քսան հոգի), զանազան հասակի, բոլորն էլ «վրաց շքեղ հագուստներով»:

«Բաղնիսի բոխչա»-ում, Թալան, Կատարինեն, Էլիսաբեդը, Մարոն, Սանվելը և Օհանեսը՝ բոլորը «տեղական հագուս-տով», մասնավորապես Թալալը՝ «վրացնակ գլխով, ոսկեկար ճակտի աղլուխով, ծաղկե կարմիր դոշ ու գոտիով և զանազան ակնեղեններով զարդարված»:

«Սեր և ազատութուն»-ում. Դայանեն՝ «բոլորովին վրաց-նակ մուգ հագուստով, գլուխը վրացնակ ծածկված», աղախինը «տեղական հագուստ»-ով և ծառան «չերքեղե գեղեցիկ հա-գուստ»-ով:

«Կտակ»-ում, Խեչոն՝ «տեղական սև շերքեղի հագուստով», Էրբեմն «գլինված է ասիական ձևով». Թինան «տեղական սև հագուստով, գլուխը միշտ ծածկած սև փաթոթոցով» և այլն:

Գ. Սունդուկյանի տված տիպերի մեջ թերևս Պեպոն է միա-կը, որին թատերագիրը ներկայացնում է «Թիֆլիզի բուն լոթու հագուստ»-ով, մինչդեռ Կակուլին նույն «Թիֆլիզի բուն պա-ժարնու կամ կինտոյի շքեղ հագուստ»-ով է օժտված:

Քանի որ «Պեպո» կատակերգությունը արձագանքում է դասակարգային պայքարին, այն է համբարների ապստամբությանը Թիֆլիսում, որը տեղի ունեցավ 1865 թ. ամռանը, և այդ ապստամբության արխիվային գործերում, որ մենք ենք հրատարակել, ապստամբների շարքերում հիշվում է ոմն Пепо Мамулов, դժվար չէ կոահել, որ Պեպոյի կերպարը Գ. Սունդուկյանը հյուսել է ի նկատի ունենալով այդ անձնավորությունը: Եվ դրան է, իսկապես, համապատասխանում պիեսի առաջին արարվածի վերջում (տեսիլ ԺԱ) տված Պեպոյի հանրածանոթ մենախոսությունը (մոնոլոգը)¹:

* *
*

XIX դարի Թիֆլիսի սպեցիֆիկ կենցաղի և կոլորիտի ներկարգիրը դարձանալի կերպով առնչվում և զուգագիպում է երեք վրաց թատերագիրների ստեղծագործությունը, այն է՝ Դիորգի էրիսթավիի (1811—1864), Զուրաբ Անտոնովի (1820—1854) և Ավքեսնտի Յագարելիի (1857—1902), որոնց պիեսները մասամբ կանխում են Գ. Սունդուկյանին (էրիսթավիին, Անտոնովը), մասամբ հաջորդում են նրան (Յագարելի): Իսկ ընդհանուր առմամբ նրանք պատվում են հին Թիֆլիսի թեմատիկայի շուրջը:

Այստեղ բավական է հիշել Գ. էրիսթավիի «Բաժանումը» և «Ժլատը», Զ. Անտոնովի «Արևի խավարումը Վրաստանում» և Ս. Յագարելիի «Խանումա»-ն (որի վրա է հիմնված Վ. Դուլիձեի «Քեթո և Կոտե» օպերան), որպեսզի պարզ լինի այն փաստը, որ ինչպես հիշյալ վրաց թատերագիրների, նույնպես և Գ. Սունդուկյանի գործերը, հիմք ունենալով հին Թիֆլիսի կոլորիտն ու մթնոլորտը, այնպես ազգակից են իրար և հնչում են կատարյալ ներդաշնակությամբ, որը կարոտ է հատուկ և խորաթափանց քննություն:

¹ Լ. Մելիսեք-Քեկ, Արխիվային նյութեր Թիֆլիսի համբարների 1865 թ. «Ելույթի» պատմության շուրջը. «Սախատորիո մոմարե» [Պատմության տեղեկագիր], III, Թբ. 1947, և առանձին, էջ 7—144, հատկապես 122—123, նույնի՝ Համբարների ելույթը Թիֆլիսում 1865 թվականին, Գ. Սունդուկյանը և հայ մտավորականները, «Խորհրդային Վրաստան», 1938, № 19 և 20:

Այսուհանդերձ, Գ. Սունդուկյանի ստեղծագործությունը զուրկ չէ և վրացագիտական նշանակությունից:

2^է՝ որ այն բավականին հարուստ կերպով հագեցված է վրացական բառապաշարով և բանահյուսության նմուշներով, որոնք նույնիսկ հիմք են ծառայել հատուկ գիտությունների համար թեկնածուական աստիճան ստանալու:

Սրանից մեկն է Թբիլիսիի համալսարանի հայագիտության ամբիոնի նախկին ասպիրանտ (այժմ՝ վրացական ՍՍՌ ԳԱ լեզվագիտության ինստիտուտի կրտսեր գիտ-աշխատող) Մերի Մեսխիշվիլու, վրացերեն, թեմայով՝ «Գ. Սունդուկյանը և վրացական բառապաշարը ու դարձվածաբանությունը նրա երկերում» (պաշտպանված Թբիլիսիի համալսարանում, XII, 1950 թ.)¹:

Դիտարտացիոն շարագրությունը բաղկացած է երեք մասից, որոնցից առաջինի նյութն է՝ «Գ. Սունդուկյանը և հայոց լեզվի Թիֆլիսի բարբառը», երկրորդի՝ «վրացական բառապաշարը Գ. Սունդուկյանի երկերում» և երրորդի՝ «վրացական արտահայտությունները (դարձվածաբանությունը) Գ. Սունդուկյանի երկերում»:

Վրացական բառերի թիվը Գ. Սունդուկյանի երկերում, բառ Մ. Մեսխիշվիլու հետադոտության, հասնում է մինչ 235, որոնց մեծ մասը կրկնվում է հաճախակի: Ըստ խոսքի մասերի դրանցից ամենաշատը գոյականներն են՝ 161, ավելի պակաս ածականները՝ 32, բայերը՝ 18 և անձև բառերը՝ 24, վերջինի մեջ են մակերայները, մասնիկները, շաղկապները և հետդիրները (նախդիրները):

Վրաց դարձվածաբանության օրինակներն են առածները, ասացվածքները և վրացական բանաստեղծություններից ու խաղերից հատվածները:

Մյուս գիտարտացիան՝ դա Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Աշոտ Քոչոյանի շարագրու-

¹ См. М. В. Месхивили. Г. Сундукян и грузинская лексика и фразеология в его произведениях, Автореферат. Тбилиси, 1950, 12 էջ:

Մյուսն է հայերեն՝ «Թբիլիսիի բարբառի կառուցվածքային առանձնահատկությունների արտացոլումը Գ. Սունդուկյանի երկերում» թեմայով (պաշտպանված Երևանում ԳԱ միացյալ խորհրդի նիստին XII 1958 թ.)¹:

Այստեղ, ի միջի այլոց, մանրամասն նշված են Գ. Սունդուկյանի գործածած՝ Թբիլիսի բարբառի մեջ նկատված փոխառությունները այլևայլ լեզուներից, մասնավորապես և վրացերենից, որոնց թիվը, ըստ Ա. Քոչոյանի, մոտ 300 է: Ըստ խոսքի մասերի դրանք են՝ գոյականները 165, ածականները՝ 29, բայերը՝ 24, չհոլովվող բառերը՝ 30, վրացերեն դարձվածքները՝ 30, առածները՝ 10 և ժողովրդական երգեր՝ 3:

* *
*

Մի կողմ թողնելով վրացական բառապաշարի տեսությունը Գ. Սունդուկյանի երկերում, որը կարող է մեղ հեռու տանել, մենք այստեղ նպատակահարմար ենք գտնում կանգ առնել թատերագրի կողմից օգտագործված վրաց ֆոլկլորային նյութերի վրա:

«Խաթաբալա»-ում (I, 2, 6) Գարասիմ-Կարապետ Յակուլիչ Ջամբախովը ասում է Իսային. «Թու գուլի գուլորս, ասած է, բաղա օր [իս] խելիթ իմեմվա», այսինքն՝ «Եթե սիրտն ուզում է, գաթան երկու ձեռքով կուտեն»:

Նույն տեղում (I, 2, 7) Իսային ասում է Ջամբախովին. «Քրթամի ջոջոխեթս դանաթիլերս», այսինքն՝ «Կաշառքը դժոխքը կլուսավորեն»:

Նույն տեղում (II, 9) Խամփերին արտասանում է. «Շեմով-դըդի փեխի, գծալորդեթ դմերթի, փեխի չեմի, կվալի անգելոզիսա» (ժողովրդական), այսինքն՝ «Ոտս դրի ներս, աստված օգնե ձեզ, ոտն իմ, հեռքը հրեշտակինը»:

Նույն տեղում (III, 1, 3) Գարասիմ-Կարապետը արտասանում է. «Էրեխա վուխաս լսում էի, թե՛ ժանգմա թոփի, թոփմա

¹ А. К. Когоян. Отражение структурных особенностей Тбилисского армянского диалекта в произведениях Г. Сундукяна. Автореферат. Ереван. 1958, 26 էջ:

մղելի, մղելմա թխա, թխամ վենախի շեհամա», այսինքն՝ «Փանգր հրացանին, հրացանը գալլին, գալլը ալծին, ալծը ալ գին կերավ»¹:

Այս իսկ պիեսում (III, 1, 5) Մարգարիտի խոսքերին՝ «Աբելը խոմ չի՞մ» Գ. Սունդուկյանը կցում է մի հետաքրքիր ծանոթագրություն այսպիսի բովանդակությամբ (որը պիեսի վրացերեն թարգմանության մեջ բաց է թողնված). «Աբելը Թիֆլիզի հասարակությանը ծանոթ մի հարպիկ անձն էր, որ հանդիսավոր տոներին երեք-չորս սաժենաչափ ձողերի վրա կանգնած, իր ձեռնածուկներով զվարճացնում էր ժողովրդին և զարմանալի դյուրությամբ ման էր գալիս այն ձողերում»²:

«Եվ այլն կամ նոր Դիողինես» կատակի մեջ (II, 4, 8, 11) Յավանդուլը երգում է.

Լոթերո, նետաի չվենա, արիա-լալի,
Դղես մոգվեցա շվերա-լիսենա, թարիա-լալի.
Շեմոդգոմամա³ բախուսի, ալիա-լալի.
Սաճնախելչի չաաղենա, թարիա-լալի: [1]

Բադինդ զամթարի հղինավղես, արիա-լալի,
Գինդ զվավից վեղարա հփրինավղես, թարիա-լալի.
Վեր շեզվաչինոս սիցիվեն, արիա-լալի.
Թու թավչի զվինո պրծղինավղես, թարիա-լալի: [2]

Մինդա վսվա, սաղվինո⁴ մամե⁵ արիա-լալի.
Մոձղվարո, դաստուրի դամե, թարիա-լալի.
Մղիս զլապվա ցողվիթ ծեսիա, արիա-լալի,
Մարզվնաս ամիս մոծամե, թարիա-լալի: [3]

¹ Հմմ. Լ. Մելիխոբ-Ռեկ, Գրականագիտական դիտողություններ (Ս. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» գրքի հրատարակության առթիվ): «Սովետական Վրաստան», 1957, № 85:

² Այս Աբելին, ի միջի ալլոց, հիշում է և Պ. Պոռոջանն իր «Հուշերում»:

³ Ուզիդ՝ շեմոդգոմամամե.

⁴ » սաղվինե

⁵ » մոմե

Նոնմ րա էրթխել ինեբա, արիա-լալի,
Ղուրձնիս ծվենիս գեմովնեբա¹, թարիա-լալի,
Թիթոն նունուա միուջդա, արիա-լալի,
Ծղալի պիրուողվթ դաանեբա, թարիա-լալի: [4]:

Ամա սոփիսա ցխովրեբա, արիա-լալի,
Վեբցիլիթ ար մոխպովեբա, թարիա-լալի,
Մդիդարնի բեվրնի ղոփիլան, արիա-լալի,
Օխրաթ քչենիաթ քոնեբա, թարիա-լալի: [11]

Րոս դավեսծրոթ դադափխուլսա, աթիա-լալի.
Վեկսա վսխդեթ մծվանեթ² մոսխլսա, թարիա-լալի.
Զվեն ծիթեկս ղվինոս վեծափնեթ, արիա-լալի,
Վարդի վանեբոթ բուլբուլսա, թարիա-լալի» [13]

Հայերեն թարգմանությունը Ն[իկողայոս] Տ[եր]-Ղ[ևոնդ-
յան]ի.

Ընկեր լոթիք. երանի՜ մեզ, արիա-լալի,
Եկեք քեֆի բանանք հանդես, թարիա-լալի.
Աշունքն եկավ, անուշ գինին, արիա-լալի,
Երթանք, ձոնենք մենք Բաբոսին, թարիա-լալի: [1]:

Որքան էլ ցուրտ լինի ձմեռ, արիա-լալի,
Թեկուզ սառչին դիփ ագռավներ, թարիա-լալի.
Մեզ չեն աղդիլ սառնամանիք, արիա-լալի,
Երբ գլխի մեջ ցլան գինիք, թարիա-լալի: [2]

Գավը դես բեր, կամիմ խմել, արիա-լալի,
Իրավունք տուր, խոստովնահեր, թարիա-լալի.
Ջուր կուլ տալը մեղավորաց, արիա-լալի,
Ջրհեղեղով տվեց աստված, թարիա-լալի: [3]

¹ Ուղիղ՝ գեմեբա:

² Ուղիղ՝ մծվանիթ:

Նոյ Նահապետն երբ կամեցավ, արիա-լալի,
Որթան հյուսիս համը տեսնել, թարիա-լալի.
Ինքը վաղան մոտ նստեցավ, արիա-լալի,
Զուրն անասնոց թողեց խմել, թարիա-լալի: [4]

Մեր առօրյա կյանքն աշխարհի, արիա-լալի,
Արծաթ-ոսկով շենք ձեռք բերի, թարիա-լալի.
Շատ ենք տեսել մենք հարուստներ, արիա-լալի,
Իրանք մեռան, կայքը անտեր, թարիա-լալի: [11]

Երբ ուր կանաչ բացվի դարուն, արիա-լալի,
Կերթանք դաշտը մենք դարդարուն, թարիա-լալի.
Եվ զոռ կտանք կարմիր գինուն, արիա-լալի,
Վարդը թողած սոխակներուն, թարիա-լալի: [13]

«Պեպո»-ում (II, 7) էփեմիան դիմում է Արուսիին, հիշեցնելով ժողովրդական երգը.

Կոկոբո Վարդո, ար դամագդո, վար մոնա շենի,
Պիրզեդ գաքվս խալի, շավ-շավի թվալի նախվա
մսուրս շենի¹...

Այսինքն՝

Կոկոն իմ վարդի՛կ, մի՛ թողնիր ինձ, քո ստրուկն
եմ ես,
Երեսիդ ունիս խալ, սև-սև աչեր, տեսիդ կարոտ
եմ ես:

Նույն տեղում (II, 14) Արուսիին հիշեցնում է Պեպոյին,
«Մեկամ Թավիսի կուդի մոհիվանա մոծամեթ»². այսինքն՝
«Աղվեսն իր պոչը բերեց վկա»:

«Քանդած օջախ»-ում (I, 6) Խախոն դիմում է Սալումեին
ասելով. «Յոլ դա բմրիս շխուրի բեզվեն կացս դադրա էդոնա»,
այսինքն՝ «Ամուսինների վեճը հիմարը ապահարդան կարծեց»:

¹ Վերջին 3 բառը ուղիղ՝ «սուրփաթ մշվենի շեն»:

² Ուղիղ՝ «Մեկամ Թավիսի կուդի մոծամեթ մոհիվանա»:

Նույն տեղում (II, 4) Գիժ-Մողին հիշեցնում է Քալիին ժողովրդական հրդեհը:

Հոյի՛ դարադրուլո մթվարեո,
Բնեւ Վղիվար մոմեխմարե,
Մնաթորլադ դանմիարե,
Մեց դանմինաթլե արե:

Այսինքն՝

Ով փառահեղ լուսին,
Նստած եմ խավարում, օգնի՛ր ինձ,
Զգի՛ր քո փայլուն լույսդ ինձ վրա
եվ լուսավորի՛ր քոլորի շուրջս:

Նույն տեղում (II, 7) Քալին հիշեցնում է Փարսիդին ժողովրդական առածը. «Մին ծղալի դա ուկան խմալի», այսինքն՝ «Առջեդ ջուր, հետեդ սուր»:

«Բաղնըսի բոխա»-ում (I, 7) Կատարինեն վերհիշում է ժողովրդական առածը՝ «չեն ջրբիխար՝ ցխոնեբուլաս», այսինքն՝ «Դու ավելի լավն ես, քան հանգուցյալը»:

«Սեր և ազատություն»-ում (II, 2) Շաքարոն հիշեցնում է Գասպարին ժողովրդական ասացվածքը. «Բեդառնի դախիսոցենն, վիրեբ դարչաթ մեյդանի»², այսինքն՝ «Նժույգ ձիաները սատկեցին, հրապարակը մնաց իշխաններին»:

«Մախլաս»-ում (I, 1) հայերեն թարգմանությամբ է օգտագործված «արի՛ Սիրոնի գլխին կակալ ածա» արտահայտությունը:

Գ. ՍՈՒՆԳՈՒԿՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ա. Գ. Սունդուկյանի նամակները վրացերեն³.

1. Նամակ խմբագրության. «Դրոբրա», 1883, № 219;
2. » » » «Իվերիա», 1886, № 49;
3. Նամակ խմբագրության. «Իվերիա», 1901, № 99:

¹ Ուղիղ՝ սջրիխար:

² Ուղիղ՝ մոնդանի:

³ Այս նամակները մեր հայերեն թարգմանությամբ տես «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1950, № 8, էջ 78—80:

բ. Գ. Սունդուկյանի երկերը վրացերեն քաղգամանությամբ

1. Վարինկի վեճերը. պատմվածք Գ. Սունդուկյանցի, թարգմ. Պ[ետրոս] Ո[մեկաշվիլ]ու. «Իվերիա», 1879, № 5—6, էջ 74—116:
2. Պեպո. Կատակերգություն երեք գործողությամբ, հեղինակի թարգմանությամբ, «Իվերիա», 1880, № 3, էջ 205—317:
3. Նույնը առանձին զբոլով, Թբիլիսի, 1880, 80 էջ:
4. Նույնը զբոլով՝ Շ. Թաբուկաշվիլի, եղբայրակից սովետական ռեսպուբլիկաների գրականությունը. բ. հրատ., Թբ., 1946, էջ 579—599:
5. Գիշերվան սարը խոր է, վողկիլ մեկ գործողությամբ Գ. Սունդուկյանցի, թարգմ. [Վ. Աբաշիձեի], Թբ., 1911, 30 էջ:
6. Գ. Սունդուկյանցի կտակը, թարգմ. Ի. Գրիշաշվիլու. «Թեմի», 1912, № 65:
7. Գ. Սունդուկյանց, Պիեսներ, խմբագրություն, առաջարան, ծանոթագրություններ և բառարան Ի. Գրիշաշվիլու, Թբ., 1950, XXVIII, 368 էջ:

գ. Հատուկ գրականություն նրա մասին

1. Լ. Մելիքսեթ-Քեկ, Գաբրիել Սունդուկյանցի ծննդյան 100-ամյակի առթիվ, Գաբրիել Սունդուկյանցի հիշատակին. «Կոմունիստի», 1926, № 9:
2. Իվ. Ռեզլարով, Հայ ժողովրդի մեծ թատերագիրը (Գաբրիել Սունդուկյանցի մահվան 25-րդ տարեդարձի առթիվ). «Մնաթոքի», 1937, № 6—7, էջ 186—188:
3. Իլիա Զուրաբիշվիլի (էլեֆթերիձե), Գաբրիել Սունդուկյանցը իբրև մարդ (Մի քանի էպիզոդ նրա խնամ կյանքից), նույն տեղում, էջ 189—195:
4. Լ. Մելիքսեթ-Քեկ, Գ. Սունդուկյանցը վրաց պոեզիայում. «Լիտերատուրուի Սաբարթվելո», 1940, № 3:
5. Նույնի՝ Գ. Սունդուկյանցը և վրաց թատրոնը, նույն տեղում, 1940, № 15:
6. Գ. Ռուխնիկաշվիլի, Գաբրիել Սունդուկյան (Մինչհեղափոխության հայ և վրաց թատրոնների պատմությունից), Թբ., 1950, 86 էջ:
7. Նույնի՝ Գաբրիել Սունդուկյանը—ականավոր հայ թատերագիրը 1925—1950. «Լիտերատուրուի Սաբարթվելո», 1950, № 28:
8. Ա. Ռուբիկաշվիլի, Գաբրիել Սունդուկյանը. «Սախալիսո Գանաթվերա», 1950, № 28:
9. Ի. Գրիշաշվիլի, Վրաց-հայկական ստեղծագործական եղբայրակցության մեծ գործիչը, «Լիտերատուրուի Սաբարթվելո», 1950, № 28:
10. Նույնի՝ Գաբրիել Սունդուկյան (Ծննդյան 125-ամյակի առթիվ). «Կոմունիստի», 1950, № 149:

* *
*

Հին վրացերեն պարբերականներում (Գ. Սունդուկյանի պիեսների հիմադրությունների առթիվ).

1. «Դրոհրա» 1874, № № 426, 450
 - » 1875, »» 85, 97, 136, 137
 - » 1876, »» 6
 - » 1877, »» 38, 51, 118
 - » 1878, »» 84, 93
 - » 1879, »» 39, 55, 131, 254, 263
 - » 1880, »» 46, 222, 236
 - » 1881, »» 37, 220, 229, 250
 - » 1882, »» 21, 266, 271
 - » 1883, »» 213, 223:
 - » 1884, № 255
 - » 1885, № 9
2. «Իվերիա», 1887, № 6, 7, 8, 19
 - » 1886, » 44
3. «Բեարի», 1888, № № 43, 44, 45, 47
 - » 1887, » 5
4. «Կվալի», 1895, № 46
 - » 1896, » 51, 52
 - » 1897, » 31
 - » 1901, » 18, 19, 21, 37, 38, 39
5. «Սաքարթվիլոս կալենդարի», 1893:

* *
*

Մեր այս աշխատությունը արտադրության հանձնելուց հետո լույս տեսավ Գ. Սունդուկյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի 5-րդ հատորը (Երևան, 1961), ուր 9—332 էջերում հրապարակ է հանված երիտասարդ Գաբրիելի անձնական ինտիմ նամակները մոր հասցեով՝ գրված վրացատառ վրացերենով 1846—1855 թվականներին Վլադիկավկազից, Մոսկվայից, Պետերբուրգից և Դերբենդից (№ № 1—84): Այս պատճառով մենք հնարավորություն չունեցանք օգտագործել այդ նամակները սույն գլխում և կաշխատենք անդրադառնալ այդպիսիներին մեր աշխատության հաջորդ (2-րդ) գրքում:

Մ ՈՒ Ր Ա Յ Ա Ն
(1854—1908)

Գրիգոր Տեր-Հովհաննիսյան-Մուրացանը ծնվել է Շուշիում:
1874 թվականից հաստատվել է Թիֆլիսում և ծառայության
մտել իբրև հաշվապահ մի մասնավոր հաստատության մեջ:
Գրեթե ամբողջ կյանքը նա անց է կացրել Թիֆլիսում, ազատ
ժամերը նվիրելով գրական աշխատանքին: Վախճանվել է Թիֆ-
լիսում և թաղվել «եռշիվանքի» պանթեոնում¹:

* *
*

Վրաստանը և, մասնավորապես, Թիֆլիսը իրենց յուրահա-
տուկ կողմերով արտացոլվել են Մուրացանի բազմաթիվ երկե-
րում, սկսած 1884 թվականից:

«Հարուստները զվարճանում են» պատմվածքը (1884) լիո-
վին հյուսված է Թիֆլիսում նկատված կենցաղային մի այլան-
դակ երևույթի վրա:

Ահա «Ալեքսանդրյան այգին», «ազնվականական» կոչված
բարձրագիր ծառուղին և սրանց կից «տիկին Մարգարիտա
Բերնարի» կարանոցը:

Ահա և «Ծիրանավորը», «Մախաթի» լեռան հետևում գըտ-
նըվող տարածությունը, Քարափի թաղը, «կաթոլիկների գե-
րեզմանատանը» կից թաղը, նեղ փողոցներով, որտեղ տները
իրար վրա են «կիտված» և իրենցից ներկայացնում են «բազ-
մաթիվ խորշերի մի խառնուրդ», իսկ «տներից մի քանիսը
կպած են բարձր զառիվայրի ապառաժի կրժքին և նմանվում են
ավելի անգղների բներին»:

¹ Տե՛ս Մուրացան, երկերի ժողովածու հինգ հատորով, Երևան, 1951—
1954:

«Ի՞նչ լայնդ է» պատմվածքը (1885) Թիֆլիսի հետ կապված երկու պերսոնաժներին է վերաբերում:

Մեկն է վաճառականի որդի Արսեն Մաշտոցյանը, որի հոր խանութը գտնվում էր «Սիրունի փողոցի խոնավ քարվանսարաներից միում» և որի կերպարը հյուսված է Մթածմինդայի տոնակատարության կապակցությամբ:

Մյուսն է ձայնագրության ուսուցիչ Պլատոն Զումարչիձեն:

Գործող դեմքերից է նաև մի վրացի իշխան:

Գեղարվեստական գույներով է նկարագրված դեպի Մթածմինդա կատարվող ուխտագնացությունը:

Երիտասարդը ուղևորվել է դեպի «սուրբ Դավթի բարձրավանդակը, որի զառկվայրերի վրայով այդ միջոցին բարձրանում և իջնում էին բազմաթիվ կանայք և աղջկունք, ոմանք զույգ-զույգ, այլք խմբովին, շատերը թե թևի և այլն ըստ կարգին»: Եվ «Նրանցից մի քանիսը, իսկապես, ուխտ էին դնում սուրբ Դավթին, որը յուր փայլուն գմբեթով բազմած էր Մթածմինդայի կրծքի վերա. ոմանք ուխտից վերադառնում էին, բայց շատերը միայն այդ պատրվակով դուրս էին եկել նրա հովահար դարեանդների վերա դբոսնելու»:

Նա, այդ երիտասարդը, ցանկություն ուներ ամուսնանալ սրե է վրացի իշխանուհու հետ:

Եվ այս առթիվ հեղինակը ծաղրում է հայ երիտասարդներին, որոնք՝ գաղթելով Հայաստանից՝ Վրաստան՝ այստեղ փնտրում են իշխանական ծագման վկայաթղթեր:

Միջանկյալ, հեղինակը հիշատակում է նաև «Մոսկովսկայա բալկա» կոչված վայրը, որը ոչ այլ ինչ է, բայց եթե նույն «Մոսկովսկայա դաստավա»-ն, այսինքն այժմյան «Մոսկովսկայա փողոց»-ը (այսպես կոչված «Զեմմեկ»-ի դիմացը):

«Խոջիվանքում» վերնագիրը կրող էսքիզում (1886) նկարագրված են «աստվածածնա տոնին» Թիֆլիսում կատարվող տո-

նախամբույժուհիներն ու բեֆերը: Այսպես, օրինակ, «Հայ երիտասարդների մի փոքրիկ խմբի» Վերայի աշգիններից մեկում կաղմակերպված բեֆը, որի թամադան եղել է գերձիկ Սերգոն, թամադուհուհու ռենցուգ «գեղեցիկ, առողջակաղմ և զվարճախոս երիտասարդը»: Եվ այդ երիտասարդը Հայտնի է եղել բաղմաթիվ արկածներով՝ «Հավլաբարի կամուրջի վրա», «Բերդի (Մետեխի—Լ. Մ.-Բ.) դառիվայրի վրա», «Խոջիվանքի գերեզմանատանը» և այլուր: Իսկ վերջինում «կաստվածածնա անվամբ շինված մի հին եկեղեցի, ուր աստվածածնա տոնին հավաքվում է ուխտավորների մեծ բաղմունություն քաղաքի ամեն կողմից» և այլն:

Ապա հեղինակը բերում է մի երկախոսություն (դիալոգ), ուր գործածված է վրացերեն «գեդի ջան», այսինքն «մայրիկ ջան» արտահայտությունը և նշված են Հավլաբարի «Մաշո անունով հայտնի աղջկերբը».

«Մաշո անունով մեր Հավլաբարում բի՛շ աղջկերբ կան. այդադաղ (մետաքսագործ—Լ. Մ.-Բ.) Արուսիկի աղջկա անունն էլ Մաշո է. Հալլաբ (ալյուրավաճառ—Լ. Մ.-Բ.) Սաբոյի աղջկա անունն էլ Մաշո է. մեր Փեփելի բրոջ աղջկա անունն էլ Մաշո է, ... դարափ (դրամափոխ—Լ. Մ.-Բ.) Կակուլու բրոջ անունն էլ Մաշո է».

* *
*

«Անպատճառ իշխանուհի» պատմվածքում (1886) նշված է այն փաստը, որ երբ Տիրան Մարությանը իր հայրենիքից առաջին անգամ դալիս է Թիֆլիս, այստեղ հայերը «օտար լեզվով էին խոսում, մի-մի հայերեն խոսք միայն կիստոներից ու բախալներից (կանաչեղեն վաճառող—Լ. Մ.-Բ.) էր լսում», մինչդեռ 10 տարուց հետո՝ կրկին վերադառնալով Թիֆլիս՝ մեծ փոփոխություն նկատեց, այնքան, որ, օրինակ, օրիորդ Լադարյանի մասին խոսում էին, որ նա «Թիֆլիսի բոլոր հայուհիների մեջ ամենալավ հայագետը և հայախոսն է»:

* *
*

«Զհաս» վեպում (1866), ուր պերսոնաժներն են Պետրոսն ու Աստղիկը, հիմնականում արծարծվում է Թիֆլիսի կանանց

վարք ու բարքի խնդիրը, մասնավորապես այն կանանց որոնք «երբեք չեն հետաքրքրվել տնային գործերով, որոնք փախչում են խոհանոցից, ինչպես դժոխքից, չեն զբաղվում իրենց երեխաների դաստիարակութեամբ» և «որոնք զբոսանքի ու զվարճութեան համար են միայն ապրում», այսինքն ունայն կյանք են վարում, զբաղվելով լուի հագուստեղեն ձեռք բերելով և կլուբներ, կոնցերտներ ու պարահանդեսներ հաճախելով:



«Լուսավորութեան կենտրոնը» վեպում (1892) հեղինակը շեշտում է, որ հայաբնակ վայրերից և ոչ մեկը չունի այնքան ծաղկած դպրոցներ, ինչպես Թիֆլիսը, որտեղ կենտրոնացած են ներսիսյան թեմական դպրոցը, Գայանյան և Հովնանյան միջնակարգ օրիորդաց դպրոցները և այլն բազմաթիվ՝ թե՛ տղաների և թե՛ օրիորդների դպրոցները, Կովկասյան հայոց բարեգործական ընկերությունը, կանանց բարեգործական ընկերությունը, գրքերի հրատարակչությունը, հայ լրագիրները և այլն:

Պատմվածքի գլխավոր պերսոնաժը՝ երիտասարդ Վահան Սարյանը անցնելով Սողանլուխով և մտնելով Թիֆլիս՝ «պատահեց բուն թիֆլիսեցի լայն շավարներով, արծաթյա հրեշավոր գոտիներով, մորթու զլխարկներ դրած, սրահրունկ կոշիկները հագած, արխալուղների կրծկապը ետ ծալած, թեքերնին սոթաած, տարօրինակ բարբառով և շարժվածքով հայերի, որոնք խանութների առաջ նստած դիմում ու գոտնայով քեֆ էին անում, այսինքն քիչ ուտում, շատ խմում և շարունակ պարում էին»:

Սկսվում է բանավեճ նրա (նորեկի) և շիրաջի (գինեվաճառ—Լ. Մ.—Բ.) Մանասի միջև:

Շիրաջի-Մանասի նկատողությունից հետո, որ «Թիֆլիսեցիք ուրախ մարդիկ են», Վահանը կշտամբում է նրան. դու «ասացիր թե՛ Քոից մարդ կով Խովոդ ձկներ պիտի դուրս գան, բայց դուրս չեկան»: Իսկ Մանասը պատասխանում է. «Սպասի՛ր, բարեկամ, սպասի՛ր, այդ ձկներն էլ դուրս կգան, միայն

թե Թիֆլիսի միջից անցնող Քուից և ոչ ուրիշ տեղից», ակնարկելով, իհարկե, բեֆ անողների վրա:

Վեպը հագեցված է բազմաթիվ երկխոսություններով (դիալոգներով), որտեղ օգտագործված է Թիֆլիսի բարբառը, գրեթե կատարյալ հարադատությամբ, եթե համեմատելու լինենք Բաֆֆու ստեղծագործության նմանօրինակ նյութերի հետ, որոնք կարոտ են սրբագրության:

Բայց վեպում ամենահետաքրքրականը հին Թիֆլիսի էկզոտիկայի պատկերումն է, որ կարծես թե լրացնում է Պ. Պոռշյանի «Շատերից մեկը» (1893) պատմվածքում տված «Թուրքի Մեյդանի» նկարագրությունը:

Ահա այդ պատկերը ըստ այս վեպի. -

«Կովկասյան մայրաքաղաքի բնական առավելություններից ու գլուխություններից մեկն էլ այն է, որ ասիացի մարզը, եթե այդ քաղաքի մարուր փողոցների վրա գտնվող շքեղ հյուրանոցներում կամ ապարանքներում ապրելուց ձանձրանա (որ շատ է պատահում դարադաղյի, սալմաստցի կամ օրդուբադցի հանկարծ հարստացող և Թիֆլիս գաղթող հին փինաչիներին հետ), այդպիսին կարող է մի բանի վայրկյանում տեղափոխվել յուր հայրենական ծննդավայրը: Դրա համար հարկավոր է միայն զնալ Թիֆլիսի հին քաղաքամասը, ուր հանքային բաղանիքներն են: Այդտեղ աջ ու ձախ անցնող փողոցների վրա ապրում է Պարսկաստանը՝ յուր բոլոր ականապարար հրապույրներով: Մի տեղ դուր կտեսնես միաշար խանութներ, որոնց մեջ թավրիղցի թուրքերը զերծած գլուխներով, կեղտոտ գոգնոցներով, նաքզիլեի պտուղը բերաններին, զանազան համադամներ են պատրաստում, ինչպես, օրինակ, փլավ, բոզբաշ, դավուրմա, տոլմա կամ դոլխ գործոց՝ լյուրաբյաբաբ: Այդ խանութները աշպաղխաններն են (խոհակերոց), ուր մոթալ փափախներով, շարիշար նստած, վայելում են խորտիկները, պարբերի կամ թարաբյամա թուրքերը և նրանց հետ էլ երբեմն դուռնուլցի կամ բոլնիսցի հայեր:

Մի ուրիշ տեղ հացթուխները ծխից ու մխից սևացած կրպակներում, արյուն-բրտինք մտած խմոր են հունցում, լավաշներ են թխում և հարյուրներով կախում կրպակի առջևից կապած թուկերի վրա...

Հենց այդ խոհակերտոցների և հացթուխների արանքում ղեակեղված են սափրիչները, ածելած երեսներով, մեջքերին գոտիով պրկած...

Դրանց դիմաց նստած են թուրք կոշիակարները կամ փինաշինները...

Վերջապես այդտեղ են և պարսկական քաղցրեղեններ վաճառողները...

Պակասը լրացնում են աթոարները (մանրավաճառ) և մսագործները, որոնց խանութներին առաջ միշտ խմբված է լինում թե՛ քաղաքացի և թե՛ գեղջուկ հաճախորդների խալտաբղետ բազմություն...»:

Հին Թիֆլիսի էկզոտիկայի այս պատկերավորումը ավելի ուժեղացնելու նպատակով հեղինակը տալիս է և իր եզրակացությունը, իհարկե, որոշ երգիծանքով.

«Քաղաքի այս մասում քնդհանրապես մարդիկ ապրում են ավելի երջանիկ, քան թե ուրիշ մասերում, որովհետև ամեն ոք վարվում է յուր փողոցի հետ այնպես, ինչպես ինքն է կամենում: Իսկ սա քիչ բան չէ աղատասեր ժողովրդի համար: Օրինակ, խոհարարները փողոցի մեջ թափում են իրենց քուրանների մոխիրը կամ խոհանոցի կեղտը, կոշիակարը կաշիների կեղտաջուրը, սափրիչներն իրենց լվացուկները, հացթուխները փայտ են կտրտում այդտեղ, քյաբաբը չին օդն է ապականում յուր խորովածների հոտով, մսագործն յուր ավելցուկներն է շարտում խանութի առաջ և այլն...»:

Եվ «այս փողոցներից գլխավորի»-ն... «Ժողովուրդը Սատանայի շուկա է անվանում», որը, կավելացնենք մենք մեր կողմից, նույն Շալխան-Քաղարն է:

Մի տեղ տրված է Զորաբաշի կոշված եկեղեցու նկարագրությունը, որը գտնվում էր «Թիֆլիսի պատմական Մետեխի բերդի մոտ, դեպի Հավլարար տանող մի զառիվայր ճանապարհի վրա, ...Քուռ գետի ձախ ափից լեռնաձև բարձրացող և Հավլարարի բնական սահմանը կազմող պարեխավոր ժայռերի վրա, որտեղից բացվում են թե՛ գետի և թե՛ նրան շրջապատող հեռավոր թաղերի ու այգեստանների գեղեցիկ տեսարանները»:

* *
*

«Տիկին Փիլարյանի (թե՛ փրալյանի—Լ. Մ.-Բ.) վիշտը» գրույցում (1897) շեշտված է թե ինչպես Թիֆլիսում «ասրում են... նավթային կրեսոտներից մի երեքը, չորսը»: Միջանկյալ հիշված են միակ պողոտան (Գոլովինի, այժմ Ռուսթավելու—Լ. Մ.-Բ.) և Վերայի փողոցները:

* *
*

«Նոյի ագռավը» պատմվածքը (1899) արձանագրում է, ի միջի այլոց, այն երևույթը, որ հայ երիտասարդները՝ գալով գավառներից Թիֆլիս «հուսում» ստանալու՝ այլևս չեն վերադառնում գործելու իրենց ծննդավայրում, այլ մնում են Թիֆլիսում, համոզված լինելով, որ «Թիֆլիսի նման քաղաքում հայտնի մարդկանց շարքը զցել՝ այդ էլ մեծ բան է»: Եվ ինչ «որ լուսավոր, յա չէ փանդ ու փիլոսոփ (հնարագետ) մարդ կա, հենց դպա Թիֆլիս ա վաղ տալի»:

* *
*

Մուրացանի գլուխ գործոցը, անկասկած, նրա «Գեորգ Մարգարետունի» պատմական վեպն է (1896), որի նյութը վերցրված է Հայաստանի IX—X դարերի պատմությունից:

Քաջ ծանոթ լինելով հայոց պատմագրական սկզբնաղբյուրներին, Մուրացանը նպատակ էր դրել պատկերել ֆեոդալական Հայաստանի (և Վրաստանի) այն ժամանակաշրջանը, երբ հայ ժողովուրդը ձգտում էր թոթափել արաբական լուծը և ձեռք բերել պետական անկախություն, վրաց ժողովրդի որոշ խավերի համագործակցությամբ:

Խոսելով հայոց արքայորդու (Աշոտ երկաթի) մասին, վիպասանը նշում է, որ «Գուգարքը նվաճելուց և Վասակ ու Աշոտ Գնթունի իշխաններին հանձնելուց հետո, նա (արքայորդին) անցավ Վրաստանի սահմանը, Տփլիսիսն ազատելու», քանի որ «այդտեղ էլ հազարացիք (արաբները—Լ. Մ.-Բ.) մեծ ուժ ունեին» և «Վրացի ազգերը (իմա՝ ցեղերը—Լ. Մ.-Բ.) հեծում էին

նրանց բարբարոսական լծի տակ»։ «Մեր դշուցազներ,— շարունակում է վիպասանը,— ինչպես մի կատաղի փոթորիկ հասավ Տփխիս» և «նրա հուժկու բանակի առաջ, որ ստվարացել էր հետզհետե, հագարացոց (արաբների— Լ. Մ.-Բ.) զորությունը չկարողացավ դիմանալ»։

Սրա հետևանքը եղավ այն, որ «հայերը ջարդեցին նրանց, ցրեցին, արաբացի իշխանները գերելով՝ շղթայի զարկեցին, իսկ Տփխիսը ազատելով՝ վերագարձան Ուտիք»։

Վիպասանը, ի միջի այլոց, ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ «Աշոտ արքայորդուն թագավոր պսակելու» արարողությանը Դվինի ս. Գրիգոր կաթողիկեում պիտի մասնակցեին «հայոց իշխանները վրաց թագավորի և ափսաղաց (արևմտյան Վրաս.— Լ. Մ.-Բ.) Գուրգենի հետ միասին», որի կապակցությամբ «վրաց Ատրներսեհ (Աղարնասեհ— Լ. Մ.-Բ.) թագավորին [Դվինի] կաթողիկոսարանում ընդունեցին, իսկ ափսաղաց (արևմտյան Վրաց. Լ. Մ.-Բ.) Գուրգեն իշխանին՝ Աբաս արքանդորր ապարանքում»։

Իսկ թագադրության արարողությունը վերջացնելուց հետո նորած թագավորին (Աշոտ Երկաթին— Լ. Մ.-Բ.), ի միջի այլոց, համբուրում է մայր-թագուհուց հետո «վրաց թագավորը»։

Այս իրադարձությանը իրրե դիտոնանս է հնչում վիպասանի այն հայտարարությունը, թե ինչպես հետագայում «վրաց Ատրներսեհ (Աղարնասեհ— Լ. Մ.-Բ.) թագավորը հայ իշխանների զրգոմամբ թշնամացավ Աշոտ արքայի հետ և մեր հյուսիսային գավառներից մի քանիսը փորձ արավ սեփականելու»։

Ապա վիպասանը, ցանկանալով շեշտել հայոց կաթողիկոսի (Հովհան Դրասխանալիկերացու— Լ. Մ.-Բ.) թուլասրտությունը, նշում է, թե ինչպես Հայաստանի ծանր կացության պահին «մեր կաթողիկոսը փոխանակ սրան ու նրան դիմելու, իշխանները հաշտեցնելու և դրանց բոլորին միացնելով՝ թագավորին թե ու թիկունք կանգնեցնելու, երկիրը թողնեց տազնապի մեջ, ժողովուրդը՝ հուսահատության մեջ, զորքը՝ մահու և կյանքի հետ կռվելիս և ինքը յուր անձին անդորրությունը խնդրելով՝ հեռացավ Վրաստան, Ատրներսեհ (Աղարնասեհ— Լ. Մ.-Բ.) թագավորի մոտ ապահովության մեջ ապրելու»։

Մեծ նշանակութիւն է տալիս վիպասանը այն խնամիական կապերին, որ հաստատուում էին հայոց և վրաց արքայական տներին միջև:

Այսպէս, օրինակ, պատմվում է, թէ ինչպէս հայոց արքայի եղբայր [Աբաս]ը «գնաց և ասիխաղաց (արեւմտյան Վրաս.— Լ. Մ.—Բ.) Գուրգեն մեծ իշխանի դստեր հետ ամուսնացավ», բանի «որ վաղուց սիրում էին նրանք իրար», այսինքն՝ «[Աշոտ] թագավորի թագադրութեան օրերից»:

Հայոց թագուհու ասելով, նրա «աչքի առաջ սկսվեցավ նրանց (Աբասի և Գուրգենի դստեր—Լ. Մ.—Բ.) բարեկամութիւնը», որի առթիւ «ժողովուրդը բամբասում է նրան (Աբասին—Լ. Մ.—Բ.), որ մեծ և թագավոր-եղբորից առաջ պսակվեցավ»: Այն էլ էին ասում, որ «երեւի Ասիխաղիայի (արեւմտյան Վրաստանի—Լ. Մ.—Բ.) օրիորդը առավել գրավիչ և զոբեղ էր, քան Սահակ Սեաղայի աղջիկը»:

Այսպէս թէ այնպէս, «[Աշոտ] թագավորը և Աբաս եղբայրն՝ անմիջապէս վերադարձան Ասիխաղիայից (արեւմտյան Վրաստանից—Լ. Մ.—Բ.) և դիմեցին Վաղարշապատ»:

Միջանկյալ բերված է Սեաղայի տեսակետը, որ «վրաց թագավորը» իրոր «երկրորդն էր» հայոց «թագավոր»-ից հետո, ապա գալիս էր «Ասիխաղիայի (արեւմտյան Վրաստանի—Լ. Մ.—Բ.) [Մեծ] իշխանը», որը մի ժամանակ թույլ էր տալիս իրեն «սարծենակ, թէ յուր դուստրն է միայն հայոց արքունիքի զարդը»:

ՂԱՉԱՐՈՍ ԲՂԱՅԱՆ (1840—1911)

Ղաչարոս Աղայանը ծնվել է Վրաստանի պատմական, հռչակավոր անկյուններից մեկում՝ Ստորին Քարթլիի Փոլագաուրիի (Բոլնիսի) ձորի, այսինքն Բողնոփորի, Բոլնիս-Խաչեն հայկական գյուղում:

Սկզբնական կրթությունը փոքրիկ Ղաչարոսը ստացել է Թեթրի-ձղարո (Աղբուլաղ, Белый ключ) ավանի մոտերքում գտնվող Սամշվիլդե գյուղում, ապա միջնակարգը՝ Թիֆլիսի ներսիսյան դպրոցում, որը, սակայն, չի ավարտել:

Ապա երկար տարիներ, ընդմիջումներով, Ղ. Աղայանը գործել է Թիֆլիսում և իր արձակ ու չափածո երկերում արտացոլել նաև Վրաստանի անցյալն ու ներկան:

Ղ. Աղայանը վախճանվել է Թիֆլիսում 1911 թվականի հուլիսին և թաղված է «Խոջիվանքի» պանթեոնում:

* * *

Ղ. Աղայանի մեթոդական գործերից առանձնապես նշանակալից է «Հայկական հնչյունների մասին (կոծումն տարակուսությանց)» գրքույկը, տպված Թիֆլիսում 1874 թվականին և արտատպված՝ չնչին կրճատումներով, նրա երկերի ժողովածուի 4-րդ հատորում (Երևան, 1950, էջ 231—262), որտեղ հեղինակը տալով Թիֆլիսի հայոց բարբառի բնութագիրը, ի միջի այլոց, հայտնում է. «Տփլիսեցիք վրաց լեզվին են պարտական, որ իրենց հնչյունները մաքուր են պահպանել մինչև այսօր. սորա հակառակ պոլսեցիք, որ կորցրել են իրենց հնչյունները, դորա պատճառը ուրիշ բան չէ, եթե ոչ տաճկաց լեզուն» (1874 թ. հրատ., էջ 13, Երկեր, հ. VI, 1950, էջ 238)¹:

¹ Սրա մասին տես նաև մեր՝ Թրիլիսիի հայ բարբառը և նրա առնչությունը վրացերենի հետ. «Վրաց լեզվագիտական ընկերության տարեգիր», 1—II, Թր., 1923—1924, էջ 343—344:

Ուշադրութեան արժանի է նաև Ղ. Աղայանի «Հայոց աշխարհի բանալիները» հոգովածը, գրված 1893 թվականին, և տպված «Տարազ»-ում նույն թվականի № 9-ում (արտատպված, Երևան, հ. III, 1940, էջ 329), որտեղ հեղինակը տրտունջ է հայտնում այն առթիվ, որ Սայաթ-Նովայի և Շիրինի վրացական և ադրբեջանական խաղերը գեղես հրապարակ չեն հանվել:

«Մենք այսօր Սայաթ-Նովայի, Շիրինի և ուրիշ շատերի հայերեն ասածները հավաքել տպել ենք, իսկ նրանց վրացերեն և թուրքերեն (իմա՝ ադրբեջաներեն—Վ. Մ.-Բ.) ասածները ղանցառութեան տվել, մինչդեռ Սայաթ-Նովայի ավելի լավ խաղերը վրացերեն են ասված ու Շիրինի էլ լավագույն խաղերը՝ թուրքերեն» (իմա՝ ադրբեջաներեն—Վ. Մ.-Բ.):

* *
*

Ղ. Աղայանի գեղարվեստական երկերից մեր թեմայի առումով հետաքրքրական է «Արուսթուն և Մանվել» վեպը (1866):

Այս վեպի հենց սկզբում գրի է առնված վրաց ժողովրդի կազմի մեջ մտած ցեղերից մեկի առասպելը, որը գալիս է նախնադարյան-տոհմային հասարակարգի ժամանակաշրջանից:

Նկարագրելով Շամշուդու (ուղիղ՝ Սամշվիլցեի—Վ. Մ.-Բ.) եռանկյունի բերդը, որի հիմնարկութեան ժամանակը, պատմութունը, ըստ Ղ. Աղայանի, «տալիս է Հայկ դյուցազնի որդուն՝ Քարթլու նահապետին» և որը «ընկած է մեջտեղը Խրամ և Ճավճավ (ուղիղ՝ Ճիվճավի—Վ. Մ.-Բ.) ասված գետերի», վիպասանը սրում է ընթերցողի ուշադրությունը նույն բերդի սահմաններում գտնվող եկեղեցիներից մեկի վրա, որը հայտնի է «Բերդի ս. աստվածածին» անունով:

Բայց ինչո՞վ էր այս եկեղեցին հռչակված:

«Այս եկեղեցին մի փոքրիկ մատուռաձև շինություն է, և ներսը ավագ կողմին կանգնեցրած է մի սևագույն, բավականին լայն ու երկայն որձաքար: Քարի վերա եղած արձանագրութեան խոսքով՝ նա անվանվում է «Ջուհար խաչ», և շինած է Սմբատ իշխանի ձեռով մեզանից մի հազար տարի առաջ,

բայց ժողովրդի մեջ եղած ավանդությունը այդ քարին տալիս է հրաշալի ծագումն: «Այդ քարը բուսել է ինքն իրան, ասում է ավանդությունը, և սկսել է օրեցօր երկայնանալ: Ուզենալով իր նշանակությունը հայտնել ժողովրդին, մեկին երևացել է երազումը և ասել է նրան՝ «Եթե ինձ վերա եկեղեցի շէք շինիլ, ես այնքան կբարձրանամ, որ գլուխս կհասնի մինչև երկինք»... Երազատեսը պատմել է ժողովրդին, և ժողովուրդն էլ վախենալով՝ թե մի գուցե՝ ճշմարիտ՝ ասածի չափ բարձրանա և ժամանակով վայր ընկնի իրանց զլխին, շտապել են եկեղեցին շինել, և քարը դադարեցրել է իր երկայնանալը»:

Ղ. Աղայանի հիշատակված որձաքարը, որ ցայսօր կանգուն է Սամշվիլեցում, մեկն է այն բազմաթիվ «նախապատմական», այսպես կոչված «մեգալիթյան» կուլտուրայի հուշարձաններից, որոնցով այնքան հարուստ են Հայաստանն ու Վրաստանը: Այս որձաքարերը այլապես կոչում են «Թիբ-քար» (հայերեն), «Թիբմա-տաշ» կամ «Թիբիլ-տաշ» (ադրբեջաներեն և թուրքերեն): Սակայն՝ իբրև հինավուրց շենքի մեջ ամփոփված՝ սա Վրաստանում երկրորդն է, եթե, իհարկե, մյուսը համարենք Վերին Մալիկայի Չոլախ գյուղի մոտ գտնվող «Այ-Կոնստանտին» (Սուրբ Կոնստանտին) եկեղեցու մեջ ամփոփվածը¹:

Ինչպես եկեղեցին, նույնպես և որձաքարի վրա փորագրված հին հայերեն վիմագրությունը համեմատաբար նոր են, ըստ մեր հետազոտության, այն ժամանակ, երբ Սամշվիլեցն ժամանակավորապես (1046—1065) հայոց Կորիկյան թագավորության մայրաքաղաքը դարձավ, անմիջական հարևաններ ունենալով հյուսիսից՝ Թբիլիսիի արաբական կիսանկախ կամ անկախ ամիրայությունը և արևմուտքից՝ Ֆեոդալական միապետություն ստեղծելու ճանապարհին կանգնած վրաց

¹ Տես Լ. Մելիքսեթ-Քեկ, Մեգալիթյան կուլտուրան Վրաստանում, նյութեր արխայիկ մոնումենտալ արվեստի պատմության համար. Թբիլիսի, 1938, էջ 89—92, նկարները LII—LIV (Հրացերեն): Նույնի՝ Ղ. Աղայանի «Արություն և Մանվիլը» և Սամշվիլեցի որձաքարը. «Արշավ», 1940, № 4, էջ 52—55 և նկարը նույնտեղ: Հմմ. նաև Սարգիս Զալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, II, Թբ., 1958, էջ 78—79, նաև M. Brosset. „Mélendes Asiatiques“, t. II, Paris, 1856, էջ 97—98:

Բագրատ 4-րդ արքային (1027—1072) ենթակա վրաց թագավորությունը, այն Բագրատի, որի մայրը Արծրունյաց Սենեքերիմ թագավորի դուստրն էր:

Արձանագրությունն, ըստ մեր վերծանման, կարդացվում է այսպես.

«ՆՃ [=400+100=500+551=1051], Ճոհար խաչս մեր և յոյս է. դվարդ զարարող խաչիս յիշեսցիք և զաղբայրն իմ՝ ծառայն Քրիստոսի: Տէր Յիսուս Քրիստոս աստված մեր: Խաչ Քրիստոսի է փրկող սուրբ՝ Սմբատ իշխանաց իշխանի»:

Վեպում նկարագրվում է նաև մի այլ հուշարձան: Այսպես, օրինակ.

«— Արի՛ էստեղ մի քիչ նստենք: Արություն:

— Ո՛չ, Մանվել, գնանք, տեսնո՞ւմ ես են մեկմեկու վրա դրված երեք քարերը, գնանք նրանց վերա նստենք...

— Ո՛ւհ, էս ի՞նչպես են իրար վերա դրել էս ահագին քարերը...

— Սրանց համար ասում են՝ «երկու եղբայր են եղել. մեկ էլ մեկ բույր են ունեցել: Երկու եղբայրները երկուսով ներքևի երկու քարը իրար վրա են դրել. երրորդը շեն կարացել, հետո իրանց բույրը եկել է մի ձեռով վերցրել դրել դրանց վերա...»:

Ապա վիպասանը նշում է, թե ինչպես «մեր պատանիքը վեր բարձրացան, նստեցան երեք քարի վերա և սկսեցին նայել իրանց առաջով ընկած անգնդաձև խորության վերա, որի միջով Խրամ գետը փրփուրն երեսին գնում էր վշշալով...»:

Արություն և Մանվելը դարձյալ զրուցում են.

«— Տեսնո՞ւմ ես ինչ լավ տեղ է, ասաց Արությունը, ձեռք մեկնելով դեպի Խրամի պատերը: Ահա այն քարքարուտ տեղը լիքն է նոնով ու թղով, բայց ոչ ոք չի կարող գնալ քաղելու, հանապարհ չկա: Տեսնո՞ւմ ես էն ծակերը, նրանք զաղեք են (քարայրեր), անհիշատակ ժամանակներին նրանցում մարդիկ են էլել կենալիս, երեկ առաջ հեշտ է էլել էգպես տեղեր բարձրանալը: Հիմի էլ՝ ով որ քաջ քարագնաց է, կարողանում է գնալ էգպես տեղերը: Ասում են՝ շատ անգամ արծաթ, պղինձ, հին գրվածքներ շատ են գտնում դրանցում...»:

Այս զրուցյի մեջ տրված է, մի կողմից, Սամշվիլդեի ու նրա շրջակայքի հնությունների նկարագրությունը և, մյուս կողմից,

հնազույն ավանդույթները երեք (ուղիղ՝ չորս—Լ. Մ.-Բ.) քարերից կազմված կոթողի մասին:

Ի դեպ, նշենք, որ Ղ. Աղայանի կողմից գրի առնված ավանդույթները «եռաքար» կոթողի մասին հիմնականում տարբերվում է վրացականի երկու տարբերակից: Երկու դեպքումն էլ նկատի է առնվում վրացերեն տեղանուն «Սամշվիլ-դեն», առաջինը՝ սամի շվիլդի, այսինքն՝ «Երեք աղեղ» (եռաղեղ), մյուսն՝ սամի շվիլի, այսինքն՝ «Երեք զավակ» (եռազավակ): Բայց ավելի հավանականն է ոչ թե «սամի շվիլդի», այլ «սամշվիլդեն», որ նշանակում է աղեղ նետելու տեղ (կոթող, աշտարակ):

Վերջին մեկնաբանությունը, ի միջի այլոց, հետաքրքիր է նրանով, որ այստեղ անտեսվում է երեքի (վրացերեն «սամի») գաղափարը և առաջ է քաշված նախածանցի (վրացերեն «սա») էությունը:

Մեր կարծիքով իսկ, երեքի գաղափարն ընդունելի չէ այն պատճառով, որ իրականում մենք գործ ունենք ոչ թե երեք, այլ չորս քարի հետ, որոնք իրար վրա այնպես են կիսված, որ ամենաստորինը չիստվ հողի մեջ է և լավ չի նկատվում: Այս պատճառով էլ կոթողը կոչում ենք «տետրալիթ» (տետրալիթոս)¹, որը հայերեն բառացի թարգմանությամբ կլինի «քառաքար»:

Արույթունի (իրեն վիպասանի) ծննդավայրի մասին վիպասանը տալիս է այսպիսի տեղեկություն.

«Արույթունը ծնվել է Թիֆլիսի մոտակա Խաչեն անվանյալ գյուղում: Անցյալ դարի վերջերից սկսած մինչև ներկա (այսինքն՝ XIX դ.—Լ. Մ.-Բ.) դարուս սկզբները Ղարաբաղից շատ հայեր գաղթեցին դեպի ամեն կողմ, դրանցից մեկ հատված էլ Խաչենու մհալից եկավ և Բոլնսու ձորումը հաստատեց իր բնակությունը, որտեղից դարձյալ սկսեցին ցրվել. մի քանի տուն միայն գնացին շենացրին մի հին գեղատեղ, և ի հիշատակ իրանց հայրենիքի՝ Խաչենու, նոր գյուղի անունը դրին Խաչեն»:

¹ Լ. Մելիսեք-Բեկ, Մեղալիթյան կուլտուրան Վրաստանում, 1938, էջ 122—124, և նկարը էջ LXI:

Խաչենից մինչև Թիֆլիս ձիերով կատարած «Ճանապարհորդությունից» առանձնապես շեշտվում է այն մոմենտը, երբ Արուսեյունն ու նրան ուղեկցող «տեր-հայրը»... «Հասան Թելեթի սարի ստորոտը», որտեղ «Արուսեյունն իջավ ձիուցը, և մի քանի քայլ ծանր փոխելուց հետո՝ դառնալով թռավ արագավազ եղջերվի նման և տերտերին շատ ցած թողելով՝ ինքը բարձրացավ սարի գլուխը, որտեղ երևեցավ նրան քաղաքը»։ Այնուհետև. «Թիֆլիս քաղաքը նավթուղից սկսած մինչև Վերա հանկարծ բացվեցավ Արուսեյունի առջև» և «ապշեցրեց նրան», այնպես որ «հրաշալի՝ տեսարան», բացականչեց նա։ «Վերջապես մտան քաղաքը» և «այսպես հասան մինչև Հավլաբար»։

Վեպում տեղ է հատկացված նաև Արուսեյունի ճանապարհորդության նկարագրությանը Թիֆլիսից «ղեպի Բոլնսու սուրբ Գևորգը», այլապես ասած Խատիս-սոփելիի ուխտատեղին։

Նկարագրությունը սկսվում է նրանով, թե ինչպես «սալապան վրացի Գիորգին հարկադրում էր եղներին, որ շուտաքայլ երթան դեպի իր անվանակից Մմինդա Գիորգին, իսկ սալի մեջ նստող ուխտավորները՝ արք և կանայք խոսում էին զանազան սուրբերից...»։

*
*
*

«Տորք Անգեղ և Հայկանուշ գեղեցիկ» պոեմը (1888) պատկերում է այսպես կոչված Ստորին Քարթլիի-Սոմխիթի գեղատեսիլ բնությունը։

Գուգարաց աշխարհը նոր կյանք է առել,
Լոբի ու Լավարի ձյունները հալվել.
Գետակը Բողնիքի վաղ արշալույսին
Հորդացած վշշում է փրփուրն Երեսին.
Անտառում Ուփլեթը² ամբողջը Արամյան,
Զուգվել է, զարդարվել նոր-հարսի նման...։

¹ Այսպիսի ճանապարհորդություն դեպի Բոլնիսի ս. Գևորգ ուխտատեղին կատարել է, ինչպես հայտնի է, և Խ. Աբովյանը 1841 թ. («Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», Երևան, 1940, էջ 110—111)։

² Ուղիղ՝ Օփրեթը։

Պարխարյան¹ լեռներում երգչի ասելով
Կենում է մի հովիվ քաջ Տորք անունով:

Այնուհետև հիշված է Բաղաց աշխարհի Առան՝ զորեղ իշ-
խանի կամ արքայի հանդիպումը Գուգարաց կամ Լոռվա
բզեշխի հետ, որն հաջտարաբուն է.

Մեր հսկաներն էլ ձորերը մըտան,
Որ գլխերներին ոչինչ հարկ չտան:

Եվ գեղեցիկ բնության նկարագրությունը շարունակվում է
հետևյալ տողերով.

Ամառնամուտ է, Լոր սարն իր քաղաթ
Դաշտեցոց համար շինել է դրախտ...
Որ կողմ նայում ես՝ տեսնում ես հրճվանք,
Անմեղ, երկնային սիրո փաղաքշանք.
Ծաղիկներ գույն-գույն և անուշաբույր
Տալիս են իրար քնքուշիկ համբույր.
Անթիվ աղբյուրներ, վճիտ, սառնորակ,
Իրար գրկելով՝ մտնում են ձորակ...

Իսկ՝

Հսկայն լեռների՝ Կովկասի շղթան
Ինչպես ցամաքի մի Լեվիաթան,
Գլուխը թաղել է Եվքսինյան ծովում²,
Պոչը Վրկանա ծովումն է շարժում.
Ահռելի մի սլատ, բուսած անդունդից,
Մեջից կտրում է հարավն հյուսիսից.
Ինչպես մի քամար ակմաղ քարերով
Շրջապատել է գետների փորով...:

Բնության նկարագրին կից, կամ զուգահեռաբար, տրվում
է և տեղիս բնակավայրերի տեսությունը—

¹ Ուղիղ՝ Պարխարյան (Պարխալի-ից):

² Ուղիղ՝ Սև ծովն է:

Եվ հովիվն անմեղ՝ իր դավադանով.
 Յուլյց տվալ Տորքին իրանց անունով
 Մի քանի քաղաք և մեծ-մեծ ավան.
 Թե՛ «այն Գաջենքն¹ է և այն Մոշավան².
 Իսկ այս քաղաքն է, որ երկարունակ
 Բողնոփորի³ մեջ ձգված է բեկ-բեկ,
 Յուրտավ⁴ քաղաքն է, հարուստ, ալգեվետ,
 Իսկ այս էլ ահա ամբողջն է Ուփրեթ⁵,
 Որ սլատկանում է մի շատ աննման
 Եվ շատ գեղեցիկ մի որբ աղջրկան:

Պոեմում տեղ-տեղ նորից մի քանի անգամ հիշվում են
 Գաջենքը (= Գաշխանի), Ուփրեթը (= Օփրեթի), Չորափորը
 (= Չորագետը), Ծորոփորը (= Ծորփքը) «Հալոց հյուսիսային
 կողմանց» և Ստորին Քարթլիի կամ Սոմխիթի միջասահմանի
 պատմական վայրերը:

* * *

«Սերը արտաքսված» պատմվածքը (1889) ուշագրավ է իր
 ներածական մասով, որը կարևոր տեղեկանք է պարունակում
 և նույնիսկ մի տեսակ ուղեցույց է Վրաստանի հնագիտու-
 թյամբ զբաղվողների համար. ուստի և բերում ենք այն այս-
 տեղ ամբողջությամբ.

«Խրամ գետի մի լայնացած հովտում մի փոքրիկ գյուղ կար
 Շինակ անունով: Այս գյուղն այժմ այլևս չկա. մի թունդ երկ-
 րաշարժի ժամանակ խրամից մի ահագին քերձ փլվելով՝ ամ-
 բողջ գյուղն իր տակովն արավ, և հիմա նրա տեղը մի ահագին
 քարաբլուր է կանգնած:

¹ Գաջենքը նույն վրաց. Գաշխանին է:

² Ուդիդ՝ «Մաշավերի» կամ Շավի:

³ Այսինքն Բոլնիսի ձորը, նույն Փոլագաուրին:

⁴ Յուրտավի տեղագրության մասին տես Լ. Մելիքսե-բեկ, Վրաց աղ-
 բյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I, Երևան, 1936, էջ 12—15,
 նույնի՝ Թրիալեթ-Մալխայի նյութական կուլտուրայի մնացորդների և տոպո-
 նիմիկայի ուսումնասիրության շուրջը, «Մարքսիստական լեզվաբանության
 համար», Թբ., 1936, էջ 27—44 (վրացերեն):

⁵ Ուդիդ՝ Օփրեթ:

Այս անցքը հայտնի չէ նույն տեղի մոտակայքում աշխատանք կենդանիներին, որովհետեւ նրանք ամենքն էլ նորեկ գաղթականներ են և չգիտեն մինչև անգամ, թե ովքեր են եղել կենալիս աշխատանքի մոտեցրած եղած բաղմամբիւ աշխատող գյուղատնտեսները:

Աշխատանքի բնակիչներին ճարպիկ քարագնացները, մեղու որսալու նպատակով մտնում են այս ու այն անմատչելի քարայրը, և փոխանակ մեղվի, գտնում են արծաթի և ոսկու հին դրամներ, պղնձի ամաններ, և նույնիսկ մեծած մարդկանց կմախք՝ երբեմն բոլորովին անվնաս և անփուտ մնացած: Միևնույն քարայրում, որոնք պատուհանի պես շարված են խրամի անմատչելի ժայռերում, գտնում են միայն մի դիակ, դեպի արևելքը պառկած, ձեռքերը կրծքին խաչած: Այս ձևով մեռածների համար լուսում են, որ ճգնվելիս են եղել նույն քարայրի մեջ, ուր և ավանդել են իրենց արդար հոգիքը»:



«Բաժանութուն» պատմվածքում (1890) արտացոլվել են մի շարք դեպքեր, որոնք կատարվել են այսպես կոչված Սոտրին Քարթլիի կամ Սոմխիթի, այսինքն՝ XIX դարում, Բորչալո: գավառի գնալուները:

Գործողութունների տեղը, ըստ Ղ. Աղայանի, մի մեծ ավան է, «որ իսկապես ոչ գյուղ էր, ոչ քաղաք, այլ երկուսից մի խառնուրդ, մի գյուղաբաղա՝», և որտեղ «միևնույն գերդաստանի անդամները և երկրագործ էին, և այգեգործ, և արհեստավոր էին, և վաճառական, և ուսում առած կրթված էին, և անուս գոհհիլ»:

Այս բնութագրից հետո ընթերցողը, իհարկե, չի կարող չկռահել, որ «այսպիսի մի գյուղաքաղաք էլ [] Թիֆլիզից մոտիկ, Շուլավերը, ուր կա [] գավառապետ և հաշտարար դատավոր, հեռագրատուն և փոստատուն, ուր ինչպես հոյակապ տներն ու նահապետական խրճիթներն էլ [] միախառնված, այնպես էլ մոթալ փափախն ու մողնի շլափերը, և այս՝ միևնույն տան մեջ», ուր, միաժամանակ, կաթելի էր տեսնել «աղա Մահմադ խանի, Վարանցով և իշխան Դոնդուկովի ժամանակի տարազով հագուստներ»:

Ղ. Աղայանը որպես օրինակ բերել է Շուլավերը, թեև նրա «պատմած անցքը կատարվում էր Գաջենք ավանում», որը նույն վրաց պատմական Գաչիանին է, և որի տեղագրությունը ոչ XIX դարումն էր ճշտված և ոչ էլ այժմ:

Հեղինակի, իբրև իր ծննդավայրի, պատմական անցքերի լավ գիտակի, առջև անց են կենում անցյալի պատկերները:

Ահա Յուրտավը, հաճախ և Աշուշա բղնշիւր և նրա պալատը, Վարդան Մամիկոնյանը, Հազկերտը, Վահանը, Վահանի մայր Զվիկը և այլն:

Նայելով շրջակա ձորերին, Ղ. Աղայանն իր պերսոնաժներից մեկին ասել է տալիս, որ Շուշանիկը ոչ թե Մցխեթայում կամ Տփլիսում է նահատակվել, այլ Յուրտավում, և «գիմացի ձորում շատ հնուց մնացած մի բերդ պետք է լինի», որտեղ և «եղել է կալանավորված Շուշանիկը»¹:

Այստեղ խոսքը վերաբերում է հրամի (Քցիա) գետի ձորին, որտեղ, ըստ մեր տեսության, և պետք է որոնել Յուրտավի հետքերը, այսինքն այժմյան Առիւլո, նախկին Նախիդուրի գյուղի տեղը Մառնեուլիից (նախկին Սանդարից) դեպի Բոլնիս (նախկին գերմանական կոլոնիա Եկատերինենֆելդ) տանող կիսաճանապարհին հրամ կամ Քցիա գետով անցնող միակ կամրջին կից:

Ղ. ԱՂԱՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

ա. Թարգմանություններ Ղ. Աղայանի երկերից

1. «Մանիշակ» («Իա»), Թարգմ. Ա. Թ. «Օրսոմբրեի» [= Հոկտեմբերյան], 1940, № 10, էջ 13:

¹ Ինչպես երևում է, Ղ. Աղայանն իր տրամադրության տակ չի ունեցել ոչ մի տեղեկանք Շուլավերի հայ գյուղացիների կողմից 1852 թվականին կազմակերպված ապստամբության մասին, այլպես այս նշանավոր անցքը որոշ արձագանք կգտներ նրա երկերից որևէ մեկում: Սրա մասին տես՝ Акты Кавказской Археографической Комиссии, т. X, Тифлис, 1885, стр. 880; Л. Исарлов. Письма о Грузии, Тифл., 1899, стр. 329—346 (Шулаверские волнения в 1852 г...); նույնը հայերեն, Ն[վարդ] Թ[ումանյան]ի առաքանով և ծանոթագրություններով, «Նոր ուղի», 1931, № 6, էջ 133—140:

2. «Գյուլնազ տատիկի հեքիաթը» («Գյուլնազ բերիաս զղապարի»), Թարգմ. Իվ. Բեկլարով, «Նոր լինիներ» [= Դեռարդրոջ լինիյան], 1940, № 66:

բ. Հատուկ գրականություն նրա մասին.

1. Լ. Մելիքսեբ-Յեկ, *Յակոբ Գոգեբրաշվիլին և Ղազարոս Աղայանը, ժողովածու «Յակոբ Գոգեբրաշվիլի», Թբիլիսի պետ. համալսարանի հրատարակություն, Թբիլիսի, 1940, էջ 68—70:*

2. Իվ. Ռեզլարով, *Ղազարոս Աղայան, «Օրոտմբրելի» [= Հոկտեմբերյան], 1940, № 10, էջ 12—13, նկարով:*

**ԿԱՐԱՎԵՐՋԻ ԹԻՖԼԻՍԱՐԵՆԿ ԸՐԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԹԱՏԵՐԵԳԻՐ-ՍԻՐՈՂՆԵՐ**

XIX դարի վերջերին, Թիֆլիսում, հայ գրականության ասպարեզում, հանդես եկան թիֆլիսաբնակ մի շարք արձակագիրներ և թատերագիրներ, որոնք, իբրև սիրողներ, իրենց գրական ճաշակը և ունակությունը փորձեցին Թիֆլիսի կյանքից վերցրած սյուժեներն օգտագործելով՝ ոմանք վեպերի, ոմանք էլ կատակերգությունների մշակումով:

Այս գրողները իբրև գիսաստղեր երևացին հայ գրականության երկնակամարի վրա և անհետացան:

Սալահյն նրանց անուններն այսպես թե այնպես դրոշմված են գրադարանային մատյաններում և անջնջելի են իբրև Գ. Սունդուկյանի դպրոցի ներկայացուցիչներ, թեև մեծ տաղանդով չփայլող հետևողներ կամ նույնիսկ հետնորդներ (էպիգոններ) են:

* *
*

Մեր առջևն է Հ. Ս. Կուսիկյանի գիրքը, որի տիտղոսաթերթը կարդացվում է այսպես.

«Հրատարակություն Ն. Ս. Կուսիկյանի. Միր ճաճանչիրը. Կոմեդիա երեք արարուածով և երկու պատկերով, ոտանավորով գրված Թիֆլիսի կյանքից. հեղինակություն Հ. Ս. Կուսիկյանի, Թիֆլիս, Տպարան Մովսես Վարդանյանի, 1889», 190+II էջ:

Կատակերգության գործող անձինքն են, ինչպես և Գ. Սունդուկյանի ստեղծագործության մեջ, Թիֆլիսի տարաշերտ հասարակության ներկայացուցիչները:

Պիեսի վերջում կցված է երկու բառարան. մեկը՝ Թիֆլիսի բարբառին հատուկ բառերի (էջ 171—176) և մյուսը՝ դժվար հասկանալի բառերի (էջ 177—190), որտեղ տեղ են գտել նաև

վրացերեն բառեր, որ գործածված են տվյալ կատակերգութ-
յան մեջ.

արա—հասյա

աբլաբուդա— սարգի ռոտայն

ախավագլուխ—վայվագլախ, վայ և ցավ

ակլերա—ավերել

ան—կամ

բուրթի—խաղագունդ

դամդելի—մանկասուն, դաստիարակ

դանա—միթե

դեդա—մայր, դիդեդա—մեծ մայր, տատ

էգերա—գուցե, թերևս

լածիրակ—թեթևոլիկ

լամիս—համարյա քե

խան—երբեմն, կամ

խուճուճ—գանգուր

ծամդաուծում—անդադար, անընդմեջ, անընդհատ

ծիծիլա—հավաճաղ

կասկասի—բարձրաձայն ծիծաղ

կավի (կավքնիր)—կանանց խոպոպիկ

կետի—մահակ, փայտ

կիլո—հանգ, ձայն

կինծի (կինծի կոտրած)—պստանոց

կինտո—շրջիկ մրգավաճառ (հմմ. հայերեն կին + տո)

կուճի—ստամոքս

կոխտա—սաղով, քնքույշ

հարիալահ—երգեցողական բացականչություն

ձիձա—դայակ

ձլիվս—հազիվ

ճանարի—ձկան տեսակ

ճիճինա (ճիճինա դալ)—հուզվել, տրաքվել

ճինջարի—հղինջ

մագիրի—փոխարեն, փոխանակ

մագրամ—սակայն, բայց

մախնց—բայց և, թեև, անպատճառ

մածանծար—մածանծալա—թրե եկող

մաղվալի—մորի

մամա—հայր

միթամ—միթոմ, իբր, իբր թե

մոգոնիլ (մոգոնեբա)—հնարել (գոնի—ուշք)

մոխերխեբա—հնար, հնարագիտություն

մոծամե—վկա, մոծմություն—վկայություն

նետավի—երանի, երանի թե

ուփրո—ավելի, առավել, առավել ևս

պիրոբա—պայման

ջեր—դեռ

տուտուց—հիմար

ցարցի—կավիճ

ցետի—հիմար, ցանցար

բա—ա՛յ

բրթամ—կաշառք, օժիտ

ոզոնդ—միայն, միայն թե

Կատակերգությունը պարունակում է մի շարք վրացական տեղանուններ՝ Դիդոմի, Կախեթ, Կրծանիս, Մետեխ, Վերա, ինչպես նաև Ռուսաստանի հիշատակությունը վրացական ձևով՝ «Ռուսեթ», վերջապես հիշված է և Թիֆլիսի վրացադավան եկեղեցիներից մեկի (հայոց նորաշենի կողքին և Սիոնի դանգակատան ետևը) անունը՝ «Ջվարիս-Մամա», որ նշանակում է «խաչիհայր», «խաչահայր» և որը Երուսաղեմի վրացական սուրբ խաչ վանքի վանատունն էր համարվում վրաստանի մայրաքաղաքում:

* *
*

2. Ս. Կուսիկյանի կատակերգության լույս տեսնելուց ուղիղ 5 տարի հետո հրապարակ է հանվում «Լումայ» կեղծանվան տակ մի գիրք, որի տիտղոսաթերթը կարգացվում է այսպես.

«Լումայ. Գարոյի ընտանիքը, վեպ Թիֆլիսի կյանքից. Կովկասյան գլխավոր կառավարչապետի տպարան. Թիֆլիս. 1894», 196 էջ:

Վեպը պարունակում է 36 գլուխ և ամբողջապես պատկե-

բում Թիֆլիսի էկզոտիկան համապատասխան օբա-հրով (ուխ-տագնացություններով)¹։

Վեպը սկսվում է, ինչպես և Խ. Աբովյանի «Վերք Հայաս-տանին», տոնակատարության նկարագրությամբ, երբ առա-վոտյան արշալույսին նոր բացված «խավարի միջից երևաց Միրանավորի ս. աստվածածին եկեղեցին՝ իր ոսկեփայլ խաչով, շրջապատված զմրուխտագույն այգիներով և ծաղկազարդ բլուրներով»։

Վեպում հիշվում է Աղա-Մահմադ-խանի կողմից 1795 թվականի Թիֆլիսի ավերումը, Գիրգի վրաց վերջին թագա-վորը (1798—1800)։ Երգվում են թիֆլիսաբնակ աշուղների՝ Սայաթ-Նովայի, Միսկին-Բուրջիի, Գյուրջինավելի, Թուրինջի, Շիրինի խաղերը։

Պերսոնաժներն են Թիֆլիսի իրականութունից վերցրած տիպերը՝ Գաբոն և նրա որդի Բաջոն, Սարգիսը և նրա կին Շուշանն ու աղջիկ Նատոն, Օսանը, Սոլոն, Գեորգը, Վանոն, Դաթոն, Մղալոբը, Բեժանը, Պոխրոն, Արչիլը, Մելանեն, Մա-կան, Գլախան։

Օբաներն են՝ Խվթեբայի, Մթածմինդայի, Փեթխաինի, Մի-րանավարի և այլն։

Վեպում հիշատակվում են մթիուկները (լեռնականները), Կավկազը (Վաղիկավկազը, աշտմյան Օրջոնիկիձեն), Խոջի-վանքը, «Վանքի շկոլեն», այսինքն ներսիսյան դպրոցը, Քուռ գետը, Մետեխին, Մարտղոփի գյուղը և այլն։

Վեպում օգտագործված են բազմաթիվ վրացերեն բառեր.

աղբով—մտքով

ակլերա—ավերել

ամագլի]—երախտիք

անդադա—առած

բնեդիանլի]—ընկնավոր

բողմա—հեղձանք, շնահեղձություն, սրտեղություն

գադակիդեբա—կաշանություն

գախեթբվա—տրաքվել

գանա—մի՞թե

¹ Այս օբաների խնդրին մեր օրոք անդրադառնում է Սահակ Մանվելյանը իր «Վերջին մեղեդին» նովելում, «Սով. Վրաստան», 1958, № 193։

գեղաբնուրի—գեղարբունի, իշխանաձկան մի տեսակը
 գենացվալեթ—ձեր ցաւը տանեմ, ձեզ ղուրբան
 դաշլա—բայքայեւ, բայքայեւ, արգելք, արգելի
 դեդի (ուղիղ՝ դեդա)—մայր, դեդավուրթուրին—մայրեւոր-
 դություն, դեդիջան—մայրիկ ջան
 էգեբա—գուցե, մի գուցե, կարելի է
 էլգա նընգով—անակնկալ բան (վիշտ)
 թակիլութին, թակիլի բառից—բաշվեւ
 թավդեր[ի]—երաշխավոր
 թեսակրավ (ուղիղ՝ թասակրավի)—գլխակապ
 թուրմե—դու մի ասա, կաթծես թե
 լամիս—գրեթե, քիչ մնաց
 լաշաթրիան[ի]—անշնորհք
 խանդիսխան—երբեմն, մերթ քնդ մերթ
 խում—հո
 ծուրբեւա—տղրուկ
 կաբա—դէյրա
 կինադամ—քիչ մնաց
 կոխտա—կոկիլի, վայելչագեղ
 կոճի—կոճ
 ձիւլ—հագիւլ
 դվելիերի—բարեկենդան
 ճիճինա—ջորոգ գալ, ջղայնանալ
 ճվալի—ծակոցներ մարմնում
 մագիար—փոխարեն, փոխանակ
 մայինց—այնուամենայնիւ, գոնե
 մավթուլ[ի]—լար
 մեփե—թագավոր, արքա
 միգեդ[ի]—սլատճառ
 միթում—իբր թե
 մոգոնած—հնարած
 մոնա—ստրուկ
 մոշլա—բայքայում, բայքայեւ, լուծում, լուծել
 մոսավալ[ի]—բերք
 նաբիճվար[ի]—արտամուսնական դավակ
 շիլիկա—ջոխի

շիբիալ—լեւակ, գլխի շղարշ

շուշխա—սուջուխ

սիբիբիթ—ընդհակառակը

սիրորա—սլայման

սոխոնդրիա—ИНХОХОНДРИЯ

ջեր—դեռ

շիբգիր[ի]—գրականահատ

սարակեա (ուղիղ՝ սարեկելի)—կոշնակ, գամամուրճ

սաքործիլո (քործիլի)—հարսանիքի համար

վայմե—վայ ինձ

վեր մոգարթվես—շմատուցեցին քեզ, հակառակ սպասածին
բա ուճիրս—ի՛նչ կարիք ունի

ցոցխալի—կենդանի, աշխուժ, նաև ձկան անուն է (հմմ.
խրամուլի)

* *
*

Նույն 1894 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում Կակի-
նենց Սոսի կեղծանվան տակ մի զրքույկ, այսպիսի տիտղոսա-
թերթով։

«Լաբաթա. Փարս-վոդեվիլ մեկ արարվածով. գրեց Կակի-
նենց Սոսին, Տպարան Մ. Վարդանյանի, Թիֆլիս. 1894»,
50 էջ։

Անցքը պատահում է Թիֆլիսում 1880 թվականին Գարդա-
կետենց Կատարինեի տանը։

Օգտագործված է Թիֆլիսի բարբառը.

Վրացական բառապաշարը սահմանափակվում է մի երկու
տասնյակ բառերով. դրանք են.

արլանդվա—աչքերը կապել, աչքերին թող փչել, աչքակա-
պուլթյուն

ան—կամ

բլումա—առատ, շատ —

գաբեդվա—համարձակութուն, համարձակվել, սիրտ անել
գենացվալե—քո ցավը տանեմ, քեզ դուրբան

դաշլա—բայթայում, բայթայել, արգելք, արգելել

դարբասէուլ (ուղիղ՝ դարբասիլի)—հյուրասեր

դեղիջան—մայրիկ ջան
 թայգուլ (ուղիղ՝ թայիգուլի)—Ժադկեփունջ
 թավլափիան[ի]—ցեխերես, սևերես
 կոկոռ—բողբոջ
 կուդիան[ի]—պոչավոր, խորամանկ
 ձալո—հարս, քեռակին
 ճիճղինա—ճոճոան, ճղճղան
 մագիեր—փոխարեն, փոխանակ
 մախինջ[ի]—այլանդակ, այբեջար
 մամիդա—հորաքույր
 մաջլաջունա—հաստափոր
 միդեզ[ի]—պատճառ
 միթոմ—իբր թե
 միխրա-մոխրա—շարժողութուն, վարք
 նիմուտի—ռուս. МИНУТА
 պիրիքիթ—ընդհակառակը
 ջեր—դեռ
 սաութո—հարթուկի համար
 վիս էկադրեբա—ում լայեղ է
 ուցնավուր (ուղիղ՝ ուցնաուրի)—տարօրինակ
 փասափուսա—քաշքշոց, հոգս
 քորփա—բողբոջ, դեռաբողբոջ

* *
 *

Թիֆլիսում XIX դարի երկրորդ կեսին հայտնի էին մի շարք գրավաճառներ՝ Ավետիք էնֆիաճյանց, Զաքարիա Գրիգորյան, Ա. Իսրայելյան, վերջերս և Գ. Գալստյան, որոնք մեծ կուլտուրական գործ էին կատարում հրատարակելով հայերեն գրքեր, նաև կովկասագիտական գրականութուն:

Սրանցից ոմանք գրել են մի շարք գրքեր, օրինակ Ա. էնֆիաճյանը և Զ. Գրիգորյանը, վերջինը հատուկ գրքույկ է նվիրել վրաց գործիչ Զաքարիա Ճիճինաձեին (1853—1931):

Իսկ Ս. էնֆիաճյանը հայտնի է գրականության մեջ իբրև վկայագիր Թիֆլիսի համբարների 1865 թվականի ապստամբության:

Վերջինիս «Հուշերը», իբրև ակնանատեսի հիշյալ ապստամբության մասին, ձեռագիր վիճակում պահվում է Տյուրինգենի համալսարանի գրադարանի (Գերմանիա) հայերեն ձեռագրերի հավաքածուում:

Ահա ինչ ենք կարգում այդ հուշերում 1865 թվականի անցքի մասին.

«Քաղաքագլխի (Գալուստ Շերմազանյանի—Լ. Մ.-Բ.) պաշտոնավարության վերջին օրերը Թիֆլիսում մեծ խառնակության լինելով, հարկերի չափազանց շատության պատճառով զայրացած ռամիկ ժողովուրդը իր վրեժը առնում է քաղաքագլխից— ժողովուրդը հարձակվում է քաղաքագլխի բնակարանի վրա, նպատակ ունենալով սպանել թե քաղաքագլխին և թե կոտորել նրա ամբողջ ընտանիքը: Քաղաքագլուխը և նրա ընտանիքը կարողանում են փախչել, իսկ ժողովուրդը ստիպված է լինում յուր վրեժը առնել նրա բնակարանից և բնակարանի մեջ եղած կահկարասիքից ու իրերից.— բնակարանը ամբողջապես քարուքանդ են անում, իսկ բնակարանի մեջ եղած կահկարասիքը և զանազան իրերը կողոպտում...»¹:

¹ Systematisch-alphabetischer Hauptkatalog der Königl. Universitätsbibliothek zu Tübingen. M. Handschriften. a) Orientalische. XIII. Verzeichnis der armenischen Handschriften der Königl. Universitätsbibliothek, von Frau-Nikolans Finck und Levon Gjan-schettian, Tübingen, 1907, էջ 5, հմմ. Լ. Մելիսեթ-Բեկ, «Խ. Հայաստան», 1938, № 12, նույնի՝ Արխիվային նյութեր Թիֆլիսի համբարների «Երույթի» պատմության համար, Թբիլիսի, 1947, էջ 3, ծան. 2:

Հ Ա Վ Ե Լ Վ Ե Ծ

(Աղեքսանդր Երիցյան, Քաջբերունի)

XIX դարի հայ գրականության տեսությունը, մեզ զբաղեցնող խնդրի տեսակետից, իհարկե, լրիվ չէր լինի, եթե մենք այդ տեսությունը սահմանափակենք միմիայն ղեղարվեստական գրականության հիմնական ժանրերով և աչքաթող անեինք պատմագրությունը կամ, ավելի ճիշտն ասած, պատմագրության այն օժանդակ բնագավառը, որը հնագրության-էսկիզբա-ֆիկային է վերաբերում:

Այսպիսով, եթե մեր այս աշխատության ա. գրքի IV գլխին («XIX դարի 50—60-ական թվականների գրական դեմքերը») մենք կցեցինք «հավելված», ուր քննության առանք Սարգիս Զալալյանի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայս» գրքի Բ. հատորի համապատասխան մասը, այստեղ ևս՝ VI գլխին («XIX դարի երկրորդ կեսի, դարավերջի և XX դ. սկզբների գրական դեմքերը») նպատակահարմար ենք դնում կցել մի այլ «հավելված», ուր քննության են առնված Աղեքսանդր Երիցյանի և Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի—Քաջբերունու նմանօրինակ գործերը:

*
*
*

Աղեքսանդր Դավթի Երիցյանը (1841—1902) հայտնի է իբրև կովկասագետ, հայագետ և հնագետ:

Աղեքսանդր Երիցյանն իր ամբողջ կյանքը անց է կացրել Թիֆլիսում: Նա Թիֆլիսի առաջին արական գիմնազիայի շրջանավարտն է, որտեղ սովորել են Ն. Բարաթշվիլին, Գ. Սունդուկյանը, Իլիա Ճավճավաձեն, Ակակի Մերեթելին, Պ. Մելիքիշվիլին, Հ. Մանանդյանը, Իվ. Զավախիշվիլին և շատ ուրիշներ:

Երկար տարիներ ծառայել է պետական այլևայլ հաստա-

տություններում, մասնակցել է ժամանակի գրեթե բոլոր աչքի ընկնող հնագիտական միջոցառումներին և, մասնավորապես, եղել է 1872—1873 թվականներին Թիֆլիսում հրատարակվող «Кавказская старина» անունով պատմա-հնագիտական-ազգագրական և բիրլիոգրաֆիկ ժուռնալի խմբագիր, նաև «Акты Кавказской Археографической Комиссии» սերիայի աշխատակից, Մոսկվայի հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի հիմնադիր-անդամներից մեկը (1901)¹։ Սրանցից առաջինում Ա. Երիցյանին աշխատակցել են ժամանակի հայտնի վրացագետներ Ռափիել էրիսթավին (1824—1901) և Դիմիտրի Բաբրաձեն (1828—1890)։

Միաժամանակ, Ա. Երիցյանը եղել է աշխատակից «Վաճառական» և «Փորձ» ամսագրերի ու «Արձագանք» շաբաթաթերթի։

Ա. Երիցյանի գրչին են պատկանում բազմաթիվ աշխատություններ հայերեն (և ռուսերեն) լեզվով, որոնք լիովին թե մասամբ վերաբերում են Վրաստանի և վիրահայոց անցյալին. օրինակ՝ «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք», ա. և բ. հատորները (Թիֆլիս, 1894 և 1895) «Թիֆլիսի ներսիսյան դպրոցի 75-ամյա պատմությունը» (Թիֆլիս, 1899), «Թիֆլիսի Հայք և նոցա վիճակագրությունը» («Փորձ», 1879, № 10, էջ 1—35), «Վրաց թագավորական տան վերջին շառավիղը» («Արձագանք», 1882, № 12, էջ 177—180)²։



Գաբրիել Տեյր-Հովհաննիսյան, կեղծանունով՝ Քաջբերունին (1837—1920)՝ դա «Հյուսիսափայլ»-ի երբեմնի աշխատակից և

¹ Այս բաժանմունքը մեծ դործ կատարեց Կովկասի և, մասնավորապես, Վրաստանի և Հայաստանի ուսումնասիրության գծով։ Նրա առաջին և երկարամյա նախագահն էր հայտնի կովկասագետ-լեզվաբան Լ. Գ. Լուպատինսկին (1842—1922), որին մինչև բաժանմունքի լիկվիդացիան (1926) հաջորդեց տոգերիս գրողը։

² Նույնը վրացերեն թարգմանությամբ՝ «Դրոերա», 1882, № 120 և № 127։ Շառավիղը՝ Ալեքսանդր արքայազնի այրի Մարիամ Սահակի Մելիք-Աղամալյանն է (1808—1882), որը թաղվեց Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցում հյուսիսային պատին կից, ըստ վրացական տրադիցիայի։

«Տեր Սարգիս» անավարտ վեպի հեղինակն է, որին Մ. Նալբանդյանը «Հայկական Գողթը» էր անվանել:

Սակայն Քաջբերունու գրչական ժառանգությունից մեզ համար նշանակալից են նրա հայերեն վիմագրությունների ընթերցումները, ի միջի այլոց, Ստորին Քարթլիում կամ, որ նույնն է, Սոմխիթում, հատկապես Սամշվիլեցում, Շուլավերում և նրանց շրջակայքում, որ ամփոփված են նրա «Ճանապարհորդական յիշատակարան»-ում («Արձագանք», 1884, № 41, 42):

ՀԱՏՈՒԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՅՆԵՆ

Ա. ԵՐԻՅՅԱՆԸ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ա. Թարգմանություն Ա. Երիցյանի գործերից

1. Վրաց թագավորական տան վերջին շառավիղը. «Դրոերա», 1882, № 26, էջ 1—3, № 27, էջ 1—2:

բ. Գրականություն նրա մասին

«Դրոերա», 1873, № 11:

«Դրոերա», 1879, № 228:

«Դրոերա», 1882, № 143 և № 145:

է. Թաղաշվիլու «Հուշերը». «Մնաթորի», 1959, № 7, էջ 169:

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
XIX ԴԱՐՈՒՄ

«Հայ գրողները և Վրաստանը» գործում նշույթը սպառված չի կարելի համարել, եթե մի տեսակ հաշիվ չներկայացվի հայոց պարբերական մամուլի կացության մասին Վրաստանում:

Քանի որ մեր աշխատության ներկա՝ առաջին գիրքը սահմանափակվում է հիմնականում միմիայն XIX դարով, մենք նպատակահարմար ենք համարում կցել նրան՝ իբրև «հավելված», համառոտ տեսություն հայոց պարբերական մամուլի՝ Վրաստանում, XIX դարում:

Այս լրացուցիչ գլուխը գրելիս մենք ղեկավարվել ենք հրատարակի վրա եղած այսպես կոչված «տեղեկատու» գրականության, որոնք են.

1. Գաբեգին Լեոնյան, Հայոց պարբերական մամուլը. պատմական տեսություն սկզբից մինչև մեր օրերը (1794—1894), Ալեքսանդրապոլ, 1895:

2. Նույնը, Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934), Երևան, 1934:

3. Հ. Ռաֆայել Կառապետյան, Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու, որոնք կգտնվին Մխիթարյան մատենադարանին մեջ ի Վիեննա, 1794—1921 [«Ազգային Մատենադարան», ԾԳ], Վիեննա, 1924:

4. Հովհաննես Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիան (1794—1900), Երևան, 1956:

* *
*

Ստորև մենք տալիս ենք Վրաստանում XIX դարում հրատարակված հայ պարբերականների ցանկը, նշելով յուրաքան-

չյուր դեպքում պարբերականի անունը, որպիսությունը (ամսագիր, շաբաթաթերթ, լրագիր, տարեգիր), խմբագիրների ազգանունները և հրատարակության տեղությունը: Քանի որ բոլոր պարբերականները գրեթե անխտիր (մի բացառությամբ) Թիֆլիսումն են հրատարակվել, ուստի և հրատարակության տեղը (Թիֆլիս) չենք նշում¹:

— «Կովկաս», շաբաթաթերթ, խմբագիրներ՝ Հակոբ-Կա-
րենյան և Միֆայել Պատկանյան, 1846—1847:

Հ. Պետրոսյան, Հիշյալ աշխատությունը, էջ 132—133:

— «Արարատ», շաբաթաթերթ, խմբագիր՝ Գաբրիել Բան.
Պատկանյան, 1850—1851:

Հ. Պետրոսյան, 137—140:

— «Մեղու Հայաստանի», շաբաթաթերթ, լրագիր, նորից
շաբաթաթերթ, խմբագիր՝ Ստեփանոս Բան. Մանդինյանց,
1858—1886:

Հ. Պետրոսյան, 251—256 (թերի):

— «Կոռնկ հայոց աշխարհի», ամսագիր, խմբագիր՝ Մար-
կոս Աղաբեկյան, 1860—1863:

Հ. Պետրոսյան, 260—265:

— «Հայկական աշխարհ», ամսագիր, խմբագիր՝ Խորեն
Վրդ. Ստեփանե, 1864—1871, 1876:

Հ. Պետրոսյան, 296—300:

— «Գարուն», ամսագիր, խմբագիր՝ Ստեփանոս ա. Բ.
Մանդինյանց, 1866:

Հ. Պետրոսյան, 301—302:

— «Վաճառական», շաբաթաթերթ, խմբագիր՝ Գեորգ Տեր-
Աղեֆսանդրյան, 1866—1867:

Հ. Պետրոսյան, 306—307:

— «Մշակ», շաբաթաթերթ, լրագիր, խմբագիր՝ Գրիգոր
Արծրունի (1872—1892), Ալեֆսանդր Քալանթար (1892—
1913), Համբարձում Առաֆեկյան (1913—1918), Լևոն Քալան-
թար (1918—1920), 1872—1920:

Հ. Պետրոսյան, 354—355:

— «Տոմար ընտանեկան», տարեգիր, խմբագիր՝ Սերունի

¹ Հմմ. Արտ. Կարինյան, Հայ պարբերական մամուլը Թբիլիսիում, «Սո-
վետական Վրաստան», 1958, № 243:

Երիցյան, 1874:

Հ. Պետրոսյան, 364:

— «Գործ», ամսագիր, խմբագիր՝ Աբգար Հովհաննիսյան, 1876—1881:

Հ. Պետրոսյան, 368—374:

— «Մանկավարժական թերթ», ամսագիր, խմբագիր՝ Հակոբ Տեր-Հովհաննիսյան, 1878—1879:

Հ. Պետրոսյան, 375—377:

— «Աշխատանք», շաբաթաթերթ, խմբագիր՝ Գրիգոր Տեր-Մելիքսեղեկյան, 1880—1882:

Հ. Պետրոսյան, 379:

— «Գործ», ամսագիր, խմբագիր՝ Սիմեոն Հախումյան, 1882—1884:

Հ. Պետրոսյան, 424—426:

— «Վարժարան», ամսագիր, խմբագիր՝ Նիկողայոս Խոսրովյան, 1882—1884:

Հ. Պետրոսյան, 426—429:

— «Արձագանք», շաբաթաթերթ, խմբագիր՝ Աբգար Հովհաննիսյան, 1882—1898:

Հ. Պետրոսյան, 390—424:

— «Աղբյուր», ամսագիր, խմբագիր՝ Տիգրան Նազարյան, 1883—1918:

Հ. Պետրոսյան, 429—455(457):

— «Մանկավարժանոց», ամսագիր, Թիֆլիս—Ախալցխա—Թիֆլիս—Պետերբուրգ, խմբագիր՝ Խորեն Ժ. վրդ. Ստեփանե, 1884—1886(1887):

Հ. Պետրոսյան, 480—483:

— «Նոր-Դար», լրագիր, խմբագիր՝ Սպանդար Սպանդարյան, 1884—1907:

Հ. Պետրոսյան, 483—484:

— «Մուրճ», ամսագիր, խմբագիր՝ Ավետիք Արասխանյան, 1889—1907:

Հ. Պետրոսյան, 568—598(615):

— «Տարազ», ամսագիր, խմբագիր՝ Տիգրան Նազարյան, 1890—1919:

Հ. Պետրոսյան, 617—630:

— «Թատրոն», վեցամսյա հանդես, խմբագիր՝ Ալեքսանդր Թարխանյան, 1893—1894(1905):

Հ. Պետրոսյան, 637—641:

— «Հորիզոն», տարեգիր, խմբագիր՝ Փիլիպպոս Վարդապարյան, 1894:

Հ. Պետրոսյան, 641—642:

«Լուսմայ», ամսագիր, խմբագիր՝ Գյուտ ա. ֆ. Աղանյան, 1896—1911:

Հ. Պետրոսյան, 652—656(669):

— «Ազգագրական հանդես», տարեգիր, խմբագիր՝ Նովանդ Լալայան, 1897—1917:

Հ. Պետրոսյան, 645—651:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Երկու խումբ	5
Ներածության փոխարեն	7
Աշուղներ	12
Գեորգ Խուրով (1762—1829)	14
Սերովբե Պատկանյան (1760—1837)	15
Մանվել Կյումուշխանեցի (1768—1843)	16
Հարություն Ալամդարյան (1796—1834)	17
Մեսրոպ Թաղիադյան (1803—1858)	18
Խաչատուր Աբովյան (1805—1848)	25
Գալուստ Շերմազանյան (մոտ 1810—1891)	74
Ստեփանոս Նազարյան (1814—1879)	96
Միքայել Նալբանդյան (1829—1866)	102
Գեորգ Աբովյան (1837—1866)	108
Միրայել, Գարրիել և Քերովբե Պատկանյաններ	118
Ռաֆայել Պատկանյան (1830—1892)	120
Սմբատ Շահազիզ (1841—1907)	125
Գեորգ Դոդոխյան (1837—1907)	127
Գեորգ Ախվերդյան (1818—1861)	131
Թիֆլիսի և նրա կենցաղի թեմատիկան վաթսուական թվականների հալ գրողների երկերում (Ստ. Բաստամյան, Գ. Տեր-Աղեբ-ունդրյան, Գ. Խատիսյան, Ն. Փուղինյան, բժիշկ Մ. Տեր-Գրիգորյան և այլն)	134
Հավելված (Սարգիս Զալալյան)	141
Գրիգոր Արծրունի (1845—1892)	143
Րաֆֆի (1835—1888)	145
Պերճ Պաշյան (1837—1907)	183
Գարրիել Սունդուկյան (1825—1912)	205
Մուրացան (1854—1908)	244
Ղալաբոս Աղալյան (1840—1911)	253
Դարավերջի Թիֆլիսաբնակ արձակագիր և թատերագիր-սիրողներ	264
Հավելված (Աղեբսանդր Երիցյան, Քաջբերունի)	272
Հայոց պարբերական մամուլը Վրաստանում XXI դարում	275

Լեոն Մելիքսեթի Մելիքսեթ-Բեկ
Леон Меликсетович Меликсет-Бек
ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Արևիկյանի անվան գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Տ. Ա. Կառապետյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Հովակիմյան
Նկարչական ձևավորումը՝ Կ. Հ. Յուրուշյանի
Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. Գորոշյան
Սրբագրիչ՝ Լ. Ա. Սարաֆյան

ՎՖ 06583, Հրատ. № 2328, ԽՀԽ № 862, պատվեր 107, տպաքանակ 1000.

Հանձնված է արտադրության 15/X 1963 թ.:

Ստորագրված է տպագրության 10/IV 1964 թ.:

Տպագրական 17,5 մամուլ, հրատարակչական 12,36 մամուլ:

Թուղթ $84 \times 108 \frac{1}{32}$: Գինը կազմում է 1 ռուբ.:

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության
էջմիածնի տպարան








ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220034705



A 34205